491.99-5
9- 9

№ 28.

Въ библіотеку Лазаревскаго
Института.

Отъ Его Превосходительства Г.
Христофора Екимовича
Лазарева.
1858 года.

2410 491.99-5
9-99

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ՉԱՄՉԵԱՆՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1831. ՌՄՁ.

491.99-5

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

5007
38

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Քանզի բազում անգամ խնդրէին լե-
զուասէրք ազգիս 'ի ձեռին ունել և զՄ․
Հ․ Միքայէլի Վարդապետի Չամչեանց
զքերականութի̃ն, որպէս արդարև առա-
ջին սկզբնաւորողի յառաջնորդութ̃ի գրոց
նախնեաց մերոց, յանձն առաք անդրէն 'ի
տիպ մատուցանել զայն առ 'ի լնուլ զփա-
փագ տենչողացն, և առ 'ի չթողուլ խա-
փանեալ զվաստակս նորին․ որ և բազմօք
փոփոխեալ էր, և 'ի վերստին տպագրութ̃ի
պատրաստեալ յամին 1814, ուրեք ուրեք
յապաւեալ, և այլ ուրեք ինչ ինչ յաւե-
լուածս արարեալ։

'Ի նախնի տպագրուե̃ տեսաք զօգուտ
նորին առ հասարակ ծաւալեալ յա̃մ տե-
ղիս, յայսմ երկրորդ տպագրութե̃ս ակն
ունիմք տեսանել զառաւելագոյն օգուտ
հայ մանկտւոյն․ զոր և անխոնջ մատենա-
գիրն նորոգ աշխատութեամբ ըստ խուռն

հմտութե՟ հայկազեան լեզուի յօրինեալ է առ 'ի յարմար ևս կացուցանել յընդունակութի՟ մանկանց ։

Որպէս և առ 'ի չծանրաբեռնել 'ի սկզբան անդ զմիտս դեռակիրթս՝ ինքնին 'ի բաց բարձեալ յիւրում ձեռագրին զբազում բառս եղեալս յառաջին տպագրութեան. զորս և յաւարտ գրոցս կամք եղև գումարել ճոխագոյն ևս ըստ կարգի այբուբենից 'ի դիւրութի՟ համբակաց, հանեալ յառաջին բառարանէ մերմէ, որ 'ի գրաբառէ յաշխարհաբառ, տպագրեալ 'ի Վենետիկ, յամին 1769 ։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի դժուարինս դիւրաւ ընթանալ՝ հնարից պէտք են. յոյր սակս յո՛ և իցէ դժուարին գործս՝ պէսպէս հնարս հնարեցին մարդիկ՝ առ դիւրացուցանելոյ զայն: Եւ քանզի 'ի մէջ ամենայնի դժուարին իմն է արուեստն ուղղախօսութեան՝ հնարեցին և յաղագս այնր հնարս դիւրացուցիչս նորին, այն է գործին քերականութեան: Որք զառաջինն ձեռն արկին 'ի նոյն, անկատարս յօրինեցին. որոյ վասն ջանացան յետինք կատարելագործել զայն. բայց յառաւելուլն բերել՝ ոմանք զկապարաւ անցին, մինչև լինել անմերձենալի. և ոմանք զարտուղի ելին, մինչև հակառակիլ հանգամանաց լեզուի:

Զայս տեսեալ մեր՝ նորոգ յօրինեցաք զգործի քերականութեան յամի տն 1779: Եւ առ քաջ մարզելոյ զուսանողսն 'ի կատարելութիւն լեզուիս մերոյ, յաճախեցաք 'ի նմին զկանոնս, և ըստ կանոնաց զբազմադիմի օրինակս 'ի գրոց նախնեաց. և յանձնեցաք կառավարութեան ուսուցչաց, ըստ օրինի առաջնորդել նոցա՝ ուսանողաց: Բայց քանզի այն յաճախութիւն կանոնաց և օրինակաց որչափ յարդարէր զվարժումն կատարելութեան հայկական լեզուի, այնչափ երկարէր զջանս ուսումնասիրութեան նորավարժից, կամեցաք զնոյն զայն քերականութիւն նորոգ իմն համառօտութ 'ի լոյս ընծայել. զոր և արարաք իսկ յամի տն 1801. առանց փոփոխելոյ զկարգ նորա, և առանց չփոթելոյ զընթացս նորին. բայց եթէ 'ի սակաւ տեղիս, յորս ընդարձակէին բանք. և առաւելուին կանոնք, և յորդեալ զեղուին օրինակք:

Ես այժմ վերստին ուղղագրեալ զնոյն, և առաւել ևս համառօտեալ՝ առաջի մատուցաք համբակաց առ հեշտ գանձելոյ նոցա զուսումն քերականութեան 'ի միտս իւրեանց. Գիտելով՝ թէ 'ի մարզիլ նոցա 'ի սոյն բարւոք՝ քաղցրասցի 'ի քիմս նոցա առաջինն այն իբր հաստատուն կերակուր։ Բայց սակայն յաւելում ես ասել, թէ ոչ առաջինն այն, և ոչ երկրորդն և ոչ յետինս այս կարեն օգտել ինչ ուսանողաց, եթէ ուսուցիչք ոչ առաջնորդեսցեն ըստ կանոնաց։

Առաջին կանոն ուսուցչին է կամքն ուսուցանել։ Եթէ այս կամք կայցէ 'ի նմա, սոյն այս ինքնին ցուցանէ, թէ զիարդ պարտ է առաջնորդել. մինչև նաև զըթամիտսն կարել նմա սրել, և զանփոյթսն 'ի փոյթ վառել. որպէս 'ի բազում տեսաք, և տեսանեմք։ Երկրորդ կանոն ուսուցչին է պահել զկարգ 'ի դասասացութեան. Նախ՝ զդիւրինսն առաջի դնել. և ապա զդըժուարինսն ծաքելով իմն մատակարարել. և ոչ թէ խառն 'ի խուռն 'ի միասին շփոթել. ապա թէ ոչ՝ աշխատի բազումս, և ուսանօղն շահի սակաւ. մինչև լքանիլ նմա երբեմն խոպառ, և լքանել յիւրմէ զուսումն։

Իսկ եթէ ըստ կարգի ընթասցի, աշխատի սակաւ, և ուսանօղն շահի բազում. մին բերկրի յարդիւնս վաստակոց իւրոց. և միւսն ցնծայ 'ի գիւտ արուեստին իբր 'ի գիւտ պատուական գանձու։ Եթէ և գիտաւորութիւն իւրեանց իցէ բարի, երկոքին ևս ընկալցին յԱստուծոյ զբարիս։

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА



Կերպարան տառից՝ ազգեալ յանեղէն․
Մեսրովպայ մտի՝ ձեռամբ լուսեղէն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

Քերականութիւն է ուսուցանել մարդոյ ուղիղ կարգել զխօսս: Եւ քանզի խօսք մարդկան կազմին 'ի բառից, քերականութիւնն յայնժամ ուսուցանէ ուղիղ խօսիլ, յորժամ զբառսն ընդ կանոնօք կարգաւորէ.

Արդ՝ 'ի խօսս մարդկան ութ ցեղք բառից գտանին: Նախ՝ անուն, որ նշանակէ զիրն. որպէս, ծառ. քար. մարդ. եւն: Երկրորդ՝ դերանուն, որ ցուցանէ զդէմս իրացն. որպէս, ես. դու. նա. եւն: Երրորդ՝ բայ, որ զբառս կամ զկիրս իրին նշանակէ ընդ ժամանակաւ. որպէս, քրչեմ. գնամ. խօսիմ. եւն: Չորրորդ՝ ընդունելութիւն, որ նշանակէ զիրն 'ի գործողութեան. որպէս, քրչօղ. գնացեալ. եւն: Հինգերորդ՝ նախադրութիւն, որ զպարագայս իրին նշանակէ, որպ̄, 'ի վերայ նորա. վասն քաջութեան. եւն: Վեցերորդ՝ մակբայ, որ զեղանակս գործողութեանց նշանակէ. որպ̄, արագ ընթանայ. գայ 'ի վերուստ. եւն: Եօթներորդ՝ շաղկապ, որ զբառս եւ զբանս 'ի միասին շաղկապէ. որպիսի են բառքս. եւ. զի. սակայն. եթէ. եւն: Ութերորդ՝ միջարկութիւն, որ զկիրս հոգւոյն ցուցանէ. որպ̄. վա՜հ. ո՜հ. եւն:

Այսքիկ ութ ազգք բառից կոչին մասունք բանի. զորոց խօսի քերականութիւն յերկս գիրս կամ յերկս մասունս: Յառաջնումն պարզապէս առաջի դնէ զգործածութիւն սոցա. յերկրորդումն քննէ զորպիսութիւն սոցին. իսկ յերրորդումն խօսի զհամաձայնութենէ սոցա ընդ միմեանս. ըստ որում ունիմք կարգել եւ մեք:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յաղագս գործածութեան մասանց բանի ։

Այս մասն քերականութեան պիտանի է քան զայլսն և հարկաւոր . զի է դուռն լեզուիս Հայոց . ևս և գործարան համօրէն բանից . վասն զի 'ի սմա պատրաստին , և որպէս թէ տաշին և կոկին ամ՟ ազգք բանից 'ի ձեռն հոլովից և խոնարհմանց և դասաւորութեան իւրեանց ։ Ապա որք միանգամ կամին ուսանել զլեզուս Հայոց , արժան է նոցա սրտի մտօք 'ի սոյն դեգերիլ , և զամ՟ գրեալս 'ի սմա 'ի յիշողութեան դանձել , նախ զհոլովս անուանց . և ապա զայլսն ։

ԳԼՈՒԽ Ա ։

Յաղագս հոլովման Անուանց ։

Անուանք պէսպէս ձևանան 'ի գործածութեան իւրեանց . որպէս անունս աշխարհ՝ տասն օրինակաւ կարէ ձևանալ 'ի խօսակցութեան . որ՟ , աշխարհ . աշխարհի . յաշխարհ . զաշխարհ . յաշխարհէ . զաշխարհէ . աշխարհաւ . զաշխարհաւ . յաշխարհի . ով աշխարհ . Կամ՝ աշխարհք . աշխարհաց . ընդ աշխարհս . զաշխարհս . յաշխարհաց . զաշխարհաց . աշխարհօք . զաշխարհօք . յաշխարհս , ով աշխարհք ։ Իսկ այսպիսի փոփոխութիւն մի և նոյն անուան կոչի՝ հոլով , ըստ որոյ ասեմք՝ ուղղական հոլով . սեռական հոլով . տրական հոլով . հայցական հոլով . բացառական հոլով . պատմական հոլով . գործիական հոլով . պարառական հոլով . ներգոյական հոլով . կոչական հոլով ։

Այլ այս հոլովք՝ յամ՟ անուանս ոչ են միօրինակ , այլ բազմապատիկ , զի ոմանք յանուանց 'ի հոլովսն եղերին 'ի ե . եա . ոմանք 'ի ոյ . ոջ , ոմանք 'ի ան . անէ . նոյնպէս և այլք ։ Իսկ այսպիսի պէսպիսութիւնք վերջաւորութեանց զանազան անուանց կոչին հոլովմունք ա-

նուանց . և են քան . որոց չորեքտասանքն ասին հասարակք . իսկ վեցքն՝ մասնաւորք կամ յատուկք ։
Որոց զօրինակս ունիմք դնել աստ կարգաւ ։

Յաղագս հասարակ հոլովման անուանց ։

Օրինակ առաջին հոլովման ։

	Եզակի .	Յոգնակի ։
Ուղղական .	Բառ .	Բառք .
Սեռական .	Բառի .	Բառից .
Տրական .	Բառի . 'ի բառ .	Բառից . 'ի բառս .
Հայցական .	զԲառ .	զԲառս .
Բացառական .	'ի Բառէ .	'ի Բառից .
Պատմական .	զԲառէ .	զԲառից .
Գործիական .	Բառիւ .	Բառիւք .
Պարառական .	զԲառիւ .	զԲառիւք .
Ներգոյական .	'ի Բառի . կամ 'ի բառ .	'ի Բառս .
Կոչական .	ով Բառ ։	ով Բառք ։

Ընդ այսու օրինակաւ պարունակին բազում անուանք . որոց 'ի հոլովելն՝ ոմանք անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին . զոր օրինակ ։

Բան ,	բանի .	Բան . խօսք . սէօզ . իշ ։
Դաշտ ,	դաշտի .	Դաշտ . օվա ։
Կաթսայ ,	կաթսայի .	Ղազան . խազան . թէնճէրէ ։
Չղթայ ,	ի .	Չղթայ . զինճիլ ։
Արհեստ ,	ի .	Արհէստ . սընաաթ ։
Նետ ,	ի .	Նետ . օխ ։
Ծնոտ ,	ի .	Ծնօտ . չէնէէ ։
Հօտ ,	ի .	Ոչխարի կամ այծոց սիւրիւ ։
Գիւտ ,	ի .	Գտանելը . հնարք ։ Եա Փէնդ ։
Ուրուր ,	ի .	Ուրուր . չայլաղ ։

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառսն , յորս յանգին . զոր օրինակ ։

Ատեան ,	ատենի .	Տիվան ։ եա՝ տիվան աղալարը ։

Լեարդ ,	լերդի .	[illegible]
Բիծ ,	բծի .	[illegible]
Դըլին ,	դըլնի .	[illegible]
Բրուտ ,	բրտի .	[illegible]

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին . զոր օրինակ :

Գմբէթ ,	գմբեթի .	[illegible]
Պատճէն ,	պատճենի .	[illegible]
Արոյր ,	արուրի .	[illegible]
Խորախոյս ,	խուսի .	[illegible]
Նշոյլ ,	նշուլի .	[illegible]

Անեզականք :

Ելք ,	ելից .	[illegible]
Խնջոյք ,	ջոյից .	[illegible]
Ճրաշք ,	շից .	[illegible]

Օրինակ երկրորդ հոլովման :

	Եզակի :	Յոգնակի :
Ո.	Քաղաք .	Քաղաքք .
Ս.	Քաղաքի .	Քաղաքաց .
Տ.	Քաղաքի , 'ի քաղաք .	Քաղաքաց . 'ի քղքս .
Հ.	զՔաղաք .	զՔաղաքս .
Բ.	'ի Քաղաքէ .	'ի Քաղաքաց .
Պ.	զՔաղաքէ .	զՔաղաքաց .
Գ.	Քաղաքաւ .	Քաղաքօք .
Պ.	զՔաղաքաւ .	զՔաղաքօք .
Ն.	'ի Քաղաքի , կամ 'ի քաղաք .	'ի Քաղաքս .
Կ.	ով Քաղաք :	ով Քաղաքք :

Ընդ այսու օրինակաւ պարունակին բազում անուանք , որոց 'ի հոլովելն՝ ոմանք անկորուստ և անփոփոխ պահեն զձայնաւոր տառսն՝ յորս յանգին . զոր օրինակ :

Ագարակ ,	ի .	[illegible]

Բանակ, ի . Բանակ . օրդու :
Գերան, ի . Գերան . տիրէկ :
Խաւար, ի . Մութ . քարանլըք :
Մաճկալ, ի . Մաճը բռնօղ :
Բերդ, ի . Բերդ . խալէ :
Պատեր, ի . Փէնճէրէ . կամ՝ ճաղալը :
Երաշխաւոր, ի . Երաշխաւոր . քէֆիլ :
Խարտոց, ի . Խարտոց . էյէ :
Մեղու, ուի . Նա, որ մեղր կշինէ :

Ոմանք կորուսանեն զձայնաւոր տառն, յորս յանգին . զոր օրինակ :

Մենեակ, նեկի . Խուց . օտա :
Դարբին, դարբնի . Դարբին . չիլինկիր :
Պարիսպ, րսպի . Պարիսպ . հիսար :
Ստրուկ, ստրկի . Ծառայ . քէօլէ :
Քուրմ, քրմի . Պաշտաման . կռ̃ կուռքի քահանայ :

Ոմանք փոփոխեն զձայնաւոր տառն, յորս յանգին . զոր օրինակ :

Գէտ, գիտի . Կէօլճէկ : կամ՝ չայըր :
Մէգ, միգի . Մշուշ . տուման :
Մոմեղէն, ղինի . Մոմ : կամ՝ ճրագի մոմ :
Հովիւ, հովուի . Հովիւ . չօպան :
Վարագոյր, գուրի . Փէրտէ : կամ՝ ծածկոյթ :

Անեզականք :

Բաղձանք, նաց . Մուրատ . էշխ . հավաս :
Լանջք, ջաց . Կուրծք . կէօքս :
Կեանք, կենաց . Կեանք . էօմր :

Օրինակ երրորդ հոլովման :

	Եզակի :	Յոգնակի .
Ո .	Գէտ .	Գետք .
Ս .	Գետոյ .	Գետոց .
Տ .	Գետոյ . 'ի գէտ .	Գետոց . 'ի գետս .

Հ.	զԳետ.	զԳետս.
Բ.	՚ի Գետոյ.	՚ի Գետոց.
Պ.	զԳետոյ.	զԳետոց.
Գ.	Գետով.	Գետովք.
Պ.	զԳետով.	զԳետովք.
Ն.	՚ի Գետ.	՚ի Գետս.
Կ.	ով Գետ :	ով Գետք :

Ըստ այսմ հոլովին բազում անուանք առանց կորուսման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. զոր օրինակ :

Աթոռ,	ոյ.	Աթոռ. իսքէմլէ : կամ՝ թախտ :
Արմատ,	ոյ.	Արմատ. քէօք :
Սեղան,	ոյ.	Սեղան. սօֆրա :
Գեղ.	ոյ.	Գեղեցկութիւն :
Տերև,	ոյ.	Տերև. եափրախ :
Աղուես,	ոյ.	Կէրթիճ : կամ՝ թօղլա :
Նիւթ,	ոյ.	Կէրէստէ : կամ՝ մարմին ունօղ բան :
Գործ,	ոյ.	Գործք. իշ :
Սափոր,	ոյ.	Տէստի : կամ՝ 29 օխանոց ջամ :
Ամօթ,	ոյ.	Այըպ. կամ՝ ֆուտուտ :

Կորուսմամբ :

Սեամ,	սեմոյ.	Շէմ. սօյա :
Անկողին,	կողնոյ.	Անկողին. տէօշէկ :
Կշիռ,	կշռոյ.	Կշեռք. թէրազի :
Անուր,	անրոյ.	Հալխա. թաամա :
Ցուպ,	ցպոյ.	Տէյէնէկ :

Փոփոխմամբ :

Ձէթ,	ձիթոյ.	Զէյթին եաղը :
Սէր,	սիրոյ.	Սէր. մուհապէթ :
Պատիւ,	պատուոյ.	Պատիւ. իզզէթ : կամ քատրէթ :
Բոյս,	բուսոյ.	Բոյս. ինչ որ գետնէն կըբուսնի :
Ունդ,	ընդոյ.	Հընտեղէն, ինչպէս՝ բակլա, ոսպ :

Անեզականք :

Անուրջք,	անրջոց.	Երազ. հէյալ. տիւաղ.

Գըժոխք , դժոխոց · Գըժոհէմ ։ եա՛ ճէհէննէմ ։
Կուռք , կռոց · Կուռաք · փութ ։

Օրինակ չորրորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ու.	Եկեղեցի ·	Եկեղեցիք ·
Սե.	Եկեղեցւոյ ·	Եկեղեցեաց ·
Տր.	Եկեղեցւոյ. յեկեղեցի ·	Եկեղեցեաց. յեկեղեցիս ·
Հ.	զԵկեղեցի ·	զԵկեղեցիս ·
Բ.	յԵկեղեցւոյ ·	յԵկեղեցեաց ·
Պ.	զԵկեղեցւոյ ·	զԵկեղեցեաց ·
Գ.	Եկեղեցեաւ ·	Եկեղեցեօք ·
Պ.	զԵկեղեցեաւ ·	զԵկեղեցեօք ·
Ն.	յԵկեղեցի, կամ յեկեղեցւոջ ·	յԵկեղեցիս ·
Կ.	ով Եկեղեցի ։	ով Եկեղեցիք ։

Ըստ այսմ հոլովին ամ անուանք յոգնավանկք յանգեալք 'ի ի · (բաց 'ի յատուկ անուանց և 'ի միավանկից) · զոր օրինակ ։

Աղաւնի , նւոյ · Աղաւնի · կէօվէրճին ։
Առաքինի , նւոյ · Առաքինի ։ եա՛ կորէճ ։
Գերի · րւոյ · Գերի · եսիր ։
Գործի , ծւոյ · Աստառնաւորի · քումաշ ·
Գոտի , տւոյ · Գոտի · գուշագ ։
Լեղի , ղւոյ · Կենդանայ լեղին · էօտ ։
Կղզի , զւոյ · Կղզի · ատա ։
Հովանի , նւոյ · Հուք ընօղ · սիփէր ։
Մկայուհի , հւոյ · Մարթիրոս էղած կին ։
Տեղի , ղւոյ · Տեղ · եէր ։ եա՛ մնասիպլէթ ։

Ննջականք ։

Ուետիք , տեաց · Ուետիք · մաճուն ։
Ընթրիք , րեաց · Իրիկուան սեղան կամ կերակուր ։
Կարծիք , ծեաց · Կարծիք · սէղիէլ · բանահն ։

Օրինակ հնգերորդ հոլովման :

	Եզակի :	Յոգնակի :
Ո.	Աղեղն ·	Աղեղունք ·
Ս.	Աղեղան ·	Աղեղանց ·
Տ.	Աղեղան · յաղեղն ·	Աղեղանց · յաղեղունս ·
Հ.	զԱղեղն ·	զԱղեղունս ·
Բ.	յԱղեղանէ ·	յԱղեղանց ·
Պ.	զԱղեղանէ ·	զԱղեղանց ·
Գ.	Աղեղամբ ·	Աղեղամբք ·
Պ.	զԱղեղամբ ·	զԱղեղամբք ·
Ն.	յԱղեղան, կամ յաղեղն ·	յԱղեղունս ·
Կ.	ով Աղեղն ·	ով Աղեղունք :

Ըստ այսու օրինակի հոլովին բազում անուանք առանց կորուսման և փոփոխման ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին · զոր օրինակ :

Ակն,	ական ·	Աչք : Եւս՝ Ճէվահիր :
Ամառն,	ռան, կամ րան ·	Ամառ · Եազ :
Ատամն,	ման ·	Ակռայ · Կեռիք · Տիշ :
Գագաթն,	թան ·	Գագաթ · Թէփէ :
Սերմն,	ման ·	Հունտ · Թօխում :
Սաւեղն,	ղան ·	Ճօղ, կամ Ճեղ : Եւս՝ Քէրան :
Հիմն,	ման ·	Հիմ · Թեմէլ :
Հիւսն,	սան ·	Տիւլկէր · Խառատ :
Որդն,	դան ·	Որդ · Գուրդ :
Անուն,	ուան · ուանք ·	Անուն · Ադ · Իսմ :

Կորուսմամբ :

Սկիզբն,	սկզբան ·	Սկիզբ · Գլուխ · Էվվէլ :
Խոստումն,	խոստման ·	Խօսք տալը :
Ձուկն,	ձկան ·	Ձուկ · Պալըք :
Տուն,	տան ·	Տուն · Էվ · Խանէ :
Պաշտօն,	տաման · տամունք ·	Ծառայութիւն · Խըզմէթ :

Փոփոխմամբ :

Փայծաղն,	փայծեղան ·	Փայծաղ · Տալագ :

Եղեգն . եղեգան . Եղէգ · ղամըշ ։
Պոյտն , պուտան . Պարտագ · չէօմլէկ ։

Ունեղականք ։

Փոշմունք , մանց . Ա՛էծ քէծ պաթէծ ադամալը ։
Լորձունք , ձանց . Շոլէք · բէրընի ձըրձօդր ։
Յօլմունք , մանց . Ա՛քէն վէր սալըչ ընելը ։

Օրինակ վեցերորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Նեղութիւն .	Նեղութիւնք .
Ս.	Նեղութեան .	Նեղութեանց .
Տ.	Նեղութե՛ . 'ի նեղութի՛ .	Նեղութե՛ց . ընդ նեղութի՛ս .
Հ.	զՆեղութիւն .	զՆեղութիւնս .
Բ.	'ի Նեղութենէ .	'ի Նեղութեանց .
Պ.	զՆեղութենէ .	զՆեղութեանց .
Գ.	Նեղութեամբ .	Նեղութեամբք .
Զ.	զՆեղութեամբ .	զՆեղութեամբք .
Ն.	'ի Նեղութեան .	'ի Նեղութիւնս .
Կ.	ով Նեղութիւն ։	ով Նեղութիւնք ։

Այսպէս հոլովին ա՛մ անուանք յանգեալք 'ի ութիւն . զոր օրինակ ։

Տղայութիւն , թեան. ա. Հասակ մարդոյ 'ի ա , մինչ 'ի է ։
Մանկութի՛ , թե՛. բ. Հասակ մարդոյ 'ի է . մինչ 'ի ժդ ։
Պատանեկութի՛ , թե՛. գ. Հասակ մարդոյ 'ի ժդ , մինչ 'ի իե ։
Երիտասարդութի՛ , թե՛. դ. Հասակ մարդոյ 'ի իե , մինչ 'ի խ ։
Այրութի՛ , թե՛. ե. Հասակ մարդոյ 'ի խ , մինչ 'ի ծ .
Ծերութի՛ , թե՛. զ. Հասակ մարդոյ 'ի ծ , մինչ 'ի հ ։
Զառամութի՛ , թե՛. է. Հասակ մարդոյ 'ի հ , մինչ 'ի մահ ։
Յաւիտենականութի՛, թե՛. Անվախճան տեւողութի՛ ։

Ըստ այսմ հոլովին և այլ քանի մի անուանք ։

Արիւն , արեան , արենէ . Արիւն · գան ։
Ծնունդ , ծննդեան , 'ի ծննդենէ . Ծնանիլը · եա՛ ծնածը ։
Կորուստ , րստեան , րստենէ . Կորսուիլը · խայըպ ։

Հանգիստ, գստեան, գստենէ. Րահաթլըք. հէնկէնմէք :
Տեսիլ. տեսլեան, 'ի տեսլենէ. Տիւշ : եա՝ րիւեա :
Ընկուզ, ընկզեան, կզանէ. Ճէվիզ. պատամ :
Մաղիւ, ղուեան, ղուէ. Սաչը. եարընըն քէմա :
Տիւ, տուընջեան, 'ի տուէ, կամ 'ի տուընջենէ : Կիւնտիւզ :
Ընտանիանք, նիանց, նիանս. Որեր ճանքանոքը :
Խորայկլեանք, լեանց, լեանս. Խորայելայիք :

Օրինակ եօթներորդ հոլովման :

Եզակի :	Յոգնակի :
Ո. Գառն .	Գառինք .
Ս. Գառին .	Գառանց .
Տ. Գառին . 'ի գառն .	Գառանց . 'ի գառինս .
Հ. զԳառն .	զԳառինս .
Բ. 'ի Գառանէ .	'ի Գառանց .
Պ. զԳառանէ .	զԳառանց .
Գ. Գառամբ .	Գառամբք .
Պ. զԳառամբ .	զԳառամբք .
Ն. 'ի Գառին, կամ 'ի գառն .	'ի Գառինս .
Կ. ով Գառն :	ով Գառինք :

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք . իբ :

Խաշն, շին, շանէ. Ոչխարներին կիմ այծերին պէօլիւկի :
Կաթն, թին. թանէ, Կաթ. սիւտ.
Բեռն, ռին, ռանէ, Բեռ. եիւք :
Եզն, զին, զանէ. Եզ. էօքիւզ :
Ձեռն, ռին, ռանէ. ձեռք, ձեռաց, ձեռամբք, կձեռօք. Էլ :
Ընձն, ձին, ձնէ. Ինջ. ինճիր : եա՝ հօզի :
Սամն, սին, մնէ. սունք. Փայ : եա՝ հիսսէ :
Մատն, տին, տնէ. տունք. Մատ. պարմաք.
Թոռն, ռին, կամ ռան, ռնէ, կամ ռանէ. ռունք. Թոռն :
Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերամբ. լերինք, լերանց. Լեռ. տաղ :

Օրինակ ութերորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ու.	Զգեստ ·	Զգեստք ·
Ս.	Զգեստու ·	Զգեստուց ·
Տ.	Զգեստու · 'ի զգեստ ·	Զգեստուց · 'ի զգեստս
Հ.	զԶգեստ ·	զԶգեստս ·
Բ.	'ի Զգեստէ ·	'ի Զգեստուց ·
Պ.	զԶգեստէ ·	զԶգեստուց ·
Գ.	Զգեստու ·	Զգեստուք ·
Պ.	զԶգեստու ·	զԶգեստուք ·
Ն.	'ի Զգեստ, կամ 'ի զգեստու ·	'ի Զգեստս ·
Կ.	ով Զգեստ ։	ով Զգեստք ։

Ըստ այսմ հոլովին անուանք սակաւք · որպէս ։

Գանձ,	ու ·	Գանձ · խազնա ։
Գրաստ,	ու ·	Գրաստ · տաւար ։
Դաս,	ու ·	Պէօլիւք · սիւրիւ ։ Եւ՝ պաղէր ։
Բոխուծ,	ու, կամ ոյ ·	Բախուծ · աուլան ։
Զարդ,	դու, դուէ ·	Զարդարանք ։
Խրատ,	տու, տուէ ·	Խրատ · էօյիւտ ։ Եւ՝ պատէժ ։
Ցուլ,	ցլու, կամ ցլոյ ·	Պուղա, կամ պօղա ։
Զէն,	զինու ·	Զէնք · սիլահ ։
Բարք,	րուց ·	Խույ · ատէթ ։
Պարտք,	տուց ·	Պարտք · տալէք · վէրէճէյի ։

Օրինակ իններորդ հոլովման ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ու.	Փոքր ·	Փոքունք ·
Ս.	Փոքու ·	Փոքունց ·
Տ.	Փոքու · առ փոքր ·	Փոքունց · ընդ փոքունս ·
Հ.	զՓոքր ·	զՓոքունս ·
Բ.	'ի Փոքուէ ·	'ի Փոքունց ·
Պ.	զՓոքուէ ·	զՓոքունց ·
Գ.	Փոքու, կամ ումբ ·	Փոքումբք ·

Հ. զփոքու , կամ ումն · զփոքումբք ·
Ն. 'իփոքու , կ՜ 'ի փոքր · 'իփոքունս ·
Կ. ով փոքր ։ փոքունք ։

Այնպէս հոլովին ըստ իմիք և այլ սակաւ բառք · որ՜ ։

Թանձր , ձու , ձու · Թանձունք , ձունց , ձրուք ։
Ծանր , նու , նու · ծանունք , նունց , նուք ։
Մանր , նու , նու · մանունք , նունց , նումբք ։
Մեղր , ղու , ղու · մեղրք , մեղրից , մեղրօք ։
Քաղցր , ցու , ցու · քաղցունք , ցունց , ցուք ։

Օրինակ տասներորդ հոլովման ։

Եզակի · Յոգնակի ։

Ո. Աղբիւր · Աղբիւրք , կ՜ աղբերք ·
Ս. Աղբեր · Աղբերաց , կ՜ աղբերց ·
Տ. Աղբեր · յաղբիւր · Աղբերաց , կ՜ աղբերց ·
յաղբիւրս , կ՜ յաղբերս ·
Հ. զԱղբիւր · զԱղբիւրս , կ՜ զաղբերս ·
Բ. յԱղբերէ · յԱղբերաց , կ՜ յաղբերց ·
Հ. զԱղբերէ · զԱղբերաց , կ՜ զաղբերց ·
Գ. Աղբերբ , կ՜ բերաւ · Աղբերօք , կ՜ աղբերբք ·
Հ. զԱղբերբ , կ՜ բերաւ · զԱղբերօք , կ՜ զաղբերբք ·
Ն. յԱղբեր , կ՜ յաղբիւր · յԱղբիւրս , կ՜ յաղբերս
Կ. ով Աղբիւր ։ ով Աղբիւրք , կ՜ աղբերք ։

Ըստ այսմ հոլովին և այլ քանի մի անուանք · որ՜ ։

Կայսր , սեր , սերէ · Կայսր · ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐ ։
Ոսկր , կեր , կերէ · Ոսկոր · ԿԷՄԻՔ ։
Ուստր , տեր , տերէ · Մանչ զաւակ ։
Տարր , տարեր , 'ի տարրէ · Տարերք · [illegible] ։
Մախր , խեր · խրէ · Մախր · ՉԸՐՓԱ ։
Եզր , զեր , զրէ · Ծայր · ՔԷՆԱՐ ։
Լիտր , լտեր , 'ի լտերէ · Լիտրէ · որ է՝ 144 · դրամ ։
Դուստր , դստեր , 'ի դստերէ · Աղջիկ զաւակ · ԳԸԶՕՂԼԱՆ ։
Ալիւր , ալեր , յալերէ · Ալեւր · ուն ։
Եղջիւր , եղջեր , յեղջերէ · Պոյնուզ ։ եա՝ ուձ ։

Օրինակ մետասաներորդ հոլովման :

	Եզակի :	Յոգնակի :
Ո·	Աստղ ·	Աստեղք ·
Ս·	Աստեղ ·	Աստեղաց ·
Տ·	Աստեղ · յաստղ ·	Աստեղաց · յաստեղս ·
Հ·	զԱստղ ·	զԱստեղս ·
Բ·	յԱստեղէ ·	յԱստեղաց ·
Պ·	զԱստեղէ ·	զԱստեղաց ·
Գ·	Աստեղբ ·	Աստեղբք , կմ̄ ղօք ·
Պ·	զԱստեղբ ·	զԱստեղբք , կմ̄ ղօք ·
Ն·	յԱստեղ , կմ̄ յաստղ ·	յԱստեղս ·
Կ·	ով Աստղ :	ով Աստեղք :

Ըստ այսմ հոլովին սակաւ անուանք · որք :

Անգղ , գեղ , Ախպապա :
Արկղ , կեղ · Սընտուխ · սանտըք :
Կոթղ , թեղ · Կոթ · սապ :
Կոճղ , ճեղ · Կէօթիւք : նաւ՝ թօմրուխ :
Ոստղ , տեղ · Ճօքան , որով թափուչան ծորսան :

5007
38

Օրինակ երկոտասաներորդ հոլովման :

Եզակի ·

Ուղ ·	Տրդատ ·
Սեռ ·	Տրդատայ ·
Տրա ·	Տրդատայ · ցտրդատ · առ տրդատ ·
Հայց ·	զՏրդատ ·
Բաց ·	'ի Տրդատայ ·
Պատ ·	զՏրդատայ ·
Գործ ·	Տրդատաւ ·
Պար ·	զՏրդատաւ ·
Ներ ·	'ի Տրդատ ·
Կոչ ·	ով Տրդատ :

Ըստ այսմ հոլովին բաղում յատուկ անուանք. զոր օրինակ.

Անակ,	այ.	Լուսաւորչայ հայրը։
Անտիոք,	այ.	Անտաքեա քաղաքը։
Արշամ,	այ.	Աբգար թագաւորին հայրը։
Բէլ,	այ.	Բաբելացւոց առջի թագաւորը։
Հռովմ,	այ.	Պօղոս Պետրոս քաղաքը։
Մեսրովբ,	այ.	Մէ սուրբ վարդապետը։
Պարոյր,	այ.	Հայոց առջի պսակած թագաւորը։
Մծբին,	բնայ.	Նուսէպին քաղաքը։
Անուշ,	ուշայ.	Աժդահակ թագաւորին առջի կինը։
Խորէն,	րէնայ.	Աբգար թագաւորին զօրավարը։

Օրինակ երեքտասաներորդ հոլովման.

Եզակի.

Ուղ.	Եսայի.
Սեռ.	Եսայեայ.
Տրա.	Եսայեայ, առ Եսայի, ցԵսայի.
Հայց.	զԵսայի.
Բաց.	յԵսայեայ.
Պատ.	զԵսայեայ.
Գործ.	Եսայեաւ.
Պար.	զԵսայեաւ.
Ներ.	յԵսայի.
Կոչ.	ով Եսայի։

Ըստ այսմ հոլովին բաղում յատուկ անուանք փոփոխմամբ ձայնաւոր տառիցն՝ յորս յանգին. որք.

Աթանագինէ,	նեայ.	Մէ եպիսկոպոս նահատակ։
Արիստակէս,	կեայ.	Լուսաւորչայ պզտիկ որդին։
Գայիանէ,	նեայ.	Մէ Հռիփսիմեանց մայրապետը.
Զարուհի,	հեայ.	Մեծին Տիգրանայ կինը։
Օգոստոս,	տեայ.	Կայսր Հռոմայ։

Գիտելի է, զի յատուկ անուանց բազումք հոլովին ըստ կերպի հասարակ հոլովմանց. որպ ։

Ագաթանգեղոս, ի, իւ. Տրդատ թագաւորին քարտուղարը ։
Ադդէ, ի, իւ. Հայրապետ առաքելոց ատենը ։
Մովսէս, էսի, եսի, իսի, սիւ. Մովսէ մարգարէն ։
Պարսիկ, սկի, աւ. Պարսից ազգը. [illegible] ։
Արծկէ, կէոյ. ով. [illegible] ։
Հեթում, Թմոյ. ով. Հայոց թագաւոր ՚ի Կիլիկիա ։
Անի, անւոյ, ւով. Անի քաղաքը ։
Արածանի, նւոյ, ւով. Եփրատ գետ. կմ անուն մարդ ։
Աստղիկ, տղկան, ամբ. [illegible], Ափրոդիտէ ։
Գողթն, թան, ամբ. Գողթնայ գաւառը ։
Արտազ, ու. Արտազ գաւառ Հայաստանու ։
Եղիազար, ու. Ահարոն քահանային որդին ։
Աբրահամ, մու, մաւ. Աբրահամ նահապետ ։
Աղեքսանդր, դրի, դրոսի, դրեայ. Մակեդոնացոց թագը ։
Աշոտ, տոյ, տայ. Հայոց իշխան ու թագաւոր ։
Դաւիթ, դաւթի, թայ. Դաւիթ մարգարէ թագաւորը ։
Թովմաս, այի, ասու. Թովմաս առաքեալ ։
Մասիս, մասեաց. Արարատ լեռը՝ ուր տապանը նստաւ ։
Կարս, կարսայ, կմ կարուց. Կարս կամ Խարս քաղաքը ։

Օրինակ չորեքտասաներորդ հոլովման ։

Յոգնակի ։

Ուղ. Հայաստանեայք.
Սեռ. Հայաստանեայց, կամ եաց.
Տրա. Հայաստանեայց. ընդ. հայաստանեայս.
Հայց. զՀայաստանեայս.
Բաց. ՚ի Հայաստանեայց.
Պատ. զՀայաստանեայց.
Գործ. Հայաստանեօք.
Պար. զՀայաստանեօք.
Ներ. ՚ի Հայաստանեայս.
Կոչ. ով Հաւաստանեայք ։

Ըստ այսմ հոլովին յետադաս յոգնական անուանքդ. զոր օրինակ.

Ենթալուսնեայք, եայց. Լուսնի տակ եղածներն.
Միջերկրեայք, եայց. Մէջտեղի երկիրներն. անատօլու.
Հայկազնեայք, եայց. Հայոց ազգէ ըլլօղներն.
Առժամանակեայք, եայց. Ժամանակաւոր բաներ.
Ապագայք, այց, կ՟այից, այիւք. Գալիքներն. ըլլալիքներն.

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս մասնաւոր հոլովմանց.

Մասնաւոր հոլովմունք են վեց, ըստ որոց հոլովին անուանք ինն. այսինքն են, Տէր. այր. հայր. մայր. եղբայր. քոյր. կին. օր, և գիւղ, կամ գեօղ, և բարդեալք սոցա, զորս դիցուք աստ առաջի.

Հոլովումն անուանս՝ Տէր.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Տէր.	Տեարք.
Ս.	տեառն.	տեարց, կամ տէրանց.
Տ.	տեառն. 'ի տէր. ցտ՟ր.	տեարց. ցտեարս.
Հ.	զտէր.	զտեարս.
Բ.	'ի տեառնէ.	'ի տեարց, կ՟մ 'ի տէրանց.
Պ.	զտեառնէ.	զտեարց, կամ զտէրանց.
Գ.	տէրամբ.	տէրամբք.
Պ.	զտէրամբ.	զտէրամբք.
Ն.	'ի տեառն, կամ 'ի տ՟ր.	'ի տեարս.
Կ.	ով տէր.	ով տեարք.

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. օ՟ր.

Կոչնատէր, տեառն. Ճաշէն կանչօղն.
Պարտատէր, տեառն. Պարտքատէր. առնելիք ունօղ.
Տանուտէր, տեառն. Տանըտէր. էվսահաբը.

Այսպէս հոլովի և անունն՝ Այր· ընդ նմին և բար-դեալք նորա. զոր օրինակ:

Այր, առն· [illegible]
Քեռայր, առն· [illegible]
Ներկայր, առն· [illegible]

Հոլովումն անուանս՝ Հայր:

Եզակի:	Յոգնակի:
Ո· Հայր·	Հարք·
Ս· Հօր·	Հարց, կամ հարանց·
Տ· Հօր· առ հայր· ցհայր·	Հարց· առ հարս· ցհարս·
Հ· զՀայր·	զՀարս·
Բ· 'ի Հօրէ·	'ի Հարց, կմ 'ի հարանց·
Գ· զՀօրէ·	զՀարց, կմ զհարանց,
Պ· Հարբ·	Հարբք·
Գ· զՀարբ·	զՀարբք·
Ն· 'ի Հօր· կամ 'ի հայր·	'ի Հարս·
Կ· ով Հայր:	ով Հարք:

Այսպէս հոլովին և անուանք՝ Մայր և Եղբայր· և բարդեալք նոցին. զոր օրինակ:

Մայր, մօր· մարց· [illegible]
Կնքահայր, հօր· հարց· [illegible]
'Նախահայր, հօր· հարց· [illegible]
Եղբայր, եղբօր· բարց· [illegible]
Հօրեղբայր, եղբօր· բարց· [illegible]

Հոլովումն անուանս՝ Քոյր·

Եզակի:	Յոգնակի:
Ո· Քոյր·	Քորք·
Ս· Քեռ·	Քերց·
Տ· Քեռ· առ քոյր· ցքոյր·	Քերց· ցքորս·
Հ· զՔոյր·	զՔորս·
Բ· 'ի Քեռէ·	'ի Քերց·
Գ· զՔեռէ·	զՔերց·

Գ. Քերբ. — Քերբք.
Պ. զՔերբ. — զՔերբք.
Ն. 'ի Քեռ, կամ 'ի քոյր. — 'ի Քորս.
Կ. ով Քոյր: — ով Քորք:

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. ոպ:

Հօրաքոյր, քեռ. Հօրէնօր. հալա:
Մօրաքոյր, քեռ. Մօրէնօր. Թէյզէ:

Հոլովումն անուանս՝ Կին:

Եզակի:	Յոգնակի:
Ու. Կին.	Կանայք.
Ս. Կնոջ.	Կանանց.
Տ. Կնոջ. ցկին.	Կանանց. առ կանայս.
Հ. զԿին.	զԿանայս.
Բ. 'ի Կնոջէ.	'ի Կանանց.
Պ. զԿնոջէ.	զԿանանց.
Գ. Կանամբ, կամ կնաւ.	Կանամբք.
Պ. զԿանամբ, կմ զկնաւ.	զԿանամբք.
Ն. 'ի Կնոջ, կամ 'ի կին.	'ի Կանայս.
Կ. ով Կին:	ով Կանայք:

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. ոպ:

Տիկին, տիկնոջ. տիկնայց, կմ տիկնանց. Խաթուն. սուլթան:
Ըռնակին, կնոջ. Լորէէ ունօղ. էրլի:
Միակին, կնոջ. Մէկ էրնէան հետ կարգուած:

Հոլովումն անուանս՝ Գիւղ:

Եզակի:	Յոգնակի:
Ու. Գիւղ.	Գիւղք.
Ս. Գեղջ.	Գիւղից.
Տ. Գեղջ. 'ի գիւղ.	Գիւղից. 'ի գիւղս.
Հ. զԳիւղ.	զԳիւղս.
Բ. 'ի Գեղջէ.	'ի Գիւղից.
Պ. զԳեղջէ.	զԳիւղից.
Գ. Գիւղիւ.	Գիւղօք.

Պ. զԳիւղիւ. զԳիւղօք.
Ն. 'ի Գեղջ, կամ 'ի գիւղ. 'ի Գիւղս.
Կ. ով Գիւղ. ով Գիւղք.

Սորա յոգնականն լինի եւ՝ Գիւղօրէք, գիւղօրէից. Ը͞ գիւղօրէս. զգիւղօրէս. 'ի գիւղօրէից. զգիւղօրէից. գիւղօրէիւք. զգիւղօրէիւք. 'ի գիւղօրէս. ով գիւղօրէք.

Ըստ այսմ հոլովին եւ սոքին.

Գեօղ, գեղջ. գեօղք. գեօղից. Գեղ. քեօյ.

Զօրագիւղ, գեղջ. Զօրու մէջ եղած գեղ.
Նորագիւղ, գեղջ. Նոր գեղ.
Քաղաքագիւղ, գեղջ. Մեծ գեղ. խասապա.

Հոլովումն անուանն՝ Օր.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Օր.	Աւուրք.
Ս.	Աւուր.	Աւուրց.
Տ.	Աւուր. յօր. ցօր.	Աւուրց. յաւուրս. ցաւուրս.
Հ.	զՕր.	զԱւուրս.
Բ.	յՕրէ.	յԱւուրց.
Պ.	զՕրէ.	զԱւուրց.
Գ.	Աւուրբ.	Աւուրբք.
Պ.	զԱւուրբ.	զԱւուրբք.
Ն.	յԱւուր, կ͞մ յօր.	յԱւուրս.
Կ.	ով Օր.	ով Աւուրք.

Ըստ այսմ հոլովին եւ բարդեալք սորա. ո͞պ.

Երկայնօր, աւուր. Երկան օր. շատ օրեր.
Կէսօր, աւուր. Օրհասարակ.

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս հոլովման միջական անուանց.

Միջական անուանք են հնգապատիկ. մասնականք, հարցականք, վերբերականք, հանրականք, և թուականք. զորոց զհոլովմունսն դիցուք առաջի։

Հոլովումն մասնական անուանցս՝ Ոմն. ոք. իմն, և այլն։

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Ոմն.	Ոմանք.
Ս.	Ուրումն.	Ոմանց.
Տ.	Ումեմն. առ ոմն.	Ոմանց. առ ոմանս.
Հ.	զՈմն.	զՈմանս.
Բ.	յՈւմեմնէ.	յՈմանց.
Պ.	զՈւմեմնէ.	զՈմանց.
Գ.	Ոմամբ.	Ոմամբք.
Պ.	զՈմամբ.	զՈմամբք.
Ն.	յՈւմեմն, կամ յումն։	յՈմանս։

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Ոք.	Ոմանք.
Ս.	Ուրուք.	Ոմանց.
Տ.	Ումեք. առ ոք.	Ոմանց. ցոմանս.
Հ.	զՈք.	զՈմանս.
Բ.	յՈւմեքէ.	յՈմանց.
Պ.	զՈւմեքէ.	զՈմանց.
Գ.	Ոմամբ.	Ոմամբք.
Պ.	զՈմամբ.	զՈմամբք.
Ն.	յՈւմեք, կամ յոք։	յՈմանս։

Եզակի.

Ուղղական.	Իմն, կամ ինչ.
Սեռական.	Իրիք.
Տրական.	Իմիք. առ իմն, կամ յինչ.
Հայցական.	զԻմն, կամ զինչ.

Բացառական ․ յ Մէնջէ ․
Պատմական ․ զ Մէնջէ ․
Գործիական ․ Մեւք ․
Պարառական ․ զ Մեւք ․
Ներգոյական ․ յ Միք , կամ յիմն , կամ յինչ ։

Եզակի ․

Ուղղական ․ Միւս ․
Սեռական ․ Միւսոյ ․
Տրական ․ Միւսում , կամ միւսոյ ․ ցմիւս ․
Հայցական ․ զՄիւս ․
Բացառական ․ 'ի Միւսմէ , կամ 'ի միւսոյ ․
Պատմական ․ զՄիւսմէ , կամ զմիւսոյ ․
Գործիական ․ Միւսով ․
Պարառական ․ զՄիւսով ․
Ներգոյական ․ 'ի Միւսում , կամ 'ի միւս ։

Ըստ այսմ հոլովին , և մասնական անուանքս՝ Իւրաքանչիւր , իւրոյ , իւրում , իւրմէ , իւրով ։ Երկաքանչիւր , իւրոյ , իւրում , իւրմէ , եւն ․ որոց յոգնակին լինի որպէս գետք , գետոց ․ զոր օրինակ ․ իւրաքանչիւրք , իւրոց ․ երկաքանչիւրք , իւրոց ․ եւն ։

Սոյնպէս հոլովի և ածական անունս՝ Այլ ․ զոր օրինակ ․ Այլ , այլոյ , այլում , յայլմէ , այլով , այլում , այլք , այլոց , այլովք , յայլս ։

Հոլովումն հարցական անուանս՝ Ո՞վ , կամ ո՞ ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո․	Ո՞վ , կամ ո՞ ․	Ո՞յք ․
Ս․	Ո՞յր ․	Ո՞յց ․
Տ․	Ո՞ւմ ․ առ ո՞վ , կամ առ ո՞ ․	Ո՞յց , կամ որո՞ց ․
Հ․	զՈ՞վ , կամ զո՞ ․	զՈ՞յս ․
Բ․	յՈւմմէ՞ ․	յՈրո՞ց ․
Պ․	զՈւմմէ՞ ․	զՈրո՞ց ․
Գ․	Իւ՞ ․	Որո՞վք ․
Պ․	զԻւ՞ ․	զՈրո՞վք ․
Ն․	յՈ՞ւմ , կամ յո՞վ , կամ յո՞ ։	յՈ՞րս ։

Հոլովումն վերբերական անուանս՝ Այսքան.

	Եզակի:	Յոգնակի:
Ու.	Այսքան.	Այսքանիք.
Ս.	Այսքանոյ.	Այսքանեաց, կ̃ այսքանից
Տ.	Այսքանոյ. ցայսքան.	Այսքանեաց. ցայսքանս.
Հ.	զԱյսքան.	զԱյսքանս.
Բ.	յԱյսքանոյ.	յԱյսքանեաց.
Պ.	զԱյսքանոյ.	զԱյսքանեաց.
Գ.	Այսքանեաւ.	Այսքանեօք.
Շ.	զԱյսքանեաւ.	զԱյսքանեօք.
Ն.	յԱյսքան:	յԱյսքանս:

Ըստ այսմ հոլովին և սոքին. Որքան. այդքան. այնքան. սոյնքան. դոյնքան. նոյնքան:

Իսկ բառքս՝ Որպիսի. այսպիսի. այդպիսի. այնպիսի. սոյնպիսի. դոյնպիսի. նոյնպիսի. հոլովին ամենևին որպէս Եկեղեցի, ւոյ:

Հոլովումն համրական անուանս՝ Ամենեքեան, կամ ամենեքին:

Յոգնակի.

Ու. Ամենեքեան, կամ ամենեքին.
Ս. Ամենեցուն, կամ ամենեցունց.
Տ. Ամենեցուն. առ ամենեսեան, կ̃ առ ամենեսին.
Հ. զԱմենեսեան, կամ զամենեսին.
Բ. յԱմենեցունց.
Պ. զԱմենեցունց.
Գ. Ամենեքումբք.
Շ. զԱմենեքումբք.
Ն. յԱմենեսեան, կամ յամենեսին.
Կ. ով Ամենեքեան, կամ ով ամենեքին:

Այսպէս հոլովի և բառս՝ Բոլորեքեան, կամ բոլորեքին, բոլորեցուն. և այլն.

Հոլովումն թուական անուանս՝ Մի ։

Նշանէ ։

Ո. Մի .
Ս. Միոյ, կամ միոջ .
Տ. Միում, կամ միոյ . 'ի մի .
Հ. զՄի .
Բ. 'իՄիոյ, կամ 'ի միոջէ .
Պ. զՄիոյ, կամ զմիոջէ .
Գ. Միով .
Պ. զՄիով .
Ն. 'իՄիում, կամ 'ի մի, կամ 'ի միոջ .
Կ. ո՜վ Մի ։

Այնպէս հոլովին և բաղդեալք սորա . ո՛րզոն, Քսան-եւմի, միոյ . երեսունեւմի, միոյ . և այլն ։

Իսկ վասն այլոց թուական անուանց գիտելի է, զի ընդարձակքն պէսպէս հոլովին . ո՛րզոն ։

Երկու, երկուց, երկոքումբք ։
Երեք, երից, երիւք ։
Չորք, կամ չորս, չորից, չորիւք ։
Հինգ, հնգի . հնգից, հնգօք, կամ հնգիւք .
Վեց, վեցից, վեցիւք .
Եօթն, եօթանց, կամ եօթնից, եօթամբք ։
Ութ, ութի . ութից, ութիւք ։
Ինն, ըննի, ըննիւ . ինունք, իննուց, կ̄ ինունց, կամ ըննից, ըննիւք, կամ ինամբք և կամ իննամբք ։
Տասն, տասին, տասամբ . տասունք, սանց, սամբք ։
Մետասան, կամ սանք, սանից, նիւք ։
Քսան, քսանից, քսանիւք ։
Երեսուն, երեսնից, երեսնիւք ։
Հարիւր, ոյ, ով . ոց, կամ ից, ովք, կամ օք ։
Երկերիւր, ոյ, ով . ոց ։ կամ, ի, իւ . ից, օք ։
Հազար, ի, աւ, կամ իւ . աց, կամ ից, օք ։
Բիւր, ու, ու . ուց, ուք ։ կամ ոյ, ով . ոց, ովք ։
Այնպէս հոլովին և այլ ամ̃ ընդարձակ թուական անուանք, որք ըստ վերոյգրելոցդ յանգին ։

Իսկ դասականքն հոլովին ընդ առաջին և ըստ երկրորդ օրինակաւ, իբր ըստ Բառի, և ընդ Քաղաքա. որ.

Առաջներորդ, ի, աւ, հաս իւ. աց, օք։
Երկրորդ, ի, աւ, հաս իւ. աց, օք։
Երրորդ, ի, աւ, հաս իւ. աց, օք։
Տամներորդ, ի, աւ, հաս իւ. աց, օք. եւն։

Այնպէս և զատական և կրկնական անուանք թուականք թէպէտ հազիւ ուրեք հոլովին, բայց 'ի ստիպել հարկին՝ լինի ըստ դասականացն ընդ Քաղաքա և ընդ Բառի. որգոն։

Հնգեակ, գեկի, կաւ, հաս կիւ. կաց, կօք։
Հնգապատիկ, պատկի, կաւ, հաս կիւ. կաց, կօք. ըստ այսմ և այլքն։

Իսկ անձներականք. որպիսի են. Երկոքեան. երեքեան. չորեքեան, և այլն. հոլովին ըստ հանրականին. որգոն.

Երկոքեան, կոցունց, հս երկոքին, կոցուն, կոքումբք։
Երեքեան, երեցունց, հաս երեքին, երեցուն, երեքումբք. և այլն։

ԳԼՈՒԽ Գ։

Յաղագս հոլովման Դերանուանց։

Դերանուանք են հնգապատիկ։ Իսկական. Ես. դու. ինքն. իւր։ Յուցական. Սա. դա. նա։ Այս. այդ. այն։ Սոյն. դոյն. նոյն։ Ստացական. Իմ. քոյ. մեր. ձեր. իւր, իւրոյ։ և ես, սորայն. դորայն. նորայն. և այլն։ Յարաբերական. Որ։ և Դիմորոշական. ս. դ. ն։

Ստորա առ հասարակ բաց 'ի դիմորոշականէն՝ պէսպէս հոլովին. զորոց զօրինակս դիցուք կարգաւ։

Հոլովումն եական դերանուանց՝ Ես· դու· ինքն· ինք ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Ես·	Մեք·
Ս·	Իմ·	Մեր·
Տ·	Ինձ· առ իս· ցիս· ընդ իս·	Մեզ· առ մեզ·
Հ·	զԻս·	զՄեզ·
Բ·	յԻնէն·	'ի Մէնջ·
Պ·	զԻնէն·	զՄէնջ·
Գ·	Ինեւ·	Մեօք·
Պ·	զԻնեւ·	զՄեօք·
Ն·	յԻս ։	'ի Մեզ ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Դու·	Դուք·
Ս·	Քո·	Ձեր·
Տ·	Քեզ· առ քեզ· ցքեզ·	Ձեզ· առ ձեզ·
Հ·	զՔեզ·	զՁեզ·
Բ·	'ի Քէն·	'ի Ձէնջ·
Պ·	զՔէն·	զՁէնջ·
Գ·	Քեւ·	Ձեօք·
Պ·	զՔեւ·	զՁեօք·
Ն·	'ի Քեզ·	'ի Ձեզ·
Կ·	ով Դու ։	ով Դուք ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո·	Ինքն·	Ինքեանք·
Ս·	Ինքեան·	Ինքեանց·
Տ·	Ինքեան· առ ինքն·	Ինքեանց· առ ինքեանս·
Հ·	զԻնքն·	զԻնքեանս·
Բ·	յԻնքենէ·	յԻնքեանց·
Պ·	զԻնքենէ·	զԻնքեանց·
Գ·	Ինքեամբ·	Ինքեամբք·
Պ·	զԻնքեամբ·	զԻնքեամբք·
Ն·	յԻնքեանս, կամ յինքն ։	յԻնքեանս ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	(ոչ ունի)	Իւրեանք.
Ս.	Իւր կամ իւրեան.	Իւրեանց.
Տ.	Իւր, կմ իւրեան. առ իւր.	Իւրեանց. ը̄ իւրեանս.
Հ.	(ոչ ունի)	(ոչ ունի)
Բ.	յԻւրմէ.	յԻւրեանց.
Պ.	զԻւրմէ.	զԻւրեանց.
Գ.	Իւրև, կմ իւրեամբ, կմ իւրեաւ.	Իւրեամբք.
Պ.	զԻւրև, կմ զիւրեամբ, կմ զիւրեւ.	զԻւրեամբք.
Ն.	յԻւր, կամ յիւրեան ։	յԻւրեանս ։

Այսպէս հոլովին ը̄ իմք՝ և անեզական պակասաւոր գերանուանքս՝ Միմեանց, և Իրերաց. որգոն ։

	Յոգնակի ։	Յոգնակի ։
Ս.	Միմեանց.	Իրերաց.
Տ.	Միմեանց. առ միմեանս.	Իրերաց. ցիրեարս.
Հ.	զՄիմեանս.	զԻրեարս.
Բ.	'ի Միմեանց.	յԻրերաց.
Պ.	զՄիմեանց.	զԻրերաց.
Գ.	Միմեամբք.	Իրերօք.
Պ.	զՄիմեամբք.	զԻրերօք.
Ն.	'ի Միմեանս ։	յԻրեարս ։

Հոլովումն ցուցական գերանուանն՝ Նա ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Նա.	Նոքա, կմ նոքին.
Ս.	Նորա, կամ նորուն.	Նոցա, կմ նոցուն, կամ նոցունց.
Տ.	Նմա. առ նա. ցնա, կամ ընդ նա.	Նոցա. առ նոսա, ը̄ նո, կմ ը̄ նոսին.
Հ.	զՆա.	զՆոսա, կմ զնոսին.
Բ.	'ի Նմանէ.	'ի Նոցանէ, կմ ցունց.
Պ.	զՆմանէ.	զՆոցանէ, կմ ցունց.
Գ.	Նովաւ.	Նոքօք, կմ նոքիմբք.
Պ.	զՆովաւ.	զՆոքօք, կմ զնոքիմբք.

Ն․ ՚Ի Նմա, կամ ՚ի նմին, կամ ՚ի նա ։ ՚Ի Նոսա, կամ ՚ի նոսին ։

Այսպէս հոլովին և սոքին․ Սա, սորա․ դա, դորա ։

Հոլովումն ցուցական դերանուանս՝ Նոյն ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո․	Նոյն․	Նոյնք․
Ս․	Նորին․	Նոցին․
Տ․	Նմին․ առ նոյն․	Նոցին․ առ նոյնս․
Հ․	զՆոյն․	զՆոյնս․
Բ․	(ոչ ունի)	(ոչ ունի)
Պ․	(ոչ ունի)	(ոչ ունի)
Գ․	Նովիմբ կամ նովին․	Նոքիմբք կամ նոքումբք․
Պ․	զՆովիմբ կամ զնովին․	զՆոքիմբք կամ զնոքումբք․
Ն․	՚Ի Նոյն ։	՚Ի Նոյնս ։

Այսպէս հոլովին և սոքին․ Սոյն, սորին․ դոյն, դորին ։

Հոլովումն ցուցական դերանուանս՝ Այն ։

	Եզակի ․	Յոգնակի ։
Ո․	Այն․	Այնոքիկ, կամ այնք․
Ս․	Այնր, կամ այնորիկ․	Այնոցիկ, կամ այնց ։
Տ․	Այնմ, կամ այնմիկ․ առ այն․	Այնոցիկ․ առ այնոսիկ․ և այնոսիկ․
Հ․	զԱյն․	զԱյնոսիկ, կամ զայնս․
Բ․	յԱյնմանէ․	յԱյնցանէ, կամ յայնց, կամ յայնոցիկ․
Պ․	զԱյնմանէ․	զԱյնցանէ․ կամ զայնց, կամ զայնոցիկ․
Գ․	Այնու, կամ այնուիկ․	Այնոքիւք, կամ քիմբք․
Պ․	զԱյնու, կամ զայնուիկ․	զԱյնոքիւք, կամ քիմբք․
Ն․	յԱյնմ, կամ յայնմիկ, կամ յայն ։	յԱյնոսիկ․ կամ յայնս ։

Այսպէս հոլովին և սոքին․ Այս, այսր, կամ այսորիկ․ այսոքիկ, այսոցիկ․ և այլն ։ Այդ, այդր, կամ այդորիկ․ այդոքիկ, այդոցիկ․ և այլն ։

Հոլովումն ստացական դերանուանցս՝ Քոյ, և Իմ։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Քոյ.	Քոյք.
Ս.	Քոյոյ, կամ քոյ.	Քոյոց, կամ քոց.
Տ.	Քուում, կամ քոյոյ. կամ քոյ. ՚ի քոյ.	Քոյոց, կամ քոց. ՚ի քոյս.
Հ.	զՔոյ.	զՔոյ.
Բ.	՚ի Քուումմէ, կամ ՚ի քոյոյ.	՚ի Քոյոց, կամ ՚ի քոց.
Պ.	զՔուումմէ, կամ զքոյոյ.	զՔոյոց, կամ զքոց.
Գ.	Քոյով, կամ քով.	Քոյովք, կամ քովք.
Պ.	զՔոյով, կամ զքով.	զՔոյովք, կամ զքովք.
Ն.	՚ի Քուում, կամ ՚ի քոյ։	՚ի Քոյս։

	Եզակի։	Յոգնակի.
Ո.	Իմ.	Իմք.
Ս.	Իմոյ.	Իմոց.
Տ.	Իմում, կամ իմոյ. առ իմ.	Իմոց. առ իմն.
Հ.	զԻմ.	զԻմն.
Բ.	յԻմմէ, կամ յիմոյ.	յԻմոց.
Պ.	զԻմմէ, կամ զիմոյ.	զԻմոց.
Գ.	Իմով.	Իմովք.
Պ.	զԻմով.	զԻմովք.
Ն.	յԻմում, կամ յիմ.	յԻմն.
Կ.	ով Իմ։	(Ո՛չ է ՚ի Քեր։)

Այսպ հոլովին և ստացական դերանուանքս այսոքիկ։

Մեր, մերոյ, մերում, ՚ի մերմէ, մերով, ՚ի մերում։
Ձեր, ձերոյ, ձերում, ՚ի ձերմէ, ձերով, ՚ի ձերում։
Իւր, իւրոյ, իւրում, յիւրմէ, իւրով. յիւրում։

Հոլովումն ստացական և ածանցական դերանուանս՝ Նորա։

	Եզակի։	Յոգնակի։
Ո.	Նորայ.	Նորայք.
Ս.	Նորայոյ.	Նորայոց.
Տ.	Նորայում. առ նորայն.	Նորայոց. ՚ի նորայս.

Հ.	զՆորայն ։	զՆորայս ։
Բ.	'ի Նորայց ։	'ի Նորայց ։
Գ.	զՆորայց ։	զՆորայց ։
Պ.	Նորայով ։	Նորայովք ։
Գ.	զՆորայով ։	զՆորայովք ։
Ն.	'ի Նորայում, կամ 'ի նորայն ։	'ի Նորայս ։

Ըստ այսմ հոլովին և սոքին. Սորայ, սորայք. սոցայ, սոցայք. դորա, դորայք. դոցայ, դոցայք. նոցայ, նոցայք ։

Հոլովումն ստացական և անձնական դերանուանս՝ Նորային ։

	Եզակի ։	Յոգնակի ։
Ո.	Նորային ։	Նորայինք ։
Ս.	Նորայնոյ ։	Նորայնոց ։
Տ.	Նորայնում ։	Նորայնոց ։
	առ նորային ։	առ նորայինս ։
Հ.	զՆորային ։	զՆորայինս ։
Բ.	'ի Նորայնոյ ։	'ի Նորայնոց ։
Գ.	զՆորայնոյ ։	զՆորայնոց ։
Պ.	Նորայնով ։	Նորայնովք, կամ նօք ։
Գ.	զՆորայնով ։	զՆորայնովք, կամ նօք ։
Ն.	'ի Նորային, կամ 'ի նորայնում ։	'ի Նորայինս ։

Ըստ այսմ հոլովին և սոքին. Սորային, սոցային. դորային, դոցային, նոցային. իմային. քոյային. իւրային. իւրեանցային. մերային. ձերային ։ Որոց յոգնակին լինի. իւրայոց, կամ իւրայնոց. իւրեանցայոց, կամ իւրեանցայնոց. մերայոց, կամ մերայնոց. ձերայոց, կամ ձերայնոց ։

Եւ դերանուանքս՝ Մերոյին. ձերոյին. իւրոյին. քոյին. իմոյին, նախդրիւ միայն հոլովին. որգոն, 'ի մերոյին, առ ձերոյին. զիւրոյին. Ը քոյին. յիմոյին ։

Հոլովումն յարաբերական դերանուանս՝ Որ.

	Եզակի.	Յոգնակի.
Ո.	Որ, կամ ո.	Որք, կամ ոյք.
Ս.	Որոյ, կամ ոյր.	Որոց.
Տ.	Որում, կամ ում. առ որ.	Որոց. առ որս.
Հ.	զՈր.	զՈրս.
Բ.	յՈրմէ.	յՈրոց.
Պ.	զՈրմէ.	զՈրոց.
Գ.	Որով.	Որովք.
Պ.	զՈրով.	զՈրովք.
Ն.	յՈրում, կամ յոր, կամ յում.	յՈրս.

Սա հանդերձ ոլորակաւ՝ է անուն հարցական, անփոփոխ պահելով զնոյն հոլովումն.

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս խոնարհման Բայից ըստ չորից լծորդութեանց.

Եւ նախ յաղագս խոնարհման Էական բայից.

Էական բայս Եմ՝ լրացեալ յայլոց էական բայից՝ խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակի Ներկայ.

եզ. Եմ,	ես,	է.
յոգ. եմք,	էք,	են.

Անկատար.

եզ. Էի,	էիր,	էր.
յոգ. էաք.	էիք,	էին.

Կատարեալ.

եզ. Եղէ,	եղեր,	եղև.
յոգ. եղաք,	եղէք,	եղեն.

Յարակատար.

եզ. Եղեալ եմ,	եղեալ ես,	եղեալ է.

յոգ․ եղեալ եմք, եղեալ էք, եղեալ են ։

Գերակատար ։

եզ․ Եղեալ էի, եղեալ էիր, եղեալ էր ․
յոգ․ եղեալ էաք, եղեալ էիք, եղեալ էին ։

Ապառնի ։

եզ․ Եղէց, եղիցիս, եղիցի ․
յոգ․ եղիցուք, եղիջիք, եղիցին ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

եզ․ Ե՛ր․ (որպ․ ողջ եր) ․ յոգ․ երուք․ (որպ, ողջ երուք ․)

Ապառնի ։

եզ․ Եղիջի՛ր, եղիցի ․
յոգ․ եղիցուք, եղիջիք, եղիցին ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

եզ․ Իցեմ, իցես, իցէ ․
յոգ․ իցեմք, իցէք, իցեն ։

Անցեալ ։

եզ․ Եղեալ իցեմ, եղեալ իցես, եղեալ իցէ ․
յոգ․ եղեալ իցեմք, եղեալ իցէք, եղեալ իցեն ։

Աներևոյթ եղանակ․ Ել, ելոյ ելով ։
Ընդունելութիւն, ներկայ և անցեալ․ Եղեալ ։

Ապառնի․ Լինելոց ։

Լծական բայս Լինիմ՝ խոնարհի այսպէս ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

եզ․ Լինիմ, լինիս, լինի ․
յոգ․ լինիմք, լինիք, լինին ։

Անկատար ։

եզ․ Լինէի, լինէիր, լինէր ․
յոգ․ լինէաք, լինէիք, լինէին ։

Կատարեալ ։

եզ․ Եղէ, եղեր, եղև ․
յոգ․ եղաք, կամ եղեաք, եղէք, եղեն ։

Յարակատար ։

եզ․ Լեալ եմ, լեալ ես, լեալ է ․
յոգ․ լեալ եմք, լեալ էք, լեալ են ։

Գերակատար ։

եզ․ Լեալ էի, լեալ էիր, լեալ էր ․

յոգ. լեալ էաք, լեալ էիք, լեալ էին։

Ապառնի։

եզ. Լիցիմ, լիցիս, լիցի.
յոգ. լիցուք, լիջիք, կամ լինիջիք, լիցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

եզ. Եր, մի՛ լինիր,
յոգ. լերո՛ւք, մի՛ լինիք։

Ապառնի։

եզ. Լիջի՛ր, կամ լինիջի՛ր, և կամ լիցիս, լիցի՛.
յոգ. լիցո՛ւք, լիջի՛ք, կամ լինիջի՛ք, լիցին։

Ստորադասական եղանակի Ապառնի։

եզ. Լինիցիմ, լինիցիս, լինիցի.
յոգ. լինիցիմք, լինիցիք, լինիցին։

Անցեալ։

եզ. Լեալ իցեմ, լեալ իցես, լեալ իցէ.
յոգ. լեալ իցեմք, լեալ իցէք, լեալ իցեն,

Աներևոյթ եղանակ. Լինել, լինելոյ, լինելով. և այլն։
Ընդունելութիւն. Ներկայ, և Անցեալ. Լեալ։

Ապառնի. Լինելոց, լինելի։

Այսպէս խոնարհի և էական բայս եղանիմ։
Իսկ էական բայս գոմ խոնարհի յայսչափ ժամս միայն։
Գոմ, գոս, գոյ. գոմք, գոյք, գոն։ (Չի՛ք. այսինքն ո՛չ գոյ։)
Գոյի, գոյիր, գոյր. գոյաք, գոյիք, գոյին։
Գուցէ, գուցեն։ Գոլ, գոլոյ, գոլով։ Գոյօղ։

ԳԼՈՒԽ Ը։

Խոնարհմունք ներգործական բայից. ընդ որս և չէզոքականաց, և հասարակաց, ըստ առաջին չորրորդութեան։

Օրինակ առաջին։

Սահմանական եղանակի Ներկայ։

եզ. Գործեմ, գործես, գործէ.
յոգ. գործեմք, գործէք, գործեն։

Անկատար։

եզ. Գործէի, գործէիր, գործէր.

յոգ. գործէաք. գործէիք, գործէին.

Կատարեալ.

եզ. Գործեցի, գործեցեր, գործեաց.
յոգ. գործեցաք, գործեցիք, գործեցին.

Յարակատար.

եզ. Գործեալ եմ, գործեալ ես, գործեալ է.
յոգ. գործեալ եմք, գործեալ էք, գործեալ են.

Գերակատար.

եզ. Գործեալ էի, գործեալ էիր, գործեալ էր.
յոգ. գործեալ էաք, գործեալ էիք, գործեալ էին.

Ապառնի.

եզ. Գործեցից, գործեսցես, գործեսցէ.
յոգ. գործեսցուք, գործեսջիք, գործեսցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

եզ. Գործեա, մի գործեր.
յոգ. գործեցէք, մի գործէք.

Ապառնի.

եզ. Գործեսջիր, կամ գործեսցես, գործեսցէ.
յոգ. գործեսցուք, գործեսջիք, գործեսցեն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

եզ. Գործիցեմ, գործիցես, գործիցէ,
յոգ. գործիցեմք, գործիցէք, գործիցեն.

Անցեալ.

եզ. Գործեալ իցեմ, գործեալ իցես, գործեալ իցէ.
յոգ. գործեալ իցեմք, գործեալ իցէք, գործեալ իցեն.

Աներեւոյթ եղանակ. Գործել, գործելոյ, ՚ի գործել. եւն.
Ընդունելութիւն. Ներկայ. Գործօղ. Անցեալ. գործեալ.
Ապառնի. Գործելոց.

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Ներկայ.

եզ. Գործիմ, գործիս, գործի.
յոգ. գործիմք, գործիք, գործին.

Անկատար.

եզ. Գործէի, գործէիր, գործէր, կամ գործիւր.
յոգ. գործէաք, գործէիք, գործէին.

Կատարեալ.

եզ. Գործեցայ, գործեցար, գործեցաւ.
յոգ. գործեցաք, գործեցայք, գործեցան:

Յարակատար.

եզ. Գործեալ եմ, կամ գործեցեալ եմ, ես, է.
յոգ. գործեալ եմք, կամ գործեցեալ եմք, էք, են.

Գերակատար.

եզ. Գործեալ էի, կամ գործեցեալ էի, էիր, էր.
յոգ. գործեալ էաք, կամ գործեցեալ էաք, էիք, էին:

Ապառնի.

եզ. Գործեցայց, գործեսցիս, գործեսցի.
յոգ. գործեսցուք, գործեսջիք, կամ գործիջիք, գործեսցին:

Հրամայական եղանակի Ներկայ.

եզ. Գործեա՛ց, մի՛ գործիր.
յոգ. գործեցարո՛ւք, մի՛ գործիք:

Ապառնի.

եզ. Գործեսջիր, կամ գործեսցիս, գործեսցի.
յոգ. գործեսցուք, գործեսջիք, կամ գործիջիք, գործեսցին:

Ստորադասական եղանակի Ապառնի.

եզ. Գործիցիմ, գործիցիս, գործիցի.
յոգ. գործիցիմք, գործիցիք, գործիցին.

Անցեալ.

եզ. Գործեալ իցեմ, կամ գործեցեալ իցեմ, իցես, իցէ.
յոգ. գործեալ իցեմք, կամ գործեցեալ իցեմք, իցէք, իցեն.

Աներևոյթ եղանակ. Գործել, գործելոյ, գործելով. ևն.
Ընդունելութի. Ներկայ և Անցեալ. Գործեալ, կամ գործեցեալ:
Ապառնի. Գործելի, կամ գործելոց:

Ըստ այսմ խոնարհին և այլ բազում ներգործական բայք. զո՛ր օրինակ.

Ամփոփեմ, եցի, եա. ժողվել. թօփ ընել.
Բժշկեմ, եցի, եա. բժշկել. առողջացնել.
Գանձեմ, եցի, եա. խազնա դիզել:
Զարդարեմ, եցի, եա. զարդարել. սազել:
Թօթափեմ, եցի, եա. թօթվել: կամ թափել.
Ձգեմ, եցի, եա. նետել: կամ տարածել:
Մերժեմ, եցի, եա. հեռել. հեռացնել.
Յարմարեմ, եցի, եա. յարմարցնել. ուստարուղ ընել:

Ճակտեմ, եցի, եմ. Խիստ քաշել. ձիգ աչօքմէք.
Սերմանեմ, եցի, եմ հունտ ցանել. թօհում էքմէք.

Ըստ այսմ խոնարհելին և բազում ներգործականք չէ-
զոքական բայք. զր.

Ամաչեմ, եցի, եմ. ամըչնալ. ուտանմաք.
Որշաւեմ, եցի, եմ. Ղաւլէլ. ախպրաւ ընել.
Կոխեմ, եցի, եմ. վրայ երթալ.
Խուսափեմ, եցի, եմ. քէշտէ քաշուիլ. սաւուշմաք.
Հսկեմ, եցի, եմ. արթուն կենալ. այըխ տուրալ.

Ըստ կրաւորականի Գործեմին խոնարհելին և բազում
ձայնակրական բայք. զր.

Աշխատիմ, եցայ, եայց, կ եամ. չալըշըղ ըլլալ. նա՛ հոգնիլ.
Ապաւինիմ, եցայ, եայց, կ եամ. ողընդիղ ըլլալ. ապաւէն դնել.
Սովորիմ, եցայ, եայց, կ եամ. սորվիլ. ալըշմաք.
Կարօտիմ, եցայ, եայց. կարօտնալ. կարօտ ըլլալ.
Վտանգիմ, եցայ, եայց. Թէհլիքէի մէջ ըլլալ.

Ըստ այսմ խոնարհելին և քանի մի հասարակ բայք.
զոր օրինակ.

Բարբառիմ, եցայ, եամ. ըսել, ղըրոյել.
Դատիմ, եցայ, եամ. դատել. դատաստան ընել.
Խորհիմ, եցայ, եայց, կ եամ. մտմտալ. տիւշիւնմէք.
Համբերիմ, եցայ, եայց, կ եամ. համբերել. նա՛ տոկալ.
Խոստովանիմ, եցայ, եայց, կ եամ. խոստըվանել. իքրար էթմէք.

Սա յոլով ուրեք ՚ի գործ ածի էական բային այսպէս.
Խոստովան լինիմ, իս, ի. լինէի, էիր, էր. եղէ,
եղեր. եւն.

Օրինակ երկրորդ.

Սահմանական եղանակի Ներկայ.

Հատանեմ, հատանես, հատանէ.
հատանեմք, հատանէք, հատանեն.

Անկատար:

Հատանէի, հատանէիր, հատանէր ·
հատանէաք, հատանէիք, հատանէին:

Կատարեալ·

Հատի, հատեր, եհատ, կամ հատ ·
հատաք, հատիք, հատին:

Յարակատար:

Հատեալ եմ, ես, է · հատեալ եմք, էք, են:

Գերակատար:

Հատեալէի, էիր, էր · հատեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Հատից, հատցես, հատցէ ·
հատցուք, հատջիք, կամ հատանիջիք, հատցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Հա՛տ, մի հատաներ · հատէք, մի հատանէք:

Ապառնի:

Հատջի՛ր, կամ հատանիջի՛ր, կամ հատցես, հատցէ՛ ·
հատցո՛ւք, հատջի՛ք, կամ հատանիջի՛ք, հատցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Հատանիցեմ, հատանիցես, հատանիցէ ·
հատանիցեմք, հատանիցէք, հատանիցեն:

Անցեալ:

Հատեալ իցեմ, իցես, իցէ · Հատեալ իցեմք, իցէք, իցեն:

Աներեւոյթ եղանակ · Հատանել, հատանելոյ, եւն:

Ընդունելութի · Ներկայ · Հատանող: Անցեալ · Հատեալ:

Ապառնի · Հատանելոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի Ներկայ:

Հատանիմ, հատանիս, հատանի ·
հատանիմք, հատանիք, հատանին:

Անկատար:

Հատանէի, հատանէիր, հատանէր, կա՛մ հատանիւր ·
հատանէաք, հատանէիք, հատանէին:

Կատարեալ:

Հատայ, հատար, հատաւ ·
հատաք, հատայք, հատան:

Յարակատար:

Հատեալ եմ, ես, է. հատեալ եմք, էք, են:

Գերակատար:

Հատեալ էի, էիր, էր. հատեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Հատայց, հատցիս, հատցի.
հատցուք, հատջիք, կամ հատանիջիք, հատցին:

Հրամայական եղանակի Ներկայ:

Հատջիր, մի հատանիր. հատարուք, մի հատանիք:

Ապառնի:

Հատջիր, կամ հատցիս, հատցի.
հատցուք, հատջիք. և այլն, որպէս սահմանականին:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Հատանիցիմ, ցիս, ցի. հատանիցիմք, ցիք, ցին:

Անցեալ:

Հատեալ իցեմ, իցես, իցէ. հատեալ իցեմք, իցէք, իցեն:

Աներևոյթ եղանակ. Հատանել, հատանելոյ, և այլն:

Ընդունելութի. Ներկայ և Անցեալ. Հատեալ, կամ հատեցեալ:

Ապառնի. Հատանելի, կամ հատանելոց:

Այսպէս խոնարհին սակաւ բայք ներգործականք հանդերձ կրաւորականօք իւրեանց. որ:

Անիծանեմ, ծի, ծեր, անէծ. անէծ: պէտտուա ընել:
Արկանեմ, կի, կեր, էարկ, կամ արկ. արկ: ձգել. վար նետել:
Գտանեմ, գտի, գտեր, եգիտ. գիտ: գտնել: և՝ իմաց ընել:
Լուծանեմ, ծի, ծեր, ելոյծ. լոյծ: արձակել. քակել. չէօզմէք:
Կլանեմ, կլի, կլեր, եկուլ. կուլ: կլլել: և՝ կորսնցնել.
Հարկանեմ, րի, րեր, եհար. հար: զարնել. վուրմագ:
Մուծանեմ, ծի, ծեր, եմոյծ. մոյծ: մտցնել. կիրտիրմէք:
Սպանանեմ, նի, ներ, սպան. սպան: սպաննել. մեռցնել:
Տեսանեմ, սի, սեր, ետես. տես: տեսնել: կէօրմէք:
Ցուցանեմ, ցի, ցեր, եցոյց. ցոյց: ցցնել: և՝ իմացնել:

Ըստ այսմ խոնարհին և քանի մի ներգործակերպ չեզոքական բայք. որ:

Անցանեմ, ցի, ցեր, էանց. անց: անցնիլ. կէչմէք:
Իջանեմ, իջի, իջեր, էջ. էջ. իջնել. էնմէք:

Հասանեմ, սի, սեր, եհաս. հաս. — հասնիլ. եէթիշմէք.
Մտանեմ, մտի, մտեր, եմուտ. մուտ. — մտնել. կիրմէք.
Համբերեմ, բերի, բերեր, բեր. բեր. կամ համբերեցի. բերեալ. — սապր ընել. դէօմա-նալ.

Ըստ կրաւորականի կանոնին խոնարհին և քանի մի հասարակ բայք. զր.

Ծնանիմ, ծնայ, ծնիր. — ծնիլ. եա՝ ծագիլ.
Ուսանիմ, սայ, սիր, — սորվիլ.
Սփածանիմ, ծայ, ծիր. — խօշնուտ ըլլալ.
Սկսանիմ, սկսայ. սկսայց, սկսցիս, սկսցի. սկսցուք, սկսջիք, սկսցին. սկսեալ. — սկսիլ. պաշլամագ.
Սկսիմ, սկսայ. սկսայց, սկսեսցիս, սեսցի. սեսցուք, սեսջիք, սեսցին. սկսիր.
Տանիմ, տարայ. տարայց, տարցիս, տարցի. տար, մի տանիր. տանիցիմ, ցիս, ցի. տանող, կամ տարող. տարեալ. տանիլ. եա՝ վերցնել.

Ըստ այսմ լինին և քանի մի չեզոքական բայք՝ ձայնակրականք. զոր օրինակ.

Բուսանիմ, սայ, սիր, սարուք, կմ սէք. — բուսնիլ. պիթմէք.
Մնանիմ, մնայ, մնիր, մնարուք. — պէօյլէնդիղ ըլլալ.
Մեռանիմ, ռայ, ռիր, ռարուք. — մեռնիլ. էօլմէք.
Ընկանիմ, անկայ, կիր, կերուք. — ընկնիլ. տիւշմէք.
Նստիմ, նստայ, նիստ, տարուք, կմ էք. նստող. օթուրմագ.

Խոնարհումն անեմ բայիս.

Սահմանական եղանակի Ներկայ.

Ասեմ, ասես, ասէ. ասեմք, ասէք, ասեն.

Անկատար.

Ասէի, ասէիր, ասէր. ասէաք, ասէիք, ասէին.

Կատարեալ.

Ասացի, ասացեր. ասաց.
ասացաք, ասացիք, ասացին.

Յարակատար եւ Գերակատար։

Ասացեալ եմ, ես, է. եւն։ Ասացեալ էի, էիր. եւն։

Ապառնի։

Ասացից, ասասցես, ասասցէ.
ասասցուք, ասասջիք, ասասցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Ասա՛, մի՛ ասեր. ասացէ՛ք, մի՛ ասէք։

Ապառնի։

Ասասջի՛ր, կամ ասասցես, ասասցէ. ասասցուք, եւն.

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ասիցեմ, ցես, ցէ. ասիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Ասացեալ իցեմ, իցես, իցէ. ասացեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ասել, ասելոյ, ասելով, յասել։

Ընդունելութիւն. Ներկայ. Ասող, կամ ասացող։

Անցեալ. Ասացեալ։ Ապառնի. Ասելոց։

Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ.

Ասիմ, ասիս, ասի. Ասիմք. ասիք, ասին։

Անկատար։

Ասէի, էիր, էր, կամ իւր. ասէաք, էիք, էին։

Կատարեալ։

Ասացայ, ասացար, ասացաւ.
ասացաք, ասացայք, ասացան։

Ապառնի։

Ասացայց, ասասցիս, ասասցի.
ասասցուք, ասասջիք, ասասցին։

Հրամայական եղանակի Ներկայ. (ոչ ունի։)

Ապառնի։

Ասասջի՛ր, կամ ասասցիս, ասասցի. ասասցուք, եւն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ասիցիմ, ցիս, ցի. ասիցիմք, ցիք, ցին։

Աներեւոյթ եղանակ. Ասիլ, ասելոյ, ասելով. եւն։

Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ. Ասացեալ։

Ապառնի. Ասելի, կամ ասելոց։

Իսկ այլ ժամանակքն լինին ըստ ներգործականին :

Ընդ սոքաւ խոնարհի և ներգործական բայս՝ Գի-
տեմ. փոփոխմամբ եղակի հրամայականին ՚ի եա. որ.
Գիտեմ, գիտացի, գիտեա :

Խոնարհումն անցողական բայից :

Սահմանական եղանակի՝ Ներկայ :

Զօրացուցանեմ, ացուցանես, ացուցանէ.
զօրացուցանեմք, ացուցանէք, ացուցանեն :

Անկատար :

Զօրացուցանէի, ացուցանէիր, ացուցանէր.
զօրացուցանէաք, ացուցանէիք, ացուցանէին :

Կատարեալ :

Զօրացուցի, զօրացուցեր, զօրացոյց.
զօրացուցաք, զօրացուցիք, զօրացուցին :

Յարակատար և Գերակատար :

Զօրացուցեալ եմ, ես, է. եւն : էի, էիր, էր. եւն :

Ապառնի :

Զօրացուցից, զօրացուսցես, զօրացուսցէ.
զօրացուսցուք, ցուսջիք, կամ ցուցանիջիք, ցուսցեն :

Հրամայական եղանակի՝ Ներկայ :

Զօրացո՛, մի՛ զօրացուցաներ.
զօրացուցէ՛ք, մի՛ զօրացուցանէք :

Ապառնի :

Զօրացուսջի՛ր, կամ ցուցանիջի՛ր, ցուսցե՛ս, ցուսցէ՛.
զօրացուսցո՛ւք, ցուսջի՛ք. կամ ցուցանիջի՛ք, ցուսցե՛ն :

Ստորադասական եղանակի Ապառնի :

Զօրացուցանիցեմ, ացուցանիցես, ացուցանիցէ.
զօրացուցանիցեմք, րացուցանիցէք, րացուցանիցեն :

Անցեալ :

Զօրացուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն :

Աներևոյթ եղանակ. Զօրացուցանել, նելոյ. եւն :

Ընդունելութ. Ներկայ. Զօրացուցանող : Անցեալ. Զօ-
րացուցեալ : Ապառնի. Զօրացուցանելոց :

Սորա կրաւորականն ոչ 'ի գործ ածի. այլ՝ փոխան նո՛ր գնի ներգործակերպ չեզոքականն, կամ ձայնակրականն, յորոց բղխին անցողականք. զր̃ :

Զօրանամ, փ̃կ ասելոյ Զօրացուցանիմ:
Արդարանամ, փ̃կ ասելոյ Արդարացուցանիմ:
Խոնարհիմ, փ̃կ ասելոյ Խոնարհեցուցանիմ. եւլն :

Ըստ այսմ խոնարհին ա̃մ անցողական բայք յանգեալք 'ի ացուցանեմ եւ 'ի եցուցանեմ. եւ 'ի լոկ ուցանեմ. եւս եւ 'ի ուսանեմ. որոց հրամայականն լինի ացո՛ եւ եցո՛ եւ ո՛. զո՛ր օրինակ :

Աղօտացուցանեմ, ցուցի, ացո՛. մթնշաղցընել:
Ձեւացուցանեմ, ցուցի, ացո՛. [illegible] խօսել:
Տկարացուցանեմ, ցուցի, ացո՛. ուժը կոտրել:
Ապրեցուցանեմ, ցուցի, եցո՛. ապրեցընել. ազատել:
Զգեցուցանեմ, ցուցի, եցո՛. հագցընել:
Յիմարեցուցանեմ, ցուցի, եցո՛. խենթեցընել. խաղցընել:
Սատուցանեմ, ուցի, տո՛. մօտեցընել: կամ՝ ընծայել:
Թաղուցանեմ, ուցի, ղո՛. ծածուկ պահել:
Կորուսանեմ, րուսի, կորո՛, րուսեալ. կորսնցընել. իթիրմէք:
Լուծանեմ, լուծի, լուծեա՛. հանել. չըգարմագ :

ԳԼՈՒԽ Լ:

Խոնարհմունք ներգործական բայից՝ ըստ երկրորդ լծորդութեան :

Օրինակ առաջին :

Սահմանական եղանակի՝ Ներկայ :

Աղամ,	աղաս,	աղայ.
աղամք,	աղայք,	աղան :

Անցանի :

Աղայի,	աղայիր,	աղայր.
աղայաք,	աղայիք,	աղային :

Կատարեալ:

Աղացի,	աղացեր,	աղաց.
աղացաք,	աղացիք,	աղացին :

Յարակատար.

Աղացեալ եմ, ես, է. աղացեալ եմք, էք, են.

Գերակատար.

Աղացեալ էի, էիր, էր. աղացեալ էաք, էիք, էին.

Ապառնի.

Աղացից, աղասցես, աղասցէ.
աղասցուք, աղասջիք, աղասցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Աղա, մի՛ աղար. աղացէք, մի՛ աղայք.

Ապառնի.

Աղասջի՛ր, կամ աղասցե՛ս, աղասցէ՛.
աղասցո՛ւք, աղասջի՛ք, աղասցե՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Աղայցեմ, աղայցես, աղայցէ.
աղայցեմք, աղայցէք, աղայցեն.

Անցեալ.

Աղացեալ իցեմ, իցես, իցէ. աղացեալ իցեմք, իցէք, իցեն.

Աներևոյթ եղանակ. Աղալ, աղալոյ, աղալով, յաղալ.

Ընդունելութիւն. Ներկայ. Աղացող. Անցեալ. Աղացեալ.

Ապառնի. Աղալոց.

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Ներկայ.

Աղացեալ լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, լինին.

Անկատար.

Աղացեալ լինէի, էիր, էր. լինէաք, էիք, էին.

Կատարեալ.

Աղացայ, աղացար, աղացաւ.
աղացաք, աղացայք, աղացան.

Յարակատար և Գերակատար.

Աղացեալ եմ, ես, ևն. Աղացեալ էի, էիր, ևն.

Ապառնի.

Աղացայց, աղասցիս, աղասցի.
աղասցուք, աղասջիք, աղասցին.

Հրամայական եղանակի Ներկայ.

Աղացի՛ր, աղացարո՛ւք.

Ապառնի :

Աղասջի՛ր, կամ աղասցես, աղասցէ. աղասցուք, եւն :

Ստորադասական եղանակի Ապառնի :

Աղացեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին :

Անցեալ :

Աղացեալ իցեմ, ցես, ցէ. աղացեալ իցեմք, ցէք, ցեն:
Աներեւոյթ եղանակ. Աղացեալ լինել, կամ աղալ, աղալոյ. եւն:
Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ. Աղացեալ :

Ապառնի. Աղալի, կամ աղալոց :

Այսպէս խոնարհին ներգործական բայք սակաւք յանգեալք ՚ի ամ. որպէս :

Ամամ, ացի, ամա՛. — Կոթել. Թակել:
Զգամ, ացի, զգա՛. — Զգալ. փորձմամբ :
Թանամ, թացի, թա՛ց. — Թրջել. Խոնաւել. [illegible] :
Լամ, լացի, լա՛ց. — Լալ. ողբալով :
Որսամ, ացի, կամ ացայ, սա՛. որսացող, կամ որսող. աւարառնել:
Բանամ, բացի, բացից. բա՛ց : Որոյ կրաւորականն լինի, բանիմ, նիս, նի. բացայ, ցար, ցաւ. բացի՛ր, եւն : Եւ ստորադասականն. բանայցիմ, ցիս. եւն : Աներեւոյթ. բանիլ, կամ բանալ. եւն :

Յայս վերածի եւ բայս բառնամ. զոր օրինակ.
Բառնամ, բարձի, բարձեալ եմ, բարձից, բարձցես, բարձցուք, բարձջի՛ք, ձցեն : Հրամ. բա՛րձ, մի՛ բառնար. բարձէ՛ք, մի՛ բառնայք : Ստոր. բառնայցեմ. եւն : Ընդունելութ. բարձօղ, բարձեալ, բառնալոց : Կրաւ. Բառնիմ, իս, ի. բարձայ. բարձայց : Հրամ. բարձի՛ր. բարձարո՛ւք: Ստոր. բառնայցիմ. ցիս, եւն : Աներեւոյթ. բառնիլ, կամ բառնալ: Ընդու. բարձեալ, բառնալի :

Ըստ ներգործականի, եւ ըստ կրաւորականի բառնամ բայիս խոնարհի եւ չեզոքական բայս դառնալ եւ բաղադրեալք սորա. որպէս :

Դառնամ, աս, այ. Դարձայ, ձար. ձաւ. եւ այլն : Դարձայց, ձցիս, ձցի. եւն : Դա՛րձ, կամ դարձի՛ր. Դարձարո՛ւք, կամ ձէ՛ք, կամ ձի՛ք. մի՛ դառնայք : Դառնայցեմ. եւ այլն : Դարձօղ, դարձեալ, դառնալոց, դառնալի :

Կան և բազում չեզոքական բայք յանգեալք ՚ի ամ, որք ընդ աղամ բայիւ խոնարհին. զր.

Ասամ, ացի, սա՛. Հաւէս ընել. Հրամել:
Գնամ, ացի, գնա՛. Երթալ:
Խաղամ, ացի, ղա՛. Խաղալ: Եւ առաջ գնալ:
Խնդամ, ացի, դա՛. Ուրախանալ. Էյլէնմէք:
Մնամ, ացի, մնա՛. Կալ: Եւ՝ սպասել:

Ընդ սոքօք դասաւորին և չեզոքական բայքս կալ և կեալ. զո՛ր օրինակ:

Կամ, կաս, կայ. եւլն: Կացի, կացեր, եկաց. կացաք, կացիք, կացին: Կացից, կասցես. եւլն: Կա՛ց, մի կար. կացէ՛ք, մի կայք: Կացջի՛ր. եւլն: Կայցեմ. եւլն: Կալ. կացող. կացեալ. կալոց:

Կեամ, կեաս, կեայ. կեամք, կեայք, կեան: Կէի, կէիր, կեայր. կէաք, կէիք, կէին: Կեցի, կեցեր, եկեաց. կեցաք, կեցիք, կեցին: Կեցեալ եմ. եւլն: Կեցից, կեցցես, կեցցէ. կեցցուք, կեցջիք, կեցցեն: Կեա՛ց, մի կեցցես. կեցէ՛ք, մի կեցջիք. կեցջի՛ր, եւլն: Կեցցեմ. եւլն: Կեալ, կելոյ. կեցող. կեցեալ, կելոց:

Օրինակ երկրորդ:

Սահմանական եղանակի Ներկայ:

Խոստանամ, խոստանաս, խոստանայ.
խոստանամք, խոստանայք, խոստանան:

Անկատար:

Խոստանայի, խոստանայիր, խոստանայր.
խոստանայաք, խոստանայիք, խոստանային:

Կատարեալ:

Խոստացայ, խոստացար, խոստացաւ.
խոստացաք, խոստացայք, խոստացան:

Յարակատար:

Խոստացեալ եմ, ես, է. խոստացեալ եմք, էք, են:

Գերակատար:

Խոստացեալ էի, էիր, էր. խոստացեալ էաք, էիք, էին:

Ապառնի։

Խոստացայց, խոստասցիս, խոստասցի.
խոստասցուք, խոստասջիք, խոստասցին.

Հրամայական եղանակի Ներկայ։

Խոստասջի՛ր, մի՛ խոստանար. խոստացրուք, մի՛ խոստանայք։

Ապառնի։

Խոստասջի՛ր, չի՛ խոստասցիս, խոստասցի.
խոստասցո՛ւք, խոստասջիք, խոստասցին.

Ստորադասական եղանակի Ապառնի։

Խոստանայցեմ, ցես, ցէ. խոստանայցեմք, ցէք, ցեն.

Անցեալ։

Խոստացեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Խոստանալ, խոստանալոյ. եւն.
Ընդունելութ. Ներկայ. Խոստացօղ։ Անցեալ. Խոստացեալ։ Ապառնի. Խոստանալոց։

Կրաւորական սորա բաց 'ի սահմանականի ներկայէն՝ լինի ըստ ներգործականին։ Իսկ 'ի հարկաւոր տեղիս ձեւանայ եւս էական բայիւ. որ.

Սահմանական եղանակի Ներկայ։

Խոստացեալ լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, լինին.

Անկատար։

Խոստացեալ լինէի, լինէիր, լինէր. լինէաք, լինէիք, լինէին։

Կատարեալ։

Խոստացեալ եղէ, եղեր, եղեւ. եղաք, եղէք, եղեն.

Յարակատար եւ Գերակատար։

Խոստացեալ եմ, ես, է. եւն։ էի, էիր, էր. եւ այլն։

Ապառնի.

Խոստացեալ եղէց, եղիցիս, իցի. եղիցուք, իջիք, իցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Խոստացեա՛լ լեր, մի՛ խոստացեալ լինիր. լերուք, մի՛ լինիք։

Ապառնի։

Խոստացեա՛լ լիջիր, չա՛ լիցիս, լիցի. լիցուք, եւ այլն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Խոստացեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Խոստացեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Խոստացեալ լինել, լինելոյ. եւ այլն։

Ընդհանրութիւն. Ներկայ և Անցեալ. Խոստացեալ.
Ապառնի. Խոստանալի, կամ խոստանալոց.

Ըստ այսմ խոնարհին ամ բայք ներգործականք յան-
գեալք 'ի անամ. բաց 'ի բայէս ըստորեաւ. որք.

Զղջանամ, ացայ, ցիր. ծուցանել. չերեւնալ.
Ուրանամ, ացայ, ցիր. ուրանալ. ինքեար ընել.
Ստանամ, ացայ, ցիր. վաստըկիլ. կամ ունենալ.
Մոռանամ, ացայ, ուա, կա՛ ուացիր. մոռնալ. ունութմագ.
Իմանամ, ացայ, իմա, կա՛ իմացիր. իմանալ. իմնալ.
(Մի կրաւորկնի ներկայն լինի և՛ իմանիմ, նիս, նի.)
Մերկանամ, ցայ, ցիր. (Ներկայ չունի). հանուիլ. կամ մերկան ընել.
Հագամ, ացայ, կա՛ ացի, ա՛. (Ներկայ չունի). մէկ ընել. կամ թագցնել.
Ագամ, ացայ, կա՛ ացի, ա՛, կա՛ ացիր. (Ներկայ չունի). սոսկ մտնել. ևն.

Իսկ բայս լուանամ խոնարհի իբրև զաղամն, որոյ կրա-
ւորականի սահմանականն լինի և՛ լուանիմ, լուանիս.
Իսկ ստորադասականն՝ լուանայցիմ, ցիս, և այլն.

Ըստ սմին խոնարհին և բազում չեզոքական բայք
յանգեալք 'ի անամ և 'ի ենամ. որք.

Ընդարմանամ, ացայ, ացիր. ըստահաւնալ. համտարըլ.
Բազմանամ, ացայ, ացիր. շատնալ. չօղալմագ.
Ընտելանամ, ացայ, ացիր. ալըշըգ ըլալ. ևն.
Արբենամ, եցայ, եցիր. հարբիլ. գէնօֆիլալ.
Մերձենամ, եցայ, եցիր. մօտենալ. եագըն էրթալ.

ԳԼՈՒԽ Ը.

Խոնարհմունք ներգործական բայից՝ ըստ երրորդ ձևոյն.

Օրինակ առաջին.

Սահմանական եղանակի Ներկայ.

Թողում,	Թողուս,	Թողու.
Թողումք,	Թողուք,	Թողուն,

Անկատար.

Թողուի, Թողուիր, Թողոյր.
Թողուաք, Թողուիք, Թողուին.

Կատարեալ.

Թողի, Թողեր, եթող, կամ Թող.
Թողաք, Թողիք, Թողին.

Յարակատար.

Թողեալ եմ, ես, է. Թողեալ եմք, էք, են.

Գերակատար.

Թողեալ էի, էիր, էր. Թողեալ էաք, էիք, էին.

Ապառնի.

Թողից, Թողցես, Թողցէ.
Թողցուք, Թողջիք, Թողցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Թո՛ղ, մի Թողուր. Թողէք, մի Թողուք.

Ապառնի.

Թողջի՛ր, կամ Թողցե՛ս, Թողցէ՛.
Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցե՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Թողուցում, Թողուցուս, Թողուցու.
Թողուցումք, Թողուցուք, Թողուցուն.

Անցեալ.

Թողեալ իցեմ, իցես, իցէ. Թողեալ իցեմք, իցէք, իցեն.

Աներևոյթ եղանակ. Թողուլ, Թողլոյ, Թողլով, ՚ի Թողուլ.
Ընդունելութիւն. Ներկայ. Թողող: Անցեալ. Թողեալ:
Ապառնի. Թողլոց:

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Ներկայ.

Թողանիմ, իս, ի. Թողանիմք, իք, ին.
(Կամ ըստ ներգործականին՝ որպէս առհասարակ էր նախնեաց.)
Թողում, Թողուս, Թողու. Թողումք, Թողուք, Թողուն.

Անկատար.

Թողուի, ուիր, ույր. Թողուաք, ուիք, ուին.

Կատարեալ.

Թողայ, Թողար, Թողաւ. Թողաք, Թողայք, Թողան.

Յարակատար և Գերակատար.

Թողեալ եմ, ես, է. եւն. Թողեալ էի, էիր. եւն.

Ապառնի.

Թողայց, Թողցիս, Թողցի.
Թողցուք, Թողջիք, Թողցին.

Հրամայական եղանակի Ներկայ.

Թողի՛ր. Թողարո՛ւք.

Ապառնի.

Թողջի՛ր, կմ Թողցի՛ս, Թողցի՛. Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցի՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Թողուցում, ցուս, ցու. Թողուցումք, ցուք, ցուն.
կմ Թողեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին.

Անցեալ.

Թողեալ իցեմ, իցես, իցէ. Թողեալ իցեմք. և այլն.
Աներևոյթ եղ. Թողանիլ, Թողանելոյ. կմ Թողուլ, Թողլոյ.
Ընդունելութի. Ներկայ և Անցեալ. Թողեալ.
Ապառնի. Թողլի, կամ Թողլոց.

Ըստ այսմ խոնարհին քանի մի ներգործական բայք. զոր օրինակ.

Առնում, առի, առեր, էառ, կմ առ. ա՛ռ. առնուլ. առօղ, առեալ, առնլոց, առնլի: առնել. ալմագ:
Արգելում, լի, լեր, արգել. արգե՛լ. արգիլել. չթողալ.
Գելում, լի, լեր, եգել. գե՛լ. դիւղիշ ընել.
Զենում, նի, ներ, եզեն, կմ զեն. զե՛ն. մորթել.
Լիզում, զի, զեր, լեզ, կմ ելիզ. լե՛զ. լզել.
Կասում, սի, սեր, կաս. կա՛ս. կանգնել. կարմանլամագ.
Կիզում, զի, զեր, եկէզ. կէ՛զ. էրել. եագմագ.
Հեղում, ղի, ղեր, եհեղ. հե՛ղ. վաթել. թափել.
Հերձում, ձի, ձեր, եհերձ. հե՛րձ. ճղքել. պատռել. եըրթմագ.
Յաւելում, լի, լեր, յաւել. յաւե՛լ. աւելցնել. և՝ չենէ ընել.

Ըստ կրաւորականի սորա խոնարհին և քանի մի բայք չէզոքականք. զբ.

Զբօսնում, սայ, սի՛ր. զէֆք ընել. եւն.
Հեղձնում, ձայ, ձի՛ր. խեղդուիլ. և՝ սիրտը ճաթիլ.
Յենում, յեցայ, ցի՛ր. կռթընիլ. և՝ կռնիլ.
Ուռնում, ռայ, ռի՛ր. ուռուցեալ. փաքնալ. ըռընմաք.

Երդնում, երդուայ, երդուար, երդուաւ, երդուայց, երդուիցիս, ցի, երդուիր. երդում ընել։

Այլ յետագայքդ խոտորին 'ի կատարեալն, և յապառնին և յանցեալն, որպ.

Այտնում, այտեայ, այտեայց, այտիր, այտուցեալ. ուռիլ ուռենալ։

Զարթնում, զարթեայ, զարթեայց, զարթիր, զարթուցեալ. զարթնուլ. արթննալ։

Պակնում, կեայ, կիր. կուցեալ. շաշիշ ըլլալով վախնալ։

Ցասնում, սեայ, սիր. սուցեալ. խիստ սրդողիլ։

Ոմանք յայսպիսի բայից յանգին և 'ի չիմ. որպ.

Ոստնում կամ ոստչիմ, տեայ, տիր. տուցեալ. ցատկել։

Զարթնում կամ զարթչիմ, թեայ, թիր. ևն. արթուն ըլլալ։

Թագնում կամ թագչիմ, գեայ, գիր. գուցեալ. պահուըտել։

Փախչիմ կամ փախնում, խեայ, խիր. խուցեալ. փախչիլ։

Երկնչիմ, երկեայ, կիր. կուցեալ. վախնալ. փորձմամբ։

Թռչիմ, թռեայ, ռիր. ռուցեալ. թռչիլ. ոչմամբ։

Մարտնչիմ, տեայ, տիր. տուցեալ. կռուիլ. ծեծկռուիլ։

Կորնչիմ, րեայ, րիր. րուսեալ. կորսուիլ. խայպ ըլլալ։

Օրինակ երկրորդ.

Սահմանական եղանակի Ներկայ.

Ընկենում, ուս, ու. ընկենումք, ուք, ուն.

Անցեալ.

Ընկենուի, ուիր, ույր. ընկենուաք, ուիք, ուին.

Կատարեալ.

Ընկեցի,	ընկեցեր,	ընկէց.
ընկեցաք,	ընկեցիք,	ընկեցին.

Յարակատար և Գերակատար.

Ընկեցեալ եմ, ես, է. և այլն. էի, էիր, էր. ևն.

Ապառնի.

Ընկեցից,	ընկեսցես,	ընկեսցէ.
ընկեսցուք,	ընկեսջիք,	ընկեսցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Ընկեա՛, մի՛ ընկենուր. ընկեցէ՛ք, մի՛ ընկենուք.

Ապառնի.

Ընկեսջի՛ր, կամ ընկեսցես, ընկեսցէ. և այլն, որպէս սահմանականին.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Ընկենուցում, ցուս, ցու. Ընկենուցումք, ցուք, ցուն.

Անցեալ.

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Աներևոյթ եղանակ. Ընկենուլ, ընկենլոյ, յընկենուլ. ևն.

Ընդունելութիւն. Ներկայ. Ընկեցող. Անցեալ. Ընկեցեալ.

Ապառնի. Ընկենլոց.

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Ներկայ.

Ընկեցեալ լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, նին.

Անկատար.

Ընկեցեալ լինէի, էիր, էր. լինէաք, էիք, էին.

Կատարեալ.

Ընկեցայ, ընկեցար, ընկեցաւ.
ընկեցաք, ընկեցայք, ընկեցան.

Յար" և Գեր".

Ընկեցեալ եմ, ես, է. Ընկեցեալ էի, էիր, ևն.

Ապառնի.

Ընկեցայց, ընկեսցիս, ընկեսցի.
ընկեսցուք, ընկեսջիք, ընկեսցին.

Հրամայական եղանակի Ներկայ.

Ընկեցեա՛լ լեր. Ընկեցարո՛ւք.

Ապառնի.

Ընկեսջի՛ր, կմ ընկեսցիս, եսցի. ընկեսցուք, եսջիք, եսցին.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Ընկենուցում, ցուս, ցու. ընկենուցումք, ցուք, ցուն կմ ընկեցեալ լինիցիմ, ցիս, ցի. լինիցիմք, ցիք, ցին.

Անցեալ.

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Ընկեցեալ.

Ապառնի. Ընկենլի, կմ ընկենլոց.

Ընդ սոյին խոնարհի և ներգործական բայս Լնում. ո-րոյ կատարեալն լինի. լցի, լցեր, ելից. եւն. և հրա-մայականն. լի՛ց, մի՛ լնուր. լցէ՛ք, մի՛ լնուք. եւն.

Ըստ կրաւորականի և ըստ ներգործականի սորա խո-նարհի և ներգործական բայս ընթեռնուլ. որ.

Ընթեռնում, ուս, ու. եւն. Ընթերցայ, ցար, ցաւ, ցաք, ցայք, ցան. Ընթերցեալ եմ. եւն. Ընթերցայց, ընթերցցիս, ցցի. ընթերցցուք, ցջիք, ցցին. Ընթեր-ցի՛ր, մի՛ ընթեռնուր. ընթերցարո՛ւք, կա՛մ ընթերցէ՛ք. մի՛ ընթեռնուք. Ընթերցջի՛ր, կամ ընթերցցիս. եւն. Ընթեռնուցում. եւն. Ընթեռնուլ, նլոյ. Ընթեր-ցող. ընթերցեալ. ընթեռնլոց. Կրաւ. ընթերցանիմ. իս, ի. եւն. Աոր. ընթերցանիցիմ. Ընդուն. ընթեր-ցանելի, կա՛մ ընթեռնլի. Ըստ այսմ լինի և բայս զգե-նում.

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս խոնարհմանց անկանոն բայից.

Անկանոն բայք բաժանին յերիս տեսակս. ոմանք են զարտուղիք. ոմանք պակասաւորք. և ոմանք դիմա-զուրկք. զորս ըստ իւրաքանչիւր լծորդութեանց կարգեա-ցուք յառաջիկայդ.

Խոնարհմունք զարտուղի բայից.

Զարտուղի ներգործական բայս Առնել խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակի Ներկայ.

Առնեմ,	առնես,	առնէ.
առնեմք,	առնէք,	առնեն.
	Անկատար.	
Առնէի,	առնէիր,	առնէր.
առնէաք,	առնէիք,	առնէին.

Կատարեալ.

Արարի, արարեր, արար.
արարաք, արարիք, արարին.

Յարակատար և Գերակատար.

Արարեալ եմ, ես, է. եւ։ Արարեալ էի, էիր, էր. եւ։

Ապառնի.

Արարից, արասցես, արասցէ.
արասցուք, արասջիք, կամ առնիջիք, արասցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Արա, մի առներ. արարէք, մի առնէք.

Ապառնի.

Արասջիր, կամ առնիջիր, կամ արասցես, արասցէ. եւ։

Ստորադասական եղանակի Ապառնի.

Առնիցեմ, ցես, ցէ. առնիցեմք, ցէք, ցեն.

Անցեալ.

Արարեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.
Աներևոյթ եղանակ. Առնել, առնելոյ, առնելով, յառնել.
Ընդունելութիւն. Ներկայ. Արարող, կամ առնող. Անցեալ. Արարեալ. Ապառնի. Առնելոց.

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Ներկայ.

Առնիմ, առնիս, առնի. առնիմք, առնիք, առնին.

Կատարեալ.

Արարայ, արարար, արարաւ.
արարաք, արարայք, արարան.

Ապառնի.

Արարայց, արասցիս, արասցի.
արասցուք, արասջիք, արասցին.

Հրամայական եղանակի Ներկայ.

Մի առնիր. Մի առնիք.

Ապառնի.

Արասջիր, կամ առնիջիր, կամ արասցիս, արասցի. եւ։

Ստորադասական եղանակի Ապառնի.

Առնիցիմ, ցիս, ցի. առնիցիմք, ցիք, ցին.
Աներևոյթ եղանակ. Առնիլ, առնելոյ, յառնիլ.
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Արարեալ, կամ արարեցեալ,

Ապառնի · Առնելի, կամ առնելոց ·
Իսկ մնացեալ ժամանակքն լինին որպէս ներգործականին ·

Օ արտուղի ներգործական բայս գնեմ՝ խոնարհի այսպ ·

Սահմանական եղանակի Ներկայ ·
Գնեմ, գնես, գնէ · գնեմք, գնէք, գնեն ·
Անկատար ·
Գնէի, էիր, էր · գնէաք, էիք, էին ·
Կատարեալ ·
Եգի, եգիր, եգ · եգաք, եգիք, եգին ·
Յարակատար և Գերակատար ·
Եգեալ եմ, ես, է · եւն · եգեալ էի, էիր, էր · եւն ·
Ապառնի ·
Եգից, գիցես, գիցէ · Գիցուք, գիջիք, գիցեն ·
Հրամայական եղանակի Ներկայ ·
Գիր, մի գներ · գիք, մի գնէք ·
Ապառնի ·
Գիջիր, կամ գիցես, գիցէ · գիցուք, գիջիք, գիցեն ·
Ստորադասական եղանակի Ապառնի ·
Գնիցեմ, կամ գիցեմ, ցես, ցէ · ցեմք, ցէք, ցեն ·
Անցեալ ·
Եգեալ իցեմ, իցես, իցէ · իցեմք, իցէք, իցեն ·
Աներևոյթ եղանակ · Գնել, գնելոյ, գնելով, 'ի գնել ·
Ընդունելութիւն · Ներկայ · Գնող · Անցեալ · Եգեալ ·
Ապառնի · Գնելոց ·

Օրինակ կրաւորականին ·

Սահմանական եղանակի Ներկայ ·
Գնիմ, գնիս, գնի · գնիմք, գնիք, գնին ·
Անկատար ·
Գնէի, էիր, էր, կամ նիւր · գնէաք, էիք, էին ·
Կատարեալ ·
Եգայ, եգար, եգաւ · եգաք, եգայք, եգան ·
Ապառնի ·
Եգայց, գիցիս, ցի · գիցուք, գիջիք, կամ գնիջիք, ցին ·

Հրամայական եղանակի Ներկայ.

Գտեալ լեր, մի՛ գտանիր. եղարո՛ւք, մի՛ գտանիք.

Ապառնի.

Գտիջի՛ր, չի՛ գտիցի՛ս, գտիցի՛. գտիցո՛ւք, գտիջի՛ք, գտիցի՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Գտանիցիմ, չի՛ գտիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին.

Աներեւոյթ եղանակ. Գտանիլ, գտանելոյ, գտանելով, 'ի գտանիլ.

Ընդունելութի. Ներկայ եւ Անցեալ. Գտեալ.

Ապառնի. Գտանելի, կամ գտանելոց.

Իսկ մնացեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին.

Զարտուղի ներգործական բայս ունիմ՝ խոնարհելի այսպէս.

Սահմանական եղանակի Ներկայ.

Լսեմ, լսես, լսէ. լսեմք, լսէք, լսեն.

Անկատար.

Լսէի, լսէիր, լսէր. լսէաք, լսէիք, լսէին.

Կատարեալ.

Լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան.

Յարակատար եւ Գերակատար.

Լուեալ եմ, ես, է. եւն. Լուեալ էի, էիր, էր. եւն.

Ապառնի.

Լուայց, լուիցես, լուիցէ. լուիցուք, լուիջիք, լուիցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Լո՛ւր, մի՛ լսեր. լուարո՛ւք, մի՛ լսէք.

Ապառնի.

Լուիջի՛ր, չի՛ լուիցե՛ս, լուիցէ՛. լուիցո՛ւք, եւ այլն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Լսիցեմ, չի՛ լուիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.

Անցեալ.

Լուեալ իցեմ, իցես, իցէ. լուեալ իցեմք, իցէք, իցեն.

Աներեւոյթ եղանակ. Լսել, լսելոյ, լսելով, 'ի լսել.

Ընդունելութի. Ներկայ Լսող. Անցեալ. Լուեալ.

Ապառնի. Լսելոց.

Օրինակ կրաւորականին ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Լսիմ, լսիս, լսի ․ լսիմք, լսիք, լսին ։

Անկատար ։

Լսէի, լսէիր, լսէր, կամ լսիւր ․ լսէաք, լսէիք, լսէին ։

Ապառնի ։

Լուիցիմ, ցիս, ցի ․ լուիցիմք, ցիք, ցին ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Լսիցիմ, ցիս, ցի ․ լսիցիմք, ցիք, ցին ։

Աներեւոյթ եղանակ ․ Լսել, լսելոյ, լսելով, 'ի լսել ։

Ընդունելութիւնք ․ Ներկայ և Անցեալ ․ Լուեալ ։ Ապառնի ․

Լսելի, կամ լսելոց ։

Իսկ այլ պակասութիւնք սորա լրանան այսպէս ․ լսելի եղէ, եղեր, և այլն ․ լսելի լեր ․ լսելի լինիջիր, և այլն ․ Այլ յարակատար և գերակատար ժամանակքն, ընդ որս և ստորադասականի անցեալն՝ լինին ըստ ներգործականին ։

Զարտուղի ներգործական բայս տամ՝ խոնարհի այսպէս ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Տամ, տաս, տայ ․ տամք, տայք, տան ։

Անկատար ։

Տայի, տայիր, տայր ․ տայաք, տայիք, տային ։

Կատարեալ ։

Ետու, ետուր, ետ ․ տուաք, ետուք, ետուն ։

Յարակատար և Գերակատար ։

Տուեալ եմ, ես, է ․ ևն ։ Տուեալ էի, էիր, էր ․ ևն ։

Ապառնի ։

Տաց, տացես, տացէ ․ տացուք, տաջիք, տացեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Տուր, մի տար ․ տուք, մի տայք ։

Ապառնի ։

Տաջիր, կամ տացես, տացէ ․ տացուք, տաջիք, տացեն ։

Ստորադասական եղանակի Ապառնի.

Տայցեմ, ցես, ցէ. տայցեմք, ցէք, ցեն.

Անցեալ:

Տուեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Աներեւոյթ եղանակ. Տալ, տալոյ, տալով, 'ի տալ:

Ընդունելութիւն. Ներկայ. Տուօղ: Անցեալ. Տուեալ:

Ապառնի. Տալոց:

Օրինակ կրաւորականին:

Սահմանական եղանակի Կատարեալ:

Տուայ, տուար, տուաւ. տուաք, տուայք, տուան.

Ապառնի:

Տուեալ եղէց,	տացիս,	տացի.
տուեալ եղիցուք,	տացիք,	տացին:

Հրամայական եղանակի Ներկայ. (ոչ ունի:)

Ապառնի:

Տաջի՛ր կամ տացի՛ս, տացի՛. տացո՛ւք, տաջի՛ք, տացի՛ն.

Աներեւոյթ եղանակ. Տուեալ լինել, լինելոյ. և այլն:

Ընդունելութիւն. Ներկայ. և Անցեալ. Տուեալ, կամ տուեցեալ:

Ապառնի. Տալի, կամ տալոց:

Իսկ այլ ժամանակքն ձեւանան էական բայիւ՝ այսպէս, Տուեալ լինիմ, լինիս, եւն. տուեալ լինէի, լինէիր, և այլն. տուեալ լինիցիմ, լինիցիս, և այլն: Իսկ յարակատար և գերակատար ժամանակքն, և անցեալ ժամանակն ստորադասականին՝ լինին ըստ ներգործականին:

Զարտուղի չէզոքական բայս Մեղանչեմ՝ խոնարհի այսպէս:

Սահմանական եղանակի Ներկայ:

Մեղանչեմ, ես, է. մեղանչեմք, էք, են:

Անկատար:

Մեղանչէի, էիր, էր. մեղանչէաք, էիք, էին:

Կատարեալ:

Մեղայ,	մեղար,	մեղաւ.
մեղաք,	մեղայք,	մեղան:

Յարակատար և Գերակատար.

Մեղուցեալ եմ, ես, է. եւն. Մեղուցեալ էի, էիր, էր. եւն.

Ապառնի.

Մեղայց, մեղիցես, մեղիցէ.
մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Մեղի՛ր, մի՛ մեղանչեր. մեղարո՛ւք, մի՛ մեղանչէք.

Ապառնի.

Մեղիջի՛ր, կամ մեղիցե՛ս, մեղիցէ՛. մեղիցո՛ւք, եւն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Մեղանչիցեմ, կմ մեղիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.

Անցեալ.

Մեղուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Աներեւոյթ եղան. Մեղանչել, մեղանչելոյ, ղանչելով. եւն.
Ընդունելութի. Ներկայ. Մեղանչօղ. Անցեալ. Մեղուցեալ. Ապառնի. Մեղանչելոց, կմ մեղանչելի.

Զարտուղի չեզոքական բայս յառնեմ՝ խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակի Ներկայ.

Յառնեմ, ես, է. յառնեմք, էք, են.

Անկատար.

Յառնէի, էիր, էր. յառնէաք, էիք, էին.

Անցեալ.

Յարեայ, յարեար, յարեաւ. յարեաք, յարեայք, րեան.

Յարակատար և Գերակատար.

Յարուցեալ եմ, ես, է. եւն. Յարուցեալ էի, էիր, էր. եւն.

Ապառնի.

Յարեայց, յարիցես, յարիցէ. յարիցուք, րիջիք, րիցեն.

Հրամայական եղանակի Ներկայ.

Ա՛րի, մի՛ յառներ. արի՛ք, մի՛ յառնէք.

Ապառնի.

Յարիջի՛ր, կամ յարիցե՛ս, յարիցէ՛. յարիցո՛ւք, եւն.

Ստորադասական եղանակի Ապառնի.

Յառնիցեմ, կմ յարիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.

Անցեալ.

Յարուցեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.

Աներեւոյթ եղանակ. Յառնել, յառնելոյ, յառնելով. եւ.
Ընդունելութիւն. Ներկայ. Յառնող. Անցեալ. Յարուցեալ.
Ապառնի. Յառնելոց, կամ յառնելի.

Զարտուղի չեզոքական բայս գամ՝ խոնարհի այսպէս.

Սահմանական եղանակի Ներկայ.
Գամ, գաս, գայ. գամք, գայք, գան.
Անկատար.
Գայի, գայիր, գայր. գայաք, գայիք, գային.
Կատարեալ.
Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, կամ եկայք, եկին.
Յարակատար և Գերակատար.
Եկեալ եմ, ես, է. եւ. Եկեալ էի, էիր, էր. եւ.
Ապառնի.
Եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն.
Հրամայական եղանակի Ներկայ.
Ե՛կ, մի՛ գար. եկա՛յք, մի՛ գայք.
Ապառնի.
Եկեսջի՛ր, կամ եկեսցես, եկեսցէ. եկեսցո՛ւք. եւ.
Ստորադասական եղանակի Ապառնի.
Գայցեմ, ցես, ցէ. գայցեմք, ցէք, ցեն.
Անցեալ.
Եկեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն.
Աներեւոյթ եղանակ. Գալ, գալոյ, գալով, 'ի գալ.
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Եկեալ. Ապառնի.
Գալոց, կամ գալի.

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս խոնարհմանց պակասաւոր բայից.

Պակասաւոր բայք են նոքին, որք պակասին 'ի ժամանակս ինչ, և լրանան յայլոց պակասաւոր բայից. որպէս է տեսանել յառաջիկայդ.

Պակասաւոր ներգործական բայս Կերայ՝ լրացեալ՝ի բայէս Ուտեմ՝ խոնարհի այսպէս ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Ուտեմ, ուտես, ուտէ ․
ուտեմք, ուտէք, ուտեն ։

Անկատար ։

Ուտէի, էիր, էր ․ ուտէաք, էիք, էին ։

Կատարեալ ։

Կերայ, կերար, կերաւ ․ կերաք, կերայք, կերան ։

Կամ այսպէս ։

Կերի, կերեր, եկեր, կամ կեր ․ կերաք, կերիք, կերին ։

Յարակատար և Գերակատար ։

Կերեալ եմ, ես, է ․ եւն ։ Կերեալ էի, էիր, էր ․ եւն ։

Ապառնի ։

Կերայց, կամ կերից, կերիցես, կերիցէ ։
կերիցուք, կերիջիք, կամ ուտիջիք, կերիցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Կեր, մի ուտեր ․ կերէք, կամ կերայք, մի ուտէք ։

Ապառնի ։

Կերիջիր, կամ ուտիջիր, կամ կերիցես, կերիցէ ․ կերիցուք, եւն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Ուտիցեմ, ցես, ցէ ․ ուտիցեմք, ցէք, ցեն ։

Անցեալ ։

Կերեալ իցեմ, իցես, իցէ ․ կերեալ իցեմք, իցէք, իցեն ։

Աներևոյթ եղանակ ․ Ուտել, ուտելոյ, ուտելով, յուտել ։
Ընդունելութիւն ․ Ներկայ ․ Կերօղ, կամ ուտօղ ։ Անցեալ ․
Կերեալ ։ Ապառնի ․ Ուտելոց ։

Օրինակ կրաւորականին ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Ուտիմ, ուտիս, ուտի ․ ուտիմք, ուտիք, ուտին ։

Ապառնի ։

Կերայց, կերիցիս, կերիցի ։
կերիցուք, կերիջիք, կամ ուտիջիք, կերիցին ։

Հրամայական եղանակի Ներկայ ․ (ոչ ունի) ։

Ապառնի ։

Կերիջիր, կամ ուտիջիր, կամ կերիցիս կերիցի ․ և այլն ․

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ուտիցիմ, ցիս, ցի. ուտիցիմք, ցիք, ցին։

Աներեւոյթ եղանակ. Ուտիլ, ուտելոյ, ուտելով, յուտիլ։

Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ. Կերեալ։ Ապառնի.

Ուտելի, կամ ուտելոյ, կամ կերլի։

Իսկ այլ ժամանակքն լինին ըստ ներգործականին։

Պակասաւոր ներգործական բայս արբէ՝ լրացեալ 'ի բայէս ըմպեմ՝ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Ըմպեմ, ըմպես, ըմպէ. ըմպեմք, ըմպէք, ըմպեն։

Անկատար.

Ըմպէի, ըմպէիր, ըմպէր. ըմպէաք, ըմպէիք, ըմպէին։

Կատարեալ։

Արբի, արբեր, եարբ, կամ արբ. արբաք, արբիք, արբին։

Յարակատար եւ Գերակատար։

Արբեալ եմ, ես, է. եւլն. Արբեալ էի, էիր, էր. եւլն։

Ապառնի։

Արբից, բցես, բցէ. արբցուք, բջիք, կամ ըմպիջիք, բցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արբ, մի ըմպեր. արբէք, մի ըմպէք.

Ապառնի։

Արբջիր, կամ արբցես, արբցէ. արբցուք. եւ այլն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ըմպիցեմ, ցես, ցէ. ըմպիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Արբեալ իցեմ, իցես, իցէ. արբեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ըմպել, ըմպելոյ, ըմպելով. եւլն։

Ընդունելութիւն. Ներկայ. Ըմպօղ։ Անցեալ. Արբեալ։

Ապառնի. Ըմպելոց։

Օրինակ կրաւորականին.

Սահմանական եղանակի Կատարեալ։

Արբայ, բար, բաւ. արբաք, բայք, բան։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ըմպիցիմ, ցիս, ցի. ըմպիցիմք, ցիք, ցին։

Աներեւոյթ եղանակ. Ըմպիլ, ըմպելոյ, ըմպելով, յըմպիլ։

Ընդուն. Ներկայ եւ Անցեալ. Արբեալ. Ապ. Ըմպելի, կամ ըմպելոց։

Իսկ մնացեալ ժամանակքն բաց 'ի սահմանականի ներկայէն և յապառնւոյն՝ և 'ի հրամայականէն՝ լինին ըստ ներգործականին . իսկ ներկայն և ապառնին և հրամայականն ձևանան նական բայիւ . և երբեմն լրանան՝ 'ի չէզոքական բայէս Արբենամ ։

Պակասաւոր հասարակ բայս ծանեայ՝ լրացեալ 'ի բայէս Ճանաչեմ՝ խոնարհի այսպէս ։

Սահմանական եղանակի Ներկայ ։

Ճանաչեմ, ես, է . Ճանաչեմք, էք, են ։

Անկատար ։

Ճանաչէի, էիր, էր, կամ չիւր . Ճանաչէաք, էիք, էին ։

Անցեալ ներգործական ։

Ծանեայ, եար, եաւ . ծանեաք, եայք, եան ։

Անցեալ կրաւորական ։

Ծանուցայ, ցար, ցաւ . ծանուցաք, ցայք, ցան ։

Յարակատար և Գերակատար ։

Ծանուցեալ եմ, ես, է . ևն ։ Ծանուցեալ էի, էիր, էր . ևն ։

Ըղձական ներգործական ։

Ծանեայց, ծանիցես, ծանիցէ .
ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն ։

Ըղձական կրաւորական ։

Ծանուցայց, ծանիցիս, ծանիցի .
ծանիցուք, ծանիջիք, ծանիցին ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Ծանի՛ր, մի՛ ճանաչեր . ծաներո՛ւք, կամ նիք, մի՛ ճանաչէք ։

Ապառնի ։

Ծանիջի՛ր, կամ ծանիցես, ծանիցէ . ծանիցո՛ւք, ևն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Ներգործական ։

Ծանիցեմ, կամ ճանաչիցեմ, ցես, ցէ . ցեմք, ցէք, ցեն ։

Կրաւորական ։

Ծանիցիմ, կամ ճանաչիցիմ, ցիս, ցի . ցիմք, ցիք, ցին ։

Անցեալ ։

Ծանուցեալ իցեմ, իցես, իցէ . իցեմք, իցէք, իցեն ։

Աներևոյթ եղանակ . Ճանաչել, ճանաչելոյ, ճանաչելով . ևն ։
Ընդունելութիւն . Ներկայ . Ճանաչօղ ։ Անցեալ . Ծանուցեալ ։ Ապառնի . Ճանաչելոց, կամ ճանաչելի ։

Պակասաւոր հասարակ բայս ունիմ՝ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։
Ունիմ, ունիս, ունի. ունիմք, ունիք, ունին։
Անկատար։
Ունէի, ունէիր, ունէր. ունէաք, ունէիք, ունէին։
Կատարեալ։
Կալայ, կալար, կալաւ. կալաք, կալայք, կալան։
Յարակատար և Գերակատար։
Կալեալ եմ, ես, է. եւն։ Կալեալ էի, էիր, էր. եւն։
Ապառնի։
Կալայց, կալցիս, կամ կալցես, կալցի, կամ կալցէ։
կալցուք, կալջիք, կամ ունիջիք, կալցին, կամ կալցեն։
Հրամայական եղանակի Ներկայ։
Կա՛լ, կամ կա՛լ, մի՛ ունիր. կալարո՛ւք, կամ կալէ՛ք, մի՛ ունիք։
Ապառնի։
Կալջի՛ր, կամ ունիջի՛ր, կամ կալցիս, կալցի՛. կալցո՛ւք, եւն։
Ստորադասական եղանակի Ապառնի։
Ունիցիմ, ցիս, ցի. ունիցիմք, ցիք, ցին։
Անցեալ։
Կալեալ իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ եղանակ. Ունել, ունելոյ. և այլն։
Ընդունելութի. Ներկայ. Ունօղ։ Անցեալ. Կալեալ։
Ապառնի. Ունելոց, կամ ունելի։

Նոյնպէս խոնարհին և բաղադրեալք սորա. որպէս.

Ընդունիմ, ընկալայ, ընկա՛լ, մի՛ ընդունիր.
Վերընդունիմ, վերընկալայ, վերընկա՛լ։
Առընդունիմ, առընկալայ, առընկա՛լ։
Ակնունիմ, ակնկալայ, ակնկալ։

Պակասաւոր չեզոքական բայս եգայ, կամ եկայ՝ լը-ցեալ 'ի բայես երթամ՝ խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։
Երթամ, թաս, թայ. երթամք, թայք, թան։
Անկատար։
Երթայի, թայիր, թայր. երթայաք, թայիք, թային։

Կատարեալ ։

Չոքայ, ար, աւ · չոգաք, այք, ան ։

Յարակատար եւ Գերակատար ։

Երթեալ եմ, ես, է · եւն ։ Երթեալ էի, էիր, էր · եւն ։

Ապառնի ։

Երթայց, երթիցես, երթիցէ ·
երթիցուք, երթիջիք, երթիցեն ։

Հրամայական եղանակի Ներկայ ։

Ե՛րթ, մի երթար · երթա՛յք, մի երթայք ։

Ապառնի ։

Երթիջի՛ր, կամ երթիցես, երթիցէ · երթիցուք, եւն ։

Ստորադասական եղանակի Ապառնի ։

Երթայցեմ, կամ երթիցեմ, ցես, ցէ · ցեմք, ցէք, ցեն ։

Անցեալ ։

Երթեալ իցեմ, իցես, իցէ · իցեմք, իցէք, իցեն ։
Աներեւոյթ եղանակ · Երթալ, երթալոյ, երթալով · եւն ։
Ընդունելութիւն · Ներկայ · Երթող ։ Անցեալ · Երթեալ ։
Ապառնի · Երթալոց, կամ երթալի ։

Պակասաւոր բայս պարտիմ (որ է՝ պարտական ըլլալ), 'ի բազումս պակասեալ՝ խոնարհի այսպէս ։

Սահմ. Ներկ. Պարտիմ, իս, ի · պարտիմք, իք, ին ։
Անկատար · Պարտէի, էիր, էր, կամ տիւր · էաք, էիք, էին ։
Ստորադաս · Պարտիցիմ, ցիս, ցի · ցիմք, ցիք, ցին ։
Աներեւոյթ · Պարտիլ ։

Պակասաւոր բայս մարթեմ՝ խոնարհի յայսչափ ժամանակս միայն ։

Սահմ. Ներկ. Մա՛րթիմ, իս, ի · մարթիմք, իք, ին ։
Ապառ. յոգ. Մա՛րթասցուք, մարթիջիք, մարթիցին ։
Ստորադաս · Մա՛րթիցիմ, ցիս, ցի · ցիմք, ցիք, ցին ։
Իսկ յայլ ժամանակս լրանայ 'ի բայիցս՝ մարթեմ եւ մարթանամ ։

Պակասաւոր բայս գոգ՝ խոնարհի 'ի հրամայական եղանակն միայն՝ այսպէս ։

Ներկայ · Գո՛գ, (այսինքն ասա՛) · գոգէք, (այսինքն ասացէք) ։
Ապառնի · Գոգջի՛ր, կամ գոգցես, գոգցէ · գոգցուք, գոգջի՛ք, գոգցեն ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Խոնարհմանց դիմազուրկ բայից։

Դիմազուրկ բայք սակաւ են ՚ի մեր լեզու. և այն ևս ըստ դիպելոյ. որք յերկս տեսակս տրոհին. ոմանք ասին՝ դիմազուրկք ըստ պատահման. ոմանք ըստ պատշաճի. և ոմանք ըստ ինքեան, կամ բացարձակ։

Դիմազուրկք ըստ պատահման՝ ընդ կրկին օրինակաւ լծորդին։

Օրինակ առաջին։

Սահմ. Ներկայ.	յաջողէ.
Անկատար.	յաջողէր.
Կատարեալ.	յաջողեաց.
Յարակատար.	յաջողեալ է.
Գերակատար.	յաջողեալ էր.
Ապառնի.	յաջողեսցէ.
Հրամ. Ապառնի.	յաջողեսցէ, կամ յաջողեսցի.
Ստոր. Ապառնի.	յաջողիցէ, կամ յաջողիցի.
Անցեալ.	յաջողեալ իցէ։

Ըստ այսմ են և սոքին. ամպէ. անձրևէ. արժէ. ծագէ. հասանէ. ձիւնէ. մրկէ. յաճախէ. սխալէ. վայելէ. ցաւէ. ցրտէ. ցօղէ. փայլատակէ. եւն։

Օրինակ երկրորդ։

Սահմ. Ներկայ.	լուսանայ.
Անկատար.	լուսանայր.
Կատարեալ.	լուսացաւ.
Յարակատար.	լուսացեալ է.
Գերակատար.	լուսացեալ էր.
Ապառնի.	լուսասցի.
Հրամ. Ապառնի.	լուսասցի.
Ստոր. Ապառնի.	լուսանայցէ.
Անցեալ.	լուսացեալ իցէ։

Ըստ այսմ են և սոքին. Առաւօտանայ. գիշերանայ. երեկոյանայ. խաւարանայ. մթանայ. շատանայ. եւն։

Դիմաւորականք ը̅ պատշաճի են սոքին. Թուի. երևի. կարծի. լսի. ասի. պատահի. հանդիպի. համարի. պիտի. ցաւի. եւն: Եւ խոնարհումն ոց ձևանայ այսպ.

Սահմ. Ներկայ.	թուի.
Անկատար.	թուէր.
Կատարեալ.	թուեցաւ.
Յարակատար.	թուեալ է.
Գերակատար.	թուեալ էր.
Ապառնի.	թուեսցի.
Հրամ. Ապառնի.	թուեսցի́.
Ստոր. Ապառնի.	թուիցի.
Անցեալ.	թուեալ իցէ:

Դիմաւորականք ը̅ ինքեան կամ բայարձակք են սոքին. Անկ է. արժան է. բարի է. բարւոք է. բաւ է. դէպ է. ըմբռն է. խիստ է. կամ է. հարկ է. ճահ է. մարթ է. յայտ է. պատկան է. պատշաճ է. պարտ է. պիտոյ է. սովոր է. վայել է. վայելուչ է. փոյթ է. օգուտ է. օրէն է. եւն: Եւ խոնարհումն ոց ձևանայ այսպ.

Սահմ. Ներկայ.	հարկ է.
Անկատար.	հարկ էր.
Կատարեալ.	հարկ եղև.
Ապառնի.	հարկ լիցի, կ̅ եղիցի.
Ստոր. Ապառնի.	հարկ իցէ, կ̅ լինիցի:

Ընդ սոսա դասին և յոգնական դիմաւորական բայքս, Պէտք են. կամք են. օրէնք են. եւն: Եւ սոքա խոնարհին յայսչափ ժամանակս միայն:

Սահմ. Ներկայ.	պէտք են.
Անկատար.	պէտք էին.
Ապառնի.	պէտք եղիցին.
Ստոր. Ապառնի.	պէտք իցեն:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Նախդրութեանց։

Նախադրութիւնք կրկին են, հոլովակերտք և հոլովառուք. Հոլովակերտք են, որք յարեալ յանուանս, և յայլ հոլովական բառս, այսինքն ՚ի դերանուանս, յընդունելութիւնս և ՚ի դերբայս՝ կազմեն պէսպէս հոլովս. և սոքա կոչին նախդիրք, և են այսոքիկ. ՚Ի. յ. ՚ի յ. առ. առ ՚ի. ց. ընդ. զ. որզոն, ՚ի տուն. ՚ի տանէ. ՚ի տան. յ երկիր. յ երկրէ. յ երկրի։ ՚ի յ երկինս. ՚ի յ երկնից։ առ քեզ. առ նոսա։ առ ՚ի մեզ. առ ՚ի մէնջ. առ ՚ի գնալ. առ ՚ի խօսիլ։ ց նա. ց ձեզ։ ընդ նա. ընդ նս։
զիրկօղ. զմեռելոյ. զմնացելովք. ևն։

Իսկ հոլովառուքն են, որք ոչ կազմեն զհոլով. այլ առնուն զխնդիր ՚ի պէսպէս հոլովս։ Ընդ որս են և նախդիրքս՝ առ, առ ՚ի, և ընդ. որք բազում անգամ խնդիր առեալ՝ վարին իբր հոլովառուք։

Ոմանք առնուն զսեռական. որպ։

Վասն սիրոյ.	սիրոյ համար։
Սակս մեր.	մեզի համար։
Յաղագս մեղաց.	մեղքի համար։
Առ նախանձու.	նախանձու համար։
Փոխանակ բերանոյ.	բերնի տեղ։
Օրէն անասնոյ.	անասունի պէս։
Առանց պահոց.	առանց պահքի։
Զկնի յաղթութեան.	յաղթութենէ ետքը։
Զհետ արդարութեան.	արդարութեան ետևէն։
Յետ մահու.	մահուանէ ետև։
Առաջի աչաց.	աչքից առջև։
Ընդ առաջ իշխանին.	իշխանին դէմը։
Յանդիման քաղաքին.	քաղքին դիմաց։
Հանդէպ տան.	տան դիմացը։
՚Ի ներքոյ երկնից.	երկնքի ներքև։
Արտաքոյ ատենի.	տիւանէն դուրս։
՚Ի վերայ երկրի.	երկրի վրայ։

Ի մէջ ծառոց · ծառերու մէջ ։
Ընդդէմ կամաց · կամքի դէմ ։
Ի ձեռն բարեկամաց · բարեկամներու ձեռօք ։
Յայնկոյս ծովու · ծովու անդիի դին ։
Ընդ նորա · անոր տեղը ։

Ոմանք առնուն զվերջահոլով տրական · որ ։

Ըստ հաւատոց · հաւատքի կէօրէ ։
Ընդ նմա · անոր հետ ։
Մերձ այսոցիկ · ասոնց քով ։
Մօտ այնոցիկ · անոնց մօտ ։
Առընթեր, կամ Առ նմին · անոր քովէնը ։

Ոմանք առնուն զնախդրիւ տրական · որ ։

Մերձ յաղբիւրն · աղբիւրին մօտ ։
Մօտ ի ձմեռն · ձմեռուան մօտէն ։
Հուպ ի վառարանն · մանղալի քով ։
Մինչեւ ի մահ · մինչեւ մահը ։

Ոմանք առնուն զհայցական · որ ։

Իբրեւ զհող · հողու պէս ։
Որպէս զփոշի · փոշիի պէս ։
Բայց զքեզ · քեզմէ զատ ։
Ի վեր քան զմիտս · մտքէ վեր ։
Առաւել քան զարեգակն · արեւէն աւելի ։

Ոմանք առնուն զբացառական · որ ։

Մեկուսի ի բանակէն · օռտույէն դուրս ։
Հեռի ի տանէ · տնէ հեռու ։
Գաղտ ի մօրէ · մօրմէն գաղտուկ ։
Բաց յինէն · ինձմէ 'ի զատ ։

Ոմանք առնուն զգործիական · որ ։

Հանդերձ ծառայիւք · ծառաներուն հետ ։
Ընդ յարկաւ · ծածքին տակը ։
Առ Տրդատաւ · Տրդատ թագաւորին ատենը ։
Ամօք յառաջ ։ տարիներով առաջ ։

Ոմանք առնուն զպարառական · որ ։

Շուրջ զքեւ · քու քովերդ ։
Շուրջանակի զնոքօք · անոնց քովերը ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս մակբայից։

Մակբայք բազում են յոյժ ընդ լէ տեսակօք ըստ զանազանելոյ նշանակութեան իւրեանց. զորս մարթ է վասն համառօտութեան վերածել ՚ի տասն. և են այսոքիկ։

Որականք։

Ընդ որովք կարեն պարունակիլ և սաստկականք և երագականք, յանկարծականք և յամրականք, յայտնականք և ծածկականք, յօժարականք և բռնադատականք, անպարտականք և ներհականք, ազգականք և անձնականք. զբ։

Վայելչապէս խօսի. Շնորհօք կը խօսի։
Խորհրդաբար կերպարանի. Խորհրդովք կը ձևանայ։
Մարդկօրէն վարի. Մարդկան պէս կը վարուի։
Ձրի բաշխէ. Ձրիա կը բաշխէ։
Բարւոք ընթանայ. Աղէկ կերթայ։
Յոյժ տագնապի. Շատ կը նեղի։
Սաստիկ տանջէ. Խիստ կը տանջէ։
Արագ հասանէ. Շուտ կը հասնի։
Յանկարծակի գայ. Անմիջապէս կու գայ։
Հազիւ շարժի. Կիսաձաղէլով ձորով կը շարժի։
Գաղտ գործէ. Ծածուկ կը գործէ։
Կամաւ չարչարի. Կամօք կը չարչարուի։
Ակամայ աղօթէ. Զոռով կաղօթէ։
Ունայն պաշտէ. Բօշ տեղը կը պաշտէ։
Այլազգ խորհի. Ուրիշ կերպ կը մտածէ։
Յունարէն բարբառի. Հոռոմերէն կը զրուցէ։
Ինքնին բղխէ. Ինքիրմէն կելլէ։

Քանակականք։

Ընդ որովք կարեն դասաւորիլ և նուազականք և յաճախականք, զատականք և կրկնականք, ժողովականք և համայնականք. ևս և փոխարինականք. զբ։

Այսչափ խոնարհեցաւ. Աս չափ խոնարհեցաւ։

Անխափան զօրացաւ ·	անխըտար զօրացաւ :
Սակաւ ուտէ ·	քիչ կուտէ :
Ստէպ գնայ ·	սըխ սըխ կերթայ :
Միայն նստի ·	մինակուկ կընստի :
Ի միասին աշխատի ·	մէկտեղ կաշխատի :
Ի հաւասարին չափէ ·	բերաբար կըչափէ :

Ժամանակականք · ՊԲ ·

Այժմ խոստանայ ·	հիմա կըխոստանայ :
Այսօր կատարէ ·	այսօր կըլըմնցընէ :
Հանապազ ձգնի ·	տայմա կըձգնի :
Երբեմն վերանայ ·	պաշէ հեղ կըվերանայ :
Տակաւին անագանի ·	տահա կուշանայ :

Տեղական · ՊԲ ·

Աստ տանջէ ·	հոս կըտանջէ :
Անդ հանգուցանէ ·	հոն կըհանգչեցնէ :
Աստանօր նորոգի ·	հոս տեղս կընորոգուի :
Աստի սկսանի ·	ասկէց կըսկըսի :
Այլուր դասէ ·	ուրիշ տեղ կըտեղաւորցնէ :

Դասականք · ՊԲ ·

Նախ՝ մտածէ ·	առաջ կըմտածէ :
Երկրորդ՝ դատէ ·	երկրորդ (կ̄ ետքը) կըդատէ :
Երրորդ՝ ընտրէ ·	երրորդ՝ (կ̄ անկէ ետև) կընտրէ :
Չորրորդ՝ առնէ ·	չորրորդ՝ (կ̄ յետոյ) կընէ :
Հինգերորդ՝ արձակէ ·	հինգերորդ (կ̄ էն ետքը) կարձըկէ :

Հարցականք · ՊԲ ·

Ընդէ՞ր տրտմիս ·	ինչո՞ւ կըտրտմիս :
Զիա՞րդ աղօթես ·	ինչպէ՞ս կաղօթես :
Ո՞ւր գնաս ·	ո՞ւր կերթաս :
Ո՞րքան ննջես ·	ինչ խըտար կըքնանաս :
Մինչե՞ երկնչի՞ս ·	կըվախնա՞ս դ :

Ստորասականք :

Ընդ որոց կարեն դասիլ և նմանականք · ՊԲ ·

Այո՛ տեսի ·	հրամերես՝ տեսայ :
Յիրաւի ասաց ·	իրաւ ըսաց :
Արդարև երդուաւ ·	ըստոյգ որ երդուընցաւ :
Այնպէս նահատակեցաւ ·	ասանկ նահատակվեցաւ :
Որպէս պատուիրեաց ·	ինչպէս որ պատուիրեց :

Բացասականք :

Ընդ որում կարեն դասիլ և արգելականք, եւ և գեր- երդմնականք . որ :

Ոչ նախանձի . — չէ նախանձիր :
Չեւ էր եկեալ . — տակա չէր եկեր :
Մինչչեւ է տեսեալ . — քանի որ չէ տեսեր :
Մի՛ բամբասեր . — մի՛ բամպասեր :
Մի՛ երբէք ստեր . — հէչ սուտ մըսեր :

Ցուցականք . որ :

Ահա եհաս . — էշտէ հասաւ :
Ահաւասիկ գայ . — էշտէ կուգայ :
Ահաւանիկ ցուցանէ . — էշտէ կըցըցունէ :

Նախընտրականք . որ :

Մանաւանդ առ մեզ խօսի՝ քան առ այլս . Աւելօք մեզի կըսէ՝ քան թէ ուրիշներու :
Լաւէ կամիմ մեռանիլ՝ քան մեղանչել . Աւելի կուզեմ մեռնիլ՝ քան մեղանչել :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Շաղկապից :

Շաղկապք բազմատեսակք են, որպէս տեսանի յըն- դարձակ քերականութեն :

Բաղհիւսական . և . այլև . նաև . դարձեալ . եւս . եւէ . և այն . և այլն . որ :

* Ի բաց փախիցուք ՚ի չարեաց , և զհետ երթիցուք բարեաց ‖ . Ռուբէն :
* Չէ բաւական ՚ի չարեաց հեռանալ, այլև պարտ է զբարիս գործել ‖ . Գրիգոր Արշարունի :

Տրոհական . կամ . և կամ . կամ թէ . և այլն . որ :

* Նա զարքայութի՜ խոստացաւ , նա գեհեան սպառնա- ցաւ . զի կամ ՚ի դժնդակացն երկուցեալ՝ զայցեմք ՚ի լաւութի՜, և կամ լաւագունիցն յոյս ունելով՝ բարուոք զկեանս մեր տնօրինիցեմք ‖ . Ոսկի :

Բացատրական . բայց . սակայն . այլ . բայց եթէ . միայն թէ . քան թէ . և այլն . որ :

* Միշտքն անցանեն . բայց աւետիք երանութեանց կան մնան || . ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ :

* Ո՛չ որ վարդապետեցան՝ են երանելիք . այլ՝ որք արդիւնաւորեցին զվարդապետեալսն || . ՆԱՐԵԿ . ԺԳ . Դ:

Անկատարական . ԹԷՊԷՏ . ԹԷԵՒ . ԹԷ՛ Ե ԹԷ . ՈՉ ԵԹԷ . ՈՉ ԴՈՅՆ . և այլն . գր :

* Ոսկի թէպէտ անգին է ձայնիւ , սակայն մեծապէս աղաղակէ արդեամբք || . ՃԱՌԸՆԹ :

* Թէև պարիսպք և աշտարակք հզօր իցեն, առ'ի չգոյէ պատերազմողաց իսկոյն մատնի քաղաք || . ԳԷՈՐԳ . Գ:

Նախընտրական . ՔԱՆ . ՔԱՆ ԹԷ . ՔԱՆ ԵԹԷ . զոր օրինակ :

* Լաւ է յստակ խորհրդով ննջել , քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել || . ՆԵՂՈՍ :

* Ձեզ թողում իմաստասիրել . քան թէ բանիւ զանճառն ճառել || . ԼԱՄԲՐՈՆ . ՅԱՌԵՆԱԲԱՆՈՒԹԻ :

Առաւելական . ԱՌԱՒԵԼ ԵՒՍ . ԵՒՍ ԱՌԱՒԵԼ . ՄԱՆԱՒԱՆԴ . և այլն . զոր օրինակ :

* Օտարանալս կոչեաց 'ի մահուանէ . առաւել ևս 'ի գերեզմանէ || . ՈՍԿԵԲ :

* Այսպիսի դատաստան լինելոց է կեղծաւորաց . . . մանաւանդ ոյք վաճառական լինին բանին այ || . ՍԱՐԳ :

Համեմատական . ՄԻՆՉ ԶԻ . ՄԻՆՉ . ՄԻՆՉԵՒ . և այլն . գր :

* Այնքան կուրացեալ յատելութեն , մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին , այլև զազգն ողջոյն բամբասես || . ԼԱՄԲ . ԱՌԷՆ :

* Այնչափ աշխատեցան մարմնով (որքն) , մինչև արտաքոյ համնին զմիտս՝ երևելեաց || . ԼԱՄԲ :

Վարանական . ԳՈՒՑԷ . ԳՈՒՑԵԱ . ԳԷԹ . և այլն . գր :

* Ի մեծագունից գործոց առնու զօրինակն . զի գուցէ զփոքրն արասցուք || . ՈՍԿԵԲ :

* Այս մեր ասուն և խօսուն իմացական բնութ զիա՛րդ գէթ ոչ նմանի նմա , թողուլ զանզգամութի և կեալ || . ԵՓՐԵՄ :

Թէական . ԵԹԷ . ԹԷ . ԱՊԱ ԹԷ . ԱՅԼ ԵԹԷ . ևն . գր :

* Եթէ չիք սրբութի սրտի , պահք չեն ընդունելի || . ՏԾԲ :

* Հրամայեալ է մեզ զմերն զոհ տալ այլոց . ապա թէ մեք զայլոցն յափշտակեմք , ո՞ր յոյս կենաց եղիցի մեզ || . ՈՍԿ :

Մեկնական. այսինքն. այսինքն է. այս է. և այլն. մբ.
* Մի տեսակ օտար զգեցեալ լիցուք. այլ զհնիցն քնի բարձցուք, այսինքն զխոնարհութիւն նր || Վարդ. Հարց. Է.
* Յամաքեցաւ խոտն. այս է՝ մեռաւ || Գէորգ.
Յարացուցական. ըստ այնմ. ըստ որում. որպէս. ևն. մբ.
* Տր մեր առաքեցաւ 'ի Հօրէ քարոզ հեթանոսաց. ըստ այնմ, եդի զքեզ յուխտ ազգի և 'ի լոյս հեթանոսաց || Անանիա.
* Նա 'ի մեռեալս գտանին սիրելիք նորա, որպէս Աբրահամ, Իսահակ, Յակոբ || Նանայ.
Պատճառական. զի. քանզի. վս զի. փոխանակ զի. ևն. մբ.
* Խօսեցարուք զճշմարտութի ... և մի զստութի. զի ճշմարտութի յայտ է, և ստութի 'ի ստնյէ || Շնորհ. Ընդհ.
* Փոխանակ զի նախանձեցաւ օձն ը̄ ադամ ... զերկս անէծս ընկալաւ || Ոսկ.
Հետևողական. վս այսորիկ. վս որոյ. յաղագս այնորիկ. սակս որոյ. սմին իրի. ուստի. ևն. մբ.
* Նոքա զմերս ատեն ազգ. վասն այսորիկ և 'ի մէնջ ատեսցին . . . հայհոյեն զմեզ. յաղագս այնորիկ և 'ի մէնջ հայհոյեսցին (ասեն օտարքն 'ի սիրոյ) || Լամբ. Ատեն.
Մակաբերական. ապա. ուրեմն. և այլն. մբ.
* Ոչ է արժան մարդոյ խառնել զմեղս ընդ լեզւոյ. ուրեմն մի խառնեսցէ նա 'ի պահս իւր զանէծս նզովից, և բամբասանս || Ոսկ.
* Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա և ցանկութի 'ի պահոց || Յաճախապատում.
Սկզբնաւորական. արդ. այլ արդ. իսկ. և այլն. մբ.
* Ուսուցին անողորմքն՝ եթէ չէ պարտ ողորմիլ. արդ իւրեանց ախտիւն դատի զնոսա || Սարգ.
* Որ մեղանչէ՝ օրինազանց է. իսկ որ զօրէնսն լուծանէ՝ զինչ է անուն նորա || Լամբ.
Թարմատար. Թէ. Եթէ. զի. դա. որ. և այլն. մբ.
* Մի տար գիտել թշնամւոյն՝ Թէ 'ի խռովութի է ընդ քեզ պահապան քո || Խոսրով.
* Ո՛վ ոք համարձակիցի, եթէ ո՛ք իցէ 'ի մեղաց || Ատան.

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Միջարկութեանց:

Միջարկութիւնք յայտ առնեն զկիրս հոգւոյն. և են բազումք:

Երանական. Երանի. երանի թէ. ով. որ, * Երանի վաստակոց ձերոց, որում ես ցանկացայ ||. Ռուն. Գող. լու:

* Երանի թէ՝ երազ միայն էր (մեծութի աշխարհի), և ոչ առիթ տանջանաց ||. Գէորգ Վարդապետ:

Իղձական, կամ յօժարական. Իցէ թէ. ով. որ, * Իցէ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ ||. Նար:

* Ո՜վ որպիսեաց՝ մեզ պէտք են բանից և ժուժկալութե ||. Եփրեմ:

Զարմացական. ով. ով թէ. բաբէ. որ, * Ով թէ քանի անչափ են խնամքն քո, զիարդ զծածուկ կամս հօրն յայտնեաց մեզ ||. Եփրեմ:

* Բաբէ՜՝ զիարդ վրէպ եղեր 'ի չարութե թշնամւոյն ||. Վարք հարց:

Զարհուրական. Ով. ո. ոհ ոհ. որ, * Ով որպիսի ահ և դողումն եկեալ է 'ի վերայ մեր յանժամ. որպիսի զեղջ կալցի զմեզ ||. Վարք հարց:

* Ահ ահ օր, զի մերձ է օր Տն, օր մգի. հասեալ է վախճան ազգաց ||. Եզեկ:

Հառաչական. Ահ. ոհ թէ. ով. որ, * Ահ մայր իմ՝ ընդէր ծնար զիս՝ այր դատապարտեալ՝ տեսանել զթշուառութիւն մարդկան ||. Գող. լու:

* Գոչեաց մեծաձայն, և ասէ. ով թշուառութեն . . . մարդ մի խնդրեմ խօսել ընդ նմա, և ոչ գտանեմ ||. Վարք հարց:

Եղկական, կմ ողբական. Եղուկ. վայ. վայ վայ. ոհ. ով. բաբէ. որ, * Եղուկ՝ որ չարչարեացն զքեզ ||. Բարսեղ:

* Մեզ վայ թշուառականացս՝ յաղագս մտաւորական կուրութեանս ||. Լամբ:

Աւաղական. Աւաղ. վայ. ոհ. ոհ. դր. * Աւա՜ղ ուր այրարատեան գունդն և ասքանազեան զօրն || Մովսէս :
* Ո՜հ գեղապատիր մարմին երկրածին, որովք ձայ-նարկութեամբք զքեզ աւաղեցից || Նարեկ :
Ցաւակցական. ո. ոհ. վայ վայ. դր. * Ո՜ մինչև ցմահ ձգնէին եղբարքս այս || Վարք հարց :
* Ո՜հ քանի պակասութիւն է մեզ և երկրի՝ մեկնելն 'ի մէնջ սրբոյն մեծին Անտոնի || 'ի նոյն :
Կոչական. Ով. ո. դր. * Ո՛վ որք զգեցեալ էք զզէնն քրիստոսի՝ ուսարուք զգործ պատերազմի || Տիմ. Է :
* Յայսպիսի ահագին սպառնալեացս պարտ էր երկըն-չել և դողալ մեզ ո՜ սիրելիք || Ասրգ :
Բացագանչական, կամ խրախտական. Այ. ով. դր.
* Ա՜յ դառնացեալ ծեր, զի՞ կայ իմ և քո, զի հալա-ծես զիս || Վարք հարց :
* Ո՜վ յիմա՛ր դու, զիա՞րդ այլոց մաքրիչ (լինիս), և ոչ անձին || Եփրեմ :
Յորդորական. Աղէ. հապայ. հա. դր. * Ա՜ղէ եկ դու՝ ընկալ 'ի լսելիս քո զասացեալսն 'ի միջերէէն || Մովսէս :
* Հա՛պայ առաքինիք՝ եհաս ժամ պսակման մերոյ || Եղիշէ :
Խնդական, կամ ախորժական. Աւաշ. վաշ վաշ. դր.
* Աւա՛շ ինձ, զի ջեռայ, և տեսի զկրակ || Եսայ :
* Աւա՛շ վաշ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա || Սաղմ :
Գովողական. Ով. ո. դր : * Ո՜վ քանի անչափ է մար-դասիրութիւն նորա || Եփրեմ :
* Ո՜ մեծի զօրութեանն՝ որ արար զայն || Ոսկ :
Հեգնական. Աւահ. դր. * Աւա՛հ՝ եղև ադամ իբրև զմի 'ի մէնջ || Ծննդոց :
Արհամարհական, կմ ծանակական. Աւաղ. վաշ վաշ. դր. * Աւա՛ղ նոցա անմտութեան || Ոսկեբ :
* Աւա՛ղ վաշ 'ի վերայ գործելեացն և չարեաց տանն իս-րայէլի || Եզեկ :
Անիծական. Աւաղ. վաշ վաշ. դր. * Եթէ ոտնհար եղէ 'ի վերայ գլորման թշնամւոյ իմոյ, և ասացի 'ի սրտի իմում՝ վա՜շ, ապա լուիցէ ունկն իմ || ԼԱ. Յոբ :
* Կորիցեն զամօթ առ ժամայն վաշվաշակք՝ ոյք ա-սեն ինձ վա՜շ վաշ || Սաղմ :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս որպիսութեան մասանց բանի ։

Զոր միանգամ աւանդեցաք նորավարժից յառաջին մասին անդ, արժան է աստ քննել զնոյն, և տեսանել՝ թէ զինչ իցեն, և որպիսի. և զի՞ր յատկութիս կամ պարագայս ունիցին, առ 'ի խելամուտ առնելոյ ամենայնի նոցա՝ զուսանողսն ։ Այլ հարկ է նախ յայսմ վայրի ունել մտադիւրութիւն յօժար՝ առ բարւոք իմանալոյ զգրեալսն 'ի սմա ։ Զի ո՞չ առ ուսումն առաջին մասին՝ պիտոյ է արագութիւն յիշողութեան, սոյնպէս և յայսմ մասին հարկաւոր է պատրաստութիւն մտաց. զի անդ առաջի դնին սերտելիք. իսկ աստ քննին մտաց տխորժելիք ։ Զայսոսիկ ծանուցեալ՝ մատիցուք 'ի ձեռս. նախ՝ 'ի քննութիւն քերականութեան, և ապա 'ի բացատրութիւն մասանց բանի ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս Քերականութեան, թէ զինչ իցէ, և քանի՞ գլխաւոր մասունք նորա ։

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ. քանզի որպէս հիւսնութիւն է արհեստ ըստ կարգի և ըստ պատշաճի շինելոյ զկերտուածս, այսինքն զարկղ, զաթոռ, և այլն, սոյնպէս և քերականութիւն է ազատական իմն արուեստ, որոյ ուսանողն՝ ըստ կարգի և ըստ ուղղութեան կազմէ զխօսս. և առանց սխալանաց կարգէ զնոյն՝ թէ 'ի խօսելն, և թէ 'ի գրելն.

Գլխաւոր մասունք քերականութեան, այսինքն հարկաւոր ուսանելիք 'ի քերականութեան են չորք. գիր, վանկ, բառ, և բան ։ Վասն զի զոցանէ միայն խօ-

ոի քերականութեան՝ իբրև զայնց, որք գլխաւոր արար և յատկապէս ուսանելի են 'ի քերականութեան. զի որովհետև ոչ այլ ինչ դիտէ քերականութիւն, բայց եթէ ուղիղ և անսխալ կարգել զբանս, հարկ է նմա յատկապէս զայնցանէ խօսիլ, յորոց կազմին բանք. և քանզի բանք կազմին 'ի բառից, և բառք 'ի վանկից, և վանկք 'ի գրոց, պիտոյ է, զի յատկապէս զոցանէ խօսեսցի քերականութիւն:

Յաղագս Գրոց:

Գիրն է գիծ ինչ, որ կարգեալ է 'ի նշանակել ըղտառն. որպիսի են նշանագիրքս՝ ա. բ. գ. դ. եւն: Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի. այսինքն այնպիսի հնչումն, որ յօդի ընդ այլում հնչման. և հեգեալ ընդ նմա՝ զբաղադրեալ ձայն հնչէ. որպէս հնչումնս Բ՝ յօդի ընդ հնչմանս Է. և հեգեալ ընդ նմա այսպէս, Բ'=Է, հնչէ զբաղադրեալ ձայնս զայս՝ ԲԷ:

Ուստի հնչումն ինչ եթէ չիցէ հեգելի ընդ այլում հնչման, ոչ է տառ. զի ոչ լինի տարր կատարեալ ձայնի. իսկ տառն ըստ ստուգաբանութեան իւրում պարտի լինել տարր ձայնի, այսինքն բաղկացուցիչ նորա: Նոյն ևս՝ եթէ հնչումն ինչ իցէ յօդեալ և հեգեալ, ոչ ասի տառ, այլ՝ վանկ. զի ոչ է հեգելի, այլ՝ հեգեալ:

Տառք 'ի մերս լեզու յերեսնևվեց գիրս բովանդակին. որոց ձևք և հնչմունք այսպէս կերպաւորին:

ա	ԱՅԲ.	խ	ԽԷ.	չ	ՉԱ.
բ	ԲԵՆ.	ծ	ԾԱ.	պ	ՊԷ.
գ	ԳԻՄ.	կ	ԿԷՆ.	ջ	ՋԷ.
դ	ԴԱ.	հ	ՀՈ, կամ ՀՕ.	ռ	ՌԱ.
ե	ԵՉ.	ձ	ՁԱ.	ս	ՍԷ.
զ	ԶԱ.	ղ	ՂԱԴ.	վ	ՎԵՒ.
է	Է.	ճ	ՃԷ.	տ	ՏԻՒՆ.
ը	ԷԹ, կամ ԸԹ.	մ	ՄԵՆ.	ր	ՐԷ.
թ	ԹՈ, կամ ԹՕ.	յ	ՅԻ.	ց	ՑՈ, կամ ՑՕ.
ժ	ԺԷ.	ն	ՆՈՒ.	ւ	ՒԻՒՆ, կամ ՀԻՒՆ.
ի	ԻՆԻ, կամ ԻՆ:	շ	ՇԱ.	փ	ՓԻՒՐ.
լ	ԼԻՒՆ.	ո	Ո, կամ ՈՒՈ.	ք	ՔԷ.

Յորս յաւելեալ զտառսդ օ և ֆ՝ լինին երեսուն և ութ, զորոց զյատկութիւնս տես 'ի բառարանի ։

Եօթն 'ի սոցանէ ձայնաւորք ասին. զի ինքնին տան զձայն. և են սոքին . ա. ե. է. ը. ի. ո. օ. ընդ որս դասի և ձայնաւոր հնչումն ու՝ իբր ութերորդ ։ Իսկ մնացեալ տառք բաղաձայնք ասին. զի բաղադրութ ձայնաւորի տան զձայն . և են սոքին . բ . գ . դ . զ . թ . ժ . լ . խ . ծ . կ . հ . ձ . ղ . ճ . մ . յ . ն . շ . չ . պ . ջ . ռ . ս . վ . տ . ր . ց . ւ . փ . ք ։

Իսկ գիրս և՝ յատկապէս ոչ դասի ընդ սոսա . զի ոչ է նշանակիչ յատուկ տառի, այլ՝ երկուց որոշ տառից . այսինքն եչի և հիւնի . և 'ի նոցունց կազմեալ . զի 'ի կիսատ եչէ, և 'ի հիւնէ, փոխանակ բառիս եւ ։

Այսքիկ նշանագիծք մեր 'ի չորս ձևս սովոր են նկարել . Նախ՝ յայս ձև . ա . որ անուանի բոլոր գիր . և 'ի գործ ածի այժմ առաւելապէս 'ի տպագրութիս ։

Երկրորդ՝ յայս ձև . ա . որ անուանի նօտր գիր . և 'ի գործ ածի հասարակօրէն 'ի գրութիս քարտիզաց, և 'ի շարագրութիս ուսումնասիրաց ։

Երրորդ՝ յայս ձև . Ա . որ անուանի երկաթագիր . և 'ի գործ ածի հասարակօրէն 'ի սկսուածս բանից գրելոց բոլոր գրով ։

Չորրորդ՝ 'ի պէսպէս վայելչազարդ ձևս . և կոչի փառագիր . որ եթէ ծաղկամբք, կմ գրուագօք նկարեսցի, ասի ծաղկագիր, կմ գրուագագիր . իսկ եթէ կերպարանօք մարդոյ, կամ թռչնոյ, և այլն, կոչի մարդագիր, կամ ձագագիր . որպէս տեսանի 'ի սկըսուածս պէսպէս ճառից և գլխոց մատենից ։

Այլ յաղագս ղ . յ . ո . ւ . տառից . սոյնպէս և յաղագս նայ տառից, որք են մ . ն . տես յընդարձակ քերականութեն նորոգ տպագրեալ . տես անդ և զոր խօսեցաք զհնչմանէս ու ։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Վանկի.

Վանկն է ձայն ինչ՝ որ միով հնչմամբ ելանէ 'ի բերանոյ մարդոյն՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. զոր օրինակ, Գա. հէ. նէ. գո. ից. ղու. օք. և այլն.

Ասի՝ միով հնչմամբ. զի եթէ բազում հնչմամբ ելանիցէ, ոչ ասի վանկ. այլ՝ բառ. զորօրինակ, Բարի. ընտանի. մեծապէս. և այլն.

Ասի ևս՝ ելանէ 'ի բերանոյ մարդոյն. որով որոշի նախ՝ յայն ամ ձայնից, որք հնչին յանկենդան իրաց, և յանբանից. որպիսի են ձայնք ջուրց, հողմոց, պղընձեաց, քնարից, տաւղաց, թռչնոց, գազանաց, ևն. Երկրորդ՝ որոշի նաև յայնպիսի ձայնից, որք թէպէտ ելանեն 'ի բերանոյ մարդոյ, սակայն ոչ իբր բանաւորի, այլ՝ իբր կենդանւոյ. որպիսի են ձայնք սուլելոյ, հազալոյ, փռնգալոյ, և այլն.

Ասի դարձեալ՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից. քանզի առ 'ի ասել ձայնի ինքն տիրապէս վանկ՝ պիտոյ է այնմ բաղադրիլ 'ի բաղաձայն և 'ի ձայնաւոր տառից. և միով հնչմամբ ելանել ընդ բերանն. զոր օրինակ, Ան. եր. գեղ. քէն. և այլն. Սմին իրի ձայնաւոր տառքս՝ է և օ, ոչ ասին յատկապէս վանկ, այլ՝ անյատկապէս և պիտակաբար, ըստ որում միով հնչմամբ ելանեն 'ի բերանոյ մարդոյն.

Ըստ այսմ են և այլ ձայնաւոր տառք՝ եթէ առանց բաղադրելոյ ընդ բաղաձայն տառից հնչեսցին. որպէս, ա. ե. է. ի. ը. օ. զի են այսմ տառ ասին. այսինքն հեգելի և յօդելի ձայն. և են նիւթ և տարր վանկի, և ոչ տիրապէս վանկ. Իսկ եթէ փաղառութ բաղաձայն տառից հնչեսցին, ասին յատկապէս վանկ. զոր օրինակ, այբ. էջ. և այլն. զի ըստ այսմ հեգմամբ և փաղառութ տառից ձևանան. Իւ վասն այսր պատճառի վանկն կոչի նաև հեգ և փաղառութի.

Վանկից բազում են տեսակք. ոմանք են միատառ, կամ միագիր. և ոմանք յոգնատառ, կամ բազմագիր.

Միատառք են եօթն ձայնաւորքս, ա. ե. է. ը. ի. ո. օ. որք ըստ վերոյգրելոյդ պիտակապէս միայն ասին վանկ ։

Իսկ յոգնատառք են, որք 'ի բազում տառից բաղկանան. ոմանք յերկուց. և կոչին երկատառ. որպէս, Եղ. մի. օդ. ևն ։ Ոմանք յերից. և ասին եռատառ. որպէս, Հաց. հող. բեր. ևն ։ Ոմանք 'ի չորից. և ասին քառատառ. որպէս, Զարկ. փեղկ. ջուր. ևն ։ Ոմանք 'ի հնգից. և ասին հնգատառ. որպէս, Սուրբ. թեամբ. գամբք. ևն ։ Ոմանք 'ի վեցից. և կոչին վեցատառ. որպէս, Կուրծք. ջուրբք. սեամբք. ևն ։

Դարձեալ՝ ոմանք 'ի վանկից են միաբարբառ, կամ միաձայն. և ոմանք երկբարբառ, կամ երկձայն ։ Միաբարբառք են նոքա, որ ունելով զմի ձայնաւոր տառ՝ զձայն միոյ հնչեն. զոր օրինակ, Հար. թող. զով. Ձիւ. ևն ։ Իսկ երկբարբառք են նոքա, որք ունելով զերկուս ձայնաւորս՝ իբրև զմի ձայն հնչեն. զոր օրինակ, Լեալ. եօթն. ձիւն. տուն. տես յընդարձակն ։

Դարձեալ՝ ոմանք 'ի վանկից են աննշանք, և ոմանք նշանականք ։ Աննշանք են նոքին, որք 'ի հայ բարբառ ինչ ոչ նշանակեն. զոր օրինակ, Սա. բե. ղէ. ևն ։ Իսկ նշանականք են՝ որք առանձինն նշանակեն ինչ. զոր օրինակ, Լար. թել. զէն. ևն. բայց սոքին ոչ ըստ որում նշանականք, այլ՝ ըստ որում են նիւթ նշանակութեան, և ըստ որում միով հնչմամբ ելանեն ընդ բերանն, ասին վանկ. զի ըստ որում նշանականք՝ յաւէտ բառ ասին, քան վանկ ։

ԳԼՈՒԽ Գ ։

Յաղագս Բառի ։

Բառն է ձայն նշանական. այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է՝ առ 'ի նշանակել ինչ. որով և որոշի 'ի վանկէն. զի նա է ձայն միահնչիւն՝ ըստ ինքեան աննշան՝ կարգեալ առ նշանական ինչ, այսինքն առ բառն ։ Իսկ բառն է նշանական ձայն. զի միշտ նշա-

նակէ ինչ. այսինքն, կամ զնոյն իրն, կամ զգործողութիւս իրաց, եւ կամ զպարագայս նոցին ։

Զայնն՝ որ նշանակէ զիրն, եւ յորջորջէ զնոյն այս ինչ, ասի անուն. որպ՝ Այր. հող. անասուն. տեսիլ. եւն ։

Զայնն՝ որ նշանակէ զգործողութիւս, կամ զկիրս, եւ կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ, կոչի բայ. որպ. Անամ. խօսեցայ. եղէ. եւ այլն ։

Զայնն՝ որ նշանակէ զիրն 'ի գործողութեան, կամ 'ի կրելութեան, կոչի ընդունելութիւն. որպ, Տեսօղ. տեսեալ. տեսանելի. եւ այլն ։

Զայնն որ զպարագայս իրաց եւ գործողութեանց նշանակէ, է հնգապատիկ. զի Կամ զդէմս իրաց ցուցանէ. եւ այս կոչի դերանուն, որպ, Ես. դու. սա. դա. եւն ։ Կամ սոսկ զպարագայս ինչ իրաց յայտնէ. եւ այս կոչի նախադրութիւն. որպ, 'Ի. զ. ընդ. վասն. եւն ։ Կամ զկիրս հոգւոյն յայտարարէ. եւ սա կոչի միջարկութիւն. որպ, Ո՜վ. աւա՜ղ. եւն ։ Կամ զպարագայս գործողութեան եւ կրելութեան 'ի մէջ բերէ. եւ սա կոչի մակբայ. որպ, Այսօր. յետոյ. ուր. եւն ։ Եւ կամ զայս ամենայն նշանական բառս ընդ միմեանս կապէ. եւ սա անուանի շաղկապ. որպ, Սակայն. թէ. եւ. եւ այլն ։

Յայսցանէ յայտնի երեւի, թէ ութ են ազգք բառից. այսինքն, Անուն. դերանուն. բայ. ընդունելութիւն. նախադրութիւն. միջարկութիւն. մակբայ, եւ շաղկապ ։

Չորք 'ի սոցանէ հոլովականք են, որպէս անուն, դերանուն, բայ, եւ ընդունելութիւն. եւ չորք անհոլով. որպէս նախադրութիւն, մակբայ, շաղկապ եւ միջարկութիւն ։

Արդ՝ սոքա որպէս վասն գոլոյ ձայնք նշանականք՝ առանձինն առեալ՝ բառք ասին, սոյնպէս եւս վասն բաղկացուցանելոյ զբան՝ այսու կամ այնու եղանակաւ նշանակելով՝ մասունք բանի կոչին, ոմանք իբր անուն, ոմանք իբր բայ. եւ այլն ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Ոճոյ:

Ոճն է կարգաւոր շարամանութիւն բառից՝ յայտնող տրամախոհութեան մտաց: Յասելն՝ կարգաւոր շարամանութիւն բառից, ցուցանէ, թէ 'ի կազմութեան բանի՝ շարք բառիցն պարտին լինել ըստ կարգի զետեղեալք. որպէս, * Յանկանիլ մեղացն՝ յառնէ արդարութիւնն ||. Եփրեմ: Որ ահա ըստ կարգի դասաւորեալ են բառք: Իսկ եթէ խանգարեսցես զկարգն, ոչ ևս մնայ բան. որպէս, Յառնէ յանկանիլ արդարութիւն մեղացն: Զի բառք սորա թէպէտ նոյն են՝ որ ինչ 'ի նախընթացդ՝ յորում կազմեալ էին զբան, բայց յանկարգս զետեղեալ՝ ոչ առնեն զկազմութիւն բանի:

Իսկ յասելն՝ յայտնող տրամախոհութեան մտաց, ցուցանէ, թէ յայնժամ շարուածք ինչ բառից բան ասի, յորժամ զդատմունս, կամ զխոհս մտաց մերոց յայտնէ, թէ իցէ 'ի սակաւ բառից կազմեալ, և թէ 'ի բազմաց. որպէս, * Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք ||. Եղիշէ: Ահա այս՝ բան յայտ առնէ զայն դատումն, որով խօսիմք 'ի միտս մեր, և հաստատեմք, թէ լաւ է մարդոյ կոյր լինել աչօք՝ քան մտօք:

Ասացի՝ զդատմունս մտաց. զի եթէ միայն զպարզ հայեցողութիւն, կամ զըմբռնումն մտաց յայտնեսցէ, ոչ է բան ըստ քերթողաց. որպիսի են սոքին: Զօրաբաբել սաղաթիելեան. բանական կենդանի. լուսատու և զուարթարար. ևն: Զի սոքա միայն զըմբռնմունս մտաց յայտնեալ՝ յաւէտ շարայարեալ բառք ասին՝ քան թէ բանք: Նա և այս ոչ վասն այսորիկ՝ զի բայ չէ եդեալ 'ի նոսա ներգործութեամբ, այլ՝ վասն այնպիսի պակասութեան, ըստ որոյ և ոչ զօրութեամբ ըմբռնի բայն: Իսկ եթէ բայն զօրութեամբ իմասցի, է տիրապէս բան. որպէս, * 'Ի քէն տանջանք, և 'ի մէնջ յանձնառութիւնք. սուր քոյ, և պարանոց մեր ||. Եղիշէ: Որ զօրութեամբ ըմբռնելին այսպիսի ինչ բայք, տուեալ լինելին, ընծայլին, և պատրաստ է. որպէս թէ, ասացեալ էր. 'Ի քէն տուեալ լինելին տանջանք, և 'ի մէնջ ընծայլին քեզ յանձ-

նաւունիք տանջանացդ. և որպէս պատրաստ է սուր քոյ, սոյնպէս և պատրաստ է պարանոց մեր։

Ոմանք 'ի բանից են կատարեալ, և ոմանք անկատար։ Կատարեալ բանն է, որ անթերի յայտնէ ըզտրամախոհութի միտաց. որով լսողն ոչ ևս սպասէ այլոց բառից՝ առ 'ի առնուլ 'ի միտ. զր, * Մարդիկ յօրինակն առաւել հայլին՝ քան 'ի ճշմարտութին ‖. Նեղոս։

* Իւրաքանչիւրոք յիւրոց գործոց գովլի՝ կամ պարսաւի ‖. Գրիգոր արշարունի։

* Բարիոք է մահկանացուի ոչ գիտել՝ թէ երբ վախճանի ‖. 'ի պատմութէ աղէքս։

Իսկ անկատար բանն է, որ 'ի բառից կարգաւ շարադրեալ՝ թէպէտ յայտնէ զտրամախոհութի միտաց, բայց անկատար և թերի. և կամ տայ զսկզբնաւորութի իմանալոյ զտրամախոհութի միտաց, բայց ոչ աւարտէ. այլ՝ որպէս թէ 'ի կախ թողու և որ լսէ՝ լման նորին սպասէ. զր, Եթէ ցանկամք հասանել փառացն. Թէպէտ և յամ աշխարհ գովեն և երանեն զմեզ. 'Ի փոքունցն փախուցեալ. Յորժամ յաղթեմք. եւն։ Ոի ահա սոքա զթերի ինչ դատմունս միտաց յայտնեալ, թէպէտ և սկիզբն առնեն իմացուցանելոյ, այլ ոչ կատարեն. բայց եթէ յարեսցի 'ի նոսա այլ բան, կամ բայ. զոր օրինակ։

* Եթէ ցանկամք հասանել փառացն, փախիցուք 'ի փառաց անտի ‖. Ոսկեբ։

* Թէպէտ և յամ աշխարհ գովեն և երանեն զմեզ (մարդիկ), զինչ օգուտ են մեզ ‖. Հայր հարց։

* 'Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ ‖. Նար։

* Յորժամ յաղթեմք, ցնծամք ‖. Ոսկեբ։

'Ի վախճան ծանօթութեց գլխաւոր մասանց քերականութե համառօտեսցուք զսահմանս նոցա յայս ոտանաւոր, առ դիւրին սերտողութի համբակաց։

Գիրն է գիծ ինչ՝ նշան տառի.
տառն է հնչումն՝ ինչ հեգելի։
Վանկն միով հնչմամբ յօդի,
բաղկացութեամբ՝ պէսպէս տառի։

Բառն է ձայն ինչ՝ նշանական,
յազգըս 'ի յութ՝ բաժանական ։
Բանն է կարգաւ՝ բառի հիւսուած,
յայտնիչ ներքին դատման մտաց ։

Արդ՝ յետ խօսելոյ մեր զչորից մասանց քերականութեան, հարկ է խօսիլ զութից մասանց բանի՝ զիւրաքանչիւրոց առանձինն ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անուան ։

Թէ զինչ է և քանի պատիկ իցէ անունն ։

Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի. այսինքն է՝ այնպիսի բառ, որով իրն անուանի՝ և ասի այս ինչ, կամ այսպիսի ինչ. զր, Մարդ. քար. խունկ. լոյս. պայծառ. տկար. ևն. զի սոքօք պէսպէս իրք պէսպէս օրինակաւ այս ինչ կամ այն ինչ անուանին՝ մինն մարդ, մինն քար. ևն ։ Հնար է ևս սահմանել այսպէս. Անունն է մասն բանի, որ զէութի իրին նշանակէ. այլ այս ևս զնոյն զօրութի ունի. քանզի անունն յայնժամ նշանակէ զէութի իրին, յորժամ իրն նովաւ անուանի այս ինչ, կամ այսպիսի ինչ. որպէս անունս Մարդ՝ յայնժամ նշանակէ զէութի մարդոյ, յորժամ նովաւ անուանի իրն այնպիսի. այսինքն՝ մարդ ։

Անուանց ոմանք են գոյական, և ոմանք ածական ։ Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս. և նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս. թէ բնականք իցեն, և թէ արհեստականք. զոր օրինակ, Մարդ. տունկ. աթոռ. թուղթ. գոյն. քաղցրութի. նկար. շինուած. և այլն ։

Գոյական անուանց ոմանք են յատուկ, որք և 'ի հնոց՝ Բունք ասին. ոմանք հաւաքականք, որք և Բազմաձայնք կոչին. և ոմանք ընդհանուրք կամ հասարակք, որք և ասին [illegible] ։

Յատուկ անունն է, որ կարգեալ է՝ առ 'ի զմի ինչ նշանակել, և զմիօջէ միայն ասիլ. որ, Սիմոն. Տարոն. Տիգրիս. Քօբեր. եւն։ Ո՛ ի սոքա հնարեալ են վասն նշանակելոյ զմի մարդ, զմի գաւառ, զմի գետ, զմի լեառն, եւն. ուստի և զմիօջէ միայն ասին. վասն որոյ և ոչ վարին յոգնականապէս։

Եւ թէպէտ յատուկ անուանք մարդկան՝ այլևայլ անձանց ևս դնին, բայց այն է ըստ պատահման. և զնոցանէ՝ ևս իբրև զմիօջէ ասին։ Իսկ եթէ կամիցիմք որոշել զնոսին յայլոց, յարեմք 'ի նոսա երբեմն զբառս ինչ՝ նոցին յատկացեալս. որ, Սիմոն Յովնանու. Սիմոն Նախանձայոյզ. Սիմոն Պետրոս. Սիմոն Մոգ։ Յուդա Մակաբէ. Յուդա Յակովբեան. Յուդա Իսկարիովտացի. եւն։

Հաւաքականն է, որ միով եզական ձայնիւ զբազում իրս հաւաքմամբ միացեալս՝ իբրև զմի ինչ նշանակէ. որ, Ջեղջ. Կոյտ. Դէզ. Հօտ. Երամ. Խումբ. Ժողովուրդ. Տոհմ. Հոյլ. Պար. եւն։ Ո՛ ի սոքա ոչ զմի ինչ յինքեանս նշանակեն, և ոչ ևս զբազումս իբր 'ի միմեանց զատեալս, այլ՝ իբրև հաւաքեալս 'ի մի։ Որպէս հօտն՝ ոչ նշանակէ զմի ոչխար, այլ՝ զբազում ոչխարս, ոչ առանձինն առանձինն, այլ՝ իբր 'ի մի հաւաքեալ. զի առանձին մի ոչխարն ոչ ասի հօտ, այլ յորժամ բազումք 'ի մի խումբ իցեն։

Իսկ ընդհանուրն՝ կամ հասարակն է, որ նշանակէ զընդհանուր ինչ էութի՛ տարածեալ առ բազում անհատս. կամ որ զբազմաց ասի հասարակաբար. որ, Ծառ. Հաւ. Գետ. Տուն. Գահ. Զոհ. Խորհուրդ. Բան. Զօրութի՛. Փառք. եւն։ Ո՛ ի սոքա ոչ զմիօջէ միայն, այլ և զբազմաց ասին 'ի հասարակի։ Որպէս ծառն՝ ոչ ասի զմիօջէ ծառոյ միայն, այլ և զամենայն ծառոց. զի զոր ինչ նշանակէ անունս ծառ՝ գտանի այն յամենայն ծառս։

Ածական՝ կամ ըստ հնոց քերականաց անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս. այլ՝ պահանջէ յարիլ 'ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութե՛ նոցա. որ, Բարի. Չար. Առատ. Սակաւ. Անստուեր. Վեհագոյն. Կարեւոր. Ամենափայլ. Կենդանարար. Բարեատեաց. եւն։ Որք առանձինն ոչ վարին 'ի բանս, այլ՝ յարադրելով

'ի գոյականս ։ Այլ պատճառն է, զի ունին զնշանակութիւն իւր ճապաղ. քանզի թէպէտ և յայտ առնեն զորպիսութիւն ինչ, բայց ոչ որոշեալ առ այս կամ առ այն. որով և միտք մարդոյ 'ի լսելն՝ մնայ տատանեալ. և որոնէ, թէ որպիսի իրի արդեօք որպիսութիւն է այն, զոր նշանակեն։ Այլ եթէ ընդ գոյականի վարեսցին, որոշի նշանակութիւն նոցա առ այս կամ առ այն. որով և միտք լսողին հանգչի. զոր օրինակ, յասելն, * Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ. և ծառ չար՝ պտուղ չար առնէ ||. Մատ. ածական անունս բարի՝ յարելով 'ի գոյական անուանսդ ծառ և պտուղ՝ որոշի առ այս և առ այն. այսինքն առ ծառն և առ պտուղն. որով և միտք լսողին ոչ ևս որոնէ, թէ բարին զոր իր նշանակէ աստ. կամ զորպիսի իրի որպիսութիւն յայտնէ. Ըստ այսմ և անուանդ չար՝ յարելով յանուանսդ՝ ծառ և պտուղ, որոշի 'ի նշանակութեան իւրում։

Յաստացելոցս տեսանի, զի գոյական անունն հայի 'ի էինչ գոլ իրին. իսկ ածականն հայի յորպէսն գոլ նորին. վասն որոյ մին վարի առանձին, և միւսն յարելով 'ի նոյն ։

Այլ գիտելի է, զի թէպէտ ածականն պահանջէ յարիլ 'ի գոյականս, բայց ոչ է հարկ միշտ ներգործութեամբ ունել զնոսին. այլ բաւական է ևս զօրութեամբ միայն ունել. զոր օրինակ, յասելն, * Ի փոքունն նկարեաց զմեծն, և 'ի մարմնականն զհոգևորն ||, Շնորհ. ածական անուանքս 'ի փոքուն, զմեծն, 'ի մարմնականն, զհոգևորն՝ զօրութեամբ ունին զգոյական իւրեանց. այսինքն է՝ իր, գործ, գործողութիւն, խորհուրդ. որպէս թէ ասէր. 'ի փոքու իրի նկարեաց զգործ մեծ, և 'ի մարմնական գործողութեան զխորհուրդ հոգևոր ։

Ածական անուանց ոմանք դրականք ասին. ոմանք բաղդատականք. և ոմանք գերադրականք ։

Դրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ, կամ նուազեցուցանելոյ. զբ, Բարի. սպիտակ. գեղեցիկ. վատթար. պակաս. երկայն. կարճ. ևն ։

Բաղդատականք են, որք բաղդատելով զմի իր ընդ այլում իրի՝ ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն

նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն. և սոքա կազմին մասնկամբս՝ գոյն. զոր օրինակ, Բարեգոյն. սպիտակագոյն. գեղեցկագոյն. վատթարագոյն. պակասագոյն. երկայնագոյն. կարճագոյն. ևն։

Գերադրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն իրին յոյժ առաւելեալ, կամ յոյժ նուազեալ քան զայլոցն. և սոքա կազմին մասնկամբս՝ ամեն. զոր օրինակ, Ամենաբարի. ամենագեղեցիկ. ամենավատթար. կամ՝ ևս վերագոյն, ևս մեծագոյն, ևն։ Զայսցանէ տես յընդարձակն։

Անուանք ածականք։

Աստանօր արժան համարիմ խօսիլ զայնոցիկ անուանց, որք կոչին ածականք. և բաժանին 'ի հինգ տեսակս. որք են, Վերբերականք. Հանրականք. Հարցականք. մասնականք, և թուականք։

Վերբերականք են, որք 'ի մէջ բերեն զբաղդատութիւն ինչ որպիսութեան կամ որքանութեան. և են սոքա. Սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի։ Այսպիսի, այդպիսի, այնպիսի։ Այսքան, այդքան, այնքան. սոյնքան, դոյնքան, նոյնքան. և սոքա վարին ածականապէս։ Ընդ որս դասին և բառքս՝ Այսչափ, այդչափ, այնչափ. սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ. որք առանց հոլովելոյ վարին։

Հանրականք են բառքս՝ ամենայն, ամենեքեան, կամ ամենեքին. բոլոր, բոլորեքեան, կամ բոլորեքին. որք իբր ածական 'ի գործածին. Ընդ որս կարեն դասիլ և անուանքս՝ բնաւ, համայն, ևն։

Հարցականք են, որք հարցականապէս վարին. որոց ոմանք են իբր գոյական. և են սոքա, Ո՞. ո՞վ. զի՞նչ. ո՞վ ոք. ո՞յք։ Իսկ ոմանք իբր ածական. և են սոքա. Ո՞ր. զի՞նչպիսի՞. որպիսի՞. ո՞րչափ. ո՞րքան. քանի՞։ ('Ի սոսա բառքս՝ որպիսի. որքան. քանի. որչափ. վարին երբեմն նաև իբր վերբերականք առանց պարոյկի)։

Մասնականք, որք և բաշխականք ասին, են նոքա, որք մասնաւորեն զնշանակութիւն անուան իրիք. երբեմն իբր ածական վարելով, և երբեմն իբր գոյական. և սոքա

են չորեքկին ։ Առաջինն որոշէ զմին 'ի յերկուց . և է բառս այս Միւս . զոր օրինակ , * Յայս երկու Ճանապարհք կոչեցան . մին լայն և ընդարձակ . իսկ միւսն՝ նեղ և անձուկ ‖ . ոսկ ։ Մա չունի յոգնական ։

Երկրորդն որոշէ զմին 'ի բազմաց . որպէս սոքին , Ոմն . ոք . իմն . ինչ . զր , * Ոմն ('ի մարդկանէ) աստ պատժէ , և անդ պսակէ ‖ . Ոսկեբերան . 'ի մեկն . ղուկ ։

Երրորդն ցուցանէ զերկուսն մի մի յինքեանս . և է բառս այս Երկաքանչիւր . զոր օրինակ , * Ո կերպարանս երկաքանչիւրոց առ միմեանս եդեալ՝ զմի և զնոյն վկայութիւն ծնունդս արտադրեն ‖ . Նար ։

Չորրորդն ցուցանէ զբազումս 'ի միասին անձնեբաբար և ոչ հաւաքապէս . և է բառս Իւրաքանչիւր . զոր օրինակ, * Առանձինն ունի իւրաքանչիւր անդամ զիւրաքանչիւր գործ ‖ . Նար . Երգ ։

Սորա ուղղականն բազում անգամ վարի փոխանակ սեռականի և տրականի . զոր օրինակ , * Նոյն հոգի բաշխէ Իւրաքանչիւր՝ ըստ իւրաքանչիւր կարի ‖ ։ այսինքն բաշխէ իւրաքանչիւրոց . Ժող ։

'Ի տեղի սորա երբեմն դնի կրկնակ բառքդ՝ Գոյ գոյ . այր այր . ևն . զոր օրինակ , * Բաշխեր գոյ գոյ 'ի նոցանէ զգանձս ‖ . Խորեն ։ * Ոտն ոտն զքաջութիւն պատմէր նոցա ‖ . Եղիշէ ։

Թուականք են , որք 'ի մէջ բերեն զթիւ . և վարին ածականապէս . որոց են հինգ տեսակք ։ Առաջին տեսակքն ասին ընդարձակք . որք արձակապէս նշանակեն զթուեալսն . որպէս՝ Մի . երկու . երեք . չորս . հինգ . վեց . տասն . հնգետասան . քսան . քսանևմի . երեսուն . ևն ։ Երկրորդ տեսակքն ասին դասականք . որք կարգաւ ցուցանեն զթուեալսն . որպէս՝ առաջներորդ . երկրորդ . երրորդ . չորրորդ . հինգերորդ . տասներորդ . հնգետասաներորդ . ևն ։ Երրորդ տեսակքն ասին զատականք . որք նշանակեն զթուեալսն իբր զատուցեալս և առանձնացեալս . զր , Միակ . երկեակ . երրեակ . հնգեակ . եօթնեակ . յիսնեակ . ևն ։ Չորրորդ տեսակքն ասին անձներականք . որք զբազումս ընդ միով թուով իւրաքանչիւրաբար նշանակեն . զր , Երկոքեան , կամ երկոքին . երեքեան , կամ

երեքին. չորեքեան, կամ չորեքին. հնգեքեան, կամ հնգեքին. վեցեքեան, կամ վեցեքին. տասնեքեան, կամ տասնեքին. եւ այլն։ Հինգերորդ տեսակքն ասին կրկնականք. որք զկրկնումն թուոյ ցուցանեն՝ վերջաւորութիւն պատիկ. որպէս, Քառապատիկ, (այսինքն մին քառիցս կրկնեալ). հնգապատիկ, (այսինքն մին հնգիցս կրկնեալ). եօթնապատիկ, (այսինքն մին եօթնիցս կրկնեալ). եւ այլն։

Յոմանս 'ի սոցանէ յարի և մասնիկս կին՝ այնու նշանակութեամբ, զոր ունի մասնիկս պատիկ. որպէս, Երեքկին. չորեքկին. հնգեկկին. վեցկին. և այլն.

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս պարագայից անուան։ Եւ նախ՝ յաղագս Սեռից։

Պարագայք անուանց ասին այնք, որք շուրջ զանուամբ մտածին՝ իբր հետեւումն որպիսութեան նոցա. ուստի նաև հետեւանք կոչին. և են վեց, այսինքն, Սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով, և հոլովումն։

Սեռք կամ սերք անուանց են որոշմունք գոյական անուանց՝ ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց, այսինքն զարու և զէգ, կամ զհասարակ ինչ, և կամ զչէզոք։ Ուստի և անուանք՝ ըստ սեռին են չորք, արական, իգական, չէզոքական, և հասարակ։

Արականն է որ նշանակէ զարու. որպէս, Աբրահամ, Իսահակ, հայր, եղբայր, այր, փեսայ, աներ, հաւ, պապ, եղն, ցուլ, արջառ, քաղ. և այլն.

Իգականն է որ նշանակէ զէգ. որպէս, Սառրա, Աննա, կին, տիկին, դշխոյ, հարսն, մայր, քոյր, զոքանչ, հանի, նու, հօրաքոյր, մայրադիր, մօրու, կով, երինջ, մաքի, ալոջ, մարի. և այլն։

Հասարակն է որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ. որպէս, Զաւակ, որդի, թոռն, կորիւն, կողուն, մտրուկ, ձագ. եւ այլն։ Նոյն եւս՝ Մարդ, առիւծ, ձի, նապաստակ, արտուտ, անգղ. և այլն։

Չէզոքականն է որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. որպէս, Ջուր, օդ, հող, մոմ, ճրագ, թուղթ, լոյս,

մեծուհի, ծնունդ. և այլն ։ Իսկ եթէ անկենդան իրք կոչեսցին երբեմն արու կամ էգ. զր, Արու կամ էգ ծղխնի. արու կամ էգ արմաւենի. արու կամ էգ պղինձ. և այլն, այն նմանութ՟բ ասի, և ոչ տիրապէս ։

Ասացի 'ի վերոյ, թէ այս որոշմունք են գոյական անուանց. զի 'ի լեզուի մերում ոչ գտանի որոշումն սեռի ածական անուանց ըստ արականի և ըստ իգականի. զի որչափ և ածականս ունիմք, կամ հասարակ են արուի և իգի, և կամ չեզոք. և բազումք ևս հասարակ են մարդկան և անասնոց, զգայնոց և անզգայից, արհեստականաց և բնականաց ։

Ասացի և ևս, ըստ նշանակելոյ նոցա սեռից իրաց. զի սեռք անուանց ոչ նկատին 'ի մեզ ըստ վերջաւորութե՟ կամ ըստ յօդից ինչ. որպէս 'ի լատինս, և 'ի յոյնս. այլ ըստ նշանակութե՟ նոցին. իբր զի եթէ նշանակեալն անուամբ իցէ արու, անունն ասի արական. եթէ էգ, իգական. եթէ երկուցն ևս պատկանեալ, հասարակ. և եթէ և ոչ միում պատշաճեալ, չեզոք ։

Նաև թէպէտ ոմանք յածականաց ունելով զվերջաւորութիս ուհի՝ որոշին 'ի սեռ իգական. զոր օրինակ, Արքուհի. երանուհի. և այլն, բայց այս վերաբերի յածանցումն անուանց. զորմէ տեսցես 'ի գլ. Է ։

Նաև դարձեալ՝ 'ի յատուկ անուանս թէպէտ կան՝ որք ըստ այս ինչ վերջաւորութե՟ արականապէս նշանակեն. զր, Յովհաննէս, հերովդէս, կիւրոս, յուստինիանոս, և այլն. և ըստ այլ ինչ վերջաւորութե՟ իգականապէս. զոր օրինակ, Յովհաննա, հերովդիա, կիւրիա, յուստինիանէ, և այլն ։ Բայց այս ոչ է 'ի յատկութե՟ լեզուիս մերոյ, այլ գրեթէ 'ի թարգմանութենէ անուանց այլոց ազգաց. որպէս և յայտ է ։

Իսկ եթէ պիտոյ լիցի 'ի լեզուի մերում զանուն ինչ հասարակ իգականապէս 'ի գործ ածել, յարեմք 'յայն զանուն իգական. զոր օրինակ, Կին մի վհուկ. Ա. Թագ ։ Կին մարգարէ. Դատ ։ Կին ժրագլուխ. Առակ ։ Աղախին՝ որ դռնապանն էր. Յովհ. ԺԸ ։ Նաև ևս՝ Մատակ ձի, մատակ առիւծ, մատակ աղուէս. մատակ կատու. և այլն ։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս Ձեւոց անուանց ։

Ձեւք անուանց որոշին ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան նոցա ։ Աստի և անուանք ըստ ձեւոյն երրեակ են. Պարզ, բարդ և բաղադրեալ ։

Պարզ անունն է որ կայ յինքեան միայնակ և առանձինն, և ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի, և ոչ ունի յառաջոյ զանունշան ինչ մասնիկ. որպէս, Սով. հոգի. բարի. խառն. կեղծիք. ելք. եւն ։

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է 'ի մի անուն 'ի ձեռն յօդից, ա, ե, է, ի, ու, կամ եւ. որպէս, Սովամահ, բարեմիտ, հոգեկիր, խառնիխուռն, կեղծուպատիր, ելեւէջ. եւն. յորս յօդքդ ե և է՝ եղեալ են փոխարկմամբ եի տառին ։

Այլ բազում անգամ առանց այսպիսի յօդից ևս բարդի անունն. որպէս, Երկձայն. վրէժխնդիր. ողջանդամ. բարձրնտիր. եւն ։

Այլ գիտելի է, զի անունն բարդի ըստ պէսպէս մասանց բանի. Նախ՝ ընդ ինքեան. որպէս, Պարագլուխ, սկզբնաչար, բազմապարգև, մեծապայծառ. և այլն ։

Երկրորդ՝ ընդ դերանուան. զոր օրինակ, Ինքնագոյ, իւրահնար, նոյնատիպ, քոյինաստեղծ, և այլն ։

Երրորդ՝ ընդ բայից. զոր օրինակ, Չարախնդաց, Թագընկեց, ծովահեղձոյց, վարձահատոյց, բեռնաբարձ, տիեզերակալ, սրատես, դիւահար, ականջալուր, և այլն ։ Երբեմն ևս ընդ արմատս բայից. զոր օրինակ, Բազմածին, զինակիր, լուսակիզն, հոգեպատում, և այլք բազումք ։ 'Ի սոսա ոմանք ունին զզօրութի օղի, և ոմանք եռլի. քանզի չարախնդացն նշանակէ զխնդացօղն ընդ չարիս. Թագընկէցն՝ զԹագ ընկեցօղ. Բեռնաբարձն՝ զբեռն բարձօղ. Բազմածինն՝ զբազում ծնանօղ. զինակիրն՝ զզէնս կրօղ. և այլն ։ Այսպէս և ծովահեղձոյցն նշանակէ՝ 'ի ծովու հեղձեալ, կամ 'ի ծովու հեղձուցանօղ. հոգեպատումն՝ հոգւով պատմեալ, կամ զհոգւոյն պատմօղ. դիւահարն՝ 'ի դիւէ հարեալ. և այլն ։

Չորրորդ՝ ընդ ընդունելութե. զոր օրինակ, Երա-գամիտ, քերթողահայր, տեսանողագուշակ, առաքե-լաշնորհ, ընտրելակից, սքանչելագործ, և այլն :

Հինգերորդ՝ ը նախադրութե. զոր օրինակ, Գաղ-տամիտ, ընդդիմամարտ, հեռաբնակ, միջասահման, մօտաքաղաք, շրջապարիսպ, և այլն :

Վեցերորդ՝ ընդ մակբայի. զոր օրինակ, Յառա-ջապահ, յարադադար, յաւէտահրաշ, մշտանուէր, նա-խաժաման, ներքսակողմն, և այլն :

Հնար է անուանց բարդիլ նաև ընդ միջարկութե և ընդ շաղկապի. զոր օրինակ, Վաշվաշասէր, Թէա-խնդիր, և այլն. այլ սոքա չեն 'ի գործածութե :

Գիտելի է և, զի բարդութի անուանց լինի քա-ռակի. Նախ՝ յերկուց ամբողջ բառից. զոր օրինակ, Մեծահանդէս, գեղատեսիլ, հրեշտակակերպ, լայ-նախորհուրդ, չքնաղապայծառ, և այլն : Երկրորդ՝ յերկուց պակասելոց կամ փոփոխելոց. զոր օրինակ, Լուսատու, երկդիմի, երկնաւոր, բազմագունի, և այլն : Երրորդ՝ 'ի միջէ փոփոխելոյ 'ի հաւիլն, և 'ի միջէ ամբողջէ 'ի յանգիլն. զոր օրինակ, Գեղեցկա-տիպար, ժողովրդապետ, բարեմիձակ, տանուտէր, չարեացապարտ, ձերբակալ. և այլն : Չորրորդ՝ 'ի միջէ ամբողջէ 'ի հաւիլն, և 'ի միջէ փոփոխելոյ 'ի յանգիլն. զոր օրինակ, Յոգնապիսի. մեծազգի. միա-մօր. անարգամեծար. և այլն :

'Ի բարդ անուանս դասին և այլ քանի մի անուանք որք կոչին յարաբարդք. զի յերից նշանական բառից զօդին 'ի մի անուն, որք և չեն այնչափ 'ի յաճախ գործածութե. որպիսի են սոքին, Անաչառասիրու. աննմանապահապետ. բարեհասակաչափ. երեքփառա-տրեան. հնգետասանամեայ. ողբերգարկութի. և այլն :

Իսկ բաղադրեալ անունն է, որ յառաջոյ զօդեալ ունի զաննշան մասնիկ ինչ բաղադրական, որպիսի են սոքին, Աներկիւղ, ապերախտ, ապենիազ, ապիկար, առողջ, արտուղի, կամ զարտուղի, տարաժամ, հա-կաճառ, համախոհ, հոմասեռ, բաղաձայն, ջաղանուն, ներանձն, տկար, դժգոհ, դժպատեհ. և այլն :

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Տեսակաց անուանց։

Տեսակք անուանց են որպիսութիւնք անուանց ըստ նախնական և բ̃ ածանցական նշանակութեան նոցա։ Աստի և անուանք կրկին են բ̃ տեսակին. Նախադաղափար, և ածանցական, որ 'ի հնոց կոչի նաև յարմանուն։

Նախադաղափար կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութեն իւրում, և կմ̃ յայնմ որպիսութեն զոր ինքնին նշանակէ. թէ գոյական իցէ, և թէ ածական. թէ պարզ իցէ, և թէ բարդ, կամ բաղադրեալ։ Ըստ որոյ և կոչի նախադաղափար, կմ̃ նախատիպ. իբր թէ նախկին օրինակ և տիպ, յորմէ կարեն ածանցիլ և յարմանուանիլ այլք. որպիսի են սոքա. Լոյս, երկիր, գործ, մահ, բարի, զուարթ, լուսափայլ, բարեգործ, անմահ, և այլն։

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն՝ 'ի ձեռն ածանցականակերտ մասնկանց տրամակայեալ 'ի յանգիլն, և աճեալ յայլ իմն կերպ նշանակութեն. որգոն, Լուսաւոր, երկրային, բարեգործութիւն, անմահական, և այլն։ Յորս որպէս տեսանի անունդ լոյս՝ ածանցիչ մասնկամբս աւոր՝ եղանակաւորեալ՝ աճեալ է յայլ իմն կերպ նշանակութեն. զի 'ի կերպաւորիլն լուսաւոր՝ ոչ ևս նշանակէ զլոյսն, այլ՝ զունօղն լուսոյ։ Ըստ այսմ ևս անունս բարեգործ՝ տրամակայեալ ածանցիչ մասնկամբս ութիւն, ոչ նշանակէ զայն, որ գործէ զբարի. այլ՝ զգործս նորա բարւոք կատարեալս։ Ըստ այսմ իմա և զայլոց։

Ածանցականակերտ կմ̃ ածանցիչ մասնիկք բազում են յոյժ, զորս կարես տեսանել յընդարձակ քերականութեն, մասն ը̃. գլ. ը̃։

Այլ ոմանք յանուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին, որգոն. Թագաւորութիւն. Թագաւորականութիւն. և սոքա կոչին կրկնածանցականք։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Թուոյ անուանց.

Թիւք անուանց են միութիւն կամ բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին: Երկու են կերպին. եզական, և յոգնական. կամ միաւորական, և բազմաւորական:

Եզականն է, որ ըստ ձայնին զմի ինչ նշանակէ. զք, Հոգի, մարմին, խոնարհ, հօտ. ևն: Զի թէպէտ նշանակեալն այսպիսի անուանց 'ի բազումս է, բայց ըստ ձայնին ոչ իբրև բազում նշանակի, այլ՝ իբրև մի.

Իսկ յոգնականն է, որ ըստ ձայնին զբազումս նշանակէ. զք, Հոգիք, մարմինք, խոնարհք. հօտք. ևն:

Նաև գիտելի է, զի 'ի բարբառս մեր անուանք կրկնակի լինին յոգնականք. Նախ՝ յաւելլով յեզականն զտառ ինչ. որպէս յուղղական և 'ի կոչական հոլովս՝ ք. զոր օրինակ, Բանք, բանիւք. Իսկ 'ի հայցական և 'ի ներգոյական հոլովս ս. զոր օրինակ, Զբանս, 'ի բանս. Նաև 'ի սեռականն և 'ի բացառականն՝ ց. զոր օրինակ, Բանից, 'ի բանից:

Երկրորդ՝ յաւելլով յեզականն զվանկս ինչ, կամ զմասնիկս յոգնականակերտս. որպէս երևի 'ի սոսին. Նախնայք, այգեստանեայք, դաշտորեայք, գեղջեայք, կողմանք, բեռինք, սերմանիք, ատամունք, դահոյք, մռացունք, անդէք, գիւղօրէք, աւագանի, մանկտի, խոռչեան, բարձկնեար, մարդիկ, բազմոկան, մանկտեակ:

Գիտելի է դարձեալ, զի 'ի բարբառս մեր բազում անուանք կան, որք ըստ ինքեանց անյոգնականք են. զոր օրինակ, Խաւար. լոյս. տիւ. սէր. յոյս. ևն: Սոյնպէս անյոգնական են և ամենայն յատուկ անուանք աստեղաց, ամսոց, քաղաքաց, գետոց, լերանց, կղզեաց, մարդկան ևն. զոր օրինակ, Լուսին. յունվար. վաղարշապատ. երասխ. սինա. կիպրոս. հայկ. ևն:

Կան ևս բազում անուանք՝ որք անեզականք են. զոր օրինակ, Աղաչանք. բաղձանք. բարք. փառք. կամք. խելք. մեղք. ալիք. ժանիք. կարծիք. ընթ-

րկք. դժոխք. ցնորք. կուռք. աղօթք. և այլք բազումք:

Այլ ևս գիտել արժան է, զի անեզական անուանքս, Մեղք, Կամք, ևն, յորժամ յարին 'ի բայս ինչ՝ իբրև մի վարելով ը՟ նոսին, կամ իբր զդիմազուրկ, երբեմն եզականապէս դնին. զո՛ր օրինակ, *Նմանից իւրեանց մեղ է, և ոչ փրկողին || Եզնակ:

* Որոց զհարդ կամ եղև անձանց իւրեանց, բերին նուէրս տեառն || Եղիշ:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Հոլովից անուանց:

Բառս Հոլով՝ հասարակ առմամբ նշանակէ թաւալումն և գլորումն, կամ շրջումն: Այլ ըստ քերականաց՝ նշանակէ պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն, և կամ յերկոսին միանգամայն: Որպէս անունս Բոյս՝ 'ի հոլովելն պէսպէս փոփոխի՝ կամ 'ի սկզբն, կամ 'ի վերջն, և կամ յերկոսին ևս. որ՟, Բոյս, բուսոյ, 'ի բոյս, զբոյս, 'ի բուսոյ, զբուսոյ, բուսով, զբուսով, 'ի բոյս, ո՛վ բոյս:

Այլ այսպիսի փոփոխումնք կամ զանազանութիւնք միոյ անուան՝ կոչին հոլովք անուանց. և են տասն. այսինքն, Ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական:

Ուղղական կամ անուանական հոլովն է, յորում իրն ուղղակի և արձակաբար նշանակի յինքեան. որ՟, Հաց. անձն. հիմն. և այլն: Իսկ յայլ հոլովս անուղղակի և հոլովակի նշանակին իրք: Այս հոլով թէպէտ և փոփոխմամբ իւիք ոչ ձևանայ, բայց դասի 'ի հոլովս վասն երկուց պատճառաց. նախ՝ զի է իբր արմատ այլոց հոլովից. և երկրորդ՝ զի 'ի յոգնակին փոփոխի. որ՟, Հացք. անձինք. հիմունք. ևն:

Սեռական կամ ստացական հոլովն է, յորում ոչ իրն, այլ՝ իմն իրին զօրութ՟ նշանակի, թէ ազգ իցէ նորա, թէ տուն, և թէ այլ ինչ. որպէս յասելն Տոր-

դոյ , զօրութի՟ նշանակէ իմն՝ որ մարդոյն է ․ որպիսի են միտք ․ խօսք ․ դէմք ․ ձեռք ․ զգեստ , և կամ այլ ինչ , որ ոչ է նոյն ինքն մարդն , այլ՝ իմն նորա ։ Եւ վասն այսորիկ այս հոլով կոչի սեռական , զի ցուցանէ , թէ որոյ սեռի է այս իր ․ այսինքն թէ որոյ է , և կամ ոյր ստացուած ․ նմին իրի ստացական ևս կոչի ։ Եւ յայսմանէ է , զի երբեմն փոխանակ սեռականի վարեմք զստացական յարանուանս ․ որ՟ , Լոյս երկնային ․ պարծանք պօղոսեան ․ և այլն ․ փոխանակ ասելոյ , լոյս երկնից ․ պարծանք պօղոսի ․ և այլն ։

Տրական , այսինքն տուողական հոլով է , յորում նշանակի իրն իբր այն ինչ՝ որում տալի է իմն , կամ առ որ հայելի է , կամ դիմելի , եւն ։ Այս հոլով կըրկին է , վերջահոլով և նախդրիւ ։ Վերջահոլով է , որոյ վերջաւորութիւն միայն այլայլի՝ նման սեռականին ․ որ՟ , Ազգի ․ դրան ․ դասու ․ եւն ։ Որոց յոգնակին լինի , ազգաց ․ դրանց ․ դասուց ․ եւն ։ Իսկ նախդրիւն է , որոյ սկզբնաւորութիւն փոփոխի 'ի ձեռն նախդրացս․ 'ի ․ յ ․ առ ․ առ 'ի ․ ց ․ ընդ ․ որ՟ , 'Ի խունկ ․ յարուեստ ․ առ թագաւոր ․ ցանձն ․ ընդ լեառն ․ եւն ։ Որոց յոգնակին լինի , 'Ի խունկս ․ յարուեստս ․ առ թագաւորս ․ ցանձինս ․ ընդ լերինս ․ և այլն ։

Հայցական հոլով է , յորում նշանակի իրն իբր ենթակայ խնդրոյ , կամ իբր ենթակայ ներգործական գործողութեանց ․ և ձևանայ այսպէս ․ Զկողով ․ զպըտուղ ․ զմատն ․ եւն ։ Որոց յոգնակին լինի , Զկողովս ․ զպտուղս ․ զմատունս ․ և այլն ։ Այս հոլով բազում ուրեք զօրութի՟ ունի զգոյ ․ և կոչի անորոշ հայցական ․ զի փոխանակ ասելոյ , զՃանապարհ ․ զօդի ․ զաջ ․ ըզվիշտ ․ և այլն , ասեմք երբեմն , Ճանապարհ ․ օդի ․ աջ ․ վիշտ ․ և այլն ․ որ՟ , * Ցոյց ինձ Ճանապարհ , յոր գնացից ‖ ․ սաղմոս ։

Այլ սակայն 'ի դերանուանս ոչ է այսպէս ․ զի հայցական նոցա միշտ պայծառ ձևանայ ․ զի ոչ լինի ասել , Յիշեա իս ․ այլ՝ * Յիշեա զիս ‖ ․ ղուկ ։ Եւ ոչ լինի ասել , Որսն՝ որ որսայցէք , ըմբռնեսցէ ձեզ ․ այլ՝ * Որսն՝ զոր որսայցէք , ըմբռնեսցէ զձեզ ‖ ․ երեմ ։ Եւ ոչ լինի ասել , Այս ա՟մ և առաւել քան զոյն խօսէր ․ այլ՝

* Զայս ամ և առաւել քան զայն խօսէր ||. Եղիշ.
Ըստ այսմ իմն և վասն այլոց.

Բացառական, կամ ըստ հնոց՝ առաքական հոլով է, յորում նշանակի իրն իբր այն ինչ, յորմէ ելանէ իմն, կամ ծագէ, կամ ՚ի բաց բառնի, և կամ առաքի. զ՛ր, ՚Ի սենեկէ. ՚ի բերանոյ. ՚ի գայթակղութէ. և այլն. Որոց յոգնակին լինի, ՚Ի սենեկաց. ՚ի բերանոց. ՚ի գայթակղութեանց. և այլն.

Այլ գիտելի է, զի յորժամ մի և նոյն անունն ՚ի բացառական և ՚ի տրական հոլովս միանգամայն ՚ի գործ ածի, նախդիրն բացառականին, կամ տրականին՝ իբր ՚ի բազում ներգործութ՛ ոչ դնի. զ՛որ օրինակ, * Զամենայն տիեզերս կրօնից ՚ի կրօնս փոխեցին ||. տարգ. ա. պետ. կ.

Այլ ուրեք ուրեք ներգործութ՛ եւս դնի, զ՛ր, * Հալածեալ շրջեցայ ՚ի քաղաքէ ՚ի քաղաք ||. յոհն. ժամ.

Պատմական, այսինքն ճառողական հոլով է, յորում նշանակի իրն իբր առարկայ պատմելոյ, կամ ասելոյ, և կ՛մ ճառելոյ ինչ վասն նորա. զ՛ր, Զտնկոյ. զփայտէ. զծագմանէ. ևն. Որոց յոգնակին լինի, Զտնկոց. զփայտից. զծագմանց. և այլն.

Գործիական հոլով է, յորում նշանակի իրն իբր միջնորդ՝ կամ գործի, ՚ի ձեռն որոյ առնեմք ինչ. զ՛ր, Սուսերաւ. գլխով. եղնգամբ. ևն. Որոց յոգնակին լինի, Սուսերօք. գլխովք. եղնգամբք. և այլն.

Պարառական հոլով է, յորում նշանակի իրն իբր պարառեալ կամ փարեալ ուրուք՝ զ՛ր, Զքաղաքաւ. զսեղանով. զատամբ. և այլն. Որոց յոգնակին լինի, Զքաղաքօք. զսեղանովք. զատամբք. և այլն.

Ներգոյական հոլով է, որով նշանակի իրն իբր այն ինչ, յորում լինի մնալ, կամ կալ, և կամ լինել. զ՛ր, ՚Ի տապանակի. յատենի. ՚ի լերին. և այլն. Որոց յոգնակին լինի, ՚ի տապանակս. յատեանս. ՚ի լերինս. և այլն.

Այլ գիտելի է, զի նաև եզակի նախդրիւ տրականն փոխել ներգոյականի վարի բ՛զմ ուրեք՝ դրեթէ յա՛մ հոլովմունս. ո՛րգոն, ՚Ի բանի, կ՛մ ՚ի բան. ՚ի քաղաքի. կ՛մ ՚ի քաղաք. ևն. ըստ որում եդաք յառաջին մասին.

Կոչական, կ՟մ հոչական հոլովն է, յորում նշանա-
կի իրն իրրև կոչեցեալ. զոր օրինակ, ով ազգ անհա-
ւատ. ով կին դու. ո՛ տ՟ր. ո՛ արք. ո՛ ոսկերք. և այլն։
Այս հոլով բազում անգամ առանց կոչական մասն-
կանց ևս ձևանայ. գր, * Բժիշկ՝ բժշկեա՛ զանձն քոյ‖.
Ղուկ. փոխանակ ասելոյ. ով բժիշկ։

ԳԼՈՒԽ ԺԱ։

Յաղագս հոլովմանց անուանց։

Հոլովմունք անուանց են պէսպիսութիւնք վերջաւո-
րութեանց նոցա 'ի սեռական և 'ի գործիական հոլովս
միանգամայն։ Իբր զի այն անուանք, որք ըստ սեռա-
կանին՝ միանգամայն և ըստ գործիականին՝ այսպիսի
ինչ վերջաւորութիւնս յանգին, կացուցանեն զայս ինչ
տեսակ հոլովման. որգոն, Բան, բանի, բանիւ։ Նաև
որք այնպիսի ինչ վերջաւորութիւնս յանգին, կացու-
ցանեն զայն ինչ տեսակ հոլովման. որգոն, Աղբիւր,
աղբեր, աղբերբ։

Եւ քանզի այսպիսի վերջաւորութիւնք լինին առ հա-
սարակ քսան օրինակաւ, հոլովմունք անուանց ևս հա-
մարին քսան. որոց չորեքտասանքն ասին հասարակք,
կամ տարածականք, և վեցքն մասնաւորք կամ յա-
տուկք։

Հասարակքն են սոքա, Բառ, ի, իւ. Քաղաք, ի,
աւ. Գետ, ոյ, ով. Եկեղեցի, ւոյ, եաւ. Աղեղն,
ան, ամբ. Նեղութիւն, եան, եամբ. Գառն, ին, ամբ.
Օգուտ. ու. ու։ Փոքր. ու. ումբ. Աղբիւր. եր.
երբ։ Աստղ. եղ. եղբ. Տրդատ. այ. աւ։ Եսայի.
եայ. եաւ։ Հայաստանեայք. եայց. եօք։

Սոքա եթէ միայն ըստ վերջաւորութեան եզակի սե-
ռականացն առցին. թուին ութ՝ ըստ ութից յան-
գիցս. ի. ոյ. ան. ու. այ. ին. եղ. եր. որգոն։ Բառի.
կամ քաղաքի. գետոյ. կամ եկեղեցւոյ. աղեղան.
կամ նեղութեան. զգեստու, կամ փոքու. տրդա-
տայ, կամ եսայեայ. գառին. աստեղ. աղբեր։ Այսու

քիկ հոլովմունք կոչին հասարակ. զի իւրաքանչիւր սոցա՝ բազում անուանց հասարակ է. իսկ զի բազում անուանք հոլովին ըստ օրինակի սոցա :

Իսկ մասնաւորքն են սոքին՝ Տէր. տեառն. տերամբ : Հայր. հօր. հարբ : Քոյր. քեռ. քերբ : Կին. կնոջ. կնաւ : Գիւղ. գեղջ. գիւղիւ : Օր. աւուր. աւուրբ : Սոքա ասին մասնաւոր կամ յատուկ, զի ըստ օրինակի իւրաքանչիւրոց 'ի սոցանէ՝ մի կամ երկու անուն հոլովի, և կամ բարդեալքն այնր անուան. որպէս եդաք յառաջին մասին :

Յայսոսիկ հոլովմունս բովանդակին ա̃մ անուանք լեզուիս հայոց, թէ անեզականք իցեն, և թէ անյոդնականք. թէ յատուկք իցեն, և թէ ընդհանուրք. ոչ եթէ ամենեքին ընդ ամենեքումբք, այլ՝ ոմանք ընդ առաջնով. ոմանք ընդ երկրորդիւ. և այլք ընդ այլովք. և բազումք ևս ընդ երկոքումբք. որոց քաջ կարես հասու լինել՝ ոչ կանոնօք, և ոչ օրինակօք. այլ՝ յաճախ ընթերցմամբ գրոց, և 'ի բառարանի դեգերելով. զի 'ի նմա եդեալ կան ըստ կարի հոլովմունք ա̃մ անուանց :

Այլ աստ գիտելի է, զի կան անուանք ինչ՝ որք 'ի հոլովիլն ընդ զանազան հոլովմամբ՝ փոխեն զնշանակութիւն իւրեանց. որպէս : Անուն Գայլ 'ի հոլովիլն՝ ի. իւ. ից. իւք. նշանակէ զբէլէփչէ. որ է գործի ինչ տանջանաց : Իսկ 'ի հոլովիլն՝ գայլոյ. ով. և այլն. նշանակէ զգուրտ գազանն :

Անուն Փող՝ 'ի հոլովիլն՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զխռչափողն : Իսկ 'ի հոլովիլն՝ փողոյ. փողով. և այլն, նշանակէ զպօռոռ և զզուռնա. ևս և զդրամ :

Անուն Գեղ՝ 'ի հոլովիլն՝ գեղոյ. ով. ոց. ովք. նշանակէ զգեղեցկութի̃ : Իսկ 'ի հոլովիլն՝ գեղի, իւ, ից, իւք, նշանակէ զգիւղ :

Անուն Որթ՝ 'ի հոլովիլն՝ ոյ, ով. ոց, ովք. նշանակէ զտունկ խաղողոյ. ա̃յ է ասմա : Իսկ 'ի հոլովիլն, ու, ու, ուց, ուք կամ օք, նշանակէ զծնունդ կովու. ա̃յ է տանա :

Անուն Օդ՝ 'ի հոլովիլն՝ ոյ, ով, ոց, կամ ից, ովք, նշանակէ զմին 'ի չորից տարերաց. ա̃յ է հաւա : Իսկ 'ի

հոլովիլն՝ ի, իւ, ից, իւք նշանակէ զագանելիս ոտից։ Ըստ այսմ են և այլ քանի մի անուանք ։

Այլ ևս գիտելի է, զի գտանին բազում անուանք ածականք, որք ոչ փակին ընդ իւիք հոլովմամբ, այլ նախդրիւ միայն հոլովին. որգոն, Ազազուն. ընիկ. զուրկ. խիտ. համակ. նկարէն. ուրախ. պատիր. տըր-տում. ևն։ Ըստ այսմ և բարդեալք բազումք յոյժ. որգոն, լայնատարր. խաւարամուտ. հրաշազնինին. մահահրաւէր. որոգայթագիր. սաղարթափթիթ. օձաջամբ, և այլք բազումք ։

Ըստ այսմ են և բազում անուանք գոյականք, որք նախդրիւ միայն հոլովին. կմ̃ ը̃ բայս յարելով վարին. զոր օրինակ։ Յանէոչ գործոյ ժամանել. պաշտօն կալ. յօժարաբ լինել. ևն ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Դերանուան ։

Թէ զինչ է և քանիպատիկ իցէ դերանունն ։

Դերանունն է մասն բանի՝ որ փոխանորդ անուան դնի, և առ որոշեալ դէմս վերաբերի. որպէս Դու. իմ. այն. որ. ևն. զոր օրինակ, * Իմ կամքս է այն, զոր դու սիրես ‖. Լամբ. ուր դերանունքս՝ այն. որ. իմ, եդեալ են փոխանակ անուանց. այնն փոխանակ անուանն՝ որ ցուցանէ զկամեցեալ իրն։ Որն փոխանակ անուանն՝ որ ցուցանէ զսիրեցեալ իրն։ Իսկ դերն՝ փոխանակ անուանս Լամբ։ Նոյնպէս և իմն՝ եդեալ է ՚ի վ՟ր անուանս խօսողի՝ ՚ի տեղի անուան կամեցողին. իսկ յօդս ս՝ զկամսն որոշեալ է առ առաջին դէմն։ Յորս որպէս տեսանի՝ զերկուս պաշտօնս վարէ դերանունն. Մի՝ զի փոխանակ անուան դնի. ըստ որոյ և կոչի դերանուն. այսինքն փոխանակ անուան. քանզի դերն փոխ լինի. յոր միտ ասեմք, դերադատաւոր. դերասան. դերամտանել. և այլն։ Այլ երկրորդ՝ զի ցուցանէ, թէ յոր դէմս վերաբերի անունն՝ որոյ փոխան դնի. և

վասն այսորիկ ասացաք 'ի սահմանի, թէ դերանունն առ որոշեալ դէմս վերաբերի. զորմէ ունիմք և խօսիլ 'ի յաջորդ գլուխդ։

Դերանունն է հնգապատիկ, Անական, ցուցական, ստացական, յարաբերական, և դիմորոշական։

Անական դերանունն է, որ գոյականապէս և որոշակի նշանակէ զդէմս իրին. որպիսի են սոքա. Ես. դու. ինքն. իւր, իւրեան։ Ընդ որս դասին և սոքին. միմեանց և իրերաց. որք պակասին 'ի յուղղականն։

Ցուցական դերանունն է, որ փոխանակ անուան եդեալ՝ իբր յանդիման ցուցանէ զայն, զորմէ է բանն. որպիսի են սոքա. Սա. դա. նա. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն։

Ստացական դերանունն է, որ ածականապէս նշանակէ զինչ որոշեալ դիմաց. որպիսի են սոքին. Իմ. քոյ. մեր. ձեր. իւր. իւրոյ։ Զի սոքա նշանակեն զայն ինչ, որ է այսր կամ այնր դիմի, թէ մարմին իցէ այն, թէ հանդերձ, և թէ գործք. Եւ. գր, յասելն, * Տուր 'ի խրատ զսիրտ քո ‖. առակ. դերանունս քո՝ ցուցանէ զինչ երկրորդ դիմի, առ որ է այս բան։

Եւ որպէս յայտնի տեսանես, այսոքիկ դերանունք կազմին 'ի սեռականաց էական դերանուանցս։ Ես. դու. մեք. դուք. զի սեռական սոցա լինի. Իմ, քո. մեր. ձեր։ Եւ վասն այսորիկ բազում անգամ նաև սեռական հոլովք ցուցական դերանուանցս՝ Սա. դա. նա. յաւելմամբ յ տառին իբրև ստացական վարին. որգոն. Սորայ կամ սորայն, դորայ կամ դորայն, նորայ կամ նորայն. սոցայն, դոցայն, նոցայն. որոց յոգնականն լինի, Սորայք, դորայք, նորայք, սոցայք, դոցայք, նոցայք։ Եւ սոքա հոլովին ըստ հոլովման ստացական դերանուանս քոյ, քոյոյ. որգոն. սորայ. սորայոյ. նորայն, նորայոյ, դոցայք, դոցայոց. ևն։

Յարաբերական դերանունն է, որ 'ի կարգս բանի՝ զօրութեամբ յառաջ բերեալ զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նորա, յոր հոլով և պահանջեսցէ բանն. և է բառս այս՝ որ. գր, * Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն ‖. առակ։ Ուր բառս որ՝ եդեալ է 'ի տեղի անուանս՝ այր։

Դիմորոշականքն են երեքին տառքս այսոքիկ, ս. դ. ն. որք իբր յօդք իմն յարելով 'ի մասունս բանի՝ որոշեն զդէմս նոցա. որպէս, *Իմ կամքս 'ի քո ճշմարիտ ճանապարհիդ սէրն է Ա. Լամբ.

Սոքա թէպէտ ընդ դերանուանս դասին, բայց չեն յատկապէս դերանուն. զի ոչ դնին փոխանակ անուան. բայց քանզի որոշեն զդէմս բառից, և լինին ևս սկըզբունք կամ վերջաւորք, յորոց բղխեն ցուցական դերանուանքս, Սա, դա, նա. սոյն, դոյն, նոյն. այս, այդ, այն. վասն այսորիկ առ դերանուանս վերաբերին ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս Պարագայից դերանուանց ։

Պարագայք դերանուանց են հինգ. Տեսակ, դէմք, թիւ, հոլով, և հոլովումն ։ Սմանք եօթն դնեն, յաւելեալ 'ի սոսա զսեռ և զձև. բայց յայտ է՝ թէ 'ի դերանուանս սեռ ամենևին ոչ գտանի 'ի լեզուի մերում ևս և ոչ ձև. զի դերանուանք 'ի բարդելն ընդ այլ մասունս բանի՝ ոչ ևս մնան դերանուն, այլ՝ փոխադրին յանուն. որգոն, Իւրակերտ. նոյնահրաշ. ինքնակալ. քոյինաշունչ. ևն. որք իբր անուն վարին ։

Տեսակք դերանուանց են երկու, որպէս և անուանցն. այսինքն նախատիպք, և ածանցականք ։ Նախատիպք են սոքին. Իմ. քո. մեր. ձեր. նոյն. իւր. ինքն. և ևս՝ սորա. դորա. նորա. ևն ։

Իսկ ածանցականք են նոյն նախատիպ դերանուանք վերածեալք յայլ իմն եղանակ նշանակելոյ 'ի ձեռն աննշան մասնկանց, ային, ին, ական, աւոր, ութի. որգոն. մերային, քոյին. իւրական. ինքնաւոր. նոյնութի ։

Դէմք դերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց. կամ այնց՝ որք իբր դիմաւոր նկատին, և իբր դիմօք որոշին. և են երրեակ. առաջին, երկրորդ, և երրորդ ։

Առաջին դէմքն յայտ առնէ զայն, յորմէ է բանն. կամ որ խօսի. որգոն, Ես. մեք ։

Երկրորդ դէմքն յայտ առնէ զայն, առ որ է բանն. կմ̅ ը̅ն ում լինի խօսիլ. որգոն, Դու. դուք:

Երրորդ դէմքն յայտ առնէ զայն, զորմէ է բանն. կամ յաղագս որոյ լինի խօսիլ. որգոն, Նա. ինքն. իւր:

Առ այս երրորդ դէմս վերաբերին և այլ ամենայն դերանունք. թէ ստացականք. որգոն, Իմ. մեր. քոյ. ձեր. իւր. ոյ. և թէ ցուցականք. որգոն, Սա. դա. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն. զի սոքա ամենեքին յայտ առնեն զայն ինչ, զորմէ լինի բան: Այլ սակայն համեմատութեամբ միմեանց՝ 'ի սոսա ևս կան որոշմունք երից դիմաց. զի 'ի ստացականս՝ ոմանք նկատին ը̅ն առաջին դիմաց. որգոն, Իմ. մեր. իմային. մերային. և̅ն. վասն զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է առաջնոյ դիմի: Ոմանք նկատին ը̅ն երկրորդ դիմաց. որգոն, Քոյ. ձեր. քոյին. ձերային. և̅ն. զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է երկրորդ դիմի: Այլ ոմանք նկատին ը̅ն երրորդ դիմաց. որգոն, Իւր. իւրային. և̅ն. զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է երրորդ դիմի:

Նոյնպէս և 'ի ցուցականս համեմատութեամբ միմեանց՝ ոմանք նկատին իբր առաջին, կամ իբր մօտաւոր. որգոն, Սա. այս. սոյն: Ոմանք նկատին իբր երկրորդ, կամ իբր մերձ մօտաւորին. որգոն, Դա. այդ. դոյն: Այլ ոմանք նկատին իբր երրորդ, կամ իբր հեռաւոր. որգոն, Նա. այն. նոյն:

Իսկ դերանունս ինքն՝ յորժամ առանձինն վարի, թէպէտ յերրորդ դէմս վերածի, սակայն յորժամ ը̅ն դերանունս յարի, կարէ վերաբերիլ յառաջին և յերկրորդ դէմս ևս. ո̅ր̅պ, *Ես ինքն սպանի զնա ‖. Վարք հարց: *Դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութ̅ի ‖. Նար: *Նոյն ինքն զդժոխս աւերեցեր ‖. Շար:

Թիւք դերանուանց են երկու. եզական, և յոգնական: Զի որ իբրև զմիաւոր նշանակէ՝ ասի եզական, թէ միոյ դիմի իցէ, և թէ բազմաց. որգոն, Ես. դու. իմ. մեր. ձեր. և̅ն: Իսկ որ իբրև զբազումս նշանակէ ո՛ և իցէ դիմի, ասի յոգնական. որգոն, Մեք. դուք. մերք. իմք. նոքա. և այլն:

Հոլովք դերանուանց են տասնապատիկ փափո-

խումբ մի և նոյն դերանուան՝ որպէս օրինակի անուանց ․
որոց և բազմաց կոչականքն պակասին, որպէս որում ե-
դաք յառաջին մասին ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլո-
վից նոցա ․ որպէս և անուանցն ․ որպէս որում յայտ է յե-
դելոց յառաջին մասին անդ ։

Այլ գիտելի է նախ, զի ցուցական դերանունքս՝
Սոյն, դոյն, նոյն՝ որք իբր ածական վարին՝ նախադրի-
միայն հոլովին ․ իսկ յայլ հոլովսն լրանան ՚ի ցուցա-
կան դերանուանցս, Սա, դա, նա, ՚ի հոլովիլ նոցա
Սա, սորին ․ դա, դորին ․ ևն, ՚ի վարիլ սոցա ածականա-
պէս որպէս եդաք յառաջին մասին ։

Գիտելի է երկրորդ, զի ցուցական դերանուանցս,
Այս, այդ, այն ․ սա, դա, նա, եզակի տրականքն, որք
են՝ այսմ, այսմիկ ․ այդմ, այդմիկ ․ այնմ, այնմիկ ․
սմին ․ դմին ․ նմին ․ յորժամ յարին յառաջոյ ՚ի բա-
ցառական՝ նաև ՚ի պատմական հոլովս անուանց, իբր
բացառական և պատմական վարին ․ օր, * Բազում
ծնանին հերձուածք յայսմ պատճառէ ‖ ․ Շնորհալի ։
* Այսուհետև զգոյշ լեր յայդմ մտէ ‖ ․ ՚Ի Վարս Ոսկեբ ։
* Արին զաւուրքն յայնմ անապատէ ‖ ․ Եղիշէ ։
* Ահա ՚ի նմին քաղաքէ ասորի քրիստոնեայս ‖ ․ Նոյնն ։

Իսկ դարձեալ այսոքիկ ցուցական դերանունք, որ
են այս, այդ, այն, երբեմն եզական ձայնիւ՝ վարին
իբր յոգնական, մանաւանդ յուղղականն ․ օր, * Եր-
կու այլ ևս քահանայք երանելիք, որոց անուանքն
են այս՝ սամուէլ և աբրահամ ‖ Եղիշէ ։
* Այդ և ՚ի մարդիկ երևին ‖ ․ Նոյնն ։
* Այն էին իղձք աղօթից նոցա առ Ած ‖ ․ Նոյնն ։

Գիտելի է երրորդ, զի ստացական դերանուանց
եզակի սեռականքն՝ բազում անգամ իբր տրական
վարին ․ օր, * Որդեակ՝ ինձ իմաստութեան անսա ‖ ․ փո-
խանակ ասելոյ, իմում իմաստութեան ․ Առակ ։
* Ձայն փրկութեան քոյ ծառայիս ‖ ․ այսինքն քում ծա-
ռայի ․ Նար ։
* Անկարօտ է Ած ․ այլ սակայն քաղցեալ և կարօտ
է մերոյ փրկութեան ‖ ․ այսինքն մերում փրկութեան ․
Նար ․ Երգ ։

* Թողուլ զթագաւորութիւն՝ արտաշրի որդւոյ Խորոյ || · այսինքն որդւոյ իւրում · յովհ · կաթ ·

Նաեւ ներհակ այսմ, եղանի տրականք սոցա բազում անգամ իբրեւ սեռական վարին · որ, * Նմանս խառ-նումն հաշտարանք || · փոխանակ ասելոյ, իմոյս խառ-նումն · նար ·

* Ի ներքոյ հովանի թագաւորութեան եմք գրաւեալ || · լամբ · պատ ·

* Ընկալ զերգարան օրհնութի մերոյս լեզուի || · նար ·

* Զ համայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին խորին գլխոյ || · նոյնն ·

Իսկ յորժամ՝ ուրեք ուրեք դնի եւս փոխանակ սեռա-կանի էական դերանուանս՝ դոյ, իբր յատկացուցիչ · զոր օրինակ, * Դու քեզէն 'ի յորդ լրութէ փառա-ւորեալ իսկ էիր || · փոխանակ ասելոյ, 'ի քո լրութեդ · նարէկ ·

Գիտելի է չորրորդ՝ զի յարաբերական որն բազում անգամ յարի 'ի բառս, ինչ · դանգամ · ոչ · եւ վարի ընդ նոսա իբր մասնական անուն · բայց այնու եւս՝ ոչ կորու-սանէ զյարաբերականութի իւր · որպէս երեւի 'ի սո-սա · * Զոր ինչ հայի ոք, 'ի նոյն փոխի մտօք || · նար · երգ ·

* Որ դանգամ ունի զխուլթիւն 'ի սրտի իւրում, դեղ բժշկութե նորա չիք || · մծբ ·

* Որ ոչ ասէ սիրէ երկայնել զբանս վարդապետութե, զգիրսն յովհաննու ընթերցցի զոսկեբերանին || · եփնա ·

Ի վախճան դերանուանց ամենայնի գիտելի է եւ այս, զի 'ի հոլովս սոցա գտանին ուրեք ուրեք խոտոր-մունք ինչ արտաքոյ սովորութե · յորոց գործածութէ պարտ է զգուշանալ ·

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Բայի.

Թէ զինչ և քանի պատահմունք իցէ բային.

Բայն է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, և կամ զլինելութիս իրաց՝ ընդ ժամանակաւ նշանակէ՝ ընդ որոշեալ դիմաց. վասն զի յայտ առնէ կամ զներգործել իրաց յայլս, կամ զկրել նոցին յայլմէ, և կամ լոկ զգործել և զլինել նոցին՝ ընդ այս ինչ՝ կամ ընդ այն ինչ դիմաց. որպէս յասելն, * Ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց ||. սաղ. Նշանակէ ներգործել մեղաւորացն յաղեղունս. և այս՝ յերրորդ դէմս : Այլ յասելն, * Ի գաղտնի նետից բանսարկուին ձերբազատեցայ ||. շար. Նշանակէ կրելն անձին 'ի նետից բանսարկուին. և այս՝ յառաջին դէմս. Այլ յասելն, * Եղեր դու հաւատարիմ յամենայնի ||. ծող. Նշանակէ հաւատարիմ լինելն անձին. և այս՝ յերկրորդ դէմս.

Արդ՝ որովհետև յատուկ է գործողութեց և լինելութեց 'ի ժամանակի կատարիլ, կամ 'ի ներկայն, կամ յանցեալն, և կամ յապագայն, բայն ևս՝ որ զգործողութիս և զլինելութիս նշանակէ, ցուցանէ զնոսին ընդ ժամանակաւ. կամ ընդ ներկայիւ. որգոն, գործեմ. կամ ընդ անցելով. որգոն, գործեցի. և կամ ընդ ապագայիւ. որգոն, գործեցից :

Բայք բաժանին յերկուս, յէական և յառաքական.

Էականք են, որք նշանակեն սոսկ զլինելութի իրին ընդ ժամանակաւ. և են չորեքին. Եղանիմ. Լինիմ. Եմ, և Գոմ.

Իսկ առաքականք են, որք զառնել կամ զկրել իրացն նշանակեն. որպ, Տնկեմ. լնում. աղօթեմ. մատչիմ. ապատիմ. ևլն.

Առաքական բայք բաժանին 'ի կանոնաւորս և յանկանոնս : Կանոնաւորք են, որք 'ի խոնարհմունս, կամ 'ի վերացմունս իւրեանց՝ հասարակօրէն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ, և անպակաս

դիմաւ , և են սոքա . Գործեմ . հատանեմ . զօրացուցանեմ . աղամ . խոստանամ . թողում . ընկենում . և որք ընդ սոքօք պարունակին :

Իսկ անկանոնք են , որք ոչ խոնարհին ամբողջ . այլ՝ կամ պակասին 'ի ժամանակս ինչ , և յայլոց լրանան . և կոչին պակասաւորք . և են սոքա . Ուտեմ , կերայ . ըմպեմ , արբի . Ճանաչեմ , ծանեայ . ունիմ , կալայ . երթամ , չոգայ : Կամ զարտուղին , այսինքն այլայլին ձայնիւ 'ի խոնարհիլն իւրեանց . և կոչին զարտուղիք և են սոքա . Առնեմ , արարի . դնեմ , եդի . լսեմ . լուայ . տամ , ետու . մեղանչեմ , մեղայ . յառնեմ , յարեայ . գամ , եկի : Նաև կին երբեմն պակասին յառաջին և յերկրորդ դէմսն , ևս և 'ի յոգնականսն . և կոչին դիմազուրկք . որպիսի են սոքա . Յաջողէ . լուսանայ . թուի . հարկ է . և որք ընդ սոքօք են , զորոց ամենեցուն զխոնարհմունսն եդաք առանձինն յառաջին մասին :

ԳԼՈՒԽ ԺԵ .

Յաղագս պարագայից բայից : Նախ յաղագս Սեռից :

Պարագայք բայից են այնպէս հետևմունք որպիսութեան նոցա . և են ինն . Սեռ , ձև , տեսակ , թիւ , դէմք , ժամանակ , եղանակ , խոնարհմունք , և լծորդութիւնք :

Սեռք բայից , որք 'ի հնոց կոչին տրամադրութիւնք , են որոշմունք նոցա ըստ ներգործականութեան , ըստ կրաւորականութեան , ըստ հասարակ լինելոյ և ըստ չեզոք գոլոյ : Ուստի և են չորք . Ներգործական , կրաւորական , հասարակ և չեզոքական :

Ներգործականք են նոքա , որք նշանակեն զներգործել իրին 'ի կրողն՝ որով և իցէ գործողութեամբ , թէ արտաքին իցէ , և թէ ներքին . որգոն , Խորտակեմ . գովեմ . սիրեմ . ևայլն : Որովք նշանակի այնպիսի գործողութիւն , զոր խորտակօղն՝ գործով ներգործէ 'ի խորտակեալն . գովօղն՝ բանիւ ներգործէ 'ի գովեալն .

սիրօղն՝ սրտիւ ներգործէ 'ի սիրեցեալն. որպէս, * Դու խորտակեցեր զգլուխս վիշապին ‖. սաղ ։ * Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան ‖. առակ ։ * Սիրեսցուք զԱծ, որ սիրեաց զմեզ ‖. Խոսրով ։

Կրաւորականք են, որք նշանակեն զկիրս իրին յումեքէ ներգործօղէ՝ որում և իցէ կրելութ̃. որգոն, Խորտակիմ. գովիմ. սիրիմ, եւն. յորս նշանակի կրելութիւն խորտակելոյն 'ի խորտակօղէն. գովեցելոյն 'ի գովօղէն. սիրեցելոյն 'ի սիրօղէն. որպէս, * Սէնք խորտակեցաւ 'ի նմանէ ‖. նաւում, * Բերան իմաստնոց գովի 'ի մարդկանէ ‖. առակ ։ * Որ սիրէ զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ ‖. յովհ ։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ զներգործութիւն իրին առ կրօղն նշանակեն. և մերթ զկրելութիւն իրին յումեքէ ներգործօղէ. որգոն, Ծնանիմ. դատիմ. եւն ։ Որովք մերթ նշանակի ներգործութիւն ծնօղին, և դատօղին. և մերթ կրելութիւն ծնելոյն, և դատելոյն. որպէս, * Մի որ դատեսցի զընկեր իւր, զի մի և ինքն դատեսցի յարդարադատն այ ‖. Ներս ։

Չեզոքականք են՝ որք զներգործութիւն գործօղին յինքեան 'ի գործօղն նշանակեն. և ոչ իբր 'ի ներգործօղէ առ կրօղ ոք. որպէս, * Փախուցեալ էրեայ ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ ‖. առակ ։

Սոքա կին ը̃ ներգործական բայից լծորդին, և կին ը̃ կրաւորականաց ։ Որք ը̃ ներգործականաց լծորդին, կոչին ներգործակերպ չեզոքականք. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք յանգին 'ի եմ, 'ի ամ, և ում՝ որպէս, Դիմեմ. գնամ. զարթնում. և որ ը̃ սոքօք ։

Իսկ որք ը̃ կրաւորականաց լծորդին՝ կոչին կրաւորակերպ չեզոքականք, կամ ձայնակրականք. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք 'ի իմ յանգին որպէս, Հաշտիմ. մնանիմ. փախչիմ. և որ ը̃ սոքօք ։

Ն. Բ. Գիտելի է. զի են բազում բայք ներգործականք՝ որք երբեմն իբր չեզոքական վարին. որգոն, Ապաստանեմ. ծագեմ. յաձախեմ. կարդամ. համբառնամ. յաւելում. զեղում. եւն ։

Իսկ ընդ հակառակն՝ են բազում չեզոքական բայք, որք իբր ներգործական վարին. որգոն, լռեմ. խընայեմ. մաղթեմ. ստեմ. փայլեմ. անդիտանամ. ըղձամ. վստահանամ. եւն.

Կան և բազում կրաւորական բայք բղխեալ 'ի բայից եղելոց ըստ գործեմիւ և ըստ հատանեմիւ, որք իբր ձայնակրական վարին. որգոն, ամբոխիմ, բորբոքիմ, զինիմ, Թաւալիմ, կանգնիմ, ձկտիմ, գտանիմ, լքանիմ. եւն.

Գիտելի է ևս՝ զի գրեթէ ամենայն ձայնակրական բայք, որք ըստ կրաւորականի գործեմ բային լծորդին, իբրև զներգործակերպ չեզոքականս ևս խոնարհին. որգոն, հակառակեմ, հրաժարեմ, սարսափեմ, ընակեմ, եւն.

Հարկաւոր է ևս գիտել, զի բազում բայք կան՝ որք փոփոխութեամբ իւիք ըստ այլ և այլ լծորդութեան խոնարհին. որգոն, Խնջամ, խնջեմ: Ծփամ, ծփիմ: Կարօտիմ, կարօտանամ: Զբաղնում, զբաղիմ: Թագչիմ, Թագնում, եւն.

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս Ձեւոց բայից.

Ձեւք բայից մտածին ըստ պարզութեան, ըստ բարդութեան, և ըստ բաղադրութեան նոցա. ուստի և բայք երեք են ըստ ձեւոյն. Պարզ, բարդ, և բաղադրեալ: Պարզ բայն է, որ զպարզ նշանակութիւն առից կամ կրից ցուցանէ. որգոն, Բեկանեմ. հարկանեմ. զարդարեմ. ստեղծում. եւն.

Բարդ բայն է, որ զօդեալ ըստ այլում նշանական բառի՝ զերկուս իմացուածս առից կամ կրից միայարէ. որգոն, Ահաբեկեմ. յաղթահարեմ. գեղազարդեմ. կենդանաստեղծում. և այլն.

Ոմանք յայսպիսի բայից վասն բարդութեան այլազգ խոնարհին, քան զոր յառաջն. որպ, Բերեմ, բերի, բեր. ընծայաբերեմ, բերեցի, բերեաւ: Հարկանեմ, հարի, հար. յաղթահարեմ, հարեցի, հարեաւ. եւն.

Բաղադրեալ բայն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք. և այս՝ քառակի։

Նախ՝ առ 'ի զարդ, կամ առ 'ի եղանակաւորել զնշանակութիւն. որգոն, Տարակորզեմ. բաղհիւսեմ. բաղորոշեմ. վիճակաւորեմ. յանկաւորեմ. եւն։

Երկրորդ՝ առ 'ի փոփոխումն նշանակութե. իբր, Նարգեմ. ստգտանեմ. պգխտանամ. տծգոհեմ. արտաբերեմ. համաձայնեմ. պրամաբանեմ. եւն։ Այլ յաճախ գործածութիւ մասնկանցս՝ արտ. համ. ման. պրամ. պար. բաղ. եւն, աղաւաղէ զշնորհս կազմութե բայից։

Երրորդ՝ առ 'ի վերածել յայլ իմն լծորդութի 'ի ձեռն մասնկանս՝ ան. իբր, Օծեմ, օծանեմ. բուծեմ, բուծանեմ. եւն։

Չորրորդ՝ առ 'ի յաճախականապէս նշանակել 'ի ձեռն յօդիցս, ոտ, ատ, տ, ղ, և այլն. իբր, Խոցել. խոցոտել. պատել, պատատել, քակել, քակտել. դրդուել, դդրդուել. եղծանել, ղեղծանել. ընկենուլ, ղընկենուլ. անցանել, ղանցանել. և այլն։

Այս կերպ յաճախման բայից լինի երբեմն նաև կրկնելով առաջնոյ վանկի բային. որգոն, Բեկել, բեկբեկել. կցել, կցկցել. բախել, բաբախել. ջաղխել, ջաղխջաղխել. շրջել, շրջշրջել. և այլն։

Լինի այս երբեմն նաև կրկնմամբ նոյն բայի. իբր, * Զարթիցուք զարթիցուք. . . . յարբեցութէ սատանայական մոլորութեց ‖. Խոսրով։

Երբեմն դրութբ դերբայից այնր բայի. իբր, * Երթալով երթայր և զօրանայր ‖ յովհաննէս կաթ։

Երբեմն դրութբ աներևութին, կմ ընդունելութե ընդ անցելոյն. իբր, * Ան բաղումք՝ որ սիրել սիրեն, այլ ոչ սերտիւ ‖. Սարգիս։

Այլ զգուշանալ պարտ է 'ի յաճախելոյ զայսպիսիս։

Երբեմն դրութբ արմատոյ բային. զոր օրինակ, * Արհամարհանօք արհամարհեն զօրէնադիրն ‖. յաճախ. է։

ԳԼՈՒԽ ԺԼ.

Յաղագս Տեսակաց բայից ։

Տեսակք բայից որոշին ը̅ նախնական և ը̅ անցողական նշանակութե̅ իւրեանց . ուստի և բայք կրկին են ըստ տեսակին . նախագաղափար , և անցողական ։

Նախագաղափար կ̅մ նախատիպ բայք են, որք կան 'ի նախկին նշանակութե̅ իւրեանց , թէ պարզ իցեն , թէ բարդ , և թէ բաղադրեալ . և ցուցանեն զառս գործողին միայն . որգոն , Բարկանամ . խոնարհիմ . զարթնում . եւ̅ ։ Սոքա կոչին Նախագաղափար , կ̅մ Նախատիպ , զի են իբր գաղափար և տիպ անցողականաց . մանաւանդ թէ՝ իբրև արմատ նոցին ։

Իսկ անցողական կ̅մ ածանցական բայք են , որք 'ի ձեռն ածանցակերտ մասնկանս ացան՝ ածին և իբրթէ անցուցանին յայնպիսի որպիսութե̅ , որով նշանակեն ոչ միայն զգործողութի̅ առնողին , այլև զգործել կրողին 'ի ներգործելոյ անտի արարողին . որգոն , Բարկացուցանեմ . խոնարհեցուցանեմ . զարթուցանեմ . եւ̅ . այսինքն առնեմ , զի այլ ոք բարկասցի . առնեմ , զի խոնարհեսցի . առնեմ , զի զարթիցէ . եւ̅ ։

Արդ՝ թէպէտ բազում բայք լինին անցողականք , բայց առաւելապէս չեզոքականքն . որ̅ , Ճեմեմ, ճեմեցուցանեմ . մերձենամ , մերձեցուցանեմ . զայրանամ , զայրացուցանեմ . եւ̅ ։ Եւ յաճախագոյն ևս ձայնակրականքն . որ̅ , Ցնծիմ, ցնծեցուցանեմ . թմրիմ, թմրեցուցանեմ . խոնջիմ, խոնջեցուցանեմ . սողիմ , սողեցուցանեմ . հանգչիմ , հանգուցանեմ . եւ̅ ։

Այլ գիտելի է՝ զի ոմանք 'ի ձայնակրական բայից՝ յանգեալ 'ի իմ՝ երբեմն իբր անցողական նշանակեն . որգոն . աշխատիմ, աշխատեմ . զբաղիմ, զբաղեմ . հնազանդիմ, հնազանդեմ . սասանիմ , սասանեմ . եւ̅ . որք երբեմն իբր ներգործակերպ չեզոքական ևս վարին . որպէս ասացաք 'ի գլ. ԺԵ ։

Իսկ ներգործական բայք հազիւ երբեք փոխին յանցողականն . և եթէ հարկ լիցի վարել իբր անցողական՝ կազմեմք զայն 'ի ձեռն բայիս տալ . որ̅ , *Եթէ

ծառայ ըստ ունելն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմ։ այսինքն լսեցուցանեն նմա՝ գանելով զնա ընդ մկանունս. եղինէ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Թուոց, և Դիմաց բայից։

Վասն Թուոց և դիմաց բայից սակաւ ինչ ունիմք ասել. զի զոր ինչ խօսեցաք զԹուոց անուանց, և զԴիմաց դերանուանց, նոքօք յայտնին ըստ իմիք և Թիւք և Դէմք բայից։ Զի որպէս Թիւք անուանց մտածին ըստ եզականութե՛ և ըստ յոգնականութե՛ նոցին, սոյնպէս և Թիւք բայիցն մտածին ըստ եզականութե՛ և ըստ յոգնականութե՛ իւրեանց. ուստի և են երկու. եզական, և յոգնական։

Եզականն է, որ նշանակէ զմիակի ներգործութի կմ կրելութի միոյ գործողի կամ կրողի. որպ, Գործեմ, գործիմ. և այլն։

Յոգնականն է, որ նշանակէ զբազում ներգործութիս կմ կրելութիս բազում գործողաց կմ կրողաց. որպ, Գործեմք, գործիմք. ևն։

Դէմք բայից են այնք, որք ցուցանեն զգործողութիւն լինել որոշեալ անձին. և են երեք։ Առաջին, Երկրորդ, Երրորդ։ Քանզի գործք և կիրք, կամ նորա են, որ խօսի. և ըստ այսմ է առաջին դէմքն. որգոն, Գնամ. պատմեմ. ևն։ Կամ նորա ըստ որում լինի խօսելն. և ըստ այսմ է երկրորդ դէմքն. որգոն, Գնաս. պատմես. և այլն։ Եւ կմ նորա, զորմէ լինի խօսելն. և ըստ այսմ է երրորդ դէմքն. որգոն, Գնայ. պատմէ. և այլն։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս Ժամանակաց բայից։

Ժամանակք, կամ ըստ Հնոց ամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ, կամ յայն ինչ ժամանակի. այսինքն, կամ 'ի ներկայն, կմ

յանցեալն, և կամ յապագայն. ուստի և են երեք. Ներկայ, անցեալ, և ապառնի։ Իսկ անցեալն քառակի որոշի. այսինքն՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար, և իբր գերակատար։ Իսկ ը̄ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց. այսինքն, Ներկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար, և ապառնի։

Ներկայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս յառաջիկայ կէտ ժամանակի, կամ այժմ նորոգ ընկսեալ. որգոն, Վարեմ, վարես, վարէ. զենում, զենուս, զենու. ևն։

Անկատար ժամանակն, կմ ը̄ հնոց՝ յարաձգականն է յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս արդէն սկսեալ բայց դեռ ձգի 'ի կատարիլ. որգոն, Վարէի, վարէիր, վարէր. զենուի, զենուիր. ևն։

Կատարեալ ժամանակն, կամ ը̄ հնոց՝ յարակայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս կատարեալ կամ վճարեալ. որգոն, Վարեցի, վարեցեր, վարեաց. զենի, զեներ. ևն։

Յարակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս վճարեալ, և ժամանակ ինչ ևս 'ի վերայ անցեալ. որգոն, Վարեալ եմ, ես, է. զենեալ եմ, ես, է. ևն։

Գերակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս ոչ միայն վճարեալ, այլև յետ վճարման բազում ժամանակ ևս 'ի վերայ անցեալ 'ի վճարման անդ. որգոն, Վարեալ էի, էիր, էր. զենեալ էի, էիր, էր. ևն։

Ապառնի ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս իբր եղանելի, կամ իբր հանդերձեալ առ 'ի լինել. որգոն, Վարեցից, վարեսցես, վարեսցէ. զենից, զենցես, զենցէ. ևն։

Աստ յարակատար և գերակատար ժամանակաց, (ը̄ որս և վասն անցելոյ ստորադասական եղանակին) գիտելի է նախ, զի յոգնական սոցա կրկնակի ձևանայ. Երբեմն առանց +էէ. գթ, * Ընտրեալ են պահք սուրբք առաջի ա̄յ ||. Տծէ։

Իսկ երբեմն ՔԷԷԻ . զոր օրինակ, * Քրիստոսի շնորհիւն փրկեալք եմք || . Հռովմայեցւոց :

Այլ յայտագրելոյ յաճախումն ՔԷԷՆ ծանրալուր առնէ զխոնարհմունս բայից :

Սոքա առ հասարակ թէպէտև 'ի ներ յանգին, բայց երբեմն 'ի նչեալ և ս դնին, թէ ներգործականք իցեն և թէ հասարակ . զոր օրինակ, այրեցեալ, սիրեցեալ, խօսեցեալ, կարծեցեալ, և այլն :

Գիտելի է երկրորդ, զի սոքա թէպէտ նախադաս լինելով էական բայի ձևանան, որգոն, Հատեալ եմ, ես, է . Թողեալ էի, էիր, էր . և այլն, բայց 'ի գործածութեան յետադաս լինելով վայելուչ և կերպաւորին . զոր օրինակ :

* 'Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր աստուածոյ մերոյ || . Շար :

* Այն մարմին է, որում զուգ ես վիճակեալ || . Լամբ . ատեն :

* Նա միայն է պատուեալ և անջատեալ յեկեղեցւոյ, որ 'ի հաւատս կործանի, և մեղաց լինի պաշտօնեայ || . Ատենաւ ճառ . ճառք եղեղ :

Երբեմն այլ մասն բանի և ս ը մէջ անկանի . զոր օրինակ, * Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ յոբայ, կամ երեմիայ || . Ներսէս :

* Քանզի խաւար խոր և գիշեր տխրալից էր 'ի վերայ բնութեանս մերոյ մածուցեալ || . Սարգ . Ա . Պետ . Է :

Գիտելի է երրորդ, զի սոյն եզակի երրորդ դէմն վարի 'ի տեղի երից դիմաց և ս, թէ իբրև եզական, և թէ իբրև յոգնական . որգոն, Գործեալ է իմ, գործեալ է քո, գործեալ է նորա . գործեալ է մեր, գործեալ է ձեր, գործեալ է նոցա : Գործեալ էր իմ, քո, նորա . գործեալ էր մեր, ձեր, նոցա : Գործեալ իցէ իմ, քո, նորա . գործեալ իցէ մեր, ձեր, նոցա . զոր օրինակ, * Ո՛րինչ վնաս գործեալ է իմ || . Եղիշէ :

* Ընդէ՞ր տրտմեալ է քո հայր || . Վարք հարց :

* Եթէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց, լինէր քեզ իբրև գետ խաղաղութիւն քո || . Եսայ :

* Վաղիւ յայս ժամ իցէ, ահա մնացեալ իցէ մեր զամենայն նեղութիւս և զչարչարանս || . Եղիշէ :

Գիտելի է չորրորդ, զի սոքա բազում անգամ ա-ռանց էական բայի վարին 'ի բանս. որգոն, Թո-ղեալ. ծնեալ. կործանեալ. և այլն. և յայնժամ կո-չին դերբայք. և այս կարի յաճախեալ է 'ի գիրս մեր. զոր օրինակ, * Թողեալ ոմանց զօրէնս՝ պարծին 'ի մեղս ‖. ՃԺԷ.

*Մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող ‖. Խորէն.

* Կամաւ կործանեալ՝ կորստեանն մխճակեցայ ‖. Նար. տեօ և յընդարձակն.

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Եղանակաց բայից.

Եղանակք բայից են պէսպէս կերպք կամ աստի-ճանք նշանակելոյ նոցա զառս և զկիրս, կամ զլինե-լութիւս, և են չորս. Սահմանական, Հրամայական, ստորադասական, և աներևոյթ՝ կամ անորոշ.

Յաղագս Սահմանական եղանակի.

Սահմանական եղանակն է, յորում բայքն արձա-կաբար և որոշակի նշանակեն զառս կամ զկիրս՝ ա-ռանց ցուցանելոյ զկախումն ինչ. որգոն, Գրեմ, գնացի, տեսից. և այլն. Նաև ամենայն բանք սահմա-նականք, պատմականք, ծանուցականք, խոստացա-կանք և հաստատողականք՝ այսու եղանակաւ ձևա-նան.

Այս եղանակ բայից ունի կատարելապէս զվեց ժամանակս. այսինքն զներկայ, զանկատար, զկատա-րեալ, զյարակատար, զգերակատար, և զապառնի.

Այլ վասն կատարեալ ժամանակի սորա գիտելի է, զի ըստ հին սովորութեան լեզուի մերում երկրորդ դէմք յոգնականի սորա ոչ յանգին 'ի եք, այլ 'ի էք. կամ 'ի բաւք իբր զի որոց հրամայականի յոգնակի երկրորդ դէմք յանգին 'ի էք, կատարեալն ևս զնին էք. ուս-տի փոխանակ ասելոյ գործեցիք, հատիք, բացիք և

այլն, ասէին ․ գործեցէք, հատէք, բացէք, և այլն ․ ռամկաց շեշտի ։ Իսկ որոց յոգնակի հրամայականն յերկրորդ դէմս յանգի ՚ի բութ, կատարեալն ևս դնի ՚ի բութ ։ Ուստի փոխանակ ասելոյ, լուայք, դարձայք, և այլն, ասէին ․ լուարուք, դարձարուք, և այլն ․ Թէպէտ երբեմն այլ ևս դնէին, այսինքն է, լուայք, դարձայք ․ և այլն ։

Յաղագս Հրամայական եղանակի ։

Հրամայական եղանակն է, յորում բայքն ցուցանեն զառս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, կամ իբր անկախ, այլ՝ ը̄ հրամայողութ̄բ ․ որգոն, Արա ․ տուր ․ գթա ․ հայեաց ․ և այլն ։ Եւ ամենայն բանք հրամայողականք, մաղթողականք, սպառնականք, կոչականք, յորդորականք, խրատականք և արգելականք՝ այսու եղանակաւ ձևանան ։

Այս եղանակ ունի զերկուս ժամանակս միայն, զներկայ և զապառնի, այլ ոչ զանցեալ ․ զի զանցելոց հրամայել ոչ լինի ։ ՙՆերկայն ունի զմի դէմ միայն ․ զ̄ն զերկրորդն ․ որգոն, Թող, մի թողուր ․ թողէք, մի թողուք ։ Եւ ապառնին ունի ՚ի յեզականն զերկուս դէմս միայն ․ այսինքն զերկրորդն և զերրորդ ․ որգոն, Թողջիր թողցէ ։ Իսկ ՚ի յոգնականն ունի զերիս դէմսն ևս ․ որգոն, Թողցուք, թողջիք, թողցեն ։

Սոքա թէպէտ (բաց ՚ի յանգելոցն ՚ի ջիր) ըստ ձայնին նոյն են ը̄ սահմանականի ապառնւոյն, բայց կարեն որոշիլ յեղանակէ նշանակելոյն ․ զի հրամայականն հրամայողականապէս նշանակէ ․ զո՛ր օրինակ,

*Այսուհետև յօժարեսցիս սիրելի առ աղօթս ‖ ․ Ճճէ ։

* Լեզու քո սիրեսցէ զլռութ̄ի ‖ ․ Նոյնն ։

* Սանձահարեսցուք զլեզուս ․ սանձահարեսցուք զակն ‖ ․ Սարգ ։

Իսկ սահմանականին՝ ծանուցողապէս ․ զ̄ն, * Արդարուն խոնարհի առաջնորդեսցէ նմա ‖ ․ Ճճէ ։

* Եթէ հաւատասջիք, և ոչ բաժանեսջիք ՚ի միտս ձեր, չիք այն ինչ՝ զոր դուք ոչ կարիցէք առնել ‖ ․ Նոյնն ։

Յաղագս Ստորադասական եղանակի.

Ստորադասական եղանակն է, յորում բայն նշանակէ զանս կամ զկիրս՝ ոչ արձակաբար, այլ ցուցմամբ ըղձի, կամ թէութեան, կամ պատճառի, կամ ժամանակի, կամ տարակուսանաց, կամ հարցման, և այլն. այսինքն ստորադասելով զնշանակեալ գործողութիւն ը̄ ըղձիւ, կամ ը̄ թէութբ, կամ ը̄ պատճառաւ, և այլն. յորս սակս իսկ այս եղանակ՝ ստորադասական կոչեցաւ:

Որդ՝ եթէ ընդ ըղձիւ նշանակեսցէ, կոչի ըղձական. զոր օրինակ, * Երանի թէ չէի պատահեալ այնմ ամ̃նայնի ‖. պէտոյէց:

Եթէ ը̄ թէութբ նշանակեսցէ, կոչի թէական. և ը̄ ոմանց՝ ստորակցական, կամ անկատարական. որ̄, * Պատուոր է 'ի մեզ միտքս. թէ զբարին գովիցէ, և զչարն խոտիցէ, դատաւոր արդար է ‖. Գէորգ:

Եթէ ը̄ պատճառաւ նշանակեսցէ, կոչի պատճառական. զոր օրինակ, * Վասն այսորիկ տուան կերակուրք, զի կերակրիցիմք. և ոչ զի կերակրովք զոգի և զմարմին կորուսանիցեմք ‖. Գէորգ:

Եթէ ը̄ ժամանակաւ իւիք նշանակեսցէ, կոչի ժամանակական. որ̄, * Մի հաներ յինէն զշնորհս, մինչև մեռեալ իցեմ ‖. տաղ:

Եթէ ը̄ տարակուսանօք նշանակեսցէ, կոչի երկբայական, կամ տարակուսական. որ̄, * Թերևս արգեօք 'ի հանդերձեալ յաւիտենին 'ի քրիստոսէ ընդ նոյն Ճշմարտապէս վայելիցեմք ‖. յովհաննէս իմաստ:

Եթէ ընդ հարցմամբ նշանակեսցէ, կոչի հարցական. որ̄, * Ո խո՞րդ օտար եղելոց 'ի մօրէ կարիցէ լինել որք ծնօղ ‖. շնորհ:

Այս եղանակ ունի զերկուս յատուկ ժամանակս. այսինքն զանցեալ. որգոն, Տեսեալ իցեմ, իցես, իցէ. և այլն. և զապառնի. որգոն, Տեսանիցեմ, իցես, իցէ. և այլն:

Բայցի՝ յապառնի ժամանակս. քանզի բաց յերկուց սատի՝ բաղում անգամ իբր զիւր ժամանակս վարէ նաև

զժամանակս սահմանականին . թէ՛ ըստ ներկային, թէ՛ ըստ անկատարին , և թէ ըստ այլոց ։

Ըստ ներկային . զոր օրինակ , * Մանուկ կրօնաւոր թէպէտ և զերկինս բանայ , մի՛ մտանէր ‖ . Նեղոս ։

Ըստ անկատարին . զոր օրինակ , * Երանի՛ թէ զազատութիւն , զոր ետ Աստուած բնութեան , բարւոք 'ի կիր արկանէին ‖ . Շնորհ ։

Ըստ կատարելոյն . զոր օրինակ , * Եթէ յարեայք ընդ քրիստոսի , ապա զվերինն խնդրեցէք ‖ . Կողոս ։

Ըստ յարակատարին . զոր օրինակ , * Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի քրիստոս , ողորմելի եմք քան զամենայն մարդիկ ‖ . ա . Կոր ։

Ըստ գերակատարին . զոր օրինակ , * Թէ կացեալ էր 'ի պատուիրանին , պահէր զնա կենդանարարն կենդանի ‖ . Եղնիկ ։

Ըստ ապառնւոյն . զոր օրինակ , * Գուցէ մոռացոյց զչափ բնութեան ‖ . Լամբրոնացի ։

Յաղագս Աներևոյթ Եղանակի ։

Աներևոյթ կամ անորոշ եղանակն է , յորում բայն իբր վերացեալ նշանակէ զառս կամ զկիրս՝ առանց որոշման ժամանակաց , դիմաց՝ և թուոց . զոր օրինակ , Փրկել , բարեբարել , խոնարհել , ընթանալ , լինել , ևն ։ Այս եղանակ բայի վասն այսորիկ կոչի աներևոյթ , զի ոչ երևի 'ի նմա ժամանակ ինչ . կոչի և անորոշ , զի դիմօք ոչ որոշի . և սակայն 'ի ձեռն դերանուանց , կամ դիմորոշական տառից՝ կարէ նկատիլ 'ի նոսա կարգ ինչ ըստ օրինակի դիմաց . զոր օրինակ , * Փրկելս ոչ է իմով զօրութեամբս , այլ՝ քոյին խնամօքդ ‖ . Լամբր ։

* Դիւր է բարեբարելդ առ մեզ , և առ նոսին ‖ . Նար ։
* Խոնարհելն նուաստին է անգ՝ քան մեծին ‖ . Լամբ ։

Այս եղանակ բայի ձևանայ յառաջին դիմաց սահմանականի ներկային՝ զտառ մ՝ 'ի լ փոխարկելով . որգոն , Գործեմ , գործել . գործիմ , գործիլ . բանամ , բանալ . բանիմ , բանիլ . Թողում , թողուլ . Թողանիմ , թողանիլ . շահիմ , շահիլ . և այլն ։

Նաև գիտելի է՝ զի 'ի հնումն սակաւ ուրեք 'ի կիր առնուին զվերջաւորութիւն իլ, թէ 'ի հասարակ բայս, թէ 'ի ձայնակրականս, և թէ 'ի կրաւորականս. մանաւանդ այնոցիկ՝ որոց ներգործականի ներկայն յանգի 'ի ամ, և 'ի ում. այլ՝ ըստ վերջաւորութեան ներգործականացն ձևացուցանէին զնոսին։ Որպէս փոխանակ ասելոյ՝ ծագիլ, բառնիլ, լնանիլ, թողանիլ, զեղանիլ, ևն. ասէին, ծագել, բառնալ, լնուլ, թողուլ, զեղուլ, հերձուլ, առնուլ, որպէս երևի յառաջիկայ օրինակդ։

* Ի ծագել ճշմարտութեան՝ պարտ է բառնալ ստուերին ||. ԱՆԱՆԻԱ։

* Յայնժամ ահաւոր նշանք լինիցին, պատառել վիմաց, հերձուլ վարագուրի, և այլն ||. ՆԱՆԱՅ։

Եւ սակայն յորժամ հարկն պահանջէր, դնէին նաև վերջաւորութեամբս իլ. զոր օրինակ, * Զեմ արժանի կոչիլ, և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան ||. ՆԱՐԵԿ։

* Նոեսցուք պղպջակին յերևելիս ||. ԼԱՄԲՐՈՆ։

* Ոչինչ չարաչար կիրք մեզ քան զթշնամանելն և թշնամանիլ, անպատուել և անպատուիլ, ատել և ատիլ, հարկանել և հարկանիլ, տրտմեցուցանել և տրտմիլ, բամբասել և բամբասիլ ||. ՍԱՐԳ։

Գիտելի է ևս, զի այս եղանակ բայի՝ (որպէս յիշեցաք յառաջին մասին,) իբրև անուն հոլովի ըստ ԳԵՐԱՆ յեզակին ևեթ. որգոն.

Ուղղական. Գովել.
Սեռ. Գովելոյ.
Տրա. Գովելոյ. 'ի գովել, առ 'ի գովել.
Հայց. զԳովել.
Բաց. 'ի Գովելոյ.
Պատ. զԳովելոյ.
Գործ. Գովելով.
Պար. զԳովելով.
Ներ. 'ի Գովել. 'ի գովելս, 'ի գովելդ. 'ի գովելն, կամ ըստ գովելն։

Եւ այսպիսի հոլովեալքս՝ ԴԵՐԲԱՅ կոչին. այսինքն փոխանակ բայի. զի չեն յատկապէս բայ. որովհետև

ոչ նշանակեն ը̃ ժամանակաւ և դիմաւ, այլ՝ ընդ մէջ բայի վարին. որ̃, յասելն, *՚Ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ ||, Նար. դերբայս ՚է խաղաղանալ՝ իբր անուն հոլովեալ ներգոյական հոլովիւ եդեալ է իբր բայ. որպէս եթէ ասէր. յորժամ խաղաղիմ՝ ամբոխիմ ։

Գիտել պարտ է և զայս, զի ՚ի հոլովիլ սոցա՝ բազում անգամ նախդիրն զօրութ̃ դնի ՚ի տրականն. որ̃,
* Որ եկն կեցուցանել, ոչ կարաց անտես առնել ||. փոխանակ ասելոյ, որ եկն ՚ի կեցուցանել. Եփրեմ ։
* Զան զաստելն և զյանդիմանելն՝ ողոքելն Թուի Թէ զօրաւորագոյն է՝ խոնարհեցուցանել զբիրտ հոգին ՚ի հնազանդութի ||. այսինքն առ ՚ի խոնարհեցուցանել. Սարգիս ։

Եւ երբեմն ևս ՚ի մէջ սոցա և ՚ի մէջ նախդրին անկանի խնդիր սոցին. որ̃, *՚Ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի ||. փոխանակ ասելոյ, ՚ի խուզելն զերկրորդ՝ զնախնին կորուսի. Նար ։
* Ոչ է ժամանակ յերկարաձգութն առ ՚ի զպարտսն հատուցանել ||. փոխանակ ասելոյ, առ ՚ի հատուցանել զպարտսն. Նար ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս Խոնարհմանց և Զօրդութեանց բայից և Բղխմանց նոցին ։

Խոնարհմունք բայից են այսպէս փոփոխութիք մի և նոյն բայի ՚ի զանազան վերջաւորութիս, ՚ի դէմս, և ՚ի ժամանակս. Թէ յեղականն, և Թէ ՚ի յոգնականն. որգոն, Գործեմ, գործես, գործէ. գործեմք, գործէք, գործեն. գործէի, գործէիր, գործէր. գործէաք, գործէիք, գործէին. գործեցի, գործեցեր, և այլն ։ Ըստ այսմ և յայլ ա̃մ բայս ։

Այսպիսի փոփոխութիք վասն այսորիկ կոչին խոնարհմունք բայից, զի սոքօք զիջանին և խոնարհին բայք առ այս, կամ առ այն դէմս. առ այս, կի̃մ առ այն ժամանակս, և այլն ։ Զի որպէս յանուանս՝ պէս-

պէս փոփոխութիւք մի և նոյն անուան՝ կոչին հոլովք՝
վասն հոլովելոյ և թաւալելոյ անուան յայնպիսի փո-
փոխումս, սոյնպէս և ՚ի բայս պէսպէս փոփոխութիւք
մի և նոյն բայի՝ կոչին խոնարհմունք՝ վասն խոնար-
հելոյ և իջանելոյ բային յայնպիսի այլայլութիս։ Առ
այսպիսի խոնարհմունք բայից այնչափ են, որչափ փո-
փոխի մի և նոյն բայն ՚ի զանազան դէմս և ՚ի ժամս։

Իսկ լծորդութիւք բայից ոչ են պէսպէս փոփոխու-
թիւնք նոցա ըստ դիմաց և ըստ ժամանակաց, այլ՝ որոշ-
մունք նոցին ըստ զանազան վերջաւորութեանց սահմանա-
կանի ներկայիս. որպէս և հոլովմունք անուանց ոչ
են պէսպէս փոփոխումք մի և նոյն անուան, այլ՝ որոշ-
մունք նոցա ըստ զանազան վերջաւորութեանց սեռականացն
և գործիականաց։

Արդ քանզի այսպիսի վերջաւորութիւք սահմանա-
կանի ներկայիս՝ են չորք. եմ, ամ, ում, իմ, լծորդութիւք
բայից ևս՝ ասին չորք. Առաջինն լծեալ և յանգեալ
՚ի եմ. Երկրորդն ՚ի ամ. Երրորդն ՚ի ում. և Չոր-
րորդն ՚ի իմ. ընդ որովք լծին ամենայն բայք. և լծե-
լով՝ որոշին առ այս, կամ առ այն տեսակ լծորդութեանց. ըստ
որում եդաք յառաջին մասին. յորս պարտ է ուսա-
նողին զգուշանալ, զի մի բռնադատեսցէ զամենայն
բայ՝ ուր և իցէ՝ յամենայն ժամանակս և ՚ի դէմս խո-
նարհեցուցանել. մանաւանդ զայնոսիկ, որք են ըստ օրի-
նակօք հաւանեմին և խօսամին։

Այլ ևս պարտ է զգուշանալ ՚ի գործածութիւս կրա-
ւորական բայից. զի բաց ՚ի յառաջին լծորդութեանց,
որք են՝ կործեմ և հաւանեմ. և որ ըստ նոցօք. ոչ է ար-
ժան յաճախել զկրաւորականս այլոց լծորդութեանց.
բայց եթէ զկատարեալն և զապառնին ևեթ։ Մա-
նաւանդ զի բազումք ևս ՚ի նոցանէ ՚ի կրաւորականն
պակասին. ըստ որում կարգեցաք յառաջին մասին։
Այլ զորս եդաք ևս անդ, ոչ է պարտ նաև զնոսին վա-
րել անխտիր. այլ՝ ըստ տեղւոյն, ուր հարկն ստիպեսցէ,
և կամ վայելչութիւն բանին պահանջեսցէ՝ ՚ի բացատրութիւս
մեկնութեանց և մակացութեանց։ Արդ յամ քեզ յարացոյց
առ զնախնիս մեր, որք միայն ՚ի հարկաւոր տեղիս, և
ըստ պահանջելոյ բանին՝ ՚ի գործ ածէին զայսպիսիս.

որպէս է տեսանել յօրինակդ՝ որ զկնի ․ * Լուանիմ, և նովին զազրանամ ‖ ․ Նարեկացի ։
* Սնոտնիւ ճանիմ, և ոչ բժշկիմ ‖ ․ Նոյն ։
* 'Ի խոնարհն առաւել հեղանի (շնորհք) ‖ ․ Սարգ ։
* Հոգի մարդոյ, որ ոչ բերէ պտուղ ապաշխարութե ... լքեալ թողանի 'ի պահպանութէն այ ‖ ․ Գէորգ ։
* Որ երն՝ լինի ․ և ստացիչն ստացանի ․ և անտանելին տարեալ լինի ‖ ․ Շնորհալի ։
* Զոր օրինակ զօրեղ հանդերձ անկասկած ըռնանայ-յէ ... այսպէս է և անխինչ անձն ‖ ․ Վարք հարց ։
Իսկ եթէ կրաւորականապէս դնելն խորդ թուեսցի 'ի սոսա, մարթ է կազմել զայն էական բայիւ ․ որպէս և նախնիք մեր առնէին ․ զբ, * Լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ ‖ ․ Նարեկ ։
* Աստուածայինքն ամ՝ հաւատովք իմացեալ լինին, և ոչ քննութբ ‖ ․ Եզնակ ։
* Առեալ լինի արծաթն 'ի չար ծառայից ‖ ․ Ոսկ ։
* Վասն այ 'ի հուր ընկեցեալ լինէին ‖ ․ Խոսրով ։
* Գործ սինկլիտոսիդ է յոյժ այպանելի ․ զի առ դասա 'ի քննութէ մարդկան պատուեալ լինի ածուն ‖ ․ Խոր ։
Իսկ յաղագս բղխմանց ժամանակաց բայից, և մն կերպաւորելոյ դիմաց նոցին՝ գիտելի է, զի սոքա են հետևմունք խոնարհմանց բայից ․ իբր զի 'ի խոնարհիլ բայից՝ յարմարոյ նոցին ծագին և հետևին ժամանակք և դէմք նոցա ․ որգոն, Գործ = եմ, ես, է ․ եմք, էք, են ․ էի, էիր, էր ․ էաք, եւն ։ Գործ = եցի, եցեր, եաց ․ եցաք, եցիք, եւն ։ Գործ = եցից, եսցես, եսցէ ․ եսցուք, եւն ։ Զայսցանէ երկար գրէ հայրն մեր 'ի քերականութն իւրում, հատ ․ Բ ․ գլ ․ ԻԳ ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս Ընդունելութեան.

Թէ զինչ է, և քանի՛ պարագայք նորա:

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն 'ի յառնելութեան, կամ 'ի կրելութեան. և մերթ զառս կամ զկիրս ըստ ժամանակաւ. որգոն, Այրօղ. այրեալ կամ այրեցեալ. այրելոց. այրելի: Զի այրօղն նշանակէ զիրն յառնելութեան այրելոյ զայլս 'ի ներկայ ժամանակի:

Իսկ այրեցեալն նշանակէ զիրն 'ի կրելութեան այրման յանցեալ ժամանակի: Սոյնպէս և այրելոյն իմնապէս նշանակէ զիրն 'ի ներգործութեան այրելոյ յապայն. և այրելին 'ի կրելութեան այրման յապառնին: Յորս որպէս երևի, ընդունելութիւնք ունելով զզօրութիւն անուան, ունին միանգամայն և զզօրութիւն բայի. զի են իբր անուն 'ի բայից բղխեալ՝ 'ի ձեռն չորից վերջաւորութեանց՝ ող, եալ, լի, լոց: Իսկ միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զկիրս, զորպիսի նշանակեն բայքն, յորոց բղխեն:

Այս մասն բանի՝ կոչի ընդունելութիւն վասն երկուց. Նախ՝ զի ընդունի զգոյլ և զանուն 'ի յառնից, կամ 'ի կրից, յորս իրն նշանակի լինել. զի որ այրէ, 'ի յայրելոյն առեալ զնշանակութիւն և զանուն՝ այրօղ ասի. և որ այրի, յայրմանէ անտի՝ այրեալ կամ այրեցեալ ասի. ըստ այսմ իմն և վասն այլոցն: Երկրորդ՝ զի ունի ըղմանակցութիւն ընդ երկուց մասանց բանի, այսինքն ընդ անուան և ընդ բայի, և 'ի նոցունց ընդունի զպարագայս. որպէս տեսցի այժմ:

Պարագայք ընդունելութեանց են վեց. յ̃, Սեռ, ձև, տեսակ, ժամանակ, թիւ, և հոլով: Սեռն, ձևն, տեսակն և ժամանակն՝ ըստ բայից. իսկ թիւն և հոլովն՝ ըստ անուանց:

Սեռք ընդունելութեանց չորք են, որպէս և բայից. Ներգործական. փրկօղ. փրկեալ. փրկելոց: Կրաւո-

րական · զրկեալ, կամ զրկեցեալ · զրկելի, կամ զրկելոց ։ Զեղջական · ընթացող · ընթացեալ · ընթանալոց · ընթանալի ։ Հասարակ · խօսող · խօսեալ, կամ խօսեցեալ · խօսելոց · խօսելի ։

Ձեւք ընդունելութեանց են երեք ։ Պարզ · գործող · գործեալ ։ Բարդ · կենագործող · կենագործեալ ։ Բաղադրեալ · ներգործող · ներգործեալ ։

Տեսակք ընդունելութեանց են երկու ։ Նախատիպ · հնչող · հնչեալ ։ Ածանցական · հնչեցուցանող · հնչեցուցեալ ։ Ոմանք ըստ անուանց եւ կազմեն տեսակ ընդունելութեան այսպէս · հնչողական · հնչողութիւն, եւ այլն․ բայց այս կազմութիւն վերաբերի առ անուանս · զի այսպիսի բառք իբր անուն վարին ։

Ժամանակք ընդունելութեանց են երեք ։ Ներկայ · գրաւող ։ Անցեալ · գրաւեալ ։ Ապառնի · գրաւելոց · գրաւելի ։ Թիւք ընդունելութեանց են երկու ։ Եզական · ծագող · ծագեալ · ծագելի ։ Յոգնական · ծագողք · ծագեալք · ծագելիք ։

Հոլովք ընդունելութեանց են տասն, որպէս եւ անուանց · զորս գիտելի է, զի որք ՚ի ԵԱԼ յանգին, հոլովին՝ որպէս գետ, գետոյ · ՊՐ, զօրացեալ, զօրացելոյ · զօրացեալք, զօրացելոց · եւ այլն ։ Իսկ որք ՚ի ԼԻ յանգին, հոլովին՝ որպէս եկեղեցի, եկեղեցւոյ · ՊՐ, գովելի, գովելւոյ · գովելիք, գովելեաց ։ Իսկ որք ՚ի ՈՑ յանգին, ոչ հոլովին ։ Այլ որք ՚ի ՕՂ յանգին, ըստ եզականին հոլովին՝ որպէս ԲԱՆ, ԲԱՆԻ · փոխարկելով զօ տառն ՚ի ո · իսկ ըստ յոգնականին՝ որպէս ՔԱՂԱՔ, ՔԱՂԱՔԱՑ · ՊՐ ։

Առող ·	Առողք ·
Առողի ·	Առողաց ·
Առողի · ցառող ·	Առողաց · ցառողս ·
զ Առող ·	զ Առողս ·
յ Առողէ ·	յ Առողաց ·
զ Առողէ ·	զ Առողաց ·
Առողիւ ·	Առողօք ·
զ Առողիւ ·	զ Առողօք ·
յ Առող, կամ յառողի ·	յ Առողս ·
ովԱռող ։	ովԱռողք ։

Բայց գիտելի է՝ զի առ նախնիսն ոչ պահիւր ճիշդ այս որոշումն, քանզի հանդիպի ունելով հնչմանցս ո և օ կամ ըստ հնոց աւ, անխտիր դնէին ող կամ աւղ. ըստ օղ. զի և ո դնելով՝ սուր հնչէին իբր օ. ըստ աւանդելոյ եզնկացւոյն 'ի քերականութեան.

ԳԼՈՒԽ ԻԳ.

Գիտելիք ինչ 'ի վր ընդունելութեանց 'ի մասնաւորս.

Վասն ընդունելութեանց յանգելոց 'ի օղ գիտելի է, զի 'ի կրաւորական բայից բնաւ ոչ ելանեն ընդունելութիւնք վերջաւորութեամբ օղ. այլ՝ եալ, ելի և ող.

Իսկ թէպէտ ուրեք ուրեք գտնի եցող. որգոն, Այրեցող. ատեցող. և այլն, բայց այսոքիկ 'ի գործ ածին 'ի ներգործականս և 'ի չէզոքականս. զոր օրինակ,

* Զբոցն 'ի բաբելոն՝ (արար ած) մանկանցն ցօղ, և քաղդէացւոցն հուր այրեցող||. Շնորհ. Թղթ.

* Զօրէն դիւաց ատեցողք ամյն||. Պիտոյից.

* Օրինակ բարեաց և դու լինիցիս հայեցողացն 'ի քեզ||. Սարգիս.

Իսկ 'ի կրաւորականս՝ փխնկ օղի դնեմք եալ. որ.

* Հրաշալի ճգնութեամբ 'ի յերկրի նահատակեալ, և 'ի յերկինս պսակեալ||. 'Ի շար.

* Բացեր զաղխեալ դուռն դրախտին||. Եղիշէ.

* Զարչարեալք արիաբար ընդդէմ մահու չար իշխանին||. 'Ի շար.

Սոյնպէս իմն և վասն էական բայիցս՝ եղանիմ, լինիմ և եմ. զի 'ի սոսա ևս փոխանակ օղի միշտ եալ դնի. որգոն, եղեալ, եղելոյ. և այլն. որ.

* Զիմ այսպէս ստորաքարշ եղելոյս զաղօթս... ոչ արար անտես||. Լամբրոն.

* Զուղխս փափկութեան քո տացես ըմպել արժանի եղելոցն||. Ատոմ.

Ըստ այսմ և ընդունելութիւնք այնց չէզոքական բայից, որք են ը օրինակաւ շարժմանն, ոչ լինին օղ,

այլ՝ եալ. զոր օրինակ, *Նշղէն որպէս երազք զարթուցելոց || . սաղ ։

* Մի՛ կշտամբեր զհարթուցեալս || . նարեկ ։

* Տաց նմ ուտել 'ի մանանայէն թաքուցելոյ || . յայտ ։

Այնպէս և ընդունելութի գալ բային հասարակօրէն ոչ դնի յանգիւս ող, այլ՝ եալ. որ, * Զգուշասցուք զկնի եկեալքս || . կմ եկողքս . խոսրով ։

* Յորժամ վարսել հրամայէ (արամ զնիւքար) 'ի տեսիլ անցաւորաց և նմ եկելոց անդր || . խոր ։

Թէպէտ դուն ուրեք ող յանգիւ եւս գտանի եդեալ. զոր օրինակ, * Դորոյլ աւանդեցին զամենայնն զկնի եկողացս || . շնորհ ։

Վասն ընդունելութեց յանգելոց 'ի եալ՝ գիտելի է, զի սոքա երբեմն իբրև բայ վարին, և երբեմն իբրև անուն. որպէս ունիմք ասել յերրորդ մասին . գլ . ԽԷ ։

Դարձեալ գիտելի է, զի սոքա երբեմն դնին փոխանակ աներևութի . որ, * Այնպէս ուրախացեալք 'ի սէրն նոյ՝ մինչև չհամարեալ զինքեանս 'ի մարմնի, այլ՝ յերկինս || . կմ չհամարել . եղիշէ ։

* Ոչ ներքինք շարժեալ կարեն, (կմ շարժել կարեն,) և ոչ վերինք դրդուեցուցանեն || . եղիշէ ։

Այլ պարտ է 'ի գործածութե սոցա զգուշանալ ։

Վասն ընդունելութեց՝ որք յանգին 'ի ող գիտելի է, զի սոքա միշտ իբր բայ վարին, թէ 'ի ներգործականս, թէ 'ի կրաւորականս, և թէ 'ի չեզոքականս ։

'Ի ներգործականս. որ, * Խնդրելոց է զվրէժ յափշտակութեցն || . գէորգ ։

'Ի կրաւորականս . որ, * Դատապարտելոց են, որք գիտեն տիրապէս, թէ ոչ գիտեն, և ձևանան, թէ գիտեն || . սարգ ։

'Ի չեզոքականս . զոր օրինակ, * Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն || . շար ։

Բայց գիտելի է, զի յաճախ գործածութի այսպիսի ընդունելութեց տեղեկացուցանէ զկազմութի շարադրութեց, վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբայսդ՝ հանդերձեալ, կամ ապառնի . և մերթ եւս՝ հրամանէ . որ ։

* Եթէ հանդերձեալ էք քոյ լինել գործակից, պարտիք և ճանապարհի նորին լինել հետևող ||. Յհ, ե. Թէ լինելոց էք գործակից Քրիստոսի. Ոսկբ.

* Եւ եթէ անտես առնէ, ունի տակաւեօք վճարել առաջի քոյ ||. այսինքն վճարելոց է. Ոսկբ.

Գիտելի է ևս, զի ընդունելութիւնս Գալոց և Լինելոց՝ ուրեք ուրեք նաև իբր անուն վարին՝ նախդրիւ միայն հոլովելով. զոր օրինակ, * Եւ զգալոյն պատմեսցէ ձեզ ||. Յհ. ԺԶ. * Յաղագս մանէ հոգւոյն զլինելոյս նախատեսեալ... պատրաստէր ||. Յհ. Իմստ.

Վասն ընդունելութեանց յանգելոց 'ի ԼԻ՝ գիտելի է, զի սոքա բղխեն յամ կրաւորական և 'ի ձայնակրական և 'ի հասարակ բայից. և նշանակեն իբրև լինելի. որգոն, Պատմելի. հրաժարելի, դաւանելի. ևն.

Իսկ եթէ բղխեսցեն ևս 'ի ներգործականաց, ունին յայնժամ զզօրութիւն օղի. զոր օրինակ, * Գործն և գործելին առհասարակ տանջեսցին ||. Իմստ.

* Գուանացաւ ցքի ըմպելեաց ||. այսինքն ըմպօղաց. Եսայ.

* Խաթան ընդդէմ աքացելեաց ոչ վնասի, այլ զոտանսյա ծակոտէ ||. այսինքն խաթան ընդդէմ աքացողաց ոչ վնասի. Գէորգ.

* Յարեաւ նախապատմելին ||, այսինքն նախապատմօղն. որ է ասել՝ յարեաւ նա, որ յառաջն պատմէր՝ թէ յառնեմ. Շար.

Նմանք յընդունելութեանց ասոր դնին երբեմն ևս և փոխանակ ընդունելութեանց յանգելոց 'ի ՕՂ մանաւանդ ընդունելութիւնդ՝ ԽՆԴՐԵԼԻ. զոր օրինակ, * Խնդրէ ջերմեռանդն արտասուօք զքաւութիւն, և առնու զխնդրելին ||. Յաճախ.

Գիտելի է ևս, զի այսպիսի ընդունելութիւնք բազում անգամ յարելով յէական բայս՝ վարին գրեթէ իբր դիմաւորք բայ. զոր օրինակ, * Նկարելի է... երկուց հակառակ տերանց ծառայել, և հաճոյանալ ||. Ոսկբ.

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս Նախադրութեան :

Նախադրութիւն է մասն բանի, որ 'ի յարիլն յանուանս՝ եւս եւ յայլ մասունս բանի իբր յանուանս, ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ. կամ թէ յայտ առնէ զայն ինչ, որ շուրջ զիրօք մտածի. զորս ը̅ կարգի հոլովից եդաք յառաջին մասին. Գլ. ԺԷ: տես յընդարձակն Է. 25:

Այլ գիտելի է նախ՝ զի ոմանք 'ի նոցանէ երբեմն առնուն զկրկին խնդիր 'ի միասին. և ոմանք զայլ, փոխանակ բուն խնդրոյ իւրեանց. որպէս է տեսանել 'ի յետագայսդ :

Նախադրութիւնքս՝ Ընդ, Ընդէ, երբեմն առնուն միանգամայն զբացառական և զնախդրիւ տրական. որ.

* 'Ի դուլթէ ընդ 'ի քո հազար ամ է ‖. Վարդան:
* 'Ի մերոյն հայկայ ընդէ ցթագաւորելն վաղարշակայ զտանելն ամք ուջծր ‖. յովհ. կաթ:

Նախադրութիւնքս՝ յառաջ քան, յետոյ քան, 'ի վեր քան, ևն, առնուն միանգամայն զհայցական և զգործիական. որ.

* Գտանեմք ժամանակս կրիւսոսի՝ երկերիւր ամաւ յառաջ քան զնեքտանեբայ (ժամանակն) ‖. Խոր:
* Ինն հարիւր ամաւ յետոյ քան զաբրահամ շինեցաւ սիոն 'ի դաւթայ ‖. Վարդան:

Նախադրութիւնքս՝ հետի, 'ի բացեայ, մինչև, առնուն երբեմն զբացառական և զգործիական, մանաւանդ 'ի վերին եական բայիւ. ոմ և նախադրութիւնքս, Մերձ, Մօտ, հեռի, առնուն երբեմն զտրական և զգործիական. որ.

* Խաղեցին պատուով 'ի մէջ պողոտային՝ չորս ասպարիսաւ հետի 'ի քաղաքէն ‖. յայսմաւ :
* Էր այր նորա 'ի բացեայ 'ի մէնջ ասպարիսօք հինգ ‖. Վարք հարց :
* Մերձ էր գեղն յերուսաղէմ մղոնաւ երեք ‖. Համբերէ :

Դարձեալ՝ նախադրութիւնքս՝ մերձ, մօտ, հեռի, երբեմն հանդերձ նախդրիւս առ՝ առնուն զվերջահոլով տրական. որ, * Մերձ առ նմին հանդուցեալ ‖. Երզնկացի ‖:

* Մօտ առ ո̃յ կայցցց (զհողեղէն բնութիւս) ‖. Մարգ:

* Հանգոյն նմին տեսանէք և զնա եկեալ յերկնից ‖. Եփեսացիս:

Գիտելի է երկրորդ, զի գտանին և ևս նախադրութիւնք ինչ, զորս մեք ոչ եդաք յառաջին մասին. վասն զի առ նախնիս մեր հազիւ ուրեք երևին նոքին, և կամ յատանուոր բանս միայն. որպիսի են սոքա. Բարց, Բանց, պէս, հետ, չէրբ. և այլն:

Գիտելի է երրորդ, զի երբեմն ոմանք 'ի մակբայից ևս խնդիր առեալ՝ վարին իբրև զնախադրութիւն. որ,
* Փրկեաց զժողովուրդ 'ի ներքոյ ձեռին եգիպտացւոց ‖. Ելից:
* Հանդէպ յետոյ ամենեցուն գայ 'ի կուրթս (որթ) ‖. Պետրոսի:
* Լսու 'ի լսու ամ ժողովրդեանն ասէ ցաշակերտսն ‖. Ղուկ:
* Խոստովան լերուք ... զանխուլ 'ի լռողաց ‖. Սարգ:
* Ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ‖. Խորեն:

Երբեմն ևս ածական անուանք ինչ խնդիր առեալ՝ վարին իբր նախադրութիւն. որ, * Որ սիրէ զԱծ, նման նմին սիրէ զամ մարդոյ զկեանն ‖. Խոսրով:
* Հանգոյն իժի և քարբի խցեալ զլսելիս ‖. Շնորհ:
* Աղաղակեցին և երկու ծերքն կից նմին ‖. Դան:
* Ոչինչ ընդդէմ յայսմ պատուոյ տայ սմբատայ ‖. Խոր:
* Ըստ Այ հրամանին և գործն վճարեալ լինէր ‖. Եփես:
* Խառն ընդ նոսա ... սկսանի նուագել ‖. Յովհ. Իմաստ:

Գիտելի է չորրորդ, զի նախադրութիւնք թէպէտ հասարակօրէն յառաջոյ դասին խնդրոյ իւրեանց, ըստ որոյ և կոչին նախադրութիւնք, բայց բազում անգամ ևս յետոյ դնին. որ, * Զարին ոչինչ միտեցայ ‖. Նարեկ:
* Զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի ‖. Նար:
* Ընմայրթ էր զօրութիւնն շանց առաջի արկանել ‖. Լամբ:

Նաև երբեմն ևս՝ ընդ մէջ նախադրութեան և խնդրոյն անկանի այլ մասն բանի. որ կամ բայ, կամ խնդիր խնդրոյն, և կամ այլ ինչ. որ, * Ըստ խաչ առաքինութեան բարձին, և ոչինչ գնացին քնի ‖. այսինքն գնացին զկնի քնի. Շնորհ:
* Ուղիղ չարի 'ի նմ խորոխտայր հասուցանել արքայի ‖. որ 'ի վերայ արքայի հասուցանել. Յովհ. Կաթ:
* Զաղքատն Հայոց զցնցոտին զգենլոյ անպատուէք ‖. այսինքն վասն զգենլոյ զցնցոտին. Սարգիս:

Գիտելի է հինգերորդ, զի յայնպիսի նախադրութիւնս, որք ունին զնախդիր, որպիսի են, զկնի, զհետ, յաղագս, և այլն, երբեմն կրկնի նախդիրն նաև 'ի վերայ խնդրոց նոցա. որ, * Զմիմեանց զկնի անհետ 'ի վերայ գային ||. խոր ։

* Յամ ժամ զբարեաց զհետ երթայք ||. ա. թես ։

* Մի ինչ պատճառս տալ հակառակորդին 'ի հայհոյութեան յաղագս ||. ա. տիմ ։

Իսկ երբեմն դնի միայն 'ի վերայ խնդրոց նոցին. որ,

* Զմիմեանց կնի կարգեալ տողեցին ||. ագաթ ։

* Զնորին անպիտանութեան վարեցաւ հետ ||. պիտոյից ։

* Նա ինքն 'ի ճշմարտութեան վերայ չև է հասեալ ||. եղիշէ ։

* 'Ի պատուիրանազանցութեան աղագս դարձաւ առ փշօղն ||. համբրէ ։

Երբեմն և՝ ուր պիտոյ է կրկնել նախադրութեան նախդիր միայն կրկնի 'ի տեղի նորա. զոր օրինակ,

* Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան ||. ա. տիմ. Յորս զօրութիւն կրկնի նախադրութիւն՝ զհետ. որպէս թէ ասէր. Երթ զհետ արդարութեան, զհետ աստուածպաշտութեան, զհետ հաւատոյ, և այլն ։

* Սէրս 'ի վերայ սիրոյ՝ և ցաւս 'ի ցաւոց յաւելլում ||. այսինքն ցաւս 'ի վերայ ցաւոց. շնորհալի ։

* Ներկայութ զօրութին այ կալով 'ի մէջ ձեր, որ յերից մանկանցն ||. այ որ 'ի միջի երից մանկանցն. ճառընտ ։

* Հաներ զգիշերն 'ի գլուխ յաղօթմն այ՝ ոչ յիւր պէտս, այլ 'ի մերն ||. այսինքն 'ի մեր պէտս. լամբ ։

Վասն խնդրառութեան նախադրութեանց, Իբրև. իբր. իբրու. որպէս. քան ։

Սոքա թէպէտ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի հայցական հոլովն, բայց բազում անգամ և ըստ պահանջման բանին և 'ի զօրութենէ բային պէսպէս խնդիրս առնուն՝ գրեթէ յամ հոլովս, յուղղականն, 'ի սեռականն, և այլն ։

Յուղղականն. որ, * Իբրև այլազգիք և այլալեզուք տանիմք և բերեմք (բամբասանօք) զմիմեանս ||. յովհ. ոսկեբ ։

* Որպէս վտանգաւորք ողորմութի հայցեսցուք || . Խոսրով:

'Ի սեռականն. դր, * Իբրեւ օձի զթոյնս 'ի բաց եղեալ՝ դեսպանս առ իշխանն ատոմ առաքէր || . Յովհ. Կաթ:

* Նշղեցի միատարր խաղաղութի 'ի մէջ մեր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ || . Յովհ. Կաթ:

* Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի || . Մարկ:

'Ի վերջահոլով տրականն. զոր օրինակ, Իբրեւ անմահից հաւատացանէ մեզ զվարձս վաստակոց մերոց || . Եղիշէ:

* Ունկնդրութի և հպատակութի (մատուսցի քահանայի) որպէս հրեշտակի Այ || . Խոսրով:

* Մեզ արդարև 'ի դէպ է երից մանկանցն երգ առ Ած քան իսրայէլեան տոհմին յայնժամ || . Շնորհ:

'Ի նախդրիւ տրականն. դր, * Ձգէ զբանն առ պետրոս՝ իբրեւ 'ի գլուխ աշակերտացն || . Եփնա:

* Որպէս յածային սեղան՝ 'ի սոյն մերձենայ || . Լամբ. պատ:

* Փափաքէ 'ի մահ քան 'ի կեանս || . Եղիշէ:

'Ի հայցականն. զոր օրինակ, * Մի՛ ոք աստանօր անուսումն զմեզ համարեալ բամբասիցէ իբր զանվարժս || . Խորէն:

* Որպէս զմտերիմ ծառայս պատիւ ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն || . Շնորհ:

* Չիք ինչ զգուշաւոր ամրութի քան զերկիւղն Այ || . Խոսրով:

Այսոքա երբեմն զօրութ ունին զհայցականն՝ և ներգործութ զյատկացուցիչ նորա. զոր օրինակ, * Ոչ իբրև զմահկանացուի համարի զմահս մեր || . այ ոչ իբրև զմահս մահկանացուի համարի զմահս մեր. Եղիշէ:

* Բանք ձեր ոչ լինիցին անհամ և անաղ, որպէս զռամկաց || . այսինքն որպէս զբանս ռամկաց . Շնորհ:

* Բարձր է ծառայութեն պատիւ քան զառաքելութե || . այսինքն քան զպատիւ առաքելութե . Սարգ:

'Ի բացառականն. դր, * 'Ի բարկութէն և 'ի նորին չարութենէն իբրև 'ի կատաղի գազանէ զերեսս 'ի բաց դարձուսցուք || . Սարգ:

* Կրեալ ես երկնչել 'ի կեղծաւորութէ որպէս յանհաւատութենէ || . Շնորհալի:

* Կա՛ն՝ որ քան յանանց կենացն վրիպել՝ յաստեացս զար-հուրին || . այսինքն, են՝ որք զարհուրին վրիպիլ յաս-տեացս՝ քան յանանց կենացն . Եւսեբ :

'Ի պատմականն . որպէս, * Ոչ ասէ զաւակաց՝ իբրև զբազ-մաց, այլ՝ իբրև զմիոյ || . Գաղ :

* Զհօրէն խնդրէ որդւոյ զմարդոյ ունել պատիւ || . Մեկն . Ղուկ :

* Աշխարհ է առաւել հոգալ զմարմնոյ քան զհոգւոյ || . Վարք հարց :

'Ի գործիականն . որպէս, * Վերակացուք մարդկան ու-նին բանիւ կակղել զխստութի մտաց՝ իբրև բրչաւ || . Եւսեբիոս :

* Կա՛ն որ բանիւք իւրեանց խոցոտեն որպէս սրով . բայց լեզուք իմաստնոց բժշկեն || . Առակ :

* Զթռչունս վայրենիս և զգազանս սիրով քան բռ-նութեամբ սովոր են մարդիկ վարժել || . Շնորհ :

'Ի պարառականն . որպէս, * Իբրև զփեսայիւ եարկ զինև զվակասն || . Կոչ . ընծայ :

* Իսկ երկրորդն անհմուտ գոլով՝ ծիծաղի զնովաւ որ-պէս զանմտաւ || . Լամբ :

* Իւն զբազմօք առաւելեալ մեծապէս 'ի փառս || . Սահակ Յաբ :

'Ի ներգոյականն . զոր օրինակ, * Տատանեալ հոգւ 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նա-ւակի || . Նարեկ :

* Զի ցորչափ արտաքոյ կամացն ոչ լինի մերս ոգի, որպէս 'ի ծովու ալեկոծիմք || . Խոսրով :

* Ո՞րքան խաղաղութի է 'ի տունս շինականաց՝ և ան-հոգութի, քան 'ի տունս թագաւորաց || . Սարգ :

'Նախադրութե . որպէս, * Զանձն իւր եդ 'ի վերայ ձեր իբրև 'ի վերայ սիրելեաց || . Սարգ . Ա . Պետ . Ի :

* Կապեալ են ամենուրեք ազգ մեր յաղքատութե որպէս ընդ երկաթոյ 'ի ներքոյ լծոյ ծառայութե || . Շնորհ :

* Անէծք ցաւագինք վասն այլ մեղաց ոչ եւս շարժին 'ի մէջ եկեղեցւոյ, քան յաղագս գողութե || . Նոյն :

ԳԼՈՒԽ ԻԸ·

Յաղագս Մակբայի ։

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս կամ զեղանակս գործողութեանց նշանակէ. զի եդեալ մակբայից, այսինքն 'ի վերայ բայից՝ ցուցանէ զպէսպէս եղանակաւ կատարելն գործողութեանց. և զի այս պէսպիսութիւն կարէ մտածիլ երեսուն և երեք օրինակաւ ըստ պէսպիսութեան նշանակութեան իւրեանց. տես յընդարձակն. ա. 19. և բ. 26 ։ Այն սակս երեսուն և երեք տեսակք մակբայից թուին. Որականն, քանականն, ժամանակական, տեղական, և այլն. որպէս եդաք յառաջին մասին ։

Այլ գիտելի է նախ, զի մակբայից ոմանք են բնականք. որպէս, Այժմ, աստ, անդ, դեռ, մերթ, երբ, միշտ, հիմ, այո, ոչ, ուր, և այլն ։

Իսկ ոմանք, մանաւանդ թէ բազումք՝ կազմին յանուանց, ևս և յայլ մասանց բանի՝ 'ի ձեռն պէսպէս վերջաւորութեանց կամ մասնկանց. որգոն, Առիւծաբար, մեծապէս, ինձէն, հայերէն, ուժգնակի, նշանացի, ինքնին, ըխուրէցս, այլուստ, և այլն ։

Գիտելի է երկրորդ, զի մակբայք՝ երբեմն նախադասին բայից. օր, * Միշտ ուսանիմ, և երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեմ ... առաջ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ ‖. Նարեկ ։

Իսկ երբեմն յետադասին. զոր օրինակ, * Կցորդակից լեր բծղխապէս, և մի 'ի խոյզ ընտրութեան կոչեր դատապարտաբար ‖. Նար ։

Նաև երբեմն ևս ընդ մէջ մակբայի և բայի այլ բան անկանի. և կամ այլ մասն բանի. օր, * Յորժամ որ այժմս բանապաշտօնս՝ խորոխտաձայն՝ սիգացօղ՝ բարձրապարանոց, անկեալ դնեմ զի անկենդան ‖. Նարեկ ։

* Նաև դու մի զանքանիցն կենդանութիւն ինձ 'ի դէմս բերեր ‖. սարգ ։

Գիտելի է երրորդ, զի մակբայք բազում անգամ երկու կամ երեք 'ի միասին դնին ։ Նա երբեմն նովին տե-

սակաւ ․ որպէս, * Օ մարդոյ բարին ընդ այլ բարւոյն հա֊
մեմատեալ՝ արդարոյ աստուածայնոյ չար գտանի ‖ ․ Սարգ ։

Երբեմն եւս այլեւայլ տեսակօք ․ զոր օրինակ, * Ո՛հ֊
անիչ արդարացեալ կանխեցաք ասացաք, իբրու պա֊
րանաւ յինքեանս ձգել զմեղս ‖ ․ Սարգ ։

Եւ երբեմն եւս մի եւ նոյն մակբայն կրկնելով դնի առ
'ի յաճախականապէս նշանակել ․ զոր օրինակ, * Ա՛ե֊
ծացաւ այրն յոյժ յոյժ ‖ ․ այսինքն կարի յոյժ ․ Ծննդոց ։

* Ո՛յ այս եւ ես մի եմ 'ի նոցանէ ‖ ․ Նարեկ ։

* Աւաղ աւաղ զմարմն հինին 'ի վը հեղուլին ‖ ․ յոհն ․ ոսկ ։

Իսկ այսմ լինի երբեմն եւ բացասական մակբայս՝ ոչ,
կրկնելով 'ի սկզբան եւ 'ի վերջս ․ որպէս, * Եւ ոչ մի ինչ
առանց շնորհացն այլ 'ի գլուխ ոչ ելանէ ‖ ․ այսինքն
եւ ոչ մի ինչ ընաւ ․ Սարգ ։

Գիտելի է չորրորդ, զի մակբայք ոչ միայն դնին 'ի
վերայ բայից, այլեւ 'ի վերայ ընդունելութեց ․ որպէս,
* Ա՛մենից տիրող հաւասարապէս ‖ ․ Նարեկ ։

* Եղեւ վերստին ծնող մարդկութեն ‖ ․ գործ ․ լուս ։

* Ա՛նճառելի դրախտին աստէն տեսող ‖ ․ 'ի շար ․ էջ ։

* Ա՛եծ է փառք քահանայութե յարժանապէս ու֊
նողսն ‖ ․ Լամբրոն ։

Երբեմն 'ի վերայ բայանունանց եւս ․ որպէս, * Լռեցոյց
զմոլեգնաբար գոչումն ‖ ․ Եղիշէ ։

* Ա՛նամնաբար սահեցմամբ ․․․ է երկիր մածաք ‖ ․ Նար ։

* Վերստին առումն բանին՝ զհաւատարմութի իրացն
ցուցանէ ‖ ․ Սարգիս ։

Երբեմն եւս դնին 'ի վերայ այնպիսի ածականաց, որք
ունին զհաղորդութի է բայից ․ որպէս, * Նայեա՛ վերըս֊
տին 'ի բնութես կերպարան՝ միշտ սխալական ‖ ․ Նար ։

* Ո՛ստ հոգւոյ՝ ամենեւին անշարժք 'ի բարիս ‖ ․ Շնորհ ․ ընդհ ։

* Հեղցես զաղբիւրաբար զառատաբուղխ զշնորհս ‖ ․
'ի Ճաշոցէ ։ Այլ Աղէքսանդրեանն է մակբայ՝ ածական
անուանց աստուածաբանութ ։

Երբեմն եւս դնին յայնպիսի բանս, յորս զօրութի կայ
բային ․ որպէս, * Ո՛յսօր 'ի կառս, վաղին 'ի դագաղս ‖ ․
այսինքն այսօր նստեալ կայ 'ի կառս, եւն ․ Լամբրոն ։

* Եթէ կանոնն թիւր իցէ, քանի՞ մանաւանդ, ոյք
ուղղին նովաւ ‖ ․ Սարգ ։

* Իսկ արդ՝ չար արժա՞ն է ասել թագաւորին, քա՛ւ ես ո՛չ ասեմ || . Եղիշէ.

Գործելի է հինգերորդ, զի երբեմն մակբայք ինչ ածական լինին գոյականաց, և իբր ածական վարին. որպ.

* Ուստի կենցաղս գիշեր կոչեաց առաքեալն || . Խոսրով. Որ առտին լեալ է ածական՝ անուանս կենցաղ.

* Զար է նախանձ, և 'ի չարէ յանդգնութիւն ածէ || . Իգնատիոս.

* Յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խորհուրդ || . Շար.

Այլ եւս՝ երբեմն նախդիրք խնդրոյն դնին 'ի վերայ մակբայից. որպ. * Բարեպաշտ արքայն Կոստանդիանոս զայսր աւուր տարբերեալ տօն հաւատոյ ... անխախտելի ամրութ՟ պնդեալ հաստատեաց || . Լմբ.

* Ողջուր եղեալն ... առաջի աչաց տեսանէր || . Կոչ.

* Գնայր առ նա ապա և մեծ իշխանն վրաց Ատրներսեհ 'ի ցանկացաբար մշտակցութ՟ || . Յովհ. Կաթ.

Գործելի է վեցերորդ, զի բազում անուանք ածականք երբեմն իբրև զմակբայ վարին. որպ. * Նոր ծաղկեաց զարունն հաւատոյ || . Շնորհ.

* Եթէ նոքա (այսինքն առաջնորդք,) ուղիղ գնան, հետևեալքն անխոտոր ճանապարհորդեն || . Լամբրոն.

* Բուռն մի՛ դիր աղաչեմ || . Նարեկ.

* Սուտ ձևանամ, և իրօք խոտորիմ || . Նար. կա.

Այս կիրառութի յաճախ է 'ի բարդ ածականս. որպ. * Պարզերես կացջիք առաջի աւանդողին ձեզ զտաղանդ պատուիրանին || . Շնորհալի.

* Զմեզ ինքեանս բոլորապատող ընծայել տն || . Սարգ.

* Բարեփառաբար եղանել 'ի կամարս լուսեղէնս || . 'ի Ճաշոցէ.

Սոյնպէս և ածական անուանք, որք ունին զբաղադրական մասնիկս՝ ան, կամ զբաղդատական մասնիկս՝ գոյն, բազում անգամ վարին իբրև զմակբայ. որպ. * Անսայթաք կարող եմք գնալ ընդ ճանապարհ կենցաղոյս 'ի յերկինս || . Լմբ.

* Անշեղս նուեցիք, և հասիք առ քս || . Շարակ.

* Գերագոյն գոչէ փող գաբրիէլեան || . Շարակ.

* Որք չարագոյն զա̄ծեղէն բանն ընկալան, կատարելագոյնք են և առաջինք || . Նարեկ.

Երբեմն եւս անուանք ինչ ածականք՝ ունելով 'ի վերջոյ զյօդս՝ ս, կամ զբառդ՝ ն, իբր մակբայ վարին . որ,

* Նաղուամ առաքինանամք ‖ . Խոսրով ։

* Ամբարտաւանս եւ բարձրայօնս փքայր ‖ . յոհ . կաթ ։

* Գեղեցիկ ես անդ կարգելով ‖ . Խոր ։

* Որ սքանչելի ես դիպեալ եղեւ ըստ գործոյն՝ եւ անուանն ‖ . նոյնն ։

Գիտելի է եօթներորդ, զի երբեմն անուանք ինչ, թէ ածականք եւ թէ գոյականք՝ հոլովմամբ իւիք իբր մակբայ վարին . որ, * Մ՝ինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասից ‖ . Նար . կէ ։

* Յանպատրաստից եկեալ սրտաբեկ առնէր ‖ . Գէորգ ։

* Յանխտիր հայեցեալ՝ յանդիման տեսանէր ‖ . Խոր ։

* Նմանեան առ օրէն յայտնէ զբարկութիւն իւր ‖ . առակ ։

* Խափանեսցի առ աչօք կարծեցն ‖ . Շնորհ ։

* Ո ինչ մի Ձեւիք պճնազարդայն ‖ . Հարց ։

Նաեւ երբեմն եւս մի եւ նոյն անուանն կրկնելով՝ իբրեւ մակբայ վարի . որ, * Խմբեցաւ պատերազմն, եւ մատեան ձախաւ առ ձախաւ ‖ . Խոր ։

* Որդի առ որդի յառաջ մատուցեալ՝ միապետել ջանայր ‖ . յոհաննէս . կաթ ։

* Ներքոյ 'ի ներքոյ զմիմեանս համբուրիցեն ‖ . Վեցօր ։

* Որ ըստ օրէ յաւելուած լիցի 'ի լաւութեան ‖ . յաճախ ։

* Տօնէ խոլայել ամ յամէ՝ պենտակոստէ առ ձայնեալ ‖ . Խոր . Հարց ։

* Ամ ամ առնուին զքահանայութեան պատիւ ‖ . Նանայ ։

* Գոյն 'ի գոյնէ կայլին յօրէնսն առաջինս ‖ . Գ . Ճառ ։

Նաեւ եւ՝ երբեմն այլեւայլ անուանք, եւ կամ նաեւ այլ մասունք բանի՝ 'ի միասին եկեալ՝ իբրեւ մակբայ դնին . որ . * Մ՝եծ ամուրդ այգ հետ 'ի հետ տապալեցաւ ‖ . Եղիշէ ։

* Զ կէս ընդ կէս ձեղքէր զամուր զլխանոցն ‖ . յոհ . կաթ ։

* Առ ձեռն պատրաստ տեսանեմք զգործն բանիցս վերակայ ‖ . Լամբրոն ։

* Յան ի ցեր սփռեալ է զլուխս կոհակացն ‖ . յոհ . կաթ ։

* Բանզի ողորմութիւն է, որ հայցի 'ի գլուխ պարծի առ դատաստանաւն ‖ . Շնորհալի ։

* Կոչելոյ հրաման տայր յանուանէ յանուանէ ‖ . Եղիշէ ։

* Նաեւ այսպէս իբ (ան սելեւկիոս եւ անտիոքոս) թագա-

ւորեալ ընդ ծայր և ընդ շուրջ՝ իբրև ամենի, ապա ապս-
տամբքն պարթևք ՚ի մակեդոնացւոց ‖ . ՅՈՎՀ. ԿԱԹ.

Գիտելի է ութերորդ, զի ցուցական դերանուանքս՝ սոյն, դոյն, նոյն, յարեալ յանուանդ օրինակ՝ վարին ընդ նմա իբրև զմակբայ, ունելով երբեմն զնախդիր՝ զ. զոր օրինակ, * Սոյն օրինակ և ծերունին այն (Նոյ) յայնժամ ՚ի սուգ տրտմութեան վտանգեալ էր ‖ . ՍՈՒՔ.

* Դոյն օրինակ և յոյնք ... ունին զիրաւունս ‖ . ՅԱՃԱԽ.

* Նոյն օրինակ և ՚ի մնէ են ամ պահպանութիւնք ‖ . ԱԳԱԹ.

* Մի ևս ձեզ զնոյն օրինակ գնալ ‖ . ԵՓՐԵՄ.

Ըստ այսմ ձևանայ և ցուցական դերանուանդ՝ այս . ԶԲ,

* Եւ նա դայս օրինակ փոխեցաւ յաշխարհէ ‖ . Բ. ՄԱԿ.

* Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ դայս ‖ . ԱԳԱԹ.

Դարձեալ և բայս՝ է, վարի երբեմն իբրև ժամանակական և տեղական մակբայ ընդ բառիցս՝ ուրեք, ուր, ուր, որ, ԶԲ, * Է ուրեք ուր բանիւ վճարէ . . . և է՝ ուր ձեռն դնէ ‖ . այսինքն ուրեք ուրեք, կամ երբեմն . ԵՓՆԱՊԻՍ.

* Է ուրեք՝ ուր քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է՝ ուր նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք, և ոչ յաղթեալք ‖ . ԵՂԻՇ.

Գիտելի է իններորդ, զի մակբայքս՝ Աստի, այտի, անտի . աստ, անդ . այսր, այդր, անդր, դնին երբեմն փոխանակ ցուցական դերանուանց . զոր օրինակ, * Եւ են կրկին կարօտ ՚ի տարաբնակ լինել ՚ի բնակութենէ աստի ‖ . այսինքն յայսմ բնակութենէ . ՅՈՎՀ. ԿԱԹ.

* Բայց արդ՝ դարձ ՚ի բարկութենէ այտի ‖ . ՆՈՅՆ.

* Նշոյս եղեն . . . ՚ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ կան յերկինս ‖ . ԵՓՆԱՊ.

* Յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք ‖ . ՅՈՎՀ.

* Յս գնաց ՚ի գերեզման անդր, ուր եդեալ էր ղազար ‖ . ՃԱՃԷՐ.

Երբեմն ևս դնին ՚ի տեղի դիմորոշական տառից . ԶԲ,

* Դղորդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր ՚ի մերոց աստի ‖ . այսինքն ՚ի մերոցս . ՅՈՎՀ. ԿԱԹ.

* Ահա ըղձալի համարիմ ասել աստանօր ՚ի քոյոց այտի զոր ընդ իմ կրեցեր ած բոլորից ‖ . ՆԱՐ.

* Ոչինչ կարաց շարժել զնոսա ՚ի սիրոյ անտի այ ‖ . ՍԱՐԳ.

* Մաղձաղակի փոփոխեալ գտայց 'ի լաւ անդր ‖ . Նար ։

Նաւ երբեմն եւս դնին իբր զարդ . որ, * Կեցցեմ 'ի հի-ւանդութենէ աստի իմմէ յայսմանէ ‖ . Դ . Թագ ։

* Նուանելոց էք 'ի մարմնոյ այդի ‖ . Հռոմէ ։

* Որք 'ի լոյս անդ են, ցնծան . և որք 'ի խաւարի անդ են, յոգւոց հանեն ‖ . Տծբ ։

* Նա յիւրսն անդր եկն, և իւրքն զնա ոչ ընկալան ‖ . Նոյնն ։

ԳԼՈՒԽ ԻԶ ։

Յաղագս Շաղկապի ։

Շաղկապն է մասն բանի, որ յարէ և միաւորէ ը̄ միմեանս զայլ մասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս . և բաժանի 'ի զանազան տեսակս . որք են՝ բաղհիւսա-կան, տրոհական, եւն . որպէս կարգաւ եդաք յառա-ջին մասին . տես և յընդարձակն . Ե . 27 ։

Այլ գիտելի է, զի երբեմն վասն վայելչութեան բա-նին զօրութեամբ դնին շաղկապք ինչ . որպիսի են հասա-րակօրէն սոքա . Բայց, սակայն, այլ, վասն այսորիկ, եւն . յորժամ յառաջոյ սոցա դնին շաղկապքդ՝ Թէպէտ, վասն զի, եւն . որ, * Թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեաց ընդ ամ աշխարհն պարսից, (Բայց) նո-քա զամ տուն եկեղեցի արարին . Եղիշէ ։

* Վասն զի ոչ կացաք յուխտի ամն, (վասն այսորիկ) ան-փոյթ արար զմեզ ‖ . յղհ . եաբ ։

Իսկ երբեմն ներհակ այսմ շաղկապս և իբր յաւե-լորդս դնի 'ի դրադէմ բանս և 'ի դերբայաւորս . որ,

* Նա երկիւղի անկանելոյն զարհուրեալ՝ և թմրեցի ‖ . Նար ։ Ուր և ամենևին թարմատար դնի ։

* Ո՛վ ոք լսելով զարժանի ողբոց բանքս՝ և ոչ բեկանի սիրտն ‖ . Նարեկ ։

* Ի՛ յընթանալս իմում՝ և կասիմ ... 'ի յաթոռս ծե-րոց բազմեալ՝ և խելայեղից կցորդիմ ‖ . Նար ։ Այլ պարտ է զգուշանալ յայսպիսի ոճոյ ։

Գիտելի է դարձեալ, զի շաղկապս Իսկ՝ երբեմն միայն

ու 'ի զարդ դնի 'ի բանս. որ, * Նոքին խոց է ամ յամի՝ աղբիւր բարեաց ‖. յաճախ:

* Զբոլոր խոց զայսոս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից ‖. խոր:

* Քանզի արդարև գիտակ խոց ես, թէ չար է արարն, և ընդաբոյս՝ չարութին մեր ‖. Նարեկ. տես յընդարձակն:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս Միջարկութեան:

'Ի վերայ միջարկութե եւս սակաւ ինչ ունիմք խօսել. զի սակաւ է և գործածութի սորա. և զորս եդաք յառաջին մասին, այն բաւական է:

Զսա ոմանք ընդ մակբայս դասեն. բայց ոչ երևի այս ուղիղ. զի մակբայն ցուցանէ զպարագայս գործողութեցն, իսկ միջարկութին 'ի միջի արկեալ 'ի բանս՝ յայտ առնէ զբնական կիրս հոգւոյն. որպիսի են կիրք ուրախութե, տրտմութե, ցաւոց, երկիւղի. եւն: Քանզի յասելն, * Ա՜ղէ, որչափ է որովայնամոլութե բանսարկութի ‖. (ոսկ.) միջարկութիւնս Աղէ՝ ոչ ցուցանէ զպարագայս գործողութեցն, այլ զկիրս հոգւոյն պատճառեալ 'ի զարմանալոյն 'ի վերայ բռնութե որովայնամոլութե: Նոյն յասելն, * Հա՛պա՝ որում օրինակաւ, զինչ կամիս առնել՝ կատարեա ‖, (եղիշէ.) միջարկութիւնս հապա՝ յայտ առնէ զկիրս եռանդեան հոգւոյն առ ընծայելութի իրիք: Նոյն յասելն, * Ա՜հ զիարդ միանգամ վշտիւ եհատ, և զեղկելի ձայնն արձակեաց ‖, (ագաթ.) ահն ցուցանէ զկիրս զարհուրանաց ընդ ահագին վշտին: Ըստ այսմ իմա և զայլոց:

Այլ գիտելի է նախ, զի միջարկութիք երբեմն յարին յանուանս նշանակիչս այնց՝ յորոց վերայ է կիրք հոգւոյն. որ, * Ո՜վ սքանչելեացս, զորս՝ առ որ տկարանայ բանութի թարգմանութեան ‖. լամբ:

* Ա՜ղէ անոխակալութե (քնի), չև ևս յանդիմանէր զմատնիչն. այլ՝ ատուեր արկեալ ծածկէր զնա ‖. ոսկ:

* Վա՜յ անխտացելումն յանխտէ, որ խոցի և ոչ ընդոստանու || . Շնորհ :

* Աւա՜ղ 'ի վերայ չարչարելոցդ և հնձելոցդ առ հասարակ հարցդ և եղբարցդ || . Մաշտոց :

Յայսպիսի բանս՝ գրեթէ միշտ զօրութիւն գտանի բայ ինչ. որ և երբեմն ներգործութիւն դնի. զոր օրինակ,

* Վա՜յ է նոցա, զի ըստ ճանապարհին կայենի գնացին || . Յուդայ :

* Զարմա՜նք տամ նմ, և երկրին, զի որ նա անցանիցէ || . Եղիշէ :

* Զարմա՜նք է մարդոյ, զոր ո՛չ յաղթահարեցին երկունք ագահութեան || . Ոսկ :

Գիտելի է երկրորդ, զի առ միջարկութիւս վերաբերին ըստ իմիք և կոչական անուանք. զի ըստ օրինակի միջարկութեանց իբր անկախ 'ի բայէն և 'ի խնդրոյ նր դնին 'ի բանս՝ յերկրորդ դէմս. որպ, * Ընկա՛լ ո՜վ Ամենայնիւ Փրկի- [illegible]՝ զփոքրիմաց բանս նուաստ մերոյ տեսութեանս || . Եփրեմ :

Իսկ զպէսպիսութիւն միջարկութեանց աստացաք յառաջին մասին հանդերձ օրինակօք : Այլ պարտ է և գիտել, զի գտանին և այլ բազում միջարկութիւնք, զորս ոչ եդաք 'ի նմին՝ վասն ոչ գոլոյ նց 'ի հասարակ գործածութեան. որպիսի են սոքին. ա ա, ա, ահ, հա, է, հէ, յէ, եհէ, էհ, ըհ, իհ, իհ թէ, ուհ, իշտ, տի, տիր, իցիւ, իցիւ թէ, օչ թէ, օչ եթէ, վայ վաղայ, բեք, ափսոս, և այլ այսպիսիք. զորս չէ արժան 'ի կիր առնուլ 'ի հասարակ շարագրութիս : Տես յընդարձակն :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Յաղագս համաձայնութեան մասանց բանի ։

Յանդէս արուեստի քերականութե̃ յայսմ մասին պայծառանայ . զի ՚ի սմին ա̃մ բառք առ միմեանս եկեալ պէսպէս համաձայնութք՝ կազմեն խընջոյս բանի . որով և միտք ուսանողաց տեսեալ զխայտալ բառից ընդ իրեարս յայս սեղան՝ զուարճանան և բերկրին . ևս և արժանօք վայելեն զպտուղս վաստակոց իւրեանց, զոր վաստակեցին յառաջին և յերկրորդ մասին ։ Իսկ յանձանձիրն ճաշակել՝ սկսանին պարարտանալ ոգիք նորա յանուշուէ̃ կազմաւորուե̃ բանից ։ Զայս սեղան՝ կամեցեալ կազմել բարեկ̃ց՝ ախորժական և ընտիր օրինակօք ունիմք կարգել . խօսեալ նախ համառօտիւ զհամաձայնութենէ մասանց բանի ՚ի հասարակի ։ Արդ՝

Համաձայնութի̃ք մասանց բանի են կապակցութի̃ք նոցա ընդ միմեանս՝ առ ՚ի կազմել զբան ։ Այս կապակցութի̃ք լինին ութ եղանակաւ՝ ըստ ութից մասանց բանի ։ Նախ՝ անուան ընդ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ընդ դերանուան, և ընդ անուան ։ Երրորդ՝ բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութե̃ ։ Չորրորդ՝ ընդունելութե̃ ընդ ընդունելութե̃, ընդ անուան և ընդ դերանուան ։ Հինգերորդ՝ նախադրութե̃ ընդ անուան, և ընդ այնս, որք իբր անուն հոլովին ։ Վեցերորդ՝ մակբայի ընդ բայի, և ընդ այնս, որք ունին զզօրութի̃ բայի ։ Եօթներորդ՝ միջարկութե̃ ընդ բանի ։ Ութերորդ՝ շաղկապի ընդ բանի, և ընդ մասանց նորա ։

Յայսոսիկ ութ համաձայնութի̃ս առաջի դնին ութ հարկաւոր գիտելիք ՚ի շարադրութե̃ . որք են սոքին . 1, բացայայտիչ և բացայայտեալ . 2, յատկացուցիչ և յատկացուցեալ . 3, ածական և գոյական . 4, յարաբերական և յարաբերեալ . 5, անուն բայի . 6, խնդիր .

Է, արգելիչ խնդրոյ . Ը, նախդիր ։ Որոց հանգամանք և պիտանութիւնք յայտնի լինին 'ի բացատրութենէ վերոյգրեալ ութից համաձայնութեանց ։

Այլ գիտելի է, զի զհամաձայնութե՟ նախադրութե՟, մակբայի, միջարկութե՟ և շաղկապի՝ զոր ինչ արժան էր գիտել, խօսեցաք յառաջին և յերկրորդ մասին . ուստի չունիմք ինչ խօսել զսոցանէ յայսմ մասին . այլ միայն զհամաձայնութե՟ անուան, դերանուան, բայի և ընդունելութե՟ . յորս բովանդակին ա՟մ զօրութիւնք արուեստի քերականութե՟ ։

Եւ նախ կամեցեալ խօսիլ զհամաձայնութե՟ անուան ը՟ անուան՝ գիտելի է, զի անուանք որովհետև կամ գոյական են, և կամ ածական, 'ի գալ սոցա առ միմեանս՝ հարկ է, զի կամ գոյականք ընդ գոյականաց յօդեսցին . կամ ածականք ընդ ածականաց . կամ գոյականք ընդ ածականաց . և կամ ածականք ընդ գոյականաց ։ Իսկ գոյական անուանք երրակի կարեն յօդիլ ը՟ գոյականաց . նախ՝ իբր բացայայտիչ . երկրորդ՝ իբր յատկացուցիչ . և երրորդ՝ իբր խնդիր . զորոց խօսեսցուք կարգաւ ։

ԳԼՈՒԽ Ա։

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց իբր բացայայտիչ . կամ

Յաղագս բացայայտչի ։

Յորժամ 'ի բանս կամիմք զգոյական անուն ինչ բացայայտել՝ թէ յինչ միտս դնի, և կամ փոխանակ որոյ նշանակէ, յարեմք 'ի նոյն զայլ միւս ևս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին՝ առանց շաղկապի . և զայն կոչեմք բացայայտիչ . որպէս երևի յայս բան . * Այսօր բուսաւ յԱննայէ մօրենին Մարիամ ‖ . շարակ ։ Ուր անունս Մարեամ՝ յարեալ յանունս մօրենի՝ լեալ է նմին բացայայտիչ . զի բացայայտէ, թէ մօրենին աստ առեալ լինի փոխանակ Մարիամու ։

Բայց գիտելի է նախ, զի բացայայտիչն երբեմն դնի և յառաջ քան զբացայայտեալն. որ, * Մովսէս հիմն մարգարէից ասաց, մի՛ ատեր զեղբայր քո ‖. Ծծէ. Ուր անունն Մովսէս՝ է բացայայտիչ բառիս՝ հիմն՝ մարգարէից։

Երբեմն և 'ի մէջ բացայայտչին և բացայայտելոյն անկանի բայ. որ, * Զկորուսեալ դրամն խնդրեաց զթագաւորական պատկերն ‖. Եփրեմ. Ուր անունն Թագաւորական պատկեր՝ է բացայայտիչ կորուսեալ դրամին, 'ի մէջ անկանելով բային՝ խնդրեաց։

Գիտելի է երկրորդ, զի երբեմն բազում եզական անուանք լինին բացայայտիչ միոյ յոգնականի. որ. * Որդիք սբյ Յուսիկանն Պապ և Աթանագինէս... մահ անձանց նիւթեցին ‖. յոհ. խոր. Ուր երկու եզական անուանքս Պապ և Աթանագինէս՝ են բացայայտիչ միոյ յոգնական անուանս՝ որդիք սբյ Յուսիկանն։

Գիտելի է երրորդ, զի թէպէտ բացայայտիչն առանց շաղկապի յարի 'ի բացայայտեալն՝ որպէս և եդաք 'ի վերոյ, բայց որովհետև բացայայտիչն է իբր մեկնութի բացայայտելոյն, ուր ուրեք կայ բացայայտիչ, անդ կայ զօրութք և մեկնական շաղկապ ինչ. որպէս յայս բան, * Զտիրական մարդն՝ զհոգին թշնամանեցին ‖, սարգ. կայ զօրութք մեկնական շաղկապդ՝ այսինքն. որպէս եթէ ասէր. զտիրական մարդն, այսինքն զհոգին թշնամանեցին։

Նաև զի յաճախ 'ի սոսա միշտ զօրութ կայ շաղկապ մեկնական, վասն այսորիկ բազում անգամ հանդերձ նովաւ դնի բացայայտիչն. զոր օրինակ, * Համբարձին պտոյտք գետոց. այսինքն՝ մեղաց յորդութիք ‖. Նար. Ուր անունն Մեղաց յորդութիք՝ հանդերձ շաղկապիւս այսինքն՝ լեալ է բացայայտիչ անուանս՝ պտոյտք գետոց։

Երբեմն և բայիւ հանդերձ դնի. որ. * Ընթացմունք այսուհետև 'ի սբ լերինսն, 'ի մարգարէսն ասեմ և յառաքեալսն ‖. Գող. Լամբ. Ուր անուանքս 'ի մարգարէսն և յառաքեալսն՝ հանդերձ բայիւս ասեմ՝ են բացայայտիչ անուանդ՝ 'ի լերինս։

Նաև դարձեալ երբեմն ամբողջ ինչ բան իբրև անուն ինչ՝ լինի բացայայտիչ անուան. զոր օրինակ, * Բ

օրէնք 'ի մի բան կատարին, 'ի սիրեսցեսն զընկեր քոյ իբրև զանձն քոյ || . ԳԱՂ . Այր բանս՝ ՍԻՐԵՍՑԵՍ ԶԸՆԿԵՐ ՔՈՅ իա̄ , է բացայայտիչ անուանս 'ի Դ ԲԱՆ :

Այլ այսպիսի բացայայտիչք համառակօրէն յանոռ– րոշ բանս դիպին . այսինքն յայնպիսիս , որք անե– րևոյթ բայիւ կազմին . զոր օրինակ , * Այս խաբէուն̃ մնաց ողորմելի է քան զա̃մ խաբէութ̃ի , համակ կար– գաւորութե̃ յանկարգութե̃ կալ , և լուսով 'ի խաւար || . ՍԱՐԳ : Այր բանս՝ ՀԱՄԱԿ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵ̃ ՅԱՆԿԱՐԳՈՒԹԵ̃ ԿԱԼ և այլն , է բացայայտիչ անուանդ՝ ԱՅՍ ԽԱԲԷՈՒԹԵ̃ :

Այս եղանակ բացայայտչի առաւելապէս 'ի գործ ածի 'ի վերայ ցուցական դերանուանցս՝ ԱՅՍ , ԱՅԴ , ԱՅՆ , ՍՈՅՆ , ԴՈՅՆ , ՆՈՅՆ . զոր օրինակ , * Ո՛չ իմ՛րդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գա– ռանցին || . ԽՈՐ : Այր բանս՝ ՓՈԽԱՆԱԿԵԼ ԶԻՄ և այլն՝ է բա– ցայայտիչ դերանուանս՝ ԱՅԴ :

Գիտելի է չորրորդ , զի ուրեք ուրեք յատուկ ան– ուանք առանց համաձայնելոյ ևս լինին բացայայտիչ հասարակ անուանց . իբր զի երբեմն դնին յուղղա– կան հոլովս (իբր ածական) . զոր օրինակ , * Հուննն յորդանան գետոյ երկիցս անգամ բաժանեցաւ || . ՏԾԷ : Այր յատուկ անունս ՅՈՐԴԱՆԱՆ՝ է բացայայտիչ ԳԵՏՈՅՆ յուղղական հոլովս (իբր ածական) .

Այլ երբեմն ևս յարելով 'ի բառդ ԱՆՈՒՆ՝ նովաւ համ– դերձ լինին իբրև մի բացայայտիչ հասարակ անուան . (և այս յաւէտ 'ի յատուկ անուանս մարդկան) . զր̄ , * Երէց մի պետրոս անուն || . ԵՂԻՇԷ : Այր ՊԵՏՐՈՍ ԱՆՈՒՆՆ է բացայայտիչ բառիս՝ ԵՐԷՑ Դ :

Գիտելի է հինգերորդ , զի 'ի բացայայտիչս նախ– դիրն իբր 'ի բազում դնի 'ի վերայ երկուցն ևս , այս– ինքն 'ի վերայ բացայայտելոյն և 'ի վերայ բացայայտ– չին . մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի . զր̄ , * Զփրկականն սաղաւարտ 'ի գլուխ եդեալ նշան խաչին || . ՇԱՐ : Այր նախդիրդ Զ՝ եդեալ է 'ի վե– րայ երկուցն ևս . այսինքն 'ի վերայ բացայայտելոյն՝ որ է բառս ՓՐԿԱԿԱՆՆ ՍԱՂԱՒԱՐՏ , և 'ի վերայ բացայայտ– չին՝ որ է բառս ՆՇԱՆ ԽԱՉԻՆ :

Թէպէտ երբեմն միայն 'ի վերայ նախընթացին

դնի․ որ, * Զառաւօտ խաղաղութեան քո սիրով 'ի մեզ ընկալցուք ‖․ Խորհրդ։ Ուր նախդիրդ զ՝ եդեալ է 'ի վերայ նախընթացին միայն, այս է առաւօտ խաղաղութեան․ որոյ լեալ է բացայայտիչ անունս քո։

'Ի վերոյգրեալ օրինակդ արժան է նկատել և զայս, զի բացայայտիչն և բացայայտեալն բազում ուրեք դնի հանդերձ յատկացուցչաւ՝ կամ ածականաւ․ ոչ երբեք և յայսմ․ * Շուրջ եղեն շունք բազումք՝ զինուորք պիղատոսի ‖․ Շար։ Ուր բացայայտիչն, այսինքն անունս զինուորք՝ եդեալ է հանդերձ յատկացուցչաւ, որ է բառս՝ պիղատոսի․ և բացայայտեալն, այսինքն անունս շունք՝ եդեալ է հանդերձ ածականաւ, որ է բառս՝ բազումք։

Գիտելի է վերջերորդ, զի երբեմն թէպէտ գոյական անուանք համաձայն դնին 'ի բանս առանց շաղկապի, բայց ոչ համարին բացայայտիչ միմեանց, այլ՝ իբր խնդիր բայի․ զոր օրինակ, * Երևեցաւ մովսէսի վառամամբ հրոյ 'ի մորենւոջ յանապատին ‖․ Շարակ։ Ուր երկոքին գոյական անուանքս 'ի մորենւոջ և յանապատին՝ թէպէտ առանց շաղկապի յարեալ են ընդ միմեանս համաձայն թուով և հոլովիւ, բայց ոչ են միմեանց բացայայտիչ․ այլ երկոքին են խնդիր բայիս՝ երևեցաւ։

ԳԼՈՒԽ Բ․

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց՝ իբր յատկացուցիչ․ կամ

Յաղագս յատկացուցչի։

'Ի բանս յորժամ կամիմք յայտ առնել, թէ արդեօք նշանակեալն իրիք գոյական անուան՝ որո՞ւմ յատկանայ, կամ որո՞յ է, դնեմք առ նմին զայլ գոյական անուն 'ի սեռական հոլովի, որ զնշանակութիւն միւս անուան իւրացուցանէ, կամ ինքեան յատկացուցանէ․ այսինքն ցուցանէ՝ թէ նշանակեալն այնր անուան՝ իւր է․ և զայն սեռական հոլով կոչեմք յատկացուցիչ․

զոր օրինակ . * Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն Քի ‖ . Գաղ ։ Որ գոյական անուանդ ընկերին՝ լեալ է յատկացուցիչ բեռին . զի խուրացուցանէ զբեռն . այսինքն ցուցանէ զբեռն՝ որ ընկերին է . և ոչ՝ որ նաւուն, կամ այլոյ իրիք ։ Այնպէս և գոյական անուանդ Քի՝ լեալ է յատկացուցիչ բառիս՝ օրէնսն . զի սեպհականէ ինքեան զնոյն . այսինքն յայտ առնէ՝ թէ Քի է այն օրէնք, և ոչ աշխարհի, կամ այլոյ ։

Այլ գիտելի է նախ, զի յատկացուցիչն բազում անգամ նախադասի յատկացուցելոյն . զոր օրինակ, * Որում շատ տուաւ գիտութեն իմաստ, շատ խնդրեսցի 'ի նմանէ առաքինութեն տեսակ ‖ . Խոսրով ։ Որ անուանս գիտութեն՝ լեալ է նախադաս յատկացուցիչ իմաստին . որպէս և անուանս առաքինութեն՝ տեսակին ։

Երբեմն 'ի մէջ յատկացուցչին և յատկացուցելոյն այլ մասն բանի անկանի . զոր օրինակ, * Յախտս թաւալի մեղաց ‖ . այսինքն յախտս մեղաց թաւալի . Նարեկ ։

Երբեմն և ամբողջ բան մտանէ 'ի միջի . զոր օրինակ, * Ո ի զմեղացն՝ որով ստուգ բամբասեցեր զարդարն 'ի մեծամեծաց կամ 'ի փոքունց, զդատաստանն դու ինքնին անձամբ քո բարձցես ‖ . այս դու ինքնին բարձցես զդատաստան մեղացն . Նարեկ ։

Գիտելի է երկրորդ, զի երբեմն միոյ անուան լինին բազում յատկացուցիչք . զր, * Մթերս՝ ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց ... բազմացոյց ‖ . Խոր ։ Որ անուանքս՝ ոսկւոյ, արծաթոյ, քարանց, և այլն, են յատկացուցիչ անուանս՝ մթերս ։

Երբեմն և բազում գոյական անուանք լինին միմեանց յատկացուցիչ . զր, * Տիպք կերպարանաց ճշմարիտ բանից զգեցեալ ունին զհոգւոյն իմաստս ‖ . Եփրեմ ։ Որ ճշմարիտ բանիցն է յատկացուցիչ կերպարանաց . և կերպարանացն է յատկացուցիչ անուանս՝ տիպք ։

Գիտելի է երրորդ, զի եթէ յատկացուցիչն կամ յատկացուցեալն իցէ նախադասեալ, նախդիրն համարակօրէն դնի միայն 'ի վերայ նախընթացին . զր, * Ողուսոյն ճառագայթ տպաւորէր 'ի յինքեան ‖ . Նար ։

Երբեմն և՝ այլ սակաւ ուրեք դնի միայն 'ի վերայ

յետադասին. որ, *Ծառայի առեր զկերպարան‖. յր. առեր զկերպարան ծառայի. Փլպ.

Երբեմն 'ի վերայ երկուցն ևս դնի, մանաւանդ եթէ անկեալ իցէ 'ի մէջ այլ մասն բանի. զոր օրինակ, *Օ մահու փարատեաց զերկիւղ‖. Շար. Աւր նախդիրն եդեալ է 'ի վերայ երկուց անուանցս՝ մահու և երկիւղ. որոց մինն է յատկացուցիչ, և միւսն յատկացուցեալ, որպէս եթէ ասէր. զերկիւղ մահուն փարատեաց.

Իսկ երբեմն դնի նախդիրն նաև 'ի վերայ այլոց բառից՝ որք յարին 'ի յատկացուցիչն կամ 'ի յատկացուցեալն, զիարդ և իցէ. որ, *Օ մեծին 'ի ծնունդս կանանց զկարապետին և զմկրտչին յովհաննու զառաքինութեն զհանդէս տօնելով այսօր 'ի ձայն հնչման, և այլն‖. Շար. Աւր փոխանակ միոյ նախդրի եդեալ կան բազումք. զորս հնար էր չդնել՝ և կարգել այսպէս. 'ի ձայն հնչման տօնելով այսօր զհանդէս առաքինութեն կարապետին և մկրտչին յովհաննու՝ մեծին 'ի ծնունդս կանանց.

Պարտ է նկատել և զայս, զի եթէ յատկացուցիչքն կամ յատկացուցեալքն իցեն բազում, նախդիրն իբր 'ի բազումս կրկնի նաև 'ի վերայ երկրորդ յետադասին. և երբեմն 'ի վերայ ամի. իսկ երբեմն ոչ կրկնի. որ, *Դուք զիմն արհամարհեալ զսիրոյն պատուիրան՝ զթշնամւոյն ձեր ընկալայք դարձեալ զխրատ, զատելութն և զբաժանումն‖. Շնորհ.

Երբեմն ևս զօրութք եդեալ զյատկացուցեալն՝ նախդիրն դնի 'ի վերայ յատկացուցչին, և այնու իբր զօրութք իմացեալ լինի յատկացուցեալն. զոր օրինակ, *Խնդրեն ուսանել, և զյովհաննու առաջի դնեն‖. այսինքն զօրինակ աղօթելոյն յովհաննու առաջի դնեն. Եզն.

Ըստ այսմ պատահի և 'ի դերանունանս. զոր օրինակ, *Պտուղ հոգւոյն զմերս ասէ առաքեալն (այսինքն զգործ մեր), որ է սէր, խաղաղութի. և ոչ թէ զնոցայն (այսինքն զգործ նոցա), որ էր հեռ, նախանձ, և այլն‖. Լամբր.

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց իբր խնդիր . կամ

Յաղագս խնդրոյ գոյականաց :

Գոյական անուանք բաց 'ի համաձայնելոյ ընդ գոյականաց իբր բացայայտիչ և իբր յատկացուցիչ, յարին 'ի նոսա նաև իբր խնդիր՝ համաձայն բնութեան նոցին : Վասն զի բազումք 'ի նոցանէ ունելով զհաղորդութիւն ընդ բայից՝ ընդ պահանջելոյ բնութեան բայիցն առնուն երբեմն զխնդիր 'ի պէսպէս հոլովս . որպիսի են բայանուանքն , որպէս այնք՝ որք 'ի բայից ածանցին . որպէս , Ճաշակումն , առումն , տեսութիւն , ժառանգութիւն , ստացուած , եւն . և կամ են իբր արմատք նոցին . որպէս , Պատճառ , քարոզ , վիշտ , բարբառ , և այլն :

Ոմանք յայսպիսի անուանց ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից , և կոչին ներգործականահաղորդք . ոմանք ընդ կրաւորականաց , և կոչին կրաւորականահաղորդք . և ոմանք ընդ չեզոքականաց , և կոչին չեզոքականահաղորդք : Ըստ այսմ իմա և զածական անուանց :

Այսպիսի անուանք երբեմն ունին զզօրութիւն դերբայի՝ մանաւանդ 'ի հոլովսն . և երբեմն ևս զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց 'ի ող և 'ի եալ : Աւստի և ըստ այնմ առնուն զխնդիր :

Այլ գիտելի է , զի 'ի մէջ սոցա ներգործականահաղորդքն և կրաւորականահաղորդքն առնուն զկրկնատեսակ խնդիր . մի՝ խնդիր սեռի , և մի ևս՝ խնդիր բնութեան . իսկ չեզոքականահաղորդքն՝ միայն զխնդիր բնութեան :

Գիտելի է ևս , զի այսպիսի գոյական անուանք ոչ միայն առնուն խնդիր զգոյական անուանս , այլ և 'ի տեղի նոցա զածականս , ևս և զդերանունս և զընդունելութիւնս , որպէս տեսցի զկնի :

Կանոն. Թ.

Անուանք ներգործականաձայնորդք՝ յորժամ իբր գերբայ վարին, առնուն խնդիր սեռի 'ի սեռական հոլովի. որպ., *Ճաշակման մեղաց՝ ճաշեցի զմահ ‖. ժամագիրք։ Ուր սեռականն հոլովս մեղաց՝ լեալ է խնդիր սեռի ճաշակման. որպ. եթէ ասէր. ճաշակելով զմեղս՝ ճաշեցի զմահ։

Նոյնպէս է եթէ այսպիսի անուանք ունիցին զզօրութիւն բառից յանգելոց 'ի օղ, և 'ի իչ. որպ., *Տուիչ կենաց ած, և ըղխումն ողորմութեան ‖. այսինքն ըղխօղ ողորմութեան. շար։

Երբեմն և առնուն զխնդիր հայցական փոխանակ սեռականի. որպ., *Կենդանացուցեր զնա՝ հեղմամբ քո 'ի նա զհոգի բանական ‖. 'ի ժամագրէ։ Ուր հայցական հոլովդ զհոգի բանական՝ լեալ է խնդիր սեռի հեղման. որպէս թէ ասէր. կենդանացուցեր զնա փչելովդ զհոգի բանական։

Բայց եթէ համբակք և նորավարժք չիցեն բաւական որոշելոյ զսեռական խնդիրն 'ի յատկացուցչէ, մարթ է նոցա հասու լինել այսու. զի եթէ սեռական հոլովն կարիցէ փոխիլ 'ի հայցական՝ է խնդիր. որպէս տեսանի յառաջի եդեալ օրինակդ յասելն. ճաշակելով զմեղս. և ևս ողորմութեան ըղխօղ։ Իսկ եթէ ոչ կարիցէ փոխիլ 'ի հայցական, ոչ է խնդիր, այլ յատկացուցիչ և կամ այլ ինչ։

Կանոն. Ժ.

Անուանք ներգործականաձայնորդք բաց 'ի սեռական և 'ի հայցական խնդրոց, և կամ առանց նոցա ևս, առնուն երբեմն յընտիր շարադրութիւնս զխնդիր բնութեան յայնպիսի հոլով, զորպիսի պահանջեն բայքն, ըստ որոց ունին զհաղորդութիւն։

Յուղղականն, (թէպէտ և 'ի սակաւս.) որպ., *Որ պատուանման պետրոսի զքեզ որդի հօր այ՝ հայր 'ի յամպոյն վկայեալ այսօր ‖. շար։ Ուր անուանս որդի՝ է ուղղական խնդիր պատուանման. որպէս թէ ասէր. զդաւա-

նելն պետրոսի զքեզ որդի հօր ա̃յ՝ հայրն ա̃ծ վկայեաց այսօր 'ի յամպոյն ։

'Ի վերջահոլով տրականն. որ, * Լուայք զո̃ն անսուտ ձեզ խոստմանն ‖. Լամբրոն ։ Ուր յետին՝ է տրական խնդիր բառիդ խոստմանն ։

'Ի նախդրիւ տրականն. որ, * Տուր մեզ զխաղաղութիւն քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց՝ ժամագրէ քո 'ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո սր̃ ‖. ժամագիրք ։ Ուր բառդ 'ի նոսա՝ է նախդրիւ տրական խնդիր ժամագրին. որպէս թէ ասէր. փչելովդ քո 'ի նոսա զհոգիդ ։

'Ի բացառականն. զո՛ր օրինակ, * Առաւել քան զարարչութիւն յոչնչէ զաշխարհս՝ մեծագոյն փրկութիւն զվերջինն իմանալիր ‖. Եղիշէ ։ Ուր յոչնչէն՝ է բացառական խնդիր արարչութե. որպէս թէ ասէր. առաւել մեծագոյն փրկութիւն իմանալիր զվերջինն՝ քան զարարչագործել զաշխարհս յոչնչէ ։

'Ի պատմականն. որ, * Վերագոյն է այս զրպարտութիւն ասացեալ զմենջ՝ քան զհեթանոսականացն առասպելեալ ա̃ծաբանութիւն ‖. այսինքն ասելն զմենջ զայս զրպարտութիւն՝ վերագոյն է, Ն̃Ա. Շնորհ ։

'Ի գործիականն. զո՛ր օրինակ, * Զեկին ինչ 'ի միտ առնլոյ ի̃ հոգւոյն սր̃յ կանխասացութեն բերանով դաւթի ‖. այսինքն ի̃ ասելոյ կանխաւ զայս հոգւոյն սր̃յ բերանով դաւթի. Նանայ ։

'Ի պարառականն. որ, * Օրինաւոր լուացմունք քահանայիցն, և արտաքնոյն զժողովրդեամբն՝ նշանակէին զհոգևոր մկրտութիւնս ‖. յ̃ո սրսկելն զջուրս և զարիւնս զժողովրդեամբն նշանակէին, Ն̃Ա. Գէորգ ։

'Ի ներգոյականն զո՛ր օրինակ, * Որ 'ի սկզբան օրէնադրէր պահոցն 'ի դրախտին ‖. Շար ։ Ուր 'ի դրախտին է խնդիր ընութեն օրէնադրէին. որ ասա փոխանակ գոյականի դնի. իսկ խնդիր սեռին 'ի բարդութե անեանի. այլ պատճառ է յատկացուցիչ. որպէս թէ ասէր. որ 'ի սկզբան եդիր զօրէնս պահոց 'ի դրախտին ։

Նախադրութե. զո՛ր օրինակ, * Որ պատկերաց ի̃ պատկերի քո տէր՝ պատուեցեր զմեզ ‖. այսինքն ստեղծանելով ըստ պատկերի քո. Շար ։

Իսկ անուանք երկրորդականացեալք առնուն զբացառական իբր զխնդիր սեռի. զոր օրինակ, * Օ դալարոտն 'ի տուանց մեղացն գիշեր կոչէ ||. Լամբ. Ուր բացառական հոլովս՝ 'ի տուանց մեղացն է խնդիր սեռի կրաւորականահաղորդ բայանուանս դալարոտն. Նոյն զօրինն խնդիրն առնուն ընդ ներգործականաց իւրեանց.

Կանոն. Բ.

Անուանք չեզոքականահաղորդք յայնպիսի հոլով առնուն խնդիր յորպիսի պահանջէն բայքն՝ որոց հաղորդին. 'Ի վերջահոլով տրականն. դբ, * Անկանելի վարձուցն հատուցման՝ ընդարձակէ զոգիսն 'ի գործս բարութե ||. Եղ. Ուր բառս հատուցման վարձուցն՝ է տրական խնդիր անկանելին. որպէս թէ ասէր. անկանելին հատուցման վարձուց՝ ընդարձակէ զոգիսն 'ի բարեգործութիս.

'Ի նախդրիւ տրականն. դբ, * Ո՞ այլ զտապանակն այ̅ արար գերի այլազգեաց, թէ ոչ՝ քահանայիցն առ 'ի պաշտօն իւրեանց հեղգութիւն ||. Լամբ. Ուր բառս առ 'ի պաշտօն իւրեանց՝ է խնդիր հեղգութեն. որպէս թէ ասէր. ո՞ այլ զտապանակն այ̅ գերի արար այլազգեաց, եթէ ոչ՝ հեղգանալն քահանայից առ պաշտօն իւրեանց.

'Ի բացառականն. դբ, * Հասանէ նմա կէտ վճարման 'ի կենացս ||. յոհ. ոսկ. Ուր 'ի կենացս է բացառական խնդիր վճարման. որպէս թէ ասէր. հասանէ նմա կէտ վճարելոյ 'ի կենաց.

'Ի պատմականն (այլ 'ի սակաւս.) դբ, * Յաւիտեան է մեր զնմանէ գոհութիւն, որպէս և շնորհն. Լամբ ||. Ուր զնմանէն է պատմական խնդիր գոհութե.

'Ի պարառականն (այլ 'ի կարի սակաւս.) զոր օրինակ, * Խնդաւորէին մեզ 'ի ժամանակէ անտի յաջողածոյն ադամայ զպատուիրանաւն ||. Ծծբ. Ուր պարառական հոլովս զպատուիրանաւն՝ է խնդիր յաջողածոյն.

'Ի ներգոյականն. դբ, * Խոստացաւ զերանութի և հանգիստ յարքայութե իւրում ||. Ծծբ. Ուր բառս յարքայութեն՝ է ներգոյական խնդիր հանգստեան.

'Ի ձեռն նախադրութե. դբ, * Որդի հօր ասելով՝

շինութենակցութիւն ընդ հօր յայտ առնէ ։ Թ. խորոշ ։ Որ ընդ հօրն՝ է նախադրութ խնդիր շինութենակցութե ։ Ըստ այսմ է և յայլ բազումս ։

Նաեւ գիտելի է, զի ոմանք յայսպիսի անուանց երբեմն համդերձ բուն խնդրով իւրեանց առնուն նաև զայլ խնդիր . որպէս, * Որ առաքեցեր նախընթաց քում գալստան՝ որ զմարգարէսն աւետարանել տիեզերաց զէջման քո ՚ի հայրական ծոցոյ ՚ի փրկութի տիեզերաց Թ. շար ։ Որ անունս էջման առեալ է զերկուս խնդիրս՝ զբացառական, այս է ՚ի հայրական ծոցոյ, և զնախդրիւտրական, այս է ՚ի փրկութեան տիեզերաց ։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց. և

Յաղագս խնդրոյ ածականաց ։

Համաձայնութի գոյականաց ը ածականաց ոչ այլ ինչ է՝ բայց եթէ լինելն գոյականաց՝ խնդիր ածականաց . զի որպէս գոյական անուանք ունելով զհաղորդութի ընդ բայից՝ առնուն զխնդիր ՚ի պէսպէս հոլովս, սոյնպէս և բազումք յածականաց, վասն ունելոյ զհաղորդութի ինչ կամ զվերաբերութի առ բայս՝ առնուն զխնդիր ըստ կանոնաց խնդրառութե գոյականացն . որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ ։

Նաեւ գիտելի է, զի որպէս ասացաք զգոյականաց, սոյնպէս և ածականք ոչ միայն զգոյական անուանս առնուն իւրեանց խնդիր, այլ և ՚ի տեղի նց երբեմն զածականս իբր զգոյականս, և զդերանուանս, և զդերբայս, եւս և զընդունելութիս, զորոց զօրինակն կարես տեսանել զկնի ։

Կան. Ա ։

Ածականք ներգործականագոյք ունելով զզօրութի ընդունելութեանց յանգելոց ՚ի ող՝ առնուն զխնդիր սեռի ՚ի սեռական հոլովս . որպէս, * Եկայք օրհնեալք հօր

խմոյ՝ ժառանգորդք երկնից խորանաց ||. ՚ի շարականս. Այլ սեռական հոլովս խորանաց երկնից է խնդիր սեռի անուանս ժառանգորդ ։

Երբեմն ունիմք յայսպիսի ածականաց, այլ սակաւք յոյժ՝ առնուն զհայցական փոխանակ սեռականի. որ, * Պատիչք չարեաց, զծնօղս անարգօղ ||. հարքն.

Այլ գիտելի է, զի բարդ ածականք բազում անգամ ՚ի բարդութենէ ունելով զխնդիր սեռին առնուն միայն զխնդիր բնութեան յայլ հոլովս. որ, * Հրամանահան յընդհանուր եկեղեցիս քո ||. որ հանող զհրաման յընդհանուր եկեղեցիս քո. ագաթ.

Կանոն. Է.

Ածականք ներգործականահաղորդք բաց ՚ի խնդրոյ սեռի առնուն երբեմն նաեւ զխնդիր բնութեան յայնպիսի հոլով՝ յորպիսի պահանջեն բայքն՝ ընդ որոց ունին զհաղորդութիւն. որ, * Գործակից է առն իւրում ամ բարեաց ||. առակ. Այլ բառս ամ բարեաց է խնդիր սեռի գործակցին. իսկ բառս առն իւրում է խնդիր բնութեան ՚ի տրական հոլովի. որպէս թէ ասէր գործօղ է ամ բարեաց ընդ առն իւրում ։

* ՚Ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան ||. նար. Այլ ՚ի հեղձմանէ ալեացն է բացառական խնդիր պահապանին. որոյ խնդիր սեռին գնի զօրութբ. որպէս թէ ասէր. պահպանօղ մարդկան ՚ի հեղձմանէ ալեաց կենցաղոյս ։

* Ժառանգաւոր հին օրինացն արդարութեան ընդ մարգարէից ||. շար. Այլ բառս արդարութեան հին օրինաց՝ է խնդիր սեռի ժառանգաւորին. իսկ բառս ընդ մարգարէից՝ է խնդիր բնութեան նախադրութեամբս ընդ ։

Երբեմն եւս առանց խնդրոյ սեռի. որ, * Աւետաւոր հայոց մեծաց ||. շար. Այլ հայոց մեծացն է տրական խնդիր աւետաւորին. իսկ խնդիր սեռին զօրութբ գնի. որպէս թէ ասացեալ էր. աւետօղ բարեաց առ հայս ։

Կանոն . Է .

Ածականք հրամայականահաղորդք ունելով զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց 'ի ելի կամ 'ի եալ, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովի . զոր օրինակ,
* Եղէգն շարժուն 'ի հողմոյ ‖ . Ղուկ ։ Ուր բառդ 'ի հողմոյ՝ է խնդիր շարժունին . ո̅պ թէ ասէր . շարժեալ 'ի հողմոյ ։
* Յերևելի զգայութեցս անճառնելի՝ առնել հաղորդս ‖ . Շար ։ Ուր բառս յերևելի զգայութեցս՝ է խնդիր բառիս անճառնելի . որպէս թէ ասէր . առնել հաղորդ այնց, որք ոչ ճառէին յերևելի զգայութեց ։ Իսկ զխնդիր բնութեն առնուն ըստ ներգործականացն ։

Կանոն . Ը .

Ածականք չէզոքահաղորդք հասարակօրէն զայնպիսի խնդիր առնուն զորպիսի պահանջեն բայքն՝ ը̅ որոց ունին զհաղորդութիւն ։

Ոմանք առնուն զվերջահոլով տրական . դ̅ր , * Գովութեն արժանաւոր այն բժիշկ է, որ զանյուսացեալ հիւանդն յանձն առնու բժշկել ‖ . Աարգ ։

Ոմանք զնախդրիւ տրական . դ̅ր , * Բնութբ մարդ-սիրող է բանի, որպէս պատուեցաւ յարարչէն, և արտաբերել 'ի խօսս ‖ . Աարգ ։

Ոմանք զբացառական . դ̅ր , * Սահն աղտ 'ի մահուանէ՝ արձակէ զմահու ըմբռնեալսն ‖ . Նաճբրէ ։

Ոմանք՝ (այլ սակաւք) զպատմական . դ̅ր , * Խանձրամիտք էին փարիսեցիքն, և անփոյթք զհոգեկան խընդրոյն ‖ . Նանայ ։

Ոմանք զգործիական . դ̅ր , * Առողջքն անդամօք անկարօտք են բժշկութեն ‖ . Նար ։

Ոմանք զներգոյական . զոր օրինակ , * Բազմաջան 'ի հաստատութեն ‖ . Նար ։

Ոմանք 'ի ձեռն նախադրութե . դ̅ր , * Խողեալ էին չարք խառն ընդ բարիս յաշխարհի աստ ‖ . Տծէ ։

Այլ աստ գիտելի է, զի ածականք չէզոքականա-

հաղորդք երբեմն բաց 'ի բուն խնդրոյն առնուն նաև զայլ խնդիր. որ, * Երկնայնոցն 'ի յերկրի հաղորդ մրցնութիւն . . . որ գտանիցէ || Շար. Աստ երկնայնոցն է բուն տրական խնդիր հաղորդին. իսկ մրցնութեն և 'ի յերկրին՝ են երկրորդական և պատահական խնդիրք նորա:

* Նա ինձէն անձամբ իմով ընծայեցաւ 'ի մահ || Նար. Աստ 'ի մահ է բուն խնդիր ընծայեցաւին. իսկ բառս անձամբ իմով՝ է երկրորդական խնդիր նորուն:

* Ի հաւատս բանից և 'ի պատմութիւն խօսից հաւատարիմ իրերաց. և 'ի հաւատն՝ որ առ ած, միմեանց անհաւանք || Լամբ. Աստ իրերաց է բուն տրական խնդիր հաւատարմին. իսկ 'ի հաւատս բանից ևն՝ երկրորդական խնդիր նորին: Նոյնպէս և միմեանց է բուն տրական խնդիր անհաւանին. իսկ 'ի հաւատն է երկրորդական խնդիր նորա:

Գիտելի է դարձեալ, զի ածական անուանք բաղադրեալք մասնկամբս ան, թէպէտ ըստ բնութեան իւրեանց զայլ խնդիր պահանջեն, բայց իբր 'ի բաղումն առնուն զբացառական. զոր օրինակ, * Պահանայք ... անպարտք 'ի հաւատոց || Նարեկ.

Նաև ևս գիտելի է, զի ածական անուանք ինչ՝ որք նշանակեն զհայրենիս, հասարակօրէն առնուն զխնդիր 'ի գործիական կամ 'ի բացառական հոլովս. զոր օրինակ: * Սորբակէս՝ գաւառաւ մեղացի ... յինքն յանկուցանէ զպարոյր || Խոր. Աստ գաւառաւն է գործիական խնդիր բառիս մեղացի:

* Ակիւղաս հրեայ զօրն անուն ակիւղաս յազգէ պոնտացի || Կործ. Աստ յազգէն է բացառական խնդիր բառիս պոնտացի:

Վասն խնդրոց ածականաց յանգելոց 'ի իչ.

Յայլսի ածականք ըղնեն 'ի ներգործական բայից. և առնուն զխնդիր 'ի սեռական հոլովս իբր զխնդիր սեռի. զոր օրինակ, * Ի գերեզմանս իջեր խափանիչ մահու || Շար. Աստ սեռական հոլովդ մահու՝ լեալ է խնդիր սեռի ածական անուանս խափանիչ: Նաև այս յաճախեալ է 'ի գիրս:

Բայց երբեմն փոխանակ սեռականի առնուն զհայցական ․ զոր օրինակ, * Նստուն մեզ զգեղմն ընդունելոյ զցօղն երկնային ‖ ․ շար ․ Ուր հայցական հոլովդ ցօղն երկնային՝ է խնդիր բառիս ընդունելոյ, որ լեալ է ածական գեղմանն ․ Այսպիսի ածականք ուրեք ուրեք հանդերձ սեռական կամ հայցական խնդրով առնուն նաև զայլ խնդիր՝ յայլ հոլովս իբր զխնդիր բնութե ․

'Ի վերջահոլով տրականն ․ զոր օրինակ, * Ոչ մատնեցեր ամօթոյ՝ ապաւինելոցն զքեզ տանջանաց մահու ‖ ․ Նարեկ ․

'Ի նախդրիւ տրականն ․ զոր օրինակ, * Համոզեալ 'ի խաղաղութեն մրրկածուփ շարժմանց կացուցար ‖ ․ Նարեկ ․

'Ի բացառականն ․ զոր օրինակ, * 'Ի նմա հանգեաւ ... տապանն ազատեցաւ 'ի հոսանաց մեղաց հայաստան ազանց ‖ ․ այսինքն որ ապրեցոյցն զազինս հայաստանեայց 'ի հոսանաց մեղաց ․ շար ․

'Ի գործիականն ․ զոր օրինակ, * Բազդրաձայն հնչմամբ տարածեցեալ մոլորեալ հօտին ‖ ․ շար ․

'Ի ներգոյականն, և այն՝ իբր ըստ պատահման ․ զոր օրինակ ․ * Յահաւորն ատենի յայտնեալ իրաւամբք զմատակարարութին որ առ մեզ ‖ ․ Նար ․

'Ի ձեռն նախադրութե ․ զոր օրինակ ․ * Աղօթքն է ... զմծ ը մարդկան հաղորդեցուցիչ ․ ‖ արք ․ ա ․ դեր ․ է ․

Գտանին և քանի մի ածականք սակաւք յոյժ այսպիսի վերջաւորութ ըղխեալք 'ի չեզոքական բայից ․ ոմն են բառքս, բնակիչ ․ կառավիչ, և ողորմածիչ ․ որք երբեմն առնուն զխնդիր ը բայիցն, և երբեմն փոխանակ նոցին զսեռական ․ զոր օրինակ ․ * Բնակիչք 'ի խաւարի տեսաք զլոյս գիտութեան եկեալ հասեալ ‖ ․ խորհրդ ․

* Ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց ‖ ․ եղիշէ ․

Ա. Խնդրոյ ածական անուանց բաղդատականաց ․

Սոքա չորեքկին առնուն զխնդիր ․ Երբեմն զսեռական, կմ զտրական ․ որպ, Վեհագոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից ‖ ․ շար ․

Ուր բառքդ ներգործելոց և կրաւորելոց են խնդիր են-թակային բառին ։

Երբեմն զբացառական. որ, Ո դամանտոյն 'ի կեն-դանեաց զօձն՝ դնէ օրինակ իշխանին մահու ‖. եփն ։

Ուր բացառական հոլովս 'ի ներգործութեան՝ է խնդիր ներգործականին ։

Երբեմն զներգոյական. որ, * Ոտանուցար ենթակայ 'ի միրօղս իմաստուն ‖. շնորհ ։ Ուր ներգոյական հո-լովդ 'ի ներքոյ իմաստուն է խնդիր ենթակայականին ։

Երբեմն ևս՝ և բազում անգամ նախադրութեամբ՝ ... և ուրեք ուրեք ևս նախադրութեամբս՝ 'ի վէջ. որ,

* Ոչ եւ քան զգազանս խորագոյն իցէ՝ քան զոչխարսն հանդարտագոյն լինիցի ‖. շնորհ ։

* Ինթեռնուլ արժանաւորեցաք (զբանս առն) ... 'ի մէջ իմաստնոց եմաստնագոյնի ‖. խոր.

Գիտելի է ևս, զի բազումք յածականաց ուրեք ուրեք իբր բաղդատական վարելով ըստ բաղդատական անուանց առնուն զխնդիր. զո՛ր օրինակ, * Ոսագա-ւորաց ենթակայ, որ ոչ ցուցաւ 'ի դարս ‖. որ Թագաւո-րաց ենթակայագոյն. նար ։

* Գիտեմ առէ մի՛ վէճ գիւցազանց, զի գիտեալ գայ 'ի վերայ քո բէլ ‖. այսինքն մեծագոյնդ գիւցա-զանց. խոր ։

* Խաբէն շղարշանդամ 'ի մարդկանէ ‖. եփնառ ։

* Տարրակ ... փաղցրաքոս 'ի հաւս վայրենիս ‖. նեարէղ ։

* Յիմար է՝ որ ըստ ենթա ք զինքն հակառակէ ‖. պետրոյեց ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց ։

Ածական անուանք յարելով 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութիւն իրացն, զորս գոյականքն նշանա-կեն. որպէս յայտ է 'ի գրելոց յերկրորդ մասին. գլ. Ե ։ Եւ քանզի պէսպէս յարին սոքա 'ի նոսա, պէս-պէս համաձայնին ըստ նոսին. որոց վասն գիտաք զվեց կանոնս ։

Կանոն. Զ.

Ածական անուանք յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. որ, * Որդւոյ նենգաւորի բարի ինչ մի եղիցի ‖. առակ։ Ահա 'ի սմին ածական անունդ նենգաւորի՝ համաձայնեալ է ընդ գոյականի իւրում, այսինքն ընդ բառիս որդւոյ՝ թուով և հոլովիւ. զի որպէս որդւոյն է եզական, և վերջահոլով տրական, սոյնպէս և նենգաւորին։

Սոյնպէս և եթէ բազումք իցեն յետադաս ածականքն, պարտին համաձայնիլ ընդ գոյականին թուով և հոլովիւ. զոր օրինակ, * Նոցա՝ եթէ ուստի՞ իւր խոնարհեցաւ և էջ վասն մարդկան միջնորդաց և անարծանից ‖. սարգ։

Այլ գիտելի է նախ, զի սակաւ ուրեք յետադաս ածականք 'ի նախդրիւ հոլովս՝ և յուղղականս յոգնական անուանց դնին երբեմն անհամաձայն. որ, * Զսպասս անապական 'ի քէն ընկալեալ ‖. փոխանակ դնելոյ, զսպասս անապականս. շար։

Ուրեք ուրեք ևս յերգս և յոտանաւորս նաև 'ի վերջահոլովսն վասն յարմար ձևացուցանելոյ զոտս բանիցն. զոր օրինակ, * Ետես Մովսէս զօրինակ կուսին 'ի սինա լցեալ լուսովն անմատոյց ‖. այսինքն անմատոյց լուսով. շար։

Դարձեալ գիտելի է, զի ածականք յանգեալք 'ի եայ և եան իբր անհոլով գոլով, 'ի յետադասիլն՝ հասարակօրէն ոչ համաձայնին ընդ գոյականացն. որ, * Բարինս արձակեցէր պարսիւս այսու փայտեայ ընդդէմ գողիադու ‖. նար։

Ըստ այսմ է և 'ի յազգային և 'ի տոհմային ածականս. զոր օրինակ,

* Ցունկք տենչալիք տանս Բորգոմեան ‖. Երզնկացի։

Կանոն Է.

Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց, ոչ համաձայնին ընդ նոսա ոչ թուով և ոչ հոլո-

վիւ. այլ՝ դնին պարզապէս, որպէս էին յուղղական հոլովն. որպէս, * Անապական պսակաց արժանի եղեն ||. Շար: Ահա 'ի սմին ածական անունս անապական՝ նախադասեալ գոյական անուանս պսակաց՝ ոչ լուիք համաձայնեալ է ընդ նմա. զի պսակացն է տրական հոլով, և յոգնակի. իսկ անապականն է ուղղական, և եզակի:

Սոյնպէս է և՝ յորժամ նախադաս ածականքն իցեն բազում. որպէս, * Աներկբայ և անպղտոր ոգւով դրոշմեսցուք զմեզ ||. Խոսրով: Ուր ածականքս աներկբայ և անպղտոր՝ առանց համաձայնութեան նախադասին գոյական անուանս ոգւոյ:

Այլ գիտելի է նախ, զի ածականք միավանկք նաև երկավանկք՝ որպէսի են, մի. այլ. մեծ. փոքր. նոր. հին. ողջ. ամ. յաւիտեան. բազում. բոլոր. ևն. բազում անգամ 'ի նախադասիլն համաձայնին ընդ գոյականաց թուով և հոլովիւ, զոր օրինակ:

* Մեծաւ հոգւով զօրացեալքս զկարգ 'ի միմեանց խորշիմք ||. Լամբրոնացի. 'ի Ճառն Կարգ. Եկեղ.:
* Յամենայն պատուիրանս Տն կամաւոր գործելն է գովութե արժանաւոր, և մեծաց վարձուց առիթ ||. Սարգ.:
* Բոլորով սրտիւ եկի առ քեզ աստ ||. Վարդ.:

Սոքա ուրեք ուրեք միայն հոլովիւ համաձայնին անեզական անուանց, և ոչ թուով. զոր օրինակ,

* Տեսե՛ր զառհաւատչեայն Տեառն շնորհացս, եթէ ուստի՛ սկսաւ, և ու՛ր կատարեցաւ ||. Սարգիս:
* Մեծի աւետեաց եղև միջնորդ (Գաբրիէլ) ||. Եփրեմ:
* Զմեզ նորոգել 'ի հնոյ մեղաց ||. Շար:

Ուրեք ուրեք նաև յոգնավանկ ածականք՝ մնան անդ յանդեալքն 'ի գոյն՝ համաձայնութբ նախադասին գոյականաց՝ ընդ պահանջելոյ վայելչութեան բանին այլ 'ի սակաւս. որպէս, * Ոմանք՝ չարելագունից սովորութեց ջանան խափանումն 'ի վերայ բերել ||. Յոհն. Իմաստ:

Կանոն. Գ:

Եթէ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականին անկցի բայ՝ կամ ընդունելութի, ածականն

իբր 'ի բազումս համաձայնի ը̅ գոյականին թուով և հոլովիւ . զոր օրինակ , * Առաքելականացն աշակերտեցան բանից ‖ . Գրէգոր Նար. ։ Իսկ ածականս առաքելականացն՝ համաձայնեալ է թուով և հոլովիւ գոյական անուանս բանից՝ վասն ընդ մէջ անկանելոյ բայիս աշակերտեցան ։

Այլ երբեմն առանց համաձայնութե̅ դնի . զոր օրինակ , * Համաչործան կարօտանամ մեքենայից ‖ . Լամբ ։

Կանոն . Դ ։

Եթէ նախադաս ածականն ունիցի զգիմորոշական տառ, երբեմն դնի համաձայն յետադաս գոյականին, և երբեմն անհամաձայն , ը̅ պահանջելոյ բառիցն , և ը̅ վայելչութե̅ բանին . զոր օրինակ , * Ոչ յօժարութի̅ ունկնդիր լինել փառաւորացն բանից . այլ՝ օգտակարացն ‖ . Նարեկ ։ * Արբուցուք ծարաւեաց չափաւորապէս 'ի ծայրածաւալն ծովէ գոյզն ինչ ճաշակ ‖ . Նարեկ ։

Կանոն . Ե ։

Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում յատուկ անուանք եզականք , յետադաս ածականքն թէ մի իցեն՝ և թէ բազում , պարտին լինել ըստ թուոյն յոգնական , և ը̅ հոլովին համաձայն . զ̅ր , * Խորանօք բնակեցաւ սահակաւ և յակոբաւ համդերձ ժառանգակցօք նոցին աւետեաց ‖ . այսինքն համդերձ սահակաւ և յակոբաւ ժառանգակցօք այնց աւետեաց . Եբր՝

Այնպէս և 'ի նախադասսն եթէ ունիցին զգիմորոշական տառ , համաձայնութե̅ դնին . զոր օրինակ , * Դու ա̅ծ ոչ եդեր ապաշխարութի̅ վասն արդարոցն աբրահամու , իսահակայ և յակոբայ , որք ոչ մեղան քեզ ‖ . Ժամագիրք ։

Կանոն . Զ ։

Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականի , նախդիրն դնի 'ի վերայ ածականին . զոր օրինակ ,

* Աղաչեմ զամենեսեան զարթնուլ 'ի մահահրաւէր թմբրութենէ կենցաղոյս ‖. Շնորհալի ։ Ուր նախդիրն բացառական հոլովոյս 'ի Ըմբրոբէ՝ եդեալ է միայն 'ի վերայ նախադաս ածականի նորա, այսինքն 'ի վերայ մահահրաւէրին ։

Նոյն ևս եթէ նախադաս ածականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, զնախդիրն պարտ է դնել 'ի վերայ ամ̃ ածականաց. զոր օրինակ, * Օանօ-դուտ և չխասսակար բանս ոչ տալ խօսել լեզուին, այլ լռել ‖. Շնորհ ։

Իսկ եթէ յառաջ քան զշաղկապաւոր ածականսն կայցէ բառ ինչ, որպէս դերանուն, կամ միջական անուն, ևն̃, յորոց վերայ իցէ եդեալ նախդիրն, ոչ ևս է հարկ միշտ կրկնել զայն 'ի վերայ յաջորդ ածականաց զոր օրինակ, * Ուրեմն 'ի ձեռոց սատայօդ և չարաթոյն բանից մոլորեալ են 'ի պանրոյ հայոց զգուշանալ ‖. Շնորհ ։

* Յսմ աղտաղտուկ և ալէկոծ փորձանաց մեկուսի բը-
նակեալ ‖. Լամբ ։

* Վայրենացեալ յառաջին ընտանի և խաղաղ բնութէն՝
կոհակս լեռնաձևս յարուցանէ ‖. Սարգ ։

* Որոց պատուիրեմք յայսմհետէ 'ի բաց կալ յայդպի-
սի աներկիւղ և չար սովորութենէց ‖. Շնորհ ։

Այլ եթէ նախընթաց ածականքն իցեն առանց շաղկապի, նախդիրն իբր 'ի բազումս դնի 'ի վերայ առաջնոյն միայն. որպ, * Հրաժարեցոյց 'ի հեթանոսական անկարգ շատխօսութէն ‖. Եզնիկ ։

* Բժշկեաց զհրատապ ջերմնական տոչորումն մղձկեալ
սրտիս ‖. Նարեկացի ։

* Իբրև բազմութի զօրաց զմեծանիստ լայնատարած
դաշտովքն իջանեն (մարախք) ‖. Վեցօր ։

Իսկ եթէ յետադաս գոյականքն իցեն բազումք յօդեալք շաղկապաւս և, նախդիրն դնի ոչ միայն 'ի վերայ ածականին, այլ և 'ի վերայ երկրորդ գոյականին, և հետագայից նորա. որպ, * Օ պատշաճ կարծիս և զգիտութի վասն նորա ոչ ունէին ‖. Եզնիկ ։

* Օ եկամուտ չարիմն և զամբարտաւանութէն մեր-
կանցին ‖. Եզնիկ ։

* Զհրեշտակական կարգս և զվարս յաշխարհի յանձին առեալ բերեն (կուսանք) ‖ . խոր . ընծայ ։

Զայս վեցերորդ կանոն մերձեցո՛ նաև առ նախադաս գոյականս. իբր զի եթէ գոյականն նախադասեցի ածականին, զնախդիրն պարտ է դնել 'ի վերայ գոյականին. որ, * Զայր հաւատարիմ գործ է գտանել ‖ . առակ ։

Այլ եթէ յետադաս ածականքն իցեն բազում, նախդիրն իբր 'ի բազումս դնի միայն 'ի վերայ նախադաս գոյականին. որ, * Զարս պատուականս և պիտանիս հաստատեր 'ի նահապետութիս ‖ . յոհն . խոր ։

* Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծեր և անմիտ ‖ . ժողով ։

* Ունի զօրէնս խաղաղականս և փրկականս ‖ . եղիշէ ։

* Եւ այլ անկաւ յերկիր բարի և պարարտ ‖ . ղուկ ։

Իսկ երբեմն դնի նաև 'ի վերայ երկրորդ յետադաս ածականին. որ, * Զայր զուարթ և զառատ սիրէ ած ‖ . առակ ։

* Ընկալաւ ... զկեանս տրտմական և զախտալից ‖ . խորհ ։

* Տանջին 'ի Ճգունս զանազանս և 'ի բազմապատիկս ‖ . սարգ ։

'Ի վախճան այսր կանոնի պարտ է գիտել, զի եթէ 'ի մէջ գոյականի և ածականի մտցէ բայ, նախդիրն պէսպէս կարէ դասիլ. զի երբեմն դնի 'ի վերայ նախադասին միայն. որ, * 'Ի ծայրագոյնն ժամանեցաք մաքրութի ‖ . լամբ ։

Երբեմն դնի 'ի վերայ երկուցն ևս. որ, * Կարեկցաբար մատուցեն՝ զծայրագոյն ցուցեր զխնամս ‖ . նար ։

Գոյական անուանք՝ 'ի տեղի ածականաց ։

Գիտելի է, զի ուրեք ուրեք գոյական անուանք ինչ իբր ածական յարին յանուանս. զոր օրինակ,

* Ո՞ր ապառաժ սիրտ ... 'ի յիշատակէն զայս՝ ոչ երկրպագէ առաջի նորա ‖ . լամբ ։

* Սպառէր և մաշէր զխաւար խորհուրդս նորա ‖ . եղիշէ ։

* Զփառն ցանկութիւն 'ի բաց վարել, և զընտանի

ողջախոհութիւն անձնաս 'ի ներքս բնակեցուցանել ||. Սարգ.

Այնպէս վարին երբեմն և անուանք ազգաց. եւս և անկոց. զի, * Յոյն լեզու ուսեալ (Եղիազար) պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու. || Խորէն.

* Որ կոչի 'ի հայ բարբառ կորուստ. || Յայսմաւ.

* Զտունն մեծ' գրուագեաց մայր փայտիւք ||. Բ. Մնաց.

* Աւել պատիւ մի գնէք բարի ծառոյն' քան այլ ծառոց ||. Շնորհալի.

Ի սոսա վերաբերին և այնք, որք յարին 'ի բառդ-անուն. զոր օրինակ, * Եպիսկոպոսն անուն 'ի հելլենացի լեզուէ է ||. Լամբ. Որ բառս եպիսկոպոս' գնի իբր ածական բառիս անուն. և կամ իբր բացայայտիչ.

Ըստ այսմ է տեսանել և յօրինակդ' որ գնի.

* Հոգին անուն' զանմարմին նշանակէ զէութի ||. Շնորհ.

* Հայրդ անուն' մի է հոգևորաց և մարմնաւորաց ||. Եղիշէ.

Երբեմն նաև վերացեալ անուանք յատկացուցչաբար եդեալ 'ի մէջ բերեն զզօրութի ածականի. զոր օրինակ, * Հոգի քո բարութեան առաջնորդեսցէ ինձ ||. Սաղ. այսինքն հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ.

* Անօթ ընտրութեան է ինձ նա ||. այսինքն, անօթ ընտիր. Գործ.

* Սպարտացայ հողս անարգութեան ||. այսինքն անարգ հողս. Նար.

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց.

Զօրէքին համաձայնին ընդ միմեանս ածական անուանք. Նախ' իբր ածական. զոր օրինակ, * Իմաստակ խելագար. Ճարտասան անձնասէր ... ունայնաբան շաղակրատ .... պճնասէր ագահ ||. Նարեկ. Որ բառք' խելագար, անձնասէր, ունայնաբան, և պճնասէր' են ածական բառից' իմաստակ, ճարտասան, շաղակրատ, և ագահ.

Երկրորդ' իբր խնդիր. զոր օրինակ, * 'Ի մարմնի

վարս ստացեալ անհամեմատ հարճառորաց ‖ . Շար ։ Ուր հարճառորացն է տրական խնդիր անհամեմատին ։

Երրորդ՝ իբր բացայայտիչ, այլ 'ի սակաւս . զոր օրինակ, * Ոներգործութիւն լեզուին 'ի ներհակացն կամի ցուցանել՝ 'ի բարւոյն ասեմ և 'ի չարէն ‖ . Սարգ ։ Ուր ածականքդ 'ի բարւոյն և 'ի չարէն՝ լեալ են բացայայտիչ ածական անուանս 'ի ներհակացն ։

Չորրորդ՝ իբր յատկացուցիչ . այլ այս 'ի սակաւս յոյժ . զոր օրինակ, * Յայտ արար զանօրինականսն չենարարէն ‖ . Արիստ . Վերլ ։ Ուր ածական անունս չենարարէն՝ է յատկացուցիչ ածականիդ զանօրինականսն ։

Յայսմ ամենայնի՝ զորս ասացաք, թէպէտ ածականք ըստ ածականս կային, բայց յամենայնի ևս զօրութ̃ գոլին գոյականք նոցին, որպէս և յայտ է ։

Ուրեք ուրեք ևս համարին եդեալ իբր գոյական . որպէս յասելն, * Որ ելեր 'ի բարձրադիւրագոյն քաղաթեւին ‖, Շար . ածական անունս բարձրադիւրագոյն՝ համարի իբր գոյական եդեալ . որում լեալ է յատկացուցիչ ածական անունդ քաղաթեւին իբր գոյական ։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս համաձայնութեան դիջական անուանց, որք են, թուականք, հանրականք, վերբերականք, հարցականք, և մասնականք ։

Արդ աւ հասարակ՝ թէպէտ ըստ համաձայնութեան այլոց անուանց վարին . բայց քանզի ուրեք ուրեք փոքր մի այլազգ գնին, վասն այնորիկ արժան համարիմ ասել ինչ ինչ զսոցանէ 'ի մասնաւորի . խօսեցեալ 'նախ՝ զխնդրառութէ սոցին . զորմէ գիտելի է, զի 'ի մէջ սոցա՝ հանրականքն և վերբերականքն ոչ առնուն զխնդիր . բայց եթէ գուցէ ըստ պատահման, և կամ վասն կարգի բանին ։

Իսկ թուականք, հարցականք և մասնականք՝ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի հոլովս բացառական . զոր օրինակ, * Երձակեաց երկուս յաշակերտացն իւրոց ‖ . Մար ։

* Ո՜ յարարածոցս . . . այնպէս պատուեաց ա՛ծ՝ ո՛ղ զքեզ ‖ . Սարգ ։

* Միմեղ լինել անձին 'ի մարդկանէ . անկար է ‖ . Լամբ ։

* Չար է նախանձ . և որք նովաւ վարակեալք են , չածեն ինչ 'ի պատշաճիցն զմտաւ ‖ . Եզնիկ ։

* Ո խորտակիչ խորհրդոց յեւիցս ՚ի իւրում ընթացիցն ուղղէ ‖ . Լամբ ։

Ուրեք ուրեք և ս անուն սոքա առ հասարակ ըղնէրգոյական . զոր օրինակ , * Զորորդն 'ի նոսա . . . 'ի կերպարանս արծուոյ ‖ Գրիգ . Արշ ։

* Զունի ոք 'ի նոսա անուն չարութե ‖ . Ի շարաքնոցն ։

* Ո՞ 'ի նմա իւրումն ոչ ծառայեաց ախտի ‖ . Արիստակէս ։

Երբեմն և ս թուական անուանք 'ի յարելն 'ի բառդ. Նիւ անուն խնդիր զնոյն 'ի գործիական հոլովն . զոր օրինակ , * Ինկան առաքեալքն առաքինիք 'ի բուլ անդր՝ թուով երկոտասանք ‖ . Ագաթ ։

* Մատունք ձեռաց նորա և ոտից՝ վեց վեց՝ քսան և չորս թուով ‖ . Է . Թագաւորաց ։ Մատիցուք այժմ խօսել զայսմ ա՛մէ 'ի մանաւորի ։

Վասն Թուական անուանց ։

Սոքա առ հասարակ միշտ իբր ածական վարին . և ըստ իմիք ըստ կանոնի ածականաց համաձայնին ընդ գոյականաց , յորս յարին . վասն որոյ կամեցեալ համառօտիւ անցանել զսոքօք՝ պարտ է գիտել , զի 'ի մէջ սոցա ընդարձակին . որպէս , Մի , երկու , տասն երկոտասան , քառասուն , եօթանասուն , հարիւր , երկերիւր , և այլն . յորժամ յետադասին գոյականաց՝ հասարակօրէն համաձայնին ընդ նոսա . զր , * Երևեցաւ աշակերտաց իւրոց երկոտասանիցն ‖ . Յովհ . Ընդհանր ։

Բայց երբեմն և ս առանց համաձայնութե դնին . զոր օրինակ , * Մերձ է յեհէմ իբրև ասպարիզօք հինգ ‖ . Է . Յովհ ։

Նմլ 'ի նախադրիւ հոլովս գրեթէ միշտ անհամաձայն դնին . զր , * Յետ արշաւուրի թագաւորէ արշակ ամս երեսուն . արտաշէս՝ ամս քսան ‖ . Խոր ։

Իսկ 'ի նախադասիլն՝ հասարակօրէն՝ ոչ համաձայ-

նին · զբ , * Զկնի երեսուն ամաց սպան կայէն զհաբէլ ||· ղազար · չաթ :

Ուրեք ուրեք և ս համաձայնութ դնին · զբ , * Ակն 'ի յորդանան 'ի լրումն երեսնից ամաց || · ճեորճ :

Թուական անուանք դասականք , որպիսի են՝ Եր-կրորդ , երրորդ , եօթներորդ , մետասաներորդ , եւն · յորժամ յետադասին անուանց՝ միշտ համաձայնին ը նոսա · զոր օրինակ , * Յամսեանն մետասաներորդի , որ օր առաջին էր ամսոյն , երևեցան գլուխք լերանց ||· ծննդոց :

Իսկ յորժամ նախադասին , իբր 'ի բազում ան-համաձայն դնին · զոր օրինակ , * Յերրորդ ժամուն ստեղծաւ ադամ ||· խորհրդ :

Նաև երբեմն համաձայն · զոր օրինակ , * Ի հինգհա-րիւրերորդի ամի (կենաց նոյի) սպառնալիք պատուհա-սին եղանելին յայտ · և 'ի վեցհարիւրերորդի ամի անդ՝ ջըր-հեղեղն հասանէր յաշխարհ || · նոր · ընծայ :

Թուական անուանք անջներականք , որպիսի են՝ Եր-կոքեան , կամ երկոքին · չորեքեան , կամ չորեքին · եօթանեքեան , տասնեքեան , եւն · հասարակօրէն հա-մաձայնութե գոյականաց վարին , թէ 'ի նախադա-սին , և թէ 'ի յետադասին · զբ , * Զի ոչ եթէ եր-կոքեան ոտիւք կաղայցէ ոք , և ոչ յայտ լիցի || · խորհրդ : * Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն || · է · մակաբ :

Թուական անուանք ղաւականք , որք են՝ Երրեակ , չորրեակ , եօթնեակ , ութեակ , յիսնեակ , եւն · և ս և կրկնականք , որք են՝ Երեքպատիկ , տասնպատիկ , բազ-մապատիկ , եւն · հազիւ երբեք յետադասին գոյակա-նաց · այլ՝ հասարակօրէն նախադաս լինելով յարին 'ի նոսա առանց համաձայնելոյ ընդ նոսա · զոր օրի-նակ , * Տօնեմք (զվարդավառն) յեօթներորդում ամսեանն ըստ յաւիտենից ըստ այսմիկ եօթնեակ շրջա-գայութե || · խոր · վարդ :

* Հատուցանէր զդարձ փոխարինին տասնպատիկ յա-ւելուածով || · յովհ · չաթ :

Վասն հանրական անուանց.

Հանրական անուանք, որք են ամենեքեան և ամենեքին, ը̅ որս են և բոլորեքեան, և բոլորեքին որք և իբր ածական վարին, հասարակօրէն ինքնին 'ի գործ ածին՝ զօրութիւն ունելով զդոյականն. զոր օրինակ,
* Որ ամենեցունց իշխէ՝ յամենեցունց գովեալ || . Ոսկ.
* Տեսանեն ... զդատաւորն ամենեցուն քս̅ նստեալ ընդ աջմէ հօրն բոլորեցուն || . Եփրեմ.

Իսկ 'ի յարիլն յանուանս և յընդունելութիւնս՝ և մանաւանդ 'ի դերանունս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասիլն, և թէ 'ի յետադասիլն. զոր օրինակ, * Զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից || . Նար.
* Զամենեսեան զնոսա այսու միով բանիւս աւետաւորէ || . Խոսրով.

Այլ գիտելի է, զի յաճախ գործածութիւն հանրական անուանց ը̅ անուանց՝ ծանրացուցանէ զընթացս բանին. վասն որոյ բազում անգամ 'ի տեղի սոցա դնեմք զբառդ ամենայն. զորոյ զգործածութիւն արժան է գիտել, զի սա յորժամ յարի յեզակի ցուցական դերանունս, միշտ և յա̅մի համաձայնի ընդ նոսա. զոր օրինակ, * Վասն այսր ա̅մ ածցէ զքեզ ա̅ծ 'ի դատաստան || . Ժողով.
* 'Ի վերայ ա̅մ այսորիկ անսամ̂ս տ̅ր || . Եսայ.

Նաև յորժամ 'ի յոգնականս յարի, ըստ թուոյն եզական դնի. զի ըստ նշանակութեան գոլով բազմաւորական՝ եզական ձայնիւ յոգնական համարի. ո̅պ, * Ասոյնիկ ա̅մ ապերախտ գտան || . Եփրեմ.
* Դու ես տ̅ր և գլուխ նոցա ա̅մ || . Վարք հարց.

Իսկ յորժամ նախադասի անուան կամ ընդունելութեան, ոչ համաձայնի ընդ նոսա. ո̅պ, * Ամենայն պարծանաց պարծանք խոնարհութիւն է || . Սարգ.

Այլ 'ի յետադասիլն՝ 'ի յեզականսն համաձայն դնի. ո̅պ, * Առն ամենայնի գլուխ Քս̅ է || . Ա. Կորնթ.

Իսկ 'ի յոգնականսն՝ անհամաձայն դնի ը̅ թուոյն. զոր օրինակ, * Արարածոցս ամենայնի արար խաղաղութիւն || . Սարգ.

* Դուռն սկզբան եւ պատճառ բարեաց ամենայնի ‖ . Նար ։
* Առեալ զգլխաւորսն զոմն՝ չուէ 'ի Մծբին ‖ . Խոր ։

Այլ գիտելի է, զի սա յորժամ նախդրիւ համդերձ լինի ածական, նախդիրն երբեմն կրկնի 'ի վերայ իւր, եւ 'ի վերայ այնր՝ յոր յարի . որ̄, * Առնիցես զարդարութիւն յամենայն 'ի կեանս քո ‖ . Փօէ ։
* Ակն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղծ անուն 'ի մէնջ 'ի բաց բարձցուք ‖ . Եղիշէ ։
* Զհպարտութեն զամենայն 'ի բաց ընկեսցուք ‖ . Եփր ։

Վասն Վերբերական անուանց ։

Վերբերական անուանք, որք են այսպիսի, այդպիսի, այնպիսի . սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի . այսքան, այդքան, եւն . իբր ածական վարին . եւ 'ի յետադասիլն միշտ համաձայնին ըստ կանոնի ածականաց . թէպէտ եւ հազիւ ուրեք է յետադասիլ սոցա ։ Իսկ 'ի նախադասիլն՝ իբր 'ի բազում անհամաձայն դնին . որ̄,
* Ըղձամ տեսութեն այսպիսի տնկոյ ‖ . Ճաշոց ։
* Պարտիմք լինել արթուն, զի լինիցի մեզ յայսպիսի վտանգից զերծանել ‖ . Եփն ։

Իսկ երբեմն համաձայն դնին 'ի վերջահոլովս . զոր օրինակ, * Ի բաց լերուք յայդպիսեաց ուխտարազգեստ գայլոց ‖ . Ճշոր ։
* Զիարդ բժշկեսցես անձն իմ եղկելի՝ 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ ‖ . Նարեկ ։

Դարձեալ՝ եթէ անկցի 'ի մէջ բայ, իբր 'ի բազում համաձայն դնին . որ̄, * Որք այսպիսեօք վարէին խորհրդովք ... զամենայն տուժեցան ‖ . Եփնաւ ։
* Յայսքանեացս սա որոշեալ պատշաճագոյն յարմարութեանց ‖ . Պիտոյից ։

Ասացի 'ի վերոյ՝ 'ի վերջահոլովս . զի 'ի յուղղական եւ 'ի նախդրիւ հոլովս յոգնականին ոչ երբեք համաձայնին . զի ոչ լինի ասել . այսպիսիք բանք . յայնպիսիս իրս . զայսքանս ժամանակս . եւն . այլ՝ այսպիսի բանք . յայնպիսի իրս . զայսքան ժամանակս . եւն ։

Վասն հարցական անուանց։

Հարցական անուանք, որք են՝ ո՞, ո՞վ, զի՞նչ, ի՞նչ. և և՝ ո՞ր, ո՞րքան, քանի՞, որպիսի՞, զինչպիսի՞, պէսպէս վարին. և նախ 'ի մէջ սոցա բառքս՝ ո՞ և ո՞վ, յորժամ 'ի գործ ածին իբր անուն հարցական, իբրու գոյական վարին. օր, * Ո՞ կարէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակման ||. Եղիշէ։

Իսկ վասն այլոց հարցականաց գիտելի է, զի զի՞նչ երբեմն հանդերձ բայիւ վարի իբր գոյական, կամ իբր նոյն. օր, * Զի՞նչ իցէ, որ լինելոց իցէ ||. Ժողով։
* Եւ արդ՝ զի՞նչ գործեցես անձն իմ կորուսեալ ||. Նար։

Եւ երբեմն յարի յանուանս իբր ածական՝ առանց հոլովման. օր, * Զի՞նչ վայելուն իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւօք ուտիցեմ ||. Նար։

Ըստ այսմ և հարցական անունս ի՞նչ՝ երբեմն իբր գոյական վարի առանձինն, և երբեմն իբր ածական յարի յանուանս. օր, * Եւ արդ՝ զի՞նչ հայլին այս ամենայն արթնութեան պէտք ||. Ժողով։
* Ծածկէ (բանսարկուն) խաբէութեամբ իւրով զսկիզբն բարւոյն և չարին, եթէ ուստի՞ և զի՞նչ իրս գոյանայ ||. Սարգ։

Իսկ հարցական անուանքս՝ ո՞ր, ո՞րքան, քանի՞, որպիսի՞, զինչպիսի՞, որք իբր ածական վարին, հասարակօրէն նախադասին անուանց. երբեմն առանց համաձայնելոյ. օր, * Յո՞ր մահուանէ յորպիսի կենդանութիւն փոխեցաք սիրելով զեղբարս ||. Սարգ։

Բայց երբեմն համաձայնութեամբ, մանաւանդ ո՞րն և ո՞րքանն. օր, * Որո՞ւմ կորստեան և գեհենի ակնկալութիւն ոչ է առաջի ձեր ||. Շնորհ։
* Որքանեա՞ց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից ||. Նարեկ։
* Զայսպիսի կարծրութիւն նիւթոյ . . . ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեա՞ց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց ||. Խոր։

Վասն անորոշ անուանց ։

Անորոշ անուանք. ոմն, ոք, իմն, ինչ. ընդ որս են և սոքա, մի իմն, կամ մի ոմն, որ ոք, որ ինչ, ոչինչ, ինչ ինչ, ամ ինչ, որ ինչ միանգամ, ևն. սոքա երբեմն ինքնին վարին ՚ի բանս իբր գոյականք. որպէս, * Ոմն իշխէ, և ոմն իշխի ‖. խորէն ։
* Որ ոք զախտս իշխանութեան կարէ սպանանել, և զառաքինութիւնս կեցուցանել, թագաւոր արդար է ‖. ոսկփ ։
* Զոր ինչ վնասակար խոստովանի ոք, կորուսանէ, եթէ զմեղս և եթէ զարդարութիւն ‖. ոսկփ ։

Այլ յորժամ վարին սոքա ընդ անուանց կամ ընդ ընդունելութեանց, լինին իբր ածականք մասնաւորիչք նշանակութեան նոցա. * որպէս, * Աշխարհ ումեմն է բնութիւնս ‖. եզնակ ։
* Զ ոմն դեսպան ձիով փութանակ առաքեցին ‖. եղիշէ ։
* Ինչ ինչ և յասորւոց ընկալան տեղեկութիւն կարգաց ‖. որպէս ինչ ինչ տեղեկութիւն. այս է, քանի մի. լամբ ։

Սոքա ՚ի յետադասին անուանց կամ ընդունելութեանց, երբեմն ևս ՚ի նախադասին, եթէ իբր մասնաւորիչ նշանակութեան նոցա վարեսցին, հասարակօրէն թուով և հոլովիւ համաձայնին ընդ նոսա. զոր օրինակ, * Զգաղթեալսն անդրէն դարձուցանէ ... բայց ՚ի նախարարէ ումեմնէ, որոյ անունն օտայ կոչիւր ‖. խորէն ։
* Պատուասիրաց ոմանց զանձս առաջի դնելին ‖. յովհաննէս կաթ ։
* Ոչ ՚ի ժամանակի ուրեք, այլ ժամանակք ՚ի նմանէ գոյացան ‖. եղիշէ ։
* Լուայ յումեմնէ ոչ պարտաւորէ ‖. նարեկ ։

՚Ի նոսա ումեմն երբեմն առանց համաձայնութեան դնի. որպէս, * Մեծի ումեմն ցանկացար ‖. կոչ ։
* Նա աւանիկ ազնուականի ումեմն ցանկացեալ են ‖. եփր ։
* Հանէ իբր թաթառուլ ումեմն ջուր ՚ի ծովէն ‖. ոսկփ ։

Սա, այսինքն ումեմն և բառդ ինչ բազում ուրեք իբր զարդ դնին. որպէս, * Այսպիսեաւ ումեմն պատրաստութեամբ անձին հանդերձանաց կուռ վառեալ ‖. նար ։
* Զպատճառս հարստութեան մեք ինչ ո՛չ գիտեմք ‖. եղիշէ ։

Վասն մասնական անուանց՝ Միւս. երկաքանչիւր, և իւրաքանչիւր.

Սորա իբր ածական վարին, բազում անգամ զօրութիւն ունելով զգոյականն. որ, * Մին մասամբ ձայնակցի 'ի յանգանելն || . Լամբ.
* Երկաքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա՛ || . Շար.
* Իւրաքանչիւր 'ի վերայ իւրոյ արմատոյ արձանացի || . Լամբ.

Իսկ յորժամ յարին 'ի գոյականս, հասարակօրէն նախադասին նոցա, և իբր 'ի բազումս անհամաձայն դնին. որ, * 'Ի միւս կողմանէ գետոյն || . Խոր.
* Երկաքանչիւր ծայրիւք ... ծածկեալ է յեղականացս բնութեանց || . Շնորհ.
* Իւրաքանչիւր գործոց հատուցմունք լինելոց է. և խորհրդոց և բանից քննութիւնք || . Սարգ.

Բայց երբեմն և՝ համաձայնութեամբ դնին. որ, * Ըստ միւսում բանի սոյն այս յայտնի ցուցանի || . Խոսրով.
* Տեսցուք զերկաքանչիւրոց սոցա բարեբախտութիւն || . Պետ.
* Արածելին անվեհեր փութով զհաւատացեալ հօտն յիւրաքանչիւրում ժամանակի || . Յովհ. Կաթ.
* Վասն զի իւրաքանչիւրոց նոցա չարափառութիւնք յոյժ աննմանիք են միմեանց || . Յովհ. Իմաստ.

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ դերանուանս.

Համաձայնութիւն դերանուանց ընդ դերանուանս յայտ է, զի եկեալ սոցա առ միմեանս համաձայն թուով և հոլովիւ՝ վարին 'ի բանս իբր նոյն, այսինքն իբրև մի դերանուն: Իսկ թէ ոք ընդ որս յարին, գիտելի է, զի 'ի մէջ սոցա էական դերանունս ինքն՝ յարի յայլ ամ̃ դերանուանս ը̃ իւրաքանչիւր դիմաց նոյին, (բաց 'ի ստացականաց):

Իսկ նախ՝ յարի յէականս. որ, * Զայլս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ || . Նարեկ.

Երկրորդ՝ յարի 'ի ցուցականս . որ, * Սա ինքն ըզ-մեղս մեր բառնայ ‖ . եղ ։

Նոյնպէս յարին ընդ միմեանս նաև ցուցական դե-րանուանք . որ, * Սոյն այս ձայն զամենեսեան յարու-ցանելոց է 'ի գերեզմանացն ‖ . նանայ ։

Պարտ է գիտել, զի 'ի յարիլ սոցա ընդ միմեանս 'ի նախադրիւ հոլովն, նախդիրն դնի 'ի վերայ ամենե-ցուն . որ, * 'Ի սոյն յայս միտս երգեաց զերեսներորդ-առաջներորդ սաղմոսն ‖ . տորք ։

ԳԼՈՒԽ Թ ։

Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ անուանց . և նախ՝ Յաղագս համաձայնութեան էական դերանուանց՝ Ես . դու . ինքն . իւր ։

Դերանունք որովհետև այլ և այլ են տեսակաւ, այսինքն էական, ցուցական, ստացական, յարաբե-րական, և դիմորոշական, այլ և այլ օրինակաւ յարին յանուանս, և պէսպէս եղանակաւ համաձայնին . զո-րոց կամեցեալ խօսիլ կարգաւ՝ տեսցուք նախ զհա-մաձայնութիւն էական դերանուանցս՝ ես, դու, ինքն, իւր . ընդ որս են և դերանունքս՝ միմեանց և իրերաց . (Եւս և ցուցական դերանունքս սա, դա, նա, յոր-ժամ 'ի գործ ածին էականապէս ։)

Սոքա ամենեքին գոյականապէս վարին . և ըստ օ-րինակի՝ գոյական անուանց՝ լինին անուն բայի, խըն-դիր բայի, և խնդիր ընդունելութեց . որպէս ունիմք տեսել յիւրեանց տեղիս ։ Նա և՝ խնդիր նախադրու-թեց . որպէս յայտ է յեդելոցն յառաջին մասին ։

Իսկ 'ի յարիլն յանուանս՝ լինին Նախ՝ խնդիր ան-ուանց՝ գոյականաց և ածականաց . որպէս ունիս տե-սանել 'ի խնդրառութեան նոցա . որպիսի է և այս . * Ո փառաւորիչս իմ փառաւորէ ‖ . երգ ։ Ուր դերա-նունն իմ՝ է խնդիր ածական անուանս փառաւորիչ ։

Երկրորդ՝ լինին յատկացուցիչ . որ, * Սիրտ իմ ուրախ եղև յամ վաստակս իմ ‖ . ժողով ։

Երրորդ՝ լինին բացայայտելի 'ի ձեռն գոյական անուանց՝ համաձայնելով ընդ նմա թուով և հոլովիւ. զոր օրինակ, * Ես իմաստութի բնակիմ 'ի խորհրդեան ‖. առակ: Ուր եմն լեալ է բացայայտելի. և իմաստութիւն բացայայտիչ:

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածական անուանց. որպէս, * Զմեզ զմեղաւորս արժանի արարեր փառաւորել զքեզ ‖. յաղջ. իմաստ:

Ըստ այսմ յարին սոքա բազում անգամ և յածական ընդունելութիւն՝ իբր բացայայտիչք. որպէս, * Մեզ յուսահատելոյս ինչ միջնորդեսցես ... թէ 'ի կործանեալս ձեռն ակնարկեսցես ‖. նարեկ:

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանցս՝ Սա. դա. նա:

Սոքա յորժամ հոլովին՝ սա, սորա. դա, դորա. և այլն, վարին գոյականապէս. և պէսպէս օրինակաւ 'ի գործ ածին:

Իսկ 'ի հոլովելն՝ սա, սորին. դա, դորին. նա, նորին, կամ նորուն, հասարակօրէն վարին ածականապէս. և իբր ածականք յարին յառաջոյ յանուանն՝ համաձայնելով ընդ նմա թուով և հոլովիւ. և այս՝ հասարակօրէն 'ի հինգ հոլովս միայն:

'Ի սեռականն. որպէս, * Պտուղն թէպէտև նորին ծառոյն է և ծաղկին, այլ համի որոշեալ է 'ի նոցանէ ‖. այսինքն նոյն ծառոյն. սարգ:

'Ի վերջահոլով տրականն. զոր օրինակ, * Եւ քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ, կրկին հաստատեալ ‖. նար:

'Ի գործիականն. որպէս, * 'Ի նոյն փառաւորութեան նովին հոգւով կոչեցաք ‖. եղիշէ:

'Ի պարառականն. որպէս, * Զամ զբանակն զնովին տեղեաւ գումարէր ‖. պատմ. աղթ:

'Ի ներգոյականն. զոր օրինակ, * 'Ի նմին յամառութեան կան ‖. եղիշէ:

Իսկ յայլ հոլովս հասարակօրէն իբր գոյական վարին . և եթէ հարկ լինի ածականապէս վարել, 'ի տեղի սոցա դնեմք զցուցական դերանունսն՝ Այս, այդ, այն . սոյն, դոյն, նոյն . որպէս տեսցի 'ի ստորև ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանցս՝ Այս . այդ . այն ։

Սոքա միշտ իբր ածական վարին, բազում անգամ զօրութիւն ունելով զգոյականին . զոր օրինակ, * Որ ինչ 'ի խոր է քան զքեզ, զայն մի՛ քններ . և որ ինչ հզօր է քան զքեզ, զայն մի՛ հարցաներ . որ ինչ հրաման տըւաւ, զայնու ած զմիտս քո ‖ . Սիր ։

Այլ յորժամ յարին սոքա յանունս, 'ի նախադասին՝ հասարակօրէն համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ՝ բաց 'ի բացառականաց յոգնակաց 'ի է . դր, * Ապաշխարութի՛ չիք յայնմ աշխարհի ‖ . Ծճէ ։

Բայց երբեմն ևս առանց համաձայնութեան դնին, այլ սակաւ ուրեք . զոր օրինակ, * Ընդէր է կորուստ այդ իւղոյդ ‖ . Մատ ։

Սոցին՝ բաց 'ի բացառականաց յոգնակաց 'ի է . զի ըստ այսմ ոչ համաձայնին սոքա 'ի նախադասին, բայց եթէ կրկնեսցի նախդիրն . դր, * Իսկ քահանայական կարգն յայսցանէ 'ի գործոց որիշ է ‖ . Լմէ ։

Իսկ յորժամ յետադասին սոքա անուանց համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ . դր, Ամենայն պըտուղք իմաստութեան այնորիկ, որ զողորմութիւն ծնանի, բարի են ‖ . Սարգիս ։

Հազիւ ուրեք ևս անհամաձայն դնին . դր, * Թեթևս կայծ զաշխատութեան այս սկիզբն ‖ . Նար ։

'Ի համաձայնութեան այսոցիկ դերանուանց հարկ է գիտել և զայս, զի 'ի նախադասին սոցա՝ նախդիրն հասարակօրէն դնի միայն 'ի վերայ սոցա . զոր օրինակ, * Բոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս ‖ . Եղիշէ ։

Իսկ 'ի յետադասել սոցա՝ նախդիրն միշտ և ան-վրէպ դնի՝ թէ 'ի վերայ սոցա, և թէ 'ի վերայ ան-ուանցն, բաց 'ի նախդրէս առ. և այս՝ 'ի վեց հոլովս.

'Ի նախդրիւ տրականն. զոր օրինակ. * Այսպէս ասէ տր տր ցոսկերսդ ցայդոսիկ ‖. Եզեկ.

'Ի հայցականն. զր, * Ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւն զայս ‖. Եղիշէ.

'Ի բացառականն. զր, * Աւրախարար զոհագործու-թեամբք ապրեցուցեր զիս յորոգայթէ յայսմանէ ‖. Յոհ. Ոսկեբ.

'Ի պատմականն. զոր օրինակ, * Նա և որ մարզպան աշխարհին լեալ էր ... մեծապէս զոհ էր զսանէս զայս-մանէ ‖. Եղիշ.

'Ի պարառականն. զոր օրինակ, * Զբազմօք զօս-տոկուն զանց արարեալ՝ փութասցուք հասանել յընծա-ւէտ հօր առատ որդին ‖. Եփրեմ.

'Ի ներգոյականն. զր, * Թագաւոր առնես զամե-նեսին ... որք թագաւորեցին 'ի վերայ ախտից 'ի կեանս յայսոսիկ ‖. Խոսրով.

Իսկ այսմ կրկնին հասարակօրէն և նախադրութիւնս ընդ և ընդ. զր, * Դնել զնոսա յաւերակ և յանա-պատ ... ընդ աւուրս ընդ այսոսիկ ‖. Երեմ.

* Վայ անձանց նոցա, որք զյաւիտենականն բարե-կենդանութիւն ընդ ապականացուիս ընդ այսմիկ փոխա-նակեն ‖. Նփնաս.

Նոյնպէս ևս եթէ նախդիրքդ զ, յ, և 'ի, իցեն ե-դեալ 'ի վերայ նախընթաց ածականի, հարկ է կրկ-նել զնոսին, եթէ գոյականն անկեալ իցէ 'ի մէջ ա-ծականին և դերանուանն. զոր օրինակ, * Զարթոյց զմիտս նոցա ... զճշմարիտ պատկերէն զայնմանէ բուռն հարկանել ‖. Ոսկեբ. մեկն յընդարձակն. Գ, 11.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս համաձայնութեան ցուցական դերանուանց՝
Սոյն. դոյն. նոյն.

Սորա միշտ իբր ածական վարին. և զի յատուկ հոլովումն ոչ ունին, այլ միայն նախդրիւ հոլովին, յորժամ նախադասին անուանց, անհամաձայն դնին. զոր օրինակ, * Զայնակից սոյն ուղղափառութեան է՛ որ եկեղեցիս ա̃յ ||. Գրիգոր Տաթ.

Այսոքիկ դերանուանք՝ մանաւանդ նոյն՝ հազիւ ուրեք անմիջապէս յետադասին անուանց. իսկ եթէ յետադասեսցին, պարտ է զնախդիրն կրկնել. զոր օրինակ, * Եւ յորոգայթ ՚ի նոյն անկցին ||. Սաղ.

՚Ի վախճան ցուցական դերանուանց ա̃մի՝ դիտել արժան է և զայս, զի սոքա առհասարակ՝ դնին երբեմն ՚ի բանս իբր թարմատար, կամ իբր բացայայտելի ՚ի ձեռն այնց բառից, յորս յարին յառաջոյ կամ զկնի. զոր օրինակ, * Ամենայն ինչ՝ որ յաշխարհի է, չէ՛ նա մեր ||. Եփրեմ.

* Բազմաց արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա ||. Եփրեմ.

* Ցօղդ, որ ցօղի ՚ի քէն, այդ բժշկութիւն է նոցա ||. ՚ի Կեղերաց. յոյն.

* Զվէմն զոր անարգեցին՝ նա եղև գլուխ անկեան ||. Մատթ.

Յորս դերանուանքդ նա, նոցա, այդ, նա, իբր թարմատար դնին, կամ իբր բացայայտելի ՚ի ձեռն բառից ամ̃ ինչ, և արդարոց, և ցօղդ, և վէմն.

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս համաձայնութեան ստացական դերանուանց՝ Իմ. քոյ. մեր. ձեր. իւր, իւրոյ.

Սոքա միշտ ածականաբար վարին. և յորժամ յարին յանուանս, եւս և յընդունելութիս, յա̃մի համաձայնին ընդ նոսա ՚ի վերջահոլովսն, թէ ՚ի յետա-

դասին, թէ 'ի նախադասին, և թէ անկցի 'ի միջի այլ մասանց բանի. որ, * Օ՜ զիա՛րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից ‖. Ներս.

* Ընդէ՞ր տեսանեմք զարև յետ մերոյ սիրելեացն ‖. Եղիշ.

* Վրդովեալ առնուս ախտի ջատագով (զթիւրեալ ճըշ-մարտութին) ‖. Լամբ.

Ասացի համաձայնիլ սոցա 'ի վերջնահոլովն. զի 'ի նախդրիւ հոլովս և յուղղականս միշտ անհամաձայն դնին. որ, * Ամենայն խորհուրդք իմ հաստատեսցին ‖. Եսայ. և ոչ լինի ասել. խորհուրդք իմք.

* Ուսո՛ ինձ առնել զկամս քո ‖. և ոչ քոյս. Սաղ.

* Բաժանեաց զկեանս մեր ‖. և ոչ մերս. Խորհրդ.

* Կատարեսցէ զկամս ձեր 'ի կամս իւր ‖. և ոչ ձերս և իւրս. Ճաշոց.

Սոքա լինին և ածական դերբայից նովին համաձայնութեամբ, որով յարին յանուանս. որ, * 'Ի բարեպաշտելս իմում՝ գայթակղիմ ‖. Ներս.

* Տացի կեանս նմա 'ի կենաց տուողէն քոյով արդարահատելովդ ‖. Մրգէն.

Իսկ եթէ ուրեք երևեսցի անհամաձայն, այն ոչ է ստացական դերանուն իբր ածական, այլ սեռական հոլով էական դերանուանց. որպէս յասելն, * Յարդարանալս իմ և մեղանչեմ ‖. Ներս. դերանունս իմ ոչ է ստացական, այլ էական. և եդեալ է աստ իբր անուն դերբայիդ՝ յարդարանալս.

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս համաձայնութեան յարաբերական դերանուանն՝ Որ.

Յառաջ քան զխօսիլ զհամաձայնութենէ սորա՝ գիտելի է, զի սա 'ի կարգս բանի զօրութեամբ 'ի մէջ բերեալ զայլ մասն բանի՝ դնի ներգործութեամբ 'ի տեղի նորա. որպէս զի մի կրկնեսցի մի և նոյն բառ.

Արդ նախ առաջին՝ յարաբերի սա զանուն, զդերանուն, և զընդունելութի. զոր օրինակ, * Ամենայն նիւթոյ՝ որ մարմին է, ապականութիւն հետևի ‖. Լամբ.

Ուր որն յարաբերի զանունդ՝ ամենայն նիւթոյ.

* Բարուք է խոնարհութի յամ ժամ. և յամ նեղութեց ապրեցուցանէ զայնոսիկ, որք մերձենան առ նա ‖. ծծբ։ Ուր այն յարաբերէ զդերանունդ՝ զայնոսիկ ։

* Արժանի գայ ճաշակել զջուր յաղբերէ փրկութե նորոգողին զմեզ, զորոյ զանթառն խնկ ընկալայ ‖. յոհ. կաթ. Ուր բառս որոյ՝ յարաբերէ զընդունելութիդ՝ նորոգողին ։

Ուրեք ուրեք յարաբերէ սա նաև զբայ և զբան. դբ, * Մարմինս ձգնի, տքնէ և պահէ, որում և օգնէ մնաց և կամաց ‖. լամբ ։ Ուր բառդ որում յարաբերէ զբայսդ ձգնի. տքնէ. ևն ։

* Մարդ բարի ... զյաղթելն սիրէ, որով և նուաճէ. և ոչ զյաղթելն, որով զմարտն գրգռէ ‖. լամբ ։ Ուր բառդ որով յարաբերէ զյաղթելն և զյաղթելն ։

* Ոչ վստահեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեան աւուրցն խռովութե կերակրել պատրաստեցայց ‖. նար ։ Ուր որովն յարաբերէ զայս բան՝ ոչ վստահեցի 'ի հունձս արմտեացն ։

Գիտելի է ևս, զի այս դերանուն երբեմն յարաբերէ զնախընթացն. դբ, * 'Ի գործոյն, զոր գործէ, առնու զանունն ‖. եղնիկ ։

Այլ երբեմն զհետևեալն. դբ, * Զոր վասն այլոց կորստեան խօսիմք՝ անձամբ 'ի նմին եմք ‖. եփրեմ ։ Ուր զորն յարաբերէ զ'ի վերջոյ եդեալ բառդ 'ի նմին ։

Երբեմն ևս մտանէ 'ի մէջ յարաբերելի անուանն, և 'ի մէջ բայի նորա, կամ յատկացուցչի նորին, և կամ ածականի նորուն, և այլն. զոր օրինակ, * Արդ զբեռնդ, զոր դու ոչ ես բառնալոց, ըր վասն հոգաս և դատիս ‖. լամբ. ատեն ։

* Ընդգիւտ արդարութեամբ լիցի՝ զոր պահանջեաց, փրկութե ‖. այսինքն արդարութե լիցի փրկութին, զոր պահանջեաց. լամբ ։

* Զի ծանիցես զբանիցն, որոց աշակերտեցար, զճըշմարտութին ‖. այս ծանիցես զճշմարտութի բանիցն, որոց աշակերտեցար. ղուկ ։

* Զոգեկանն, որ յառաքինութեն է, պինդ պահիցեմք զազատութի ‖. այսինքն պինդ պահիցեմք զոգեկան ազատութին, որ յառաքինութեն է. յոհ. ոսկ ։

Բազում անգամ ևս զօրութ ունի սա զյարաբերե-

լին . զր, * Որ նախ խոնարհի, նախապատիւ բարձրասցի ‖ . Լմբ : Ուր զօրութիւն կայ բառսս . որպէս թէ ասէր . նա՛ որ խոնարհի, բարձրասցի :

* Իշխան ոք կոչի, յորժամ ունի՛ որոց իշխէ . և արքայ, յորժամ ունի՛ որոց առաջնորդէ ‖ . այսինքն յորժամ ունի զհպատակս, որոց իշխէ, Իա . Լմբ :

Համաձայնութիւն այսր դերանուան կրկնակի նկատի : Նախ՝ զի թուով համաձայնի ընդ այնմ, զոր յարաբերէ . զի որովհետև դնի 'ի տեղի նորա, զայնքան պարտի նշանակել, զորքան նայն նշանակէ : Աստի եթէ յարաբերեալն միակի նշանակեսցէ, պարտի դնիլ եզակի . զր, * Այն է տիրապէս իմաստուն, որ գործով ուսուցանէ զիւրն իմաստութին, այն է ճշմարիտ վարդապետ, որ նախ առնէ, և ապա ուսուցանէ ‖ . Ոսկ : * Ընուռն հարի զանհաստատ հողմոյ, որով միշտ տատանեալ այսր անդր տարաբերիմ ‖ . Նարեկացի :

Իսկ եթէ յարաբերելին իցէ բազմաւորական, յարաբերականն դնի յոգնակի . զո՛ր օրինակ, * Մի՛ պատրեսցուք 'ի հեշտալեացս, որք կախարդեն զզգայութիւնս ‖ . Ոսկ :

Նաև քանզի բազում եզականք ևս ունին զզօրութի յոգնականի, եթէ յարաբերեալքն լինիցին բազում եզականք, յարաբերականն ևս իբր 'ի բազումս յոգնակի դնի . զր, * Կուռք են փառասիրութի և մարդահաճոյութի, որք և զհաւատն իսկ հալածեն ‖ . Ոսկ :

Իսկ եթէ յարաբերելին իցէ անեզական անուն, որովհետև այն ըստ նշանակութեն իբր եզական է, յարաբերականն ևս բազում անգամ եզակի դնի . զոր օրինակ, * Յիշեա՛ զշնորհս աւազանին՝ որով լուսաւորեցար ‖ . Երզնկացի :

Նաև ներհակ այսմ՝ եթէ յարաբերելին իցէ անուն հաւաքական կամ հանրական, 'ի վերայ նր իբր յոգնական վասն դոյլ նշանակութե նոցա բազմաւորական, յարաբերական որն դնի յոգնակի . զր, * Ո՛չ իմբդ կարիցեմք և զքահանայապետական դատաւորութին 'ի գործ արկանել առ ազգ այնպիսի, որք . . . դատաւորաց եկեղեցւոյ նոքին դատաւորք ‖ . Շնորհ :

Դասցի 'ի վերին իբր յոգնական . զի եթէ իբր ե-

զական վարեսցին այսպիսի անուանք, յարաբերական որն ևս դնի եզակի․ որպ․ * Ամենայն, որ զչար գործէ, ատեայ զլոյս ‖ . յոհ․ * Ժողովուրդ, որ գնայր ընդ խաւար, ետես զլոյս մեծ ‖ . եսայ․

Այլ գիտելի է, զի այս դերանուն բազում ուրեք ըստ թուոյն զօրութ համաձայնի․ քանզի բազում անգամ փոխանակ յոգնական դնելոյ եզական դնի՝ մանաւանդ յուղղականն և ՚ի նախդրիւ հոլովմն․ որպ․ * Են բազումք ՚ի մարդկանէ, որ երևին բազմաց, եթէ ոչք են և առաքինիք . . . և նախատանաց և ոչ միոյ համբերեն ‖ . ոսկեբ․ * Զսոյն զայս միտս ամենայն ոք ստասցի առ ած ՚ի վերայ ամ նեղութեց և չարչարանաց, որ վասն նորա կրեմք ‖ . եփրեմ․

Երկրորդ համաձայնութի այսր դերանուան նկատի յայսմ, զի յայնպիսի հոլով դնի, յորպիսի դնելի էր յարաբերելին, եթէ եդեալ էր ներգործութ՝ ըստ պահանջելոյ բային կամ անուանն․ Ուստի․

Երբեմն դնի յուղղական հոլովն՝ երբ անուն բայի․ որպ․ * Ամենայն, որ զչար գործէ, չար գոյէ ‖ . ագաթ․

Երբեմն դնի ՚ի սեռական հոլովն՝ երբ յատկացուցիչ․ որպ․ * Ոտանելն առաջի իմ՝ նոցա է, որոց սիրտն է ուղիղ ընդ նմա ‖ . լամբ․

Երբեմն դնի յայլ հոլովս՝ երբ խնդիր բայի, ևս և երբ խնդիր անուան, և ընդունելութե, և նախադրութե․ զոր օրինակ, * Զի որ սերմանեսցես՝ զնոյն և հնձեսցես ‖ . վարք հարց․ Ուր որն է խնդիր բայիս սերմանեսցես․

* Որում ցանկացաւն՝ ոչ եհաս ՚ի կէտն ‖ . եղիշէ․ Ուր որումն է խնդիր ցանկացաւին․

* Որոց համեմատ և զսա ցուցանէ ‖ . գէորգ․ Ուր որոյն է խնդիր անուանս համեմատ․

* Այս այն (երկիր) է . . . որոյ ցանկացօղն աղաղակեր, հոգի քոյ բարի ‖ ՃԾ․ Յովէլ․ Ուր որոյն է խնդիր ընդունելութեա ցանկացօղ․

* Ամենայն ՚ի քէն է, և որդւովդ․ առանց որոյ եղև և ոչինչ ‖ . ագաթ․ Ուր որոյն է խնդիր նախադրութես առանց․

Այլ սակայն ՚ի գերապանծ շարադրութիս երբեմն

այլազգ կարգի այս համաձայնութ̄ի է չորից. նախ՝ յորժամ յարաբերականն համաձայնի ընդ յարաբե-րելոյն ՚ի նոյն հոլով, թէ և յայլ հոլով էր դնելի (է յունական ոճոյ). որ, *Առաջնորդեա ժողովրդեանն այնմիկ ՚ի տեղին՝ յոր ասացի քեզ‖. Ելից. փոխանակ դնելոյ, ՚ի տեղին՝ ուր ասացի քեզ. (որպէս եղեալ է ոսկան):

Երկրորդ՝ ընդ հակառակն, յորժամ յարաբե-րեալն համաձայնի ընդ յարաբերականին. որ, *Նու-զրանն՝ ուր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ‖. Ժամագիրք. փոխանակ ասելոյ. և բանն՝ զոր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ:

Երրորդ՝ ըստ երկուցն ևս անհամաձայն գալոյ ե-թէ յարաբերականին, և եթէ յարաբերեցելոյն. որ, *Ի նոյն գրէ առ որս ՚ի խուժաստան էին ժողովուրդք‖. Իսայի. արծր. փոխանակ ասելոյ, զնոյն գրէ առ ժողո-վուրդսն որք ՚ի խուժաստան էին:

Չորրորդ՝ ըստ համաձայնելոյ զօրութ̄ եղեալ յա-րաբերեցելոյն. որ, *Քաղցր է Տր՝ որոց սպասեն նմա յաւուր նեղութ̄‖. Նաւում. փոխանակ ասելոյ. քաղցր է Տր այնոցիկ, որք սպասեն նմա: Նաև այս չորեքին ե-ղանակք՝ զորս եդաք, հասարակ են առ նախնիս մեր՝ ոչ ՚ի ստորին շարադրութիս, այլ ՚ի գերապանծս:

՚Ի վախճան ճառիս արժան է գիտել և զայս. իբր զի երբեմն ՚ի յարաբերականն յարին և այլ դերան-ուանք թարմատարաբար, կամ իբր զարդ. և այս՝ մանաւանդ ՚ի թարգմանեալ գիրս. որ, *Երանեալ է այր, որոյ օգնութ̄ի Տեառ ՚ի քէն է‖. Սաղ: Եւ դե-րանունս Տեառ՝ դնի իբր զարդ, կամ իբր թարմատար ինչ. և կամ իբր բացայայտիչ յարաբերականին՝ ոմ̄ ասացաք զցուցական դերանուանց ՚ի վերջ ԺԲ. գլխոյն:

Գիտելի է դարձեալ, զի յարաբերական որն եր-բեմն առանց ունելոյ զզօրութ̄ի յարաբերականի՝ այլ յաւէտ զզօրութ̄ի անորոշ հարցականի, դնի յառա-ջոյ իբր ածական՝ թուով և հոլովիւ համաձայն. որ, *Որով չափով չափիք՝ չափեսցի ձեզ‖. Մատ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս դիմորոշական յօդիցս՝ ս. դ. ն.

Այսքիկ յօդք նախ յարին 'ի դերանուանս իբր զարդ. զոր օրինակ, * Ինեւս կորացեալ ամաչեսցէ (սատանայ)॥. Եղիշէ:
* Զեմ իբր զձեզդ անագորոյն॥. Նոննոս:
* Ուր եմն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի॥. յովհ:

Այլ գիտելի է, զի 'ի յարիլ սոցա յայնպիսի դերանուանս որք 'ի ձայնաւորս յանգին, հանդերձ յօդ գնին. որ, * Քն յորժամ գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սոյս առնէ॥. փխ քան զոր սա առնէ. յովհ:
* Յօղն՝ որ 'ի դոյդ կողէ ցօղեալ॥. այսինքն 'ի քո կողէդ. Շար:
* Ոգուտ զայն դիտէ՝ զոր նայն առնէ॥. այսինքն նա առնէ. Խոսրով:

Այլ 'ի յարաբերականս՝ ըստ որում են յարաբերականք, ոչ յարին այս յօդք. զի ոչ լինի ասել. որս երեւին. որդ փառաւորեալ ես. որն խօսէր. որն առաքեաց, եւն. այլ՝ որ երեւիս. որ փառաւորեալդ ես. որ խօսէրն. եւն. որ, * Մարդիկ մատակարարեն զայս, որ երեւինս. այլ հոգին որ տայ զայն, որ ոչն երեւի॥. Կող:
* Որ փառաւորեալդ ես 'ի վր իմ աշխեղերաց॥. Ագաթ:
* Դաւիթ արքայ ոչ բարկանայր (ընդ բանին Նաթանայ). զի ոչ 'ի նա հայէր՝ որ խօսէրն. այլ՝ 'ի նա հայէր՝ որ առաքեացն॥. Կող:

Երկրորդ՝ յարին սոքա յանուանս. որ, * Եթէ աշակերտ ես, վարդապետիս նմա́ն լեր॥. Սարգ:
* Քառասուն թիւդ 'ի հինգ ութից աւարտի॥. Արիստ:
* Բարերարացն եւ հեզոյն՝ բնութիդ քարշէ զքեզ կալ 'ի ծառայութի॥. Սարգ:

Երրորդ՝ յարին 'ի բայս. որ, * Մինչդեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյն հակամիտեմ॥. Նարեկացի:
* Օրհնեալ՝ որ գասդ յանուն տն॥. յովհ:
* Որ կոչէն 'ի բժշկել՝ զօրաւոր է եւ պատրաստ॥. Սարգ:

Չորրորդ՝ յընդունելութիս. զոր օրինակ, * Չայ-

նես չլսողիս, և ոչ սրտմտիս. փութաս մեղկելոյ, և ոչ խափանիս ‖. Նար.

* Նստեալդ յաթոռ քերովբէից՝ նիստ գթուք 'ի մեր հոգիս ‖. Շար.

* Օ ամենեսեան աշակերտեցին հոգւով զօրացեալքն և մարմնով տառապեալքն ‖. Լամբ.

Հինգերորդ՝ (այլ սակաւ ուրեք) 'ի մակբայս. օր,

* Մի ժողովրդեան՝ որ շուրջն կան՝ առնեմ ‖. Նանայ.

* Բայց զկարգ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք ‖. Յոհ.

* Որ իրաւապէսն դատի՝ զմարմնականն 'ի ծոցս մեր հատուցանէ տանջանս ‖. Յոհ. Իմաստ.

Այսոքիկ յօդք ուրեք ուրեք դնին փոխանակ միմեանց. քանզի զէն դնի յերկս դէմս ևս. օր, * Որպէս սկսաքն՝ 'ի նմին և կատարեսցուք ‖. Եղիշէ.

* 'Ի գրելոյն ձեր ծանուցաւ ‖. Խորենացի.

* Մարտիր ընդ այնոցիկ՝ որ մարտնչինն ընդ մեզ ‖. Եղիշ.

Նոյնպէս և դրան. օր, * Եւ ինչ արդեօք հրամայեսցես քան թէ հրամայեցիր ‖. Եղիշէ.

* Օ որ ասէքդ՝ ցուցէք գործով ‖. Գէորգ.

* Ո՛ր նստինդ աւագիկ ամենեքեան առաջի քո ‖. Լամբ.

Ըստ այսմ և նորա. զոր օրինակ, * Իսկ եթէ ոչ զայն առնիցեմք՝ զոր հրամայեցաքն, և զայն խօսիցիմք՝ զոր վարդապետեցաքն, ազատութեան օրինօքն եմք դատելոց ‖. Սարգ.

* Օ խորհուրդ ուսուցանես ինձ, եթէ առնու ոք զքոյդ զումն պահանջեր, երբ դու զքոյն պահանջես ‖. Ոսկ.

* Որ մեռանին՝ արդարացեալ է 'ի մեղաց անտի ‖. Կոչ.

Սոքա երբեմն փոխանակ դնելոյ 'ի վերայ բուն անուան, կամ դերբայի, կամ խնդրոյ բային, ևն, դնին 'ի վերայ այլոց բառից առ 'ի գեղեցկացուցանել զշարադրութիւն. զոր օրինակ, * Օ ինչ գործեցից ողորմելիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի ‖. փոխանակ ասելոյ, ողորմելի հոգիս. Նար.

* Կամիմ զճշմարտութենդ լինել օժանդակ ‖. փոխանակ ասելոյ, կամիմ զլինելդ քո օժանդակ ճշմարտութեան. Լամբ.

* Ամենայն որք՝ որ հակառակամարտ է, զյաղթողն

լինել՝ որքան կարէ՝ ախորժէ ‖․ փոխանակ ասելոյ, ըղ-
յաղթող լինելն․ լամբ․

Այլ աստ գիտելի է, զի այսօրինակ յօդք բազում անգամ դնին 'ի տեղի դերանուանց զօրութ յարելոց յանուանս և յընդունելութիւս և 'ի բայս պէսպէս օրինակաւ․ զոր օրինակ, * 'Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի ‖․ փոխանակ ասելոյ, 'ի վեր ամբարձայ ես մոխիրս, կամ 'ի վեր ամբարձայ ես, որ եմ մոխիր մերժելի․ նարեկ․

* Կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում, թէ՝ և ես քեզ նմանիցիմ ‖․ այսինքն կարծեցեր դու, որ անօրէն ես, և այլն․ սաղ․

* Որ գթայն, ողորմութիւն գտցէ ‖․ այսինքն նա, որ գթայ, ողորմութին գտցէ․ առակ․

* Որ եղեն՝ լինել ոչ ունի ‖․ այսինքն, այն՝ որ եղև, ոչ ևս է լինելի․ եփնոտիոս․

Դարձեալ գիտելի է, զի յօդդ ն, դնի երբեմն փոխանակ անուան, որ զօրութ իմանի․ և այս՝ երրակի․ Մի յարելով 'ի յատկացուցիչն՝ զօրութ իմացեալ անուանն․ զոր օրինակ, * Արդ՝ է բարկութին, որ գովելի է 'ի գրոց․ որպէս մովսէսին, որով զեգիպտացին սպան ․․․ և է բարկութին, որ պարսաւելի է․ որպէս կայենին, որով զեղբայրն իւր սպան ‖․ այսինքն որպէս բարկութին մովսէսի․ ոսկ․ սարգ․

Երկրորդ՝ յարելով 'ի յածականն․ իբր, * Զպղատոնականն համարձակագոյն այժմ բարբառիմ ‖․ իբր զպղատոնական բանն․ խորէն․

Երրորդ՝ յարելով 'ի խնդիրն նախադրութեց, յորս իցէ եդեալ ներգործութ նախդիրդ ն՝ զօրութ իմացեալ անուանն․ այլ այս 'ի սակաւս յոյժ․ զոր օրինակ, * Ընդ զօրս հրեշտակաց միաբանական օրհնութ բարեբանեցէք զ'ի վերայ քերովբէիցն ‖․ այսինքն բարեբանեցէք զնստեալն 'ի վերայ քերովբէից․ կամ զայն՝ որ է 'ի վերայ քերովբէից․ շարակ․

* Զդիւրալուրն և չառանց խոր բանիցն յարգեն ‖․ իբր զբանն, կամ զայն՝ որ առանց խոր բանից․ առակ․

* Զվասն մեղացն ոչ խնդրեցեր ‖․ իբր զմատուցեալսն քեզ վասն մեղաց․ կամ զայն՝ որ վասն մեղաց․ սաղ․

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս համաձայնութեան բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելութեան։

*Բայք կրկնակի համաձայնին ընդ անուանս, ընդ դերանուանս և ընդ ընդունելութիւնս. Նախ՝ իբր ընդ այնս, որք առին անուն բայի. Երկրորդ՝ իբր ընդ այնս, որք առին խնդիր բայի. զոր օրինակ յասելն, * Բերան ամպարշտաց կլանէ զդատաստանս ||, առակ. 'ի սմին բանի բայս կլանէ՝ ունի զերկուս անուանս, որոց առաջինն՝ այսինքն բերանն՝ եղեալ է անուն բայի, և նշանակէ զտէր գործողութեան կլանելոյն. իսկ միւսն՝ այսինքն զդատաստանս՝ եղեալ է խնդիր բայի, և նշանակէ զենթակայն՝ առ որ լինի գործողութիւն կլանելոյն։ Իսկ անունս ամպարշտաց՝ է յատկացուցիչ բերանոյն։ Արդ նախ խօսեսցուք զառաջին համաձայնութենէ, այսինքն զանուանէ բայից. և ապա զերկրորդէն, այսինքն զխնդրոյ նոցին։*

Յաղագս առաջին համաձայնութեան բայից. կամ

Յաղագս անուան բայի։

Անուն բային է այն՝ որ նշանակէ զտէր գործողութեան. այսինքն զգործօղն կամ զկրօղն, և կամ զայն՝ որ լինի. որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ. և քանզի յատկապէս անուանք և դերանուանք և ընդունելութիւնք կարգին նշանակել զգործօղն կամ զկրօղն, նոքա միայն յատկապէս լինին անուն բայի, որպէս յայտ լինի 'ի յաջորդ գրելոցդ։ Նաև զի աներևոյթ բայք ևս երբեմն իբր անուն վարին, նոքա ևս լինին բազում անգամ անուն բայի. որպէս ունիմք ասել 'ի ստորև 'ի վերջ Ը կանոնին։

*Իսկ այլ մասունք բանի որովհետև պիտակաբար միայն կարեն վարիլ իբր անուն, անյատկապէս կարեն լինել անուն բայի. ըստ որում են բառք ինչ. օր, * Իբրև նախադիր է բանի ||. լամէ։*

* Այս արդեօք յայտ առնէ || . Եփեսաց ։
* Ո՞ն նոյն այլ է , և նա նոյն այլ || . Խորհրդ ։
* Ան՝ փափաքմանց՝ որում ոչ հասանեմք , է տարա- ցոյց ապաշաւանաց || . Լամբ ։
* Կոչեցեալն՝ ամենեցուն յայտ է || . Նանայ ։

Այլ այժմ զորօք զանց արարեալ՝ դիցուք զհինգ կանոնս վասն համաձայնութեան անուան բայի ընդ բայի ։

Կանոն . Ա ։

Եթէ բայն իցէ դիմաւոր , անուն բային պարտի դնել յուղղական հոլովս . զոր օրինակ , * Դադարեցին նեղութիւնք , և եհաս հանգիստն || . Եփեսաց ։ Ուր անուանքս՝ Նեղութիւնք և հանգիստն՝ են անուն բայիցս՝ դադարեցին և եհաս . և եդեալ են յուղղական հոլովս վասն դիմաւոր լինելոյ բայիցն ։

Իսկ եթէ բայն իցէ անդէմ, որպիսի են աներևոյթք, դերբայք և գրադէմք , անուն բային հասարակօրէն դնի 'ի սեռական հոլովս . զոր օրինակ , * Այն է ժամանակ , յորում երանութիւնք լնուն . աշխարհաց մեծանալ , և սփոփանաց մխիթարիլ , և հեզոց զվերին երկիրն ժառանգել || . Եփեսաց ։ Ուր անուանքս՝ աշխարհաց , սփոփանաց և հեզոց՝ են անուն բայի 'ի սեռական հոլովս վասն անդէմ լինելոյ բայիցս՝ մեծանալ, մխիթարիլ և ժառանգել . որք եթէ որոշեալ դիմօք կարգեսցին , անուանքն ևս յուղղական հոլովս դնէին . որգոն , աշխարհք մեծանան . սփոփանք մխիթարին . և հեզք ժառանգեն զվերին երկիրն ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ ։

* 'Ի ճարակել խոցոտածոյս՝ անդրէն վիրաւորիմ || . Նար ։
Ուր բառդ խոցոտածոյս՝ է անուն բայիս՝ 'ի ճարակել ։
* Բազում անգամ զան ըմպելով ծանծաղն 'ի բաց ոչ դառնայ || ։ Ուր ծանծաղն է անուն բայի դերբայիս ըմպելով . Սարգ ։
* Սէրն Վարդանայ մտրակեալ զերիվարն՝ 'ի փախուստ զախոյեանն պարսից դարձուցանէր || . Բուզ . արձր ։
Ուր բառս սէրն Վարդանայ՝ է անուն գրադէմ բայիս մտրակեալ ։

Ուրեք ուրեք ևս դնի յուղղական հոլովս. որ, *Հա-սեալ 'ի Թիկունս աներևոյթ օգնութեանն խորտակեաց յայտնապէս զզաղտնի պատերազմն || . Նար.

Իսկ դերանունք դնին երբեմն նաև 'ի տրական հոլովս, և այս՝ յաւէտ 'ի դերբայս և յաներևոյթ ե-ղանակս. որ, *Փափաքեաց անձն իմ 'ի ցանկալ քեզ յիրաւունս քո || . Սաղ.

Գիտելի է ևս, զի անուն բային յարակատար և գերակատար ժամանակաց, և անցելոյ ստորադասա-կանին՝ 'ի յերրորդ դէմս եզականին իբր 'ի բազումս դնի 'ի սեռական հոլովս. որ, *Իսկ ինձ եղեալ է 'ի մտի խնամ՝ բազում չարչարանօք կարծել զձեզ 'ի կենաց ձերոց || . Եղիշէ. Ուր սեռական դերանունս ինձ՝ լեալ է անուն բայիս եղեալէ.
*Գրեալ էր ձեր յածեղէն տառս, զի մի մոռացայց զձեզ || . Տաթև. Ուր սեռական հոլովս ձեր լեալ է անուն բայիս գրեալէր.
*Ահա մոռացեալ իցէ ձեր զանուն ա̄յ մերոյ || . Սաղմոս. Ուր սեռական հոլովս ձեր՝ լեալ է անուն բայիս մոռա-ցեալիցէ. Տես և 'ի մասն. Բ. Գլ. ԺԹ. 'ի վերջն.

Իսկ երբեմն՝ դնի յուղղական հոլովս. զո՛ր օրինակ,
*Հանգուցեալ է հոգի ա̄յ 'ի քեզ ո՛վ եղբայր || . Վարք.
*Ունիս զոք, որ ստացեալ իցէ զճշմարիտ հնազան-դութիւն || . Վարք Հարց.

Կանոն. Է.

Դարձեալ եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային պարտի թուով և դիմաւ համաձայնիլ ընդ նմա. զո՛ր օրինակ, *Ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ || . Յովհ. Ուր որպէս բայս ազատեսցէ՝ ըստ թուոյն է եզական, նոյնպէս և անուն բային, այսինքն ճշմարտութիւն՝ է եզա-կան. և որպէս բայն է յերրորդ դէմս, նոյնպէս և ա-նուն բային՝ 'ի ձեռն ն յօդին.

Իսկ բառս զձեզ՝ է խնդիր ազատելոյն. Նոյնպէս է և 'ի յաջորդ օրինակդ յայլս դէմս ևս.
*Ամբարտաւանեցայ հողս չնչաւոր || . Նար.
*Մեռար անմահդ, և զմահացեալսն նորոգեցեր || . Նար.

* Պատիժք ուսուցանեն զզգաստութիւն ‖ . Գէորգ ։

Բայց գիտելի է, զի այսպիսի յօդք որոշիչք դիմաց՝ բազում անգամ զօրութիւն դնին յերրորդ դէմս . զոր օրինակ, * Նա զդև ոչ հանէ ‖ . Եզնակ ։ Այլ զօրութ̃ գդյ յօդս՝ն . որպէս թէ ասէր . դևն ոչ հանէ զդև ։ Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ ։

* Խոնարհութիւն բանակետղ է սրբութեան ‖ . Ծծբ ։

* Այր փորձի 'ի բերանոյ գովչաց իւրոց ‖ . Առակ ։

* Վամանեցին ինձ չարիս, և ես ոչ կարացի ճանա-չել ‖ . Նար ։

Իսկ դերանուանք յիւրեանց ունելով զդէմս՝ ոչ կարօտին դիմորոշական տառից, այլ առանց նոցա հա-մաձայնին . զոր օրինակ . * Նոյն է սպաս տանել ձու-լեալ պատկերի, և մեղաց ախտի . արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի ‖ . Նարեկ ։

* Որովհետև մարդ ես դու, ոչ պակասին 'ի քէն բիծք ‖ . Վարք հարց ։

* Դու ես ինձ զանվրէպ գիտութիւն զեղեղոցս ‖ . Եփրեմ ։

Իսկ թէպէտ յարաբերական դերանունն չունի զո-րոշեալ դէմս, բայց զօրութիւն ունելով զայն՝ յերկս դէմս ևս կարէ համաձայնիլ առանց յօդի . զոր օրի-նակ, * Տունկս դառնաստեան՝ որ զպարշուն անուանկ վարուց ծաղկեցի ‖ . Նար ։

* Դու ես՝ որ օրէնսդէտ առնես զմեղաւորսն 'ի ճա-նապարհի՝ ըստ բանի երգողին դաւթայ ‖ . Նոյնն ։

* Որք մեղօք ժանդացուցանեն զհոգիս, ոչ կարեն ըղ-լոյս ա̃ծուէն յինքեանս կերպարանել ‖ . Շնորհ ։

Այլ աներևոյթքն զոր յօդ և ունիցին, լինին ա-նուն բայի միշտ յերրորդ դէմս . որպէս, * Աստեղս վեհա-գոյն բնաւորդ՝ ոչ է իմ, այլ քոյ ‖ . Լամբ ։

* Տիրելդ ամենեցուն՝ խնայել տայ քեզ յամ̃ ‖ . Եփրեմ ։

* Ողորմելն չթողու զարժանին խնդրել ‖ . Խոսրով ։

Սոքա բազում անգամ առանց յօդի ևս լինին ա-նուն բայի . մանաւանդ էական բայից . զոր օրինակ, * Մեկնել՝ 'ի չարեաց՝ է հանճար ‖ . Յոբ ։ Այլ աներևոյթ բայս Մեկնել՝ առանց յօդի լեալ է անուն բայիս՝ է ։

Ըստ այսմ լինին սոքա անուն բայի և բացարձակ դիմազուրկ բայից . որպէս, * Առաջի մարդկան ձևանալ

դիւրին է, այլ ոչ առաջին այ || . Եզնկ ։ Որ յետադասն է անուն բայից դերբայն է. իսկ առաջին մարդկանն, նա. է խնդիր յետադասին ։

Կանոն. Զ ։

Եթէ անուն բային իցէ բազում եղական՝ մի նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի ։ Զի ո- րովհետև յայնժամ մի գործողութեան կամ կրողութեան է բազում, բայն ևս՝ որ նշանակէ զգործողութիւնս, պարտի դնիլ բազմաւորակի. զոր օրինակ, * Յուդա և Եփրեմ օրհնեցան 'ի յակոբայ || . Գէորգ ։
* Պլատոն և Արիստոտէլ առականնէն զայս իմաստունս || . յաճախ ։
* Պօղոս և Գաղատացին 'ի միում պատժի են || . Նոյն ։
* Յորժամ Հայրն և Կամքն 'ի միասին իցեն, չիք ինչ այլ՝ որ արգելուլ կարիցէ || . Գէորգ ։
Բայց բազում անգամ ևս դնի բայն եզակի. և դրեթէ զօրութիւն կրկնի. որպ, * Խաւարն հատուցման պահի պատիժն և պատուհասն || . յոհ. եաւ ։
* Անօգուտ է անձ խոստովանութի և պղծումն || . խոսրով ։
* Եթէ ոչ լուծանի ապահովութի, սէր և ողորմութի ոչ հաստատի || . Եզնկ ։

Կանոն. Է ։

Եթէ անուն բային իցէ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուականագոյն դէմն, այսինքն յայն դէմ, որ համեմատութ է առաջին. իբր զի եթէ մին յանուանց բային իցէ յառաջին դէմն, և միւսն յեր- կրորդն, կամ յերրորդն, բայն դնի յառաջինն. զի ա- ռաջին դէմն պատուականագոյն է քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն. որպ, * Ես և դու և մեծ բազմութիւնդ ... աշակերտեցաք մեծային զրոց || . Եղիշ. և ոչ լինի ասել՝ ես և դու և մեծ բազմութիւնք աշա- կերտեսջիք, կամ աշակերտեցին ։ * Իշխեա մեզ դու և որդի քո, և որդւոյ որդւոց քոց || . դատ . և ոչ լինի ա- սել դու և որդի քո իշխեսցէ ։

Կանոն. Է։

Եթէ անուն բային լինի ըստ ձայնին եզական, իսկ ըստ նշանակութեան բազմաւորական, (որպիսի են անուանք թուականք), բայն դնի յոգնակի. զոր օրինակ,
* Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին ‖. Մատ։
* Չորեքեանն (այսինքն չորք տարերք) հային կամաց անհնարկելոյ արարչին իւրեանց ‖. Եղիշէ։

Իսկ եթէ անուն բային լինի բառ հաւաքական, որպ՝ գունդ. ազգ, եւն, կամ հանրական, որպէս՝ բառս ամ, եւ կամ կրկնակ, որպ՝ Դ Դ. այր ցընկեր. Իւրաքանչիւր. այրա-ջի. եւն, բայն երբեմն դնի յոգնակի՝ վասն ունելոյ նշ զնշանակութի բազմաւորական. որ, * Տիրեցին աշխարհիս հայոց՝ ազգն սասանայ պարսկի ‖. Եղիշէ։
* Լի են փառօք նորա ամենայն երկիր ‖. Եսյ։
* Ասեն այր ցընկեր իւր, եկայք արկցուք աղիւս ‖. Ծն։
* Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ զգոյշ լերուք ‖. Երեմ։

Այլ երբեմն, մանաւանդ թէ բազում անգամ, դնի եզակի. զոր օրինակ, * Այնուհետեւ վառանգեցաւ ազգ քրիստոնէից ‖. Լամբ։
* Ամենայն մարդ զլաւն ցանկայ ունել, եւ ոչ զնուազն առնուլ ‖. Պատմ. Աղէքս։
* Վատուեսցէ իւրաքանչիւր զընկեր յաշխարհի աստ ‖. Մծբ։

Ըստ այսմ համաձայնին բայք եւ ընդ անեզական անուանս. երբեմն յոգնակի եւ երբեմն եզակի. որ,
* Ծուլութիւն եւ հեղգութիւն մեղք ոչ քաւին ‖. Խոսրով։
* Բանականն միտս մի զբաղեսցի յիւրս կենցաղոյս, այլ միշտ յերկինսդ բնակեսցէ ‖. Լամբ։

՚Ի վախճան այսոցիկ հինգ կանոնաց՝ զայս մի ինչ արժան համարիմ ծանուցանել. եթէ զի բազում անգամ անուն բային դնի զօրութ̃. զոր օրինակ, * Եթէ կամիս հետեւիլ ինձ, պահեա զբանս նորա ‖. Հայր հարց։ Ուր անուն բայիցս կամիս եւ պահեա՝ զօրութ̃ դնի. այսինքն է՝ դու։

Իսկ երբեմն ներհակ այսմ՝ բայն դնի զօրութ̃, եւ անուն բային ներգործութ̃. զոր օրինակ, * Բանիւ եւ կերպարանօք՝ բազում խոնարհք. իսկ արդեամբք

և ճշմարտութեն՝ դուն ուրեք ‖ . Յհ բանիւ և կերպարանօք բազում խոնարհք գտանին, իբ. ՍԱՐԳ.

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս երկրորդ համաձայնութեան բայից. կամ Յաղագս խնդրոյ բայից.

Բայք յետ համաձայնելոյ ընդ այնս՝ որք ասին անուան բայի, և նշանակեն զտէր գործողութեանց կամ կրելութեանց, պահանջեն համաձայնիլ և ընդ այնս՝ որք ասին խնդիր բայի և նշանակեն զենթակայն, այսինքն զկրօղն գործողութեանց կամ զեզրն, կամ զպատճառ նոցին, կամ զվախճան, կամ զգործ, կամ զայն՝ յորմէ լինի կրել։

Արդ՝ յութից մասանց բանի՝ այնք լինին տիրապէս խնդիր բայի, որք լինին յատկապէս անուան բայի. այսինքն է՝ անուանն, դերանուանն և ընդունելութեան, ևս և աներևոյթքն, ընդ որս և դերբայքն. որպէս յայտ լիցի ՚ի ստորև գրելոցդ.

Իսկ այլ մասունք բայի նիւթապէս միայն կարեն լինել խնդիր բայի. որպ, * Յաճախաբար դնէ զԵՏՈՒՐՆ ինձ ‖ . ՈՍԿ.
* Զայս վշտէս՝ մի յանյուսութե կարծիս ձգեր ‖ . ԼԱՄԲ.
* Թռուաչս և ոչս ՚ի նմանէ յառաջ բերեալ հաստատէ ‖ . ԱԳԹ.
* Իսկ ես ԱՌԱՂ եղկելի անձին իմոյ կարդայի ‖ . ՅՈՀՆ. ԿԱԹ.
* Զան խոտրոց եդ ՚ի միջի ‖ . ՍԱՐԳ.
* Պուլուխ գոյութե ՉԷՐԷՆ դնէ ‖ . ՈՍԿԵԲ.
* ԶԱՅՆ միայն յաւել, և հայր ազգաց բազմաց արար ‖ . ՆՈՅՆ.

Երբեմն նաև ամբողջ բանք լինին խնդիր բայի. որպ, * Նա ՚ի հնումն զայսր տպաւորութի օրինակաւ նկարագրեցեր՝ զդարձարուքն առ իս, և ես դառնամ առ ձեզ ‖ . ՆԱՐ. Ուր բանս ԴԱՐՁԱՐՈՒՔ ԱՌ ԻՍ իբ՝ է խնդիր սեռի բայիս ՆԿԱՐԱԳՐԵՑԵՐ.

Այլ արդ՝ որովհետև բայք պէսպէս են սեռիւ, և իւրաքանչիւրն այլևայլ նշանակութ, վասն որոյ կրկին խնդիր կարեն առնուլ. մի ըստ սեռի, և միւս ևս՝ ըստ

բնութեն ։ Խնդիր սեռին է այն, զոր պահանջէ բայն վասն սեռին զանազանելոյ․ իսկ խնդիր բնութեն է այն, զոր իւրաքանչիւր բայ պահանջէ ըստ իւրում նշանակութեան ։ Արդ՝ ներգործական բայք, ընդ որս և հասարակք և կրաւորականք՝ առնուն նախ՝ զխնդիր սեռի․ և երկրորդ՝ զխնդիր բնութե ։ Իսկ չեզոքականք՝ ընդ որս և էականք՝ առնուն զխնդիր բնութեն եւեթ․ զորոց ունիմք խօսիլ այժմ 'ի մասնաւորի․ (տես զայսմանէ յընդարձակն․ Գ․ 17 ։)

ԳԼՈՒԽ ԺԲ ։

Յաղագս խնդրոյ սեռի՝ Ներգործական և Հասարակ բայից ։

Ներգործական բայք առ հասարակ առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովս․ որպ, * Զքարինս ողորկեցին ջուրք ‖ ․ յոբ ։ Ուր հայցական անունդ զքարինս՝ է խնդիր սեռի ներգործական բային ողորկեցին ։

Նոյնպէս և հասարակ բայք՝ յորժամ վարին իբրև զներգործական, առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովս․ որպ, * Բանիւ յիմարին յիմարութիւն խօսեսցի, և սիրտ նորա զնանրութիւն խորհեսցի ‖ ․ եսայ ։ Ուր հայցական հոլովքս յիմարութիւն և զնանրութիւն են խնդիր սեռի հասարակ բայիցս՝ խօսեսցի և խորհեսցի ։

Այլ երբեմն այս խնդիր սեռի զօրութեամբ դնի․ որպ, * Երանելի այն ոչ է՝ որ ուսուցանէ, այլ այն՝ որ առնէ և ուսուցանէ ‖ ․ Վարք հարց ։ Ուր զօրութեամբ կայ խնդիր սեռին․ զի է՝ զբանն այս․ որպէս թէ ասէր․ ոչ է այն երանելի՝ որ զբանն միայն ուսուցանէ․ այլ այն, որ առնէ զնոյն ։

Գիտել արժան է աստ՝ զի ներգործական բայք ինչ 'ի յարելն յարմատս իւրեանց կամ 'ի բայանուանս առնուն զնոսա 'ի հայցական հոլովս ոչ իբր խնդիր սեռի, այլ իբր խնդիր բնութեն․ որպ, * Զհարուածս թշնամւոյ հարի զքեզ ‖ ․ այսինքն հարուածովք թշնամւոյ․ երեմ ։

Իսկ երբեմն 'ի տեղի այսպիսի խնդրոյ դնի անորոշ

հայցական կամ ուղղական. որպ, * Նա հար զնա հարուածս յոյժ ‖. Ղսմէ:

* Նա ելաց եղեկիա լալեան մեծ ‖. այսինքն լալով մեծաւ. Եսայ: Այս յաճախ ևս պատահի 'ի չեզոքական բայս. զորմէ տես 'ի գլ. իա. 'ի կանոնն. ժա:

Այսպիսի խնդիր 'ի գործ ածի և 'ի յարաբերականս. որպ, * Սէրն զոր սիրեցեր զիս 'ի նոսա իցէ ‖. այ սէրն՝ որով սիրեցեր զիս. Յովհ:

Գիտելի է ևս, զի ոմանք 'ի ներգործական բայից փոխանակ հայցականի առնուն զխնդիր սեռի 'ի տրական հոլովս. որպ, * Երկրպագեսցուք ամենայն 'որ նշանիս ‖. Շարակնոց:

* Օրացոյց զմեզ, զի յաղթեսցուք այնմիկ՝ որ յաղթահարեաց զբնութիւն մեր ‖. Եփրեմ:

* Ոչինչ կարէին ստնանել նմա ‖. Յովհ. Ոսկ:

* Ո՞ր ստանդանեսցուք պատուիրանին ‖. Նարեկ:

Նա և հակառակն ոմանք 'ի չեզոքական բայից՝ ուրեք ուրեք ներգործականապէս վարելով, խնդիր սեռի առնուն 'ի հայցական հոլովս. որպ, * Եթէ տղայքդ լուեն զօրհնաբանութիւն քո ‖. Նարեկ: Զայսցանէ տես յընդարձակն. գ. 18:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս խնդրոյ բնութեան Ներգործական բայից:

Բայք ներգործականք բաց 'ի խնդրոյ սեռին՝ առնուն նաև զխնդիր բնութեան 'ի պէսպէս հոլովս. և այս՝ չորեքկին. Նախ՝ իբր բուն խնդրան, որ և ասի բուն խնդիր բնութեան. այսինքն այնպիսի՝ զոր բնութիւն բային ըստ առաջին նշանակութեան իւրում պահանջէ. որպէս բայս տալոյ՝ ըստ ինքեան պահանջէ առնուլ խնդիր բնութեան զնախդրիւ տրական. որպ, * Տուեալ առ մեզ զհոգի իւր ‖. Ա Յհ: Ուր նախդրիւ տրական հոլովդ՝ առ մեզ, է բուն խնդիր բնութեան բայիս տալոյ:

Երկրորդ՝ իբր յարմարական, կամ թէ յարմարութեան. այսինքն այնպիսի խնդիր՝ որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ բնութեան, յարմար այնմ նշանակութեան՝ զոր ունի

բայն 'ի բանի անդ ։ Որպէս եթէ բայս առաքել, որ ըստ ինքեան պահանջէ առնուլ զնախդրիւ տրական, փոխանակ նորա առնուցու զպարառական, կմ՛ զայլ հոլով 'ի ձեւն նախադրութե․ դր․, * Հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ առաքէ զկողմամբք Ձուաշ գաւառի ||․ յովհ․ կաթ․ ։ Իւր բառդ՝ կողմամբք եդեալ է փոխանակ բուն խնդրոյ առաքել բային՝ իբր խնդիր յարմարական․ այսինքն յարմարեալ և եդեալ 'ի տեղի բուն խնդրոյ առաքելոյն, մինչև ոչ ևս զօրութք պահանջել զայն ։

Երրորդ՝ իբր երկրորդական․ այսինքն այնպիսի խըն-դիր՝ զոր բայն ըստ բնութե իւրում երկրորդաբար պահանջէ ։ Որպէս բայս առաքել՝ երկրորդաբար պահանջէ առնուլ զխնդիր 'ի հոլովս բացառական․ դր․, * Առաքեա 'ի մեզ տր զօգնութի 'ի լեառնէ սրբյ քումմէ ||․ շար․ ։ Իւր բացառական հոլովս 'ի լեռնէ դնի իբր երկրորդական խնդիր բային՝ առաքեա ։

Չորրորդ՝ իբր պատահական, կամ ըստ պատահման․ այսինքն այնպիսի խնդիր՝ որ ըստ պատահման դիպի բային․ որպէս նոյն առաքել բայն կարէ առնուլ ըստ պատահման զխնդիր յայլևայլ հոլովս, և կամ նախադրութբք, կամ դերբայիւք․ դր․, * Որ աւետաւոր քում դալստեանդ առաքեցեր յաշխարհ զմր մարգարէսն ||․ շար․ ։ Իւր ուղղական հոլովս աւետաւոր՝ է պատահական խնդիր բայիս առաքեցեր ։
* Առաքեցէն զերիտասարդս իւրեանց զջրոյ ||․ երեմ․ ։ Իւր պատմական հոլովս զջրոյ՝ է պատահական խնդիր բայիս առաքեցէն ։ Նոյնպէս և յայլ խնդիրս ։

Իսկ առ 'ի որոշել՝ թէ ներգործական բայք յո՞ր հոլովս պահանջեն տիրապէս զխնդիր բնութե ըստ ինքեան, դիցուք քանի մի կանոնս հանդերձ օրինակօք ։ Եւ թէպէտ զորս կանոնադրեմք աստ՝ նոքին զայլ խնդիր ևս առնուն, բայց այնոքիկ ոչ են բուն խնդիր․ այլ կամ երկրորդական, կամ յարմարական, և կամ պատահական ։ Եւ զի որք երկրորդականքն են՝ և պատահականք՝ ինքնին որոշին, թողումք զայն, և միայն վասն յարմարականաց յարեմք զկնի բուն խըն-դրոց երիս երիս օրինակս ։

Կանոն. Դ.

Բայք՝ որք առին առաջին խնդիր, այսինքն որք նշանակեն զգործողութիւն առնելոյ զինչ՝ այս ինչ, կամ համարելոյ և կամ անուանելոյ զինչ՝ այսպիսի ինչ, առնուն զխնդիր բնութեան յուղղական հոլովն. և սոքա են սակաւ յոյժ. զոր օրինակ, * Արա՞մ մեզ... ծերաւոր միայն առնէին զմարդն. իսկ ամբարտաւանութին տարաւոյ զխռովն առնէ || . սարգ :
* Օահեակն հեթանոսաց՝ աշխարհագրեցին || . Նար :
* Օ եղբարս ջատագովս օրինաց ստեղծել նմին համարեցին || . Լամբ :
* Բանս զկեանս աշխարհիս անուանէ || . յոհն . ոսկեբ .
* Բան զնա աւետարանիչս յորջորջէ || . Նանայ :

Նմանք 'ի տեղի բուն խնդրոց ա՛ռ յարմարութ առնուն զուղղական. որ, Աշխարհութեն զմարդ՝ հրեշտակ յարմարէ || . սարգ :
* Իմաստասէրք փոքր աշխարհ անուանեն զմարդ || . Խոսրով :
* Եթէ զշամբս եղեգանց յօրինեալ գրեալ . . . ոչ բաւական համարեալ զնոսա || . սարգ :

Կանոն. Ե.

Բայք որք առին երկրորդ խնդիր, այն որք ունին զնշանակութիւն տուչական՝ կամ իբր տուողական, առնուն զվերջահոլով տրական. որ, * Տուր իմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն ևս լիցի || . առակ :
* Բաբելոյն դասք արբեցին հեթանոսաց զջուրն կենդանի || . եփրեմ :
* Տնօրինեաց մարդկան ազգի զփրկութիւն || . Լամբ :
* Յանձնեաց նմա շահս 'ի վաստակոց իւրոց || . Ոսկեբ :
* Հորդեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի || . Լամբ :
* Սուտութեան և առասպելեաց բանին (զլսելիսն) յօժարութիւն || . Շնորհ :

Նմանք ըստ յարմարութեան առնուն զվերջահոլով տրական. որ, * Բարի առնէ Տէր բարեաց || . սաղ :
* Ամենայն փոխանակեցաւ սիրոյն քո || . Խոսրով :
* Երթանց և լեզուաց տնել գրութիւն աղաչեմք || . Շնորհ :

Կանոն. Է։

Բայք՝ որք առին երրորդ հոլովի, այսինքն որք նշանա-կեն զգործողութի տալոյ զինչ առ այլ, առնուն ըզ-նախդրիւ տրական. որպէս, * Խոստովանելն ՛ի խոնար-հութի ածէ զմեզ ‖. Խոսրով։
* Դուք ոչ երբեք բռնի զոք վարէին ՛ի կորուստ ‖. Եղիշ։
* Մի դադարեր մատնել զխռովութի յառաջաստ խա-ղաղութե երկնաւոր հանգստարանին ‖. Շնորհ։
* Կարդացեալ առ ես զաղջ ամենազօր ‖. Նար։
* ՛Ի սեղան արքայութե զմեզ հրաւիրէ ‖. Շարակ։
* Զգիրն ՛ի հոգի փոխարկէ ‖. Արիստակէս։
Նմանք ևս յարմարութե առնուն զնախդրիւ տրական. որպէս,
* Մի ևս համարեսցես զնոսա ՛ի մարդիկ ‖. Եսայ։
* Եթէ ես ինչ ստեցի այսմիկ երդման, հատցէ ած զվնաս ստութե իմոյ ՛ի գլուխ իմ. յովհ. կաթ։
* Ո՞ իցէ ՛ի ձէնջ մարդ՝ զոր խնդրեսցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա ‖. փոխանակ ասելոյ, յորմէ խնդրեսցէ. Մատ. և ղուկ։

Կանոն. Ը։

Բայք՝ որք առին չորրորդ հոլովի, այսինքն որք ունին զնշանակութի բացառական, (այս է՝ բառնալոյ կամ առնլոյ զինչ յայլմէ), առնուն զնախդրիւ ՛ի հոլովս բա-ցառական. զոր օրինակ, * Բարձէք ՛ի ձէնջ զընդու-նայն մխիթարութիւն ձեր ‖. Եսայ։
* Զձեզ ընտրեսցէ ած յամ ազգաց ‖. Անանիա։
* Մի ոք զձեր բաժինն ՛ի ձէնջ հատանիցէ ‖. Եղիշէ։
* Փարատեա ՛ի մտաց իմոց զմէգ մթութե ‖. Ներսէս։
* Հայցէր ՛ի կենացդ զմահ ‖. Շար։
* Նոքա առին ՛ի քէն զհեզութի, և մեզ աւանդեցին ‖. Լամբ։
Նմանք ըստ յարմարութե առնուն զբացառական. որպէս,
* Զտուն իւր յանիրաւ ստացուածոց անտի շինէ, և մեծանալ կարծէ ‖. Շնորհ։
* Հաստատեաց զաշխարհս յանկերպարան նիւթոյ ‖. Եզնակ։
* Սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն ‖. Ագաթ։

Կանոն. Ե.

Բայք՝ որք առին հինգերորդ կարգի, այսինքն որք ունին զնշանակութիւն պատմողական, (այս է՝ պատմելոյ, կամ խորհելոյ ինչ զայլմէ), առնուն զխնդիր պատմական. զոր օրինակ, * Պատմեսցուք կշռով զանպատումն զօրութիւն ||. Եփրեմ.
* Հրեշտակք զնմանէ խօսէին պարծանօք ||. Յոբ.
* Զսահմանակից ազգացն ընկեցանէ ||. Գէորգ.
* Զորոց և ոչ մի ոք յանձին կալաւ ճառընտրել ||. Խոր.
* Ոչ ապաքէն զայսմ առակ զնմանէ առակեսցեն ||. Ամբ.
* Մի՛ խորհեսջիր չար զումեքէ ||. Վարք հարց.
Ոմանք ըստ յարմարութե առնուն զպատմական. որպ,
* Երբ անօրէնք հուր հարին զքաղաքն ||. Առակ.
* Հանիցեն անուն չար զձէնջ վն որդւոյ մարդոյ ||. Ղուկ.
* Գրէր և կնքէր զերդումն, և հաղէր զաւետարանէն ||. Եղիշէ.

Կանոն. Զ.

Բայք՝ որք առին վեցերորդ կարգի, այսինքն որք նշանակեն զգործողութի առնելոյ զինչ իւիք՝ իբր գործեօք, կամ իբր միջնորդօք, առնուն զխնդիր գործիական. որպ, * Ծակօք իմն նշուէր զիւր և զամենացուն կենցաղս ||. Յովհ. Կաթ.
* Կերակրեցէին զնոսա քաղցրութ բանին Ճշմարտութե ||. Եզն.
* Զի որով պատժեցեր զհակառակորդսն, նովին զմեզ առ քեզ կոչեցեալ փառաւորեցեր ||. Իմաստ.
* Զանազան ծաղկօք զարդարեաց զերկիր ||. Նանայ.
* Ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս ||. Եղիշէ.
* Որ առատապէս սերմանէ, նա բազմապատիկ անձամբ զգիրկս իւր որայիւքն ||. Շնորհ.
Ոմանք ըստ յարմարութե առնուն զգործիական. որպ,
* Լուաւ ականջէն իշխանքն զմարդասիրութի ||. Եղիշ.
* Վարեսցէ զաշխարհ սրբութ և արդարութ ||. Իմաստ.
* Զըմպելի իմ արտասուօք խառնէի ||. Սաղ.
Նաև գիտելի է, զի որովհետև գործողութիք հաստա-

բակօրէն ևեթ կատարին, բայց վասն նշանակելոյ ըղ-
գործողութիւն՝ գրեթէ առ հասարակ կարեն առնուլ
զխնդիր գործիական, մանաւանդ անցողականքն. ո-
րոց վասն ոչ է հարկ տալ օրինակս :

Կանոն Է :

Բայք որք ասին եօթներորդ կարգի, այսինքն որք նշա-
նակեն զներգործել իրիք շուրջ զայլով, առնուն ըզ-
խնդիր պարառական. և սոքա են սակաւ յոյժ. դր,
*Որ սիրեն զօրէնս, պատեն զինքեամբք պարիսպ||. Տաթև :
*Շուրջ փակեալ զպարսպաւ զոսլոր քո՞քն||. Պատմ. Աղէք :
*Զ՝աչմն իւր յածեալ զեազմականօքն||. Նոյնն :
*Զ՛ի զանցուցանես զքև զպարգևս արքայութեան երկ-
նից||. Սեբերիանոս :

Նմանք մանաւանդ թէ բազումք՝ ըստ յարմարութե
առնուն զխնդիր պարառական. դր, *Զամենայն
վնասս զիւր գործոյն զխորհրդակցօքն արկանէր||. Եղիշէ :
*Լոկ զգօսացելովքն, որ 'ի հաւանութի ոչ կամին գալ,
սփռեսցէ զանձրև փայլատականցն 'ի կիզուլ||. Ագաթ :
*Ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարհաւն շրջէր||.
Յովհ. Կաթ :
*Զզօրս իւր զթիկամբք թողեալ, և ընտրեալ արս իւ-
րև ճ միայն՝ գան հասանեն 'ի ձորափոր||. Նոյնն :
*Զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին||. Մաշ :

Գիտելի է, զի ոմանք 'ի ներգործական բայից որք
հային 'ի ծաղր կամ յարհամարհանս, զպարառական
խնդիրն այնպէս սեպհականեն ինքեանց, մինչև 'ի տե-
ղի խնդրոյ սեռի առնուլ զայն. դր, *Ա՛ի ոք յանմի-
տաց ... այպանիցէ զբանիւք մերովք||. Շնորհ :
*Որ փանաքէ զընչիւք, անտրտում կայ||. Նեղոս :
*Փաղաքշէր զպօղոսիւ՝ տալ նմա արծաթ||. Ճառընտ :
*Որ հաւատայ պատժոց մեղաւորացն, և փառաց
արդարոցն, և զիմաստութիւն 'ի գործ ածէ, նշկահէ զմե-
ղօք||. Լամբ :

Գիտելի է ևս, զի երբեմն ներգործական բայք ինչ
(մանաւանդ բայս առնել), վասն յարելոյ 'ի պէսպէս
անուանս՝ իբր յանորոշ հայցականս, որովք իբր մի բայ

վարին, առնուն զխնդիր 'ի պարառական հոլովն. զր,
* Ռամկաց արարէք զնամիւք հրամանաց իմոց ||. յուդիթ.
* Մի՛ զանց արասջիր զմերով փրկութեամբս ||. սարգ.
* Ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյոյն խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի ||. խոր.

Կանոն. Է.

Բայք՝ որք ասին ունեւորք կարգի, այսինքն որք ունին զնշանակութի առնելոյ կամ ունելոյ ինչ յիմիք 'ի ներքս, առնուն զխնդիր ներգոյական. զր, * Դիզեցէք զգանձս մեր յերկինս. զի յորժամ երթայցեմք անդ, բացցուք, և ուրախ լիցուք ||. Տծբ.
* Մի պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութի ||. նար.
* Որ կամաւ կուրութի յինքն կրէ, ոչ երբէք կարէ նա գալ յառողջութի ||. յովհ. ոսկ.
* Ո սէրն այ ոչ տանէր յանձինս ||. յովհ.
* Ո՜ կոյրն թէպէտև յոսկի համակիցես՝ ոչ ինչ զգայ, և նորքօք ոչ ամբարտաւանէ ||. սարգ.
* Ո՜ հոգին կենդանի 'ի նմա բնակէր ||. լամբ.
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զներգոյական. զր,
* Ո՜ այնչափ չարչարանս բերէր 'ի մարմնի ||. գրիգ. լուս.
* Ի հրահանգս կրթութե վարժեցէք զնոսա ||. եղիշէ.
* Պարարեցաք զանձինս մեր 'ի զանազան խորտիկս ||. նոյնն.

Կանոն. Ը.

Բայք՝ որք ասին ըններգործ կարգի, այսինքն որք նշանակեն զներգործել ինչ ընդ պարագայիւք իւիք, առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութե. զոր օրինակ,
* Մի ընդ ստուերի այսր մթութե զանձառելիդ լոյս փոխանակէր ||. նարեկացի.
* Տուն ընդ տուն կցեմք. և ագարակ ընդ ագարակ խառնեմք ||. վեցօր.
* Ո իւր կամքն ոչ միաբանեաց ընդ կամացն այ ||. սարգ.
* Եթէ ցանկալի է քեզ ընդ նոսա (այ և սրբոց) բնակել զանձն քոյ, սրբեա զնա և պարզեալսն քոյ ||. ոսկեբեր.

* Օ հոգս կենցաղոյս հոգացեալ 'ի վերայ անձանց ‖ . Լամբ ։
* Կրճտէր զատամունսն 'ի վերայ Թագաւորին Գագկայ ‖ . Յովհ . Կաթ ։

Բազում բայք եւ ըստ յարմարութե՛ առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութե՛. որ, * Ի վերայ աւազոյ շինուածս յիմարութե՛ հաստոյց ‖ . Նար ։
* Այս զդուռն հաստեաց (զուլտ) ուխտ իւր ‖ . Ծննդոց ։
* Իսկ կեանքն … զմահ քան զկեանս ընտրէին ‖ . Եղիշէ ։

Այլ գիտելի է, զի դրեթէ ա՛մ բայք կարեն առնուլ զխնդիր 'ի ձեռն նախադրութե՛ պէսպէս օրինակաւ ։

Կանոն . Ծ ։

Անցողական բայք հասարակօրէն զայնպիսի խնդիր բնութե՛ առնուն, զորպիսի պահանջեն բայքն յորոց բղխեն . որ, * Յեցուցանէ զդրդուեալ եկեղեցի մեր 'ի գաւազանն երկաթի ‖ . Լամբ ։
* Ճանապարհի նմանեցոյց զարդարութեանն ‖ . Խոսրով ։
* Խոնարհութի՛ զա՛ծ 'ի մարդիկ խոնարհեցոյց, և զմարդիկ 'ի խոնարհութե՛ յերկինս բարձրացոյց ‖ . Սարգ ։
* Անհնար է զրկողին ողորմութի՛ գտանել յա՛յ՝ եթէ զզրկանսն 'ի զրկեալն ոչ դարձուցանէ ‖ . Նոյնն ։
* Որպէս անցուց ընդ ընկերն իւր՝ նոյն անցք անցանեն ընդ նա ‖ . Մծբ ։
* Որ ախտիցն՝ յօժարութե՛ տուեալ տեղի … (և) խնամուլ Բնաւորութեանն յինքեան զխմորն չարութե՛ . . . ոչ է, և ոչ ասի 'ոք այնպիսին ‖ . Շնորհ ։

Կանոն . ԾԱ ։

Բայք բարդք և բաղադրեալք, թէ ներգործականք, և թէ չեզոքականք, որոց նշանակութիւն չիցէ ըստ ա՛մի փոփոխեալ, իբր 'ի բազումս զայնպիսի խնդիր բնութե՛ առնուն՝ զորպիսի պահանջեն 'ի պարզ գոյն իւրեանց . զոր օրինակ, * Օ ա՛մ բարեաց ըղտիպսն և զօրինակսն փութասջիք յանձինս ձեր նկարագրել ‖ . Շնորհ ։
* Մերժեցուցեալ յորդեղրութի՛ զախեղերս ‖ . Ղազար . Փարպ ։

* Զհնազանդեալ ա̃ծական հրամանին՝ տարաբերէր 'ի չարիս. և անտի լինէր սկիզբն չարեաց ‖. Եղիշէ:
* Առատ նմա զպատիւ արդարոցն ... զի առ յոյս քաղցրագունից՝ 'ի բարիսն ջեռնարկեսցէ ‖. Սարգ:

Իսկ որք զայլ խնդիր առնուն՝ վերաբերին 'ի նշանակութիւնս այնց բայից, զորս եդաք՝ և դնելոց եմք յայլ կանոնս:

Այլ վասն բայից՝ որք բարդին 'ի բառից Բանեմ և խօսեմ, գիտելի է. զի սոքա առհասարակ երբեմն իբր ներգործական վարին, և երբեմն իբր չեզոքական: Յորժամ իբր ներգործական վարին, հասարակօրէն առնուն զխնդիր բնութեան 'ի հոլովս տրական. որպէս, * Զմարմնոյն յատկութիւն ոչ խորշի պօղոս ճոխաբանել մեզ ‖. Գր. Նար:
* Յանլուր ականջս ոչ է օգուտ ինչ (զյորդորանս) երկայնաբանել. այլ՝ զուր աշխատանք ‖. Խոսրով:
Իսկ յորժամ իբր չեզոքական վարին, ըստ ինքեան պահանջեն զխնդիր 'ի հոլովս պատճառական. որպէս, * Պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զընաւից ողբերգաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց ‖. Նարեկ:
* Որ չարախօսեսցէ զհօրն կամ զմօրն՝ մահու վախճանեսցի ‖. Մարկ:

Կանոն. ԺԷ:

Ներգործական բայքս՝ Չափեմ, առնեմ. շինեմ. եւն, յորժամ յարին յայնպիսի անուանս, որք ունին զնշանակութիւն չափման. որպէս լայնութիւն, երկայնութիւն, կանգնոյ, կշռոյ, եւն, առնուն զնոսա իբր երկրորդական խնդիր 'ի պէսպէս հոլովս:
Երբեմն մանաւանդ թէ բազում անգամ յուղղականն. որպէս, * Նա չափեաց զերկայնութիւն նորա Ծ կանգուն, և զլայնութիւնն Ի կանգուն ‖. Եզեկ:
* Արար բարձրութ պարսպին Հ կանգուն ‖. Յովսէփ:
* Նա շինեաց Ի կանգուն ... զմի կողմանոյն ‖. Թագ:
* Առ քեզ ... հերիկ՝ հինգ հարիւր սիկղ ‖. Ելից:
Երբեմն 'ի բացառականն. որպէս, * Նա չափեաց զորմ

տաճարին 'ի վեց կանգնոյ, և զլայնութիւն կողման տանն 'ի չորից կանգնոց ‖ . Եզեկ ։

* 'Ի տասն կանգնոյ զերկայնութիւն միոյ սիւնակին առնիցես, և 'ի միոջէ կանգնոյ և 'ի կիսոյ զթանձրութիւն և զլայնութիւն միոյ սիւնակին ‖ . Ելից ։

* Եւ նեցուկք 'ի ներքոյ նորա՝ շուրջանակի պատէին զնա 'ի տասն կանգնոյ ‖ . Գ . Թագ ։

Երբեմն 'ի գործիականն . որպէս, * Եւ չափեաց հազար չափովն զուղխսն ‖ . Եզեկ ։

* Մա ... իւղ ձիթենեաց հիմննեաւ միով ‖ . Ելից ։

* Եւ գօտեւորք երեսունևերեք կանգնովք պատէին զնա շուրջանակի ‖ . Ա . Թագ ։

Երբեմն յուղղականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն . որպէս, * Եւ չափեաց զսրահն յերկայնութիւն Ճ կանգուն, և 'ի լայնութիւն Ճ կանգուն ‖ . Եզեկ ։

* Եւ զկամար սեանցն արար յիսուն կանգուն յերկայնութիւն, և երեսուն 'ի լայնութիւն ‖ . Գ . Թագ ։

* Շինեաց խրճիթ 'ի լայնութիւն ոտնաչափս չորս, և յերկայնութիւն ոտնաչափս ութ ‖ . Վարք հարց ։

Երբեմն 'ի գործիականն և 'ի նախդրիւ տրականն միանգամայն . որպէս, * Արարեալ զնա կանգնաւ յերկայնութիւն, և կանգնաւ 'ի լայնութիւն ‖ . Ելից ։

* Արարեալ զնա չորեքանկիւնի՝ թզաւ յերկայնութիւն, և թզաւ 'ի լայնութիւն ‖ . Նոյն ։

* Չորեքկուսի և կրկին գործեաց զտախտակն՝ թզաւ յերկայնութիւն, և թզաւ 'ի լայնութիւն ‖ . Նոյն ։

Կանոն . ԾԳ ։

'Ներգործական բայքս՝ Վաճառել, գնել . վարձել . 'ի վարձու տալ . առ արծաթել . ևն . և որք յարին յանուանս գնոց, առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն՝ իբր զերկրորդական . որպէս, * Վաճառեցին զյովսէփ իսմայելացւոցն քսան դահեկանի ‖ . Ծնն ։

* Գնեաց զնա իննսուն դահեկանի ‖ . Վարք հարց ։

* Զոր վաճառեաց Լ արծաթոյ ‖ . Եփրեմ ։

* Ո՞չ դահեկանի միոջ առ արժէր ընդ իս ‖ . Նար ։

* Ստացաւ զվիճակ անդին ... Ճ ոչխարի ‖ . Ծնն ։

* Բայց թէ կամիս՝ փողոյ փողոյ առնուլ ‖ . Վարք հարց.

Այսպիսի բայք երբեմն փոխանակ սեռականի առ-նուն զայլ հոլովս. կամ նախադրութիւն ընդ. զոր օրինակ, * Օ եղբայր խուրեանց համաձայնեցին՝ ընդ Ը դահեկանին ‖ . յճ որդէ.

* Նա հարցեալ նոքօք (որ է արծաթովք) աքխմելէք արս որիկայս և զարհուրեցուցիչս ‖ . Դաւ.

* Արէ վարձս մշակացն աւուրն դահեկան ‖ . Մատ.

* Տուգանեալ զիս հարիւր լիտր ոսկւոյ ‖ . Ոսկէբ.

* Մատոյց ես զնոսա 'ի գնոց արծաթոյ ‖ . յոհն. Խաչ.

Իսկ բայքս՝ հարկանել, և զարկանել կամ զարկուցանել՝ իբր 'ի բազում առնուն զնախդրիւ սեռական իբրև զխնդիր յարմարական. որ, * Օ մանկունս ծնեալ մեզ 'ի քաղդէացւոց սերմանէն՝ զվիմի հարցուք ‖ . լամբ.

* Յետս յետս տարեալ՝ զարկոյց զգետնի ‖ . Խորէն.

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս Խնդրոյ Կրաւորական Բայից.

Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հոլովս բացառական. որ, * Յաղթեցաւ ողորմութիւն յարդարութենէ ‖ . լամբ. առեն. Այս կրաւորական բայս յաղթեցաւ՝ առեալ է խնդիր սեռի զբացառական հոլովդ յարդարութենէ. իսկ ողորմութիւն է անուն բայիս յաղթեցաւ.

Ըստ այսմ և հասարակ բայք՝ յորժամ կրաւորականաբար վարին, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովս. որ, * Պետրոս՝ վէմ դաւանեցաւ յամենեցուն բերանոյն ‖ . Մաշտ. Վերծանող. Ձաւ փառատեան.

Բայց գիտելի է, զի բազում անգամ կրաւորական բայք, և և հասարակք, զօրութ. ունին զխնդիր սեռին. զոր օրինակ, * Հանապազ ջաղջին, և ոչ երբէք խրատին ‖ . Նարեկ.

Երբեմն ևս կրաւորական բայք իբր չեզոքական վարելով՝ ոչ պահանջեն զխնդիր սեռի. որ, * Հաւատով հաստատի սէրն ճշմարիտ ‖ . Նգբ.

Գիտելի է դարձեալ, զի կրաւորական բայք եր-բեմն փոխանակ բացառականի զայնպիսի խնդիր առ-

նուն, որ ըստ իմիք համարի նոցա այն իբր խնդիր սեռի և այս յայտ է 'ի գործիական հոլովն . օր, * Զարն բարեաւն յաղթէ, և ոչ չարեաւն ‖ . փոխանակ ասելոյ, 'ի բարւոյն՝ և ոչ 'ի չարէն ‖ . Լամբ ։
* Աշաւակեցաւ անմեղութեն քո պարտականն մեղաց աշխարհի ‖ . փխկ ասելոյ, յանմեղութենէ քո . Լամբ ։
* 'Ի խէթ խղճիս խոցոտեմ, և բոցով շնչոյս ճենճերեմ ‖ . փոխանակ ասելոյ, 'ի խթմանէ խղճիս, նա . Նար ։

Իսկ թէ զորպիսի խնդիր բնութե առնուն կրաւորական բայք, ոչ է հարկ գրել ինչ . զի զայնպիսի առնուն՝ զորպիսի պահանջեն ներգործականք իւրեանց . և այն 'ի վերինս իւրեանց իբր չեզոքական . օր, * Լոյս ոչ ծածկի 'ի խաւար, այլ զխաւարն լուսաւորէ ‖ . յաճախ ։
* Առագաստին թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ ‖ . Նարեկ ։
* Ես ծանուցեալ եմ ինձ, և ոչ անծանօթ յինէն ‖ . Ճառըն ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յաղագս խնդրոյ Չեզոքական բայից ։

Չեզոքական բայք՝ թէ ներգործակերպք և թէ կրաւորակերպք՝ ոչ առնուն զխնդիր սեռի . զի 'ի սեռէ իւրեանց ոչ նշանակեն զներգործել գործողին յենթակայն՝ այլ զենթակայիւ . վասն որոյ միայն ըստ նշանակելոյ բնութե իւրեանց առնուն զխնդիր 'ի պէսպէս հոլովս ։ Եւ որպէս ասացաք զներգործականաց, սոյնպէս և սոքա չորեքկին առնուն զայսպիսի խնդիր ։

Նախ՝ ըստ Բնական, որ և ասի՝ Բառին խնդիր . այսինքն այնպիսի՝ զոր բնութի բային 'ի նշանակութէ իւրմէ նախ պահանջէ . որպէս բայս Գամ՝ 'ի նշանակութենէ իւրմէ նախ պահանջէ զնախդրիւ տրական . զոր օրինակ,
* Որ առնէ զճշմարտութի՝ գայ առ լոյսն ‖ . Յովհ ։

Երկրորդ՝ ըստ Յարմարականի . այսինքն զայնպիսի՝ որ դնի 'ի տեղի բուն խնդրոյ՝ յայլ հոլով՝ քան զոր բնութի բային ըստ ինքեան պահանջէ . որպէս եթէ գամ բային փոխանակ առնլոյ զնախդրիւ տրական՝ առնուցու զպարառական, զոր օրինակ, * Միշտ զերկրաւ գամ ‖ . Խոր ։

Կամ համդերձ նախադրութեամբ. զոր օրինակ, * Յանկարծակի գայցէ 'ի վերայ նոցա մահ ||. ՅԱՃԱԽ.

Երրորդ՝ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ. այսինքն զայնպիսի՝ զոր երկրորդաբար պահանջէ բնութի բային. որպէս բայս գամ՝ երկրորդաբար կարէ առնուլ զբացառական. զոր օրինակ, * Գային առ նա յամ կողմանց ||. ՄԱՐԿ։

Չորրորդ՝ ՊԱՐԱՀԱԿԱՆ. այսինքն զայնպիսի՝ որ ըստ ինքեան ոչ պատշաճի բնութեն բային, այլ ըստ պատահման միայն, և կամ ըստ հեռաւոր ինչ պատշաճողութեն. որպէս եթէ գամ բայն ըստ պատահման առնուցու զխնդիր 'ի հոլովս գործիական կամ նախադրութբ. որ, * Գամ անուամբ տն զօրութեց ||. Ա. ԹԱԳ։
* Բազում հիւանդութիք վն մեղաց գան ||. ԳԷՈՐԳ։

Իսկ առ 'ի որոշել՝ թէ չեզոքական բայք յոր հոլովս առնուն զխնդիր բնութեն ըստ ինքեան՝ դիցուք զմատասան կանոնս համդերձ օրինակօք ինչ. յորս յաւելցուք և զօրինակս խնդրոց յարմարականաց։

Կանոն. Ա։

Չեզոքական բայք ոչ առնուն զխնդիր բնութեն ըստ ինքեան յուղղական հոլովս. այլ երկրորդաբար միայն, կամ ըստ պատահման, և կմ ըստ յարմարութեն. զոր օրինակ, * Երէնք տճային կոչեն Թագաւոր 'ի վերայ տմի ||. ԵՂԻՇԷ։
* Ընդէր (ով արծաթասէր՝) համարիցիս և ագահ, ճանաչիցես 'ի գերեզմանն ||. ԱՒԳ։
* Մն զի կեղծաւորութի է, ոմ 'ի տեսարանսն ռամիկ գոլով (որք՝) Թագաւոր կերպարանին ||. ՆՈՅՆ։
* Սուտի է, և ճշմարտութե յանձնայ ||. ՆՈՅՆ։
* Մարդն ԳԱՐՇԱՒ, և զմարմնոյ իւրս սիրեցաք, և զհնի մարմնական իւրոց ընթացաք ||. ԽՈՐԵՆ։
* Ախտացեալք ըստ մարմնոյ՝ գտան ՔՆՉԱՌՈՂՔ ||. ԼԱՄԲ։

Կանոն. Բ։

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի հեռաւորական կամ հաղորդական, առնուն զվերջահոլով տրական. որ, * Օտարունի պատուէրն լքեալ՝ թելադրութե օձին հետևեմ ||. ՆԱՐԷԿ։

* Ծառայեսցէ անմիտն իմաստնոյն ‖ · առակ ·
* Հաւասարեսցէ մահս մեր մահուան արդարոցն ‖ · Եղիշէ ·
* Այս ամենայն չարիք յաջողեցան նմա ‖ · Եղիշէ ·
* Կարօտին գերեզմանի, և ոչ հասանեմ ‖ · յոբ ·
* Ներան անխրատից դեղեցկանայ չարեաց ‖ · առակ ·

Ոմանք ըստ յարմարութեան առնուն զվերջահոլով տրա-կան · զոր օրինակ, * Շրթունք քահանային պահպանես-ցեն գիտութ ‖ · Մաղաք ·
* Ծանրասցի գործ մարդկանն, և այնմ հոգասցեն · և մի հոգասցեն 'ի բանս տարապարտս ‖ · Ելից ·
* Կացաք հնազանդ իրաւանց, և ոչ էր ‖ · Եսայ ·

Կանոն · Գ ·

Չէզոքական բայք՝ որք ունին զնշանակութի առ այլ (այսինքն որք ցուցանեն իբր զբերումն առ ինն), առ-նուն զնախդրիւ տրական · զոր օրինակ, * Գնաց մարդ 'ի տուն իւր յաւիտենից ‖ · ժողով ·
* Որ յառաջ 'ի մեծութի, կործանեսցի ‖ · առակ ·
* Յանձն չար արուեստ իմաստութ ոչ մտցէ ‖ · Իմաստ ·
* Մարդ հայի յերեսս, և ած հայի 'ի սիրտս ‖ · Ա. Թագ ·
* Մի՛ նախանձեսցիս ընդ ճանապարհս անօրինաց ‖ · առակ ·
* Ոչ այնքան ուրախանան՝ յառնել մեծութին՝ որքան տրտմին 'ի պակասելն ‖ · Սարգ ·

Ոմանք ըստ յարմարութեան առնուն զնախդրիւ տրական · զր, * 'Ի պատուիրանս քո հոգայց ‖ · Սաղմոս ·
* Մի՛ տարեր 'ի գիրկս, որ ոչ քո իցեն ‖ · առակ ·
* Որչափ դեգերեսցիս առ քեզ, ախորժես ‖ · Խորէն ·

Կանոն · Դ ·

Չէզոքական բայք՝ որք ունին զնշանակութի յայլ-մէ, առնուն զխնդիր բացառական · զր, * Նու հուր մե-ղաց 'ի կողէն ադամայ՝ հրդեհել զամ մարդկային բնութիւն · Եւ ջուր 'ի կողէն յսի՝ շիջուցանել զամ հրր-դեհն անօրէնութե ‖ · Սարգիս ·
* Ամբարհաւաճեալ ... հրեշտակն 'ի փառացն ‖ · յաճախ ·
* Զերծեալ 'ի մախանացն գերութ · ազատեալ 'ի ծառայե-ցուցիչն իշխանութե ‖ · Լամբ ·

* Անմիտքն ոչ 'ի յանդիմանութէն, այլ՝ 'ի տանջանացն երկնչին ||. Գէորգ Վրդ:
* Պատրանօք նախաստեղծին մերկացաք 'ի լուսոյն ||. Շար:
* Սթափեցայց 'ի խելագարութենէ ||. Սարգ:
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զբացառական. որ,
* Հաւատացեալքն ոչինչ երկմտութ̃ թերահաւատէին յառաջին խրատուէ՛ք վարդապետացն իւրեանց ||. Եղիշէ:
* 'Ի բարեաց գործոց և 'ի հաւատոց հեղգացան ||. Լամբ:
* 'Ի բազում փայտից պատարագաց հուր ||. Տաթև:

Կանոն. Է:

Զեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի գոհանալոյ, կամ տրտնջելոյ, առնուն զխնդիր պատմական. և սոքա են սակաւ յոյժ. Է որս կարէ դասել և բայս հոգւոյ. զոր օրինակ, * Գոհացայց միշտ զառատ ողորմութէ նորա ||. Խոս:
* Ոմք տրտնջէին զՔ̃յ ... Թոյլ տայ կրել չարչարանս ||. Շնորհ. Թղթ:
* Խրտնջէին զքէն առ պարսօքն ||. Եղիշէ:
* Օ այսոսիկ գրելով՝ զանձնես դատապարտեցիմ ||. Սարգ:
* Ո՞չ թէ որքան ամբոխեն լինի զնոցանէ ա̃ծ ||. Լամբ:
* Օ փառաց ինչ ոչ հոգայցէ (ոք̃) ||. Սարգ:
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զպատմական. որ,
* Օ կատարածէ աշխարհիս ահնարկէ ||. Գէորգ:
* Զարմէր առաւել բանն զնմանէ ||. Շնոր:
* Գու և ժողովուրդ քո գոհանալ էր զՔ̃յ ||. Բարսղ:
* Լուեն զա̃ծպլիտութ̃ն՝ անհնարին կորուստ ||. Աթանաս:

Կանոն. Ը:

Զեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութիւն իւիք լինելի, առնուն զխնդիր գործիական. զոր օրինակ, * Խոյովքդ վաստակօք պահեցայց ... աւազանին զգեստիւ պերճացայց ||. Նար:
* Պարարտացան դաշտք արդարութ̃բ, և գեղեցկացան անապատք մաքուր կուսութ̃բ ||. Շար:
* Եւ սակայն աչն նորա ոչ յագէր մեծութ̃բ ||. Ծովոյ:

* Որ ըստ օրէ աւուրք կենացս նուազին․ զի բուսանիմք 'ի պատանեկութե․ ծաղկիմք երիտասարդութե․ թարշամիմք ծերութե․ յորդանամ մահուամբ ‖ ․ Լամբ ։
* Ճառագայթիւք աղօթից նորա պայծառանայ ‖ ․ Երզն ։
* Ցաւօք վարանեալ եմ ‖ ․ Յոբ ։

Ամենք ըստ յարմարութե առնուն զգործիական․ որ,
* Եթէ որդւովք պարծիս դու, գերի վարին նոքա 'ի քէն ‖ ․ Մծբ ։
* Մ՛եք զած հաւատի ուսաք, և տակաւին ես կորըս– տեան ճանապարհաւ գնամ ‖ ․ Եփնաս ։
* Իսկ որք ատեանն զյանդիմանութի, վախճանեսցին անարգանօք ‖ ․ առակ ։

Նաև գիտելի է, զի որպէս ասացաք զներգործական բայից, նոյնպէս և չեզոքական բայք՝ գրեթէ առհա– սարակ կարեն առնուլ զխնդիր գործիական ։

Կանոն․ Է ։

Չեզոքական բայք՝ որք ունին զնշանակութի շուրջ զայլով, առնուն զխնդիր պարառական․ և սոքա են սակաւ յոյժ․ որ, * Անկեալ 'ի վերայ, ճարէին զպարա– նոցաւ նորա ‖ ․ Վարք հարց ։
* Ոչ պատեսցին զինև մառախուղք 'ի ձօնելն զքեզ ‖ ․ Նարեկ ։
* Աչք անմտի զվայրօք յածին ‖ ․ առակ ։
* Իսկ այս պատիւ, որ սորայս է, գերազանցեաց զամե– նեքումբք ‖ ․ սարգ ։

Ամենք ըստ յարմարութե առնուն զպարառական․ զոր օրինակ, * Ծնծաղին զինև յետինք ‖ ․ Յոբ ։
* Խորհուրդք բարեաց պճնազարդեսցին զքև ‖ ․ առակ ։
* Սպառնալիք մահու անցին զնոքօք ‖ ․ Եղիշէ ։
* Նաև զամօթ արհամարհեր, և զերկիւղիւն 'ի վեր ելաներ ‖ ․ Գրիգոր Նար ։

Կանոն․ Ը ։

Չեզոքական բայք՝ որք նշանակեն զգործողութի յի– մեք կամ ուրեք լինելի, առնուն զխնդիր ներգոյա–

կան որ, * Ոչ ինչ 'ի սահմանեալ ուխտին՝ որ 'ի մէջ նոցա ||. յովհ. կաթ.
* 'Ի յոյս հաստատեմ, և 'ի միտս պատանեմ ||. նար.
* Եթէ յիս բնակէ, կենդանի եմ ես ||. սոփ.
* 'Ի սիրտ առատ հանգչի իմաստութիւն ||. առակ.
* Որք 'ի մարգս և յաղբերականս և 'ի յոլ օդս շփօթեցան, սրատեսք և քաջահայեացք լինին ||. խոսրով.
* 'Ի մշտնջենաւորութիւնս սաղմոսս համարէր ||. յովհ. կաթ.
Ոմանք ըստ յարմարութեան առնուն զներգոյական. որ,
* Ուրեմն որդորանաւ 'ի բանս իւր առաքեալ ||. լամբ.
* Յանձանձրոյթ աղօթս նահատակէր ||. յովհ. կաթ.
* Որ չարչարեցար 'ի խաչին վն ազգի մարդկան ||. շար.

Կանոն. Բ.

Չեզոքական բայք՝ որոց նշանակութիւն նկատի 'ի պարագայս իրիք, առնուն զխնդիր 'ի ձեռն նախադրութեանց. որ, * Յորժամ բռնութբ կռուեցաք ընդ աշխարհիս, աշխարհս 'ի բաց քանդի. և մեք 'ի պատուհասէ չապրիմք ||. եղիշէ.
* Խաղայր ը̄ խաղաղական որդւոյ իւրում ||. ծնն.
* Ա'րթ նախ հաշտեաց ը̄ եղբօր քում. և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո ||. մատթ.
* Հեծեծեցաք 'ի վերայ վերալից հոգւոց ||. սարգ.
* Թագաւորէ 'ի վերայ պարթևաց արշակ քաջ ||. խոր.
* Հաւանեցայ աջ քո տր 'ի վր ստեղծուածոց քոց ||. շար.
Բազումք ևս ը̄ յարմարութեան առնուն զխնդիր նախադրութբ. որ, * Յաւէտ զերծեցաք 'ի վերայ իմ արքայութին այ ||. նար.
* Օճանէի ես զկնի ոկարութեն նորա ||. վարք հարց.
* Տենչացան զհետ երանաւէտ ձայնին ||. շար.

Կանոն. Գ.

Բայք չեզոքականք, կամ որք իբր չեզոքական վարին, յորժամ յարին յանուանս աւուրց և ժամանակաց, առնուն զնոսին խնդիր փոխանակ ներգոյականի 'ի հայցական հոլովի՝ իբր զխնդիր պատահական,

կամ երկրորդական. որ, * 'Ի հաղորդութեն զամ մի ողջոյն, և զևս բազումս հրաժարէին ||. Խոր. Ուր հայցական հոլովքս՝ կամ ի ողջոյն, և զևս բազումս՝ են պատահական խնդիր չեզոքական բայիս հրաժարէին. Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակս.
* Սաստկանայր գործ պատերազմին դառնութեն զերկուս ամս ||. Եղիշէ.
* Շրջեցաւ յաշխարհի կատարիչն ամի զամս Է ||. Խորեն.
* Մնացեալ կաղնեալ զգիշերն ամենայն ||. Եղիշէ.
* Դու ես՝ որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երթևեկել 'ի քէն զբովանդակ կենացն սահման ||. Նար.

Որպէս զչեզոքականաց ասացաք, սոյնպէս իմա և զներգործականաց և զկրաւորականաց, ևս և զհականաց. զի սոքա ևս 'ի յարին յայսպիսի անուանս՝ առնուն զնոսին 'ի հայցական հոլովս. որ, * Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ զամ աւուրս կենաց իմոց ||. Շար.
* Պատուէր հրամանի տուեալ աշխարհին՝ զողջոյն ամիսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուած առ ած ||. Եղիշէ.
* Եւ տր ած վերծեաց զքուն յարքայէ զգիշերն զայն ||. Եսթեր.
Փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս ||. Ղուկ.
* Գետնախշտիք ըմպէին զինն ամ և զվեց ամիս ||. Եղիշ.

Այսպիսի խնդիրք բազում անգամ առանց զայի դնին. որ, * Եկաց (յուսիկ) 'ի հայրապետութեան ամս Զ ||. Բուզ. Հայր.
* Կռուեցան տարի Գ Է աղուանից արքային ||. Եղիշէ.
* Տիտոս զինն ամս պաշարեաց զեհմ ||. Ղուկ. Խոր.
* Եւ եղեն 'ի տապանին ճծ ամս և ծ օր ||. Ծնն.

Այլ քանզի այսպիսի խնդիրք ունին զզօրութի ներգոյականի, բազում անգամ 'ի ներգոյական հոլովս դնին. որ, * Յաւուրս քառասուն երևել նոցա ||. Գործ.
* Յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն ||. Ղուկ.
* Յիններորդ ժամուն ետ զհոգի իւր 'ի ձեռս հօր ||. Ծնն.
* Յամառանն երրորդի եկին հասին յաշխարհն հայոց ||. Եղիշէ.

Գիտելի է ևս, զի այսպիսի խնդիրք երբեմն դնին նաև յայլ հոլովս մանաւանդ 'ի պարառականն. որ,

* Որ անձաշակ լինելով շեղամանժամանակեայ տարրէն՝ յօ-
ժարութեամբ բարձեր զկարիս մարմնոյ ||. Ղար.
* Զ ինն ժամուն գոչեաց Յս 'ի ձայն մեծ ||. Մատթ.
* Զհասարակ գիշերաւ ես մտից 'ի մէջ Եգիպտոսի ||. Ել.
* Նա այնմ կայր մեծ ժամս յանհնարին պրկոցին ||. Եղիշ.

Կանոն. ԺԱ.

Իսկ չեզոքականք՝ ես և կրաւորականք յորժամ յարին յայնպիսի անուանս՝ որք են արմատք նց կամ ածանցեալք յարմատոյ նոցին, իբր 'ի բազումս առնուն զնոսին 'ի հայցական հոլովս փոխանակ գործիականի. որպէս, * Եթէ կամիս ով մարդ ճանաչել զանկշռելի մեծութիւն, ես ցուցանեմ զօրինակն ||. Ոսկ.
* Զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց ||. Եղիշէ.

Իսկ այսմ լինի և 'ի յարաբերականս արմատոյ բայից. որպէս, * Ընկալցին զանարգանս իւրեանց մոլորութեան՝ որ մոլորեցան ||. Եզեկ.
* Ամենայն անխրատութիւնք նորա, որ անխրատեալ իցէ, մի յիշեսցին ||. Եզեկ.

Նոյնպէս հայցական հոլովք արմատոյ բայից՝ դնին երբեմն առանց նախդրի իբր անորոշ հայցական, կամ իբր ուղղական. որպէս, * Տրտմեցաւ Յովնան տրտմութիւն մեծ ||. այսինքն տրտմութեամբ մեծաւ. Յովն.
* Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ ||. Մատթ.

Երբեմն և բայք ինչ վասն վայելչութեան և եթ յարեալ յայլ անուանս՝ առնուն զնոսին խնդիր բնութեան 'ի հայցական հոլովս, վասն ունելոյ զմերձաւորութիւն ինչ, կամ զյարաբերութիւն առ նշանակութիւն արմատոյ այնր բային՝ որոյ լեալ է խնդիր. որպէս, * Յաղագս որոյ պէտք են, զի և զձրագունս զխոութեան պայծառ ունիցին, զի մի խաւարեալք տգիտութեամբ՝ ննջեսցեն զմեղացն քուն ||. Եփրեմ. փոխանակ ասելոյ՝ թմրեսցին քնով մեղաց.
* Նորա զծաղրալից երկիւղն աներկնայքն ||. Խմառ.
* Տեսցուք մեր առաջնոցն զանախտաւորութիւն երկնաւոր ||. Եղիշէ.

* Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել քեզ ‖ · այսինքն այնո-
քիւք չարչարանօք չարչարիլ · Ղուկ ։
* Նա, որ այսմ ցանկայ, յորժամ 'ի ծայրս ամ մե-
ծութեն հասանէ՝ զտիրապետն զուարճանայ ‖ · այսինքն
տիրապես զուարճութե զուարճանայ · Լամբ ։

Գիտելի է ևս, զի բայքս՝ Գնամ, երթամ, ընթանամ և
ուղևորիմ, 'ի յարելն 'ի բառս՝ ճանապարհ, ուղի, պողո-
տայ, եւն, թէպէտև պահանջեն առնուլ զնոսա 'ի նախ-
դրիւ տրականն, բայց բազում անգամ ևս առնուն 'ի
հայցականն · որպ, * Այր անօրէն և անզգամ գնայ ըզ-
ճանապարհս թիւրս ‖ · փոխանակ ասելոյ, 'ի ճանա-
պարհս · Առակ ։
* Սգով և տրտմութե երթայի զերկայնութի ճանա-
պարհին ‖ · փոխանակ ասելոյ, յերկայնութի ճանա-
պարհին · Եղիշէ ։

ԳԼՈՒԽ ԻԲ ։

Յաղագս խնդրառութեան Գործառական բայից ։

Աստ խնդրառութե սոցա պարտ է գիտել, զի այն
բայք՝ որք ասին ըստ պատահման դիմազուրկ · որպէս՝
ըստանայ, մթանայ, յաճախէ, հասանէ, պատահէ, ջեռնէ · եւն ։
ևս և այն բայք՝ որք ասին ըստ պատշաճի դիմազուրկ ·
որպէս՝ մարթի, թուի, կարծի, ցուի · եւն, առնուն զխըն-
դիր 'ի վերջահօլով տրականն, ըստ նմին երբեմն և զայլ
խնդիր · որպ, * Նա ըստացաւ նոցա 'ի քերբոն ‖ · Է · Թագ ։
* Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ ‖ · Յայտ ։
* Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով, և հայիցի յետս՝ ե-
թէ յաջողեսցի ինչ արքայութե այ ‖ · Ղուկ ։
* Խաւարեցոյն մտօք և զրկեցոյն 'ի ճշմարտութենէ
դառն թուի ածային օրինադրութի ‖ · Խոսրով ։
* Չարչարի, և անչարչարելի կարծի լինքեան ‖ · Շնորհ ·
Թղթ ։

Սոյնպէս և այն բայք, որք ասին բացարձակ կամ
ըստ ինքեան դիմազուրկ · որպէս՝ վայել է · պարտ է · եւն,
առնուն զվերջահօլով տրական · որպ, * Վայել է ծա-
ռայից այ միշտ օրհնել զնա ‖ · Խոսրով ։ Ուր ծառայից

ող՝ է տրական խնդիր բայից վայելէ. իսկ աներևոյթ բայս Դիր օրինէլ՝ է անուն բայի։ Ըստ այսմ է և 'ի սոսին։

* Անդէպ է եպիսկոպոսին հպարտութիւն և գոռոզութիւն լինել առ հնազանդեալ ժողովուրդսն ‖. Շնորհ. Ը.

* Իմաստասիրին պարտ և արժան է ազատամիտ լինել 'ի նախանձուէ ‖. Սարգ.

Այսպիսի բայք երբեմն առանց խնդրոյ դնին. որպ.

* Ուր զինչ արդեօք պարտ է յառաւակէս ուսանել ‖. Եփր.

* Պարտ է ուսուցանել . . . յորժամ նախ ինքն առնիցէ՝ զոր ինչ այլոց ուսուցանէ ‖. Վարք հարց.

* Անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ ‖. Նարեկ.

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս խնդրառութեան Եական բայից.

Եական բայք հասարակօրէն առնուն զխնդիր յուղղական հոլովս. որպ. * Այգին փշաբեր՝ փշալից եղև ‖. Ճծբ.

Որ փշալից է ուղղական խնդիր եական բայիս եղև. իսկ այգին փշաբեր՝ է անուն բայի։ Ըստ այսմ են և սոքին։

* Այս են որթն ճշմարիտ, և հայր իմ մշակ է ‖. Յովհ.

* Բարք մարդկան հակառակասէր է ‖. Լամբ.

* Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան ‖. Խորեն.

Այլ աստ պարտ է 'ի միտ առնուլ բարւոք, զի եթէ եական բայք՝ իցեն յոգնակի, ուղղական խնդիրն բազում անգամ դնի եզակի. որպ. * Դուք էք աղ երկրի ‖. Մաթ.

* Որոց առաջնորդութեան՝ հայրենի դաստիարակութիւք ողջմնկեց լինեսցին ‖. Գրիգոր Նար.

* Տաճար էիք հոգւոյն սրբոյ, արդ գողարան դիւաց լինիջիք ‖. Եղիշէ.

Այսպիսի ուղղական խնդիրք՝ ուրեք ուրեք դնին ևս և 'ի նախդրիւ տրականն իբր յարմարական խնդիր. որպ. * Այս եղիցի ձեզ 'ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս ‖. փոխանակ ասելոյ, ես ե-

ղեց ձեզ Հայր, և դուք եղիջիք ինձ ուստերք և դըս-տերք ․ Բ ․ Կոր ։

Գիտելի է, զի եական բայք յորժամ յարին յայն-պիսի անուանս՝ որք ունին զնշանակութիւն ժամանա-կաց, չափուց և գնոց, առնուն զնոսին խնդիր 'ի սե-ռական հոլովի ․ որպ․, * Նոյ էր ամաց վեցհարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև 'ի վերայ երկրի ‖ ․ Ծննդոց ։
* Եւ էր լայնութիւն նր̅ երից կանգնոց ‖ ․ 'ի Վարս Նիկող ։

Այսպիսի սեռական հոլովք անուանց ժամանակաց երբեմն յառաջական բայս ևս յարին՝ իբր պատահա-կան խնդիր նոցա ․ այլ այս 'ի սակաւս ․ որպ․, * Եւ Վախ-ճանեցաւ Յովսէփ ամաց հարիւրևտասանց ‖ ․ Ծնն ։

Գիտելի է ևս, զի անուանք չափուց և կշռոց յայլ հոլովս ևս լինին խնդիր եական բայից ․

Երբեմն յուղղականն ․ որպ․, * Եւ երկայնութիւն նորա (էր) իննսուն կանգուն ‖ ․ Եզկ ։
* Քսան դանկ լիցի երկդրամեանն ‖ ․ Ղևտ ։
* Եւ կշիռ զրահից նր̅՝ (էր) հինգ հազար սիկղ պղն-ձոյ և երկաթոյ ‖ ․ Ա ․ Թագ ։

Երբեմն ևս յուղղականն և 'ի տրականն միանգա-մայն ․ որպ․, * Եւ դրան սրահին փարագոյրք (Եղիցին) քսան կանգուն 'ի բարձրութիւն ‖ ․ Ելից ։
* Եւ եղև (չափն) ըստ չափոյ դրան, որ հայէր ընդ ա-րևելս, յիսուն կանգուն յերկայնութիւն, և քսան և հինգ կանգուն 'ի լայնութիւն ‖ ․ Եզեկ ։

Իսկ երբեմն 'ի բացառականն ․ որպ․, * 'Ի քառասուն կանգնոյ էր տունն ‖ ․ Գ ․ Թագ ։
* 'Ի քսան և հինգ սկեղէ եղիցի ձեզ մնաս մի ‖ ․ Եզեկ ։

Երբեմն ևս 'ի գործիականն ․ որպ․, * Եւ թանձրու-թիւն ծովուն (էր) թզաւ ‖ ․ Բ ․ Մնաց ։
* Այլ վայրապար դնէ զչափ Ճանապարհին՝ երկայնութիւն հարիւր վաթսուն ասպարիզաւ լեալ ‖ ․ Եփնաւ ։

Իսկ վասն այլոց խնդրոց եական բայից ոչ է հնար որոշակի կանոն դնել ․ զի ըստ պահանջման բանին և ըստ զօրութեան անուանցն՝ յորս յարին՝ առնուն զխըն-դիր 'ի զանազան հոլովս՝ բազում անգամ իբր երկ-րորդական ․ որպ․ ։
* Ո՞ր վն̅ կատաղիս ընդդէմ բնութեանդ ով մարդ ․ ոչ

Նորին բնութեն է ընկերն, որում զայրանաս || . Առակ :
* Տէր ինքնին եղիցի մեզ լոյս մշտնջենական || . Յոհ. Իմ.
* Բազմապատիկ են առ այս մերձն բանք || . Եզն :
* Պատերազմաց սկիզբն յագահութենէ մարդկան եղեն || . Եղիշէ :
* Ահաւասիկ բանքս իմ 'ի կարգի զճշմարիտ օծելոյն է || . Առակ . Յոհ :
* Եւ եղիցի հանգիստ նորա պատուով || . Եսայ :
* Անկանիցիս դու, և ամենեքին՝ որ ընդ քեզ են || . Եզեկ :
* Նայց ոգիք արդարոց 'ի ձեռին այ են || . Իմաստ :
* Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել || . Խոր :
* Նա արարիչ ձեր՝ մարդ եղև վասն ձեր || . Շնորհ :

ԳԼՈՒԽ ԻԴ.

Գիտելիք ինչ 'ի վերայ խնդրոյ բայից և 'ի վերայ նախդրի նոցին :

Կան ինչ ինչ գիտելիք 'ի վերայ խնդրոյ բայից, զորս պատշաճ դատեցաք կարգել յայս գլուխ առանձինն, առ 'ի տալ զնոցանէ զորոշ ինչ տեղեկութիւն : վն որոյ .

Գիտելի է նախ, զի բայք բազում անգամ յարելով յանուանս ինչ՝ իբրև մի վարին ընդ նոսա, և առնուն խնդիր հաղորդական, այսինքն այնպիսի՝ որ ոչ սոսկ բային համարի, և ոչ լոկ անուանն . այլ՝ երկուցն միանդամայն . և այս՝ թէ 'ի ներգործականս, թէ 'ի չեզոքականս, և թէ յէականս :

'Ի ներգործականս . օր, * Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ || . Նար : Ուր վերջահոլով տրական հոլովս սիրոյ կենցաղոյս՝ է խնդիր Գիրկս արկանելոյն :

'Ի չեզոքականս . օր, * Խրատեաց զաստի կենացս զիմ ինչ 'ի բաց ընկենուլ, և անտի կենացն միայն պատկառ կալ || . Իգնատ : Ուր վերջահոլով տրական հոլովս անտի կենացն՝ է խնդիր պատկառ կալոյն :

Յէականս . օր, * Այգորդ լեր հեզութե տաժանաւորս տկարութե || . Նար : Ուր վերջահոլով տրական հոլովս տաժանաւոր տկարութեան՝ է խնդիր Այգորդ լինելոյն . իսկ հեզութեան է երկրորդական խնդիր նորին :

Գիտելի է երկրորդ, զի յորժամ բազում բայք գան 'ի միասին, խնդիրն մօտաւորնին հետևի . օր, * Նեղեալ անձինք օրհնեն և գոհանան զՔս՝ զեր-ծեալքն 'ի վտանգից || . Եփեսաց ։ Ուր խնդիր բային՝ այսինքն պատմական հոլովդ զՔս՝ եդեալ է ըստ բնութեան այնր բայի՝ որ մօտ է նմա, այն է՝ բայս գոհանան . և ոչ այնր՝ որ հեռի է 'ի նմանէ, այն է՝ բայս օրհնեն ։ Ըստ այսմ է և 'ի սոսին ։

* Նայեցաւ և ետես զինքն լի տկարութեամբ || . Եղիշէ ։

* Խորհուրդ արարեալ . . . հարցին և քննեցին և 'ի վերայ հասին մնացն անշարժութեան || . 'ի նոյն ։

* Իսկ զհակառակ բարւոյն զչարն՝ այսինքն զսատա-նայ, և զորս 'ի նմանէ սերմանեալ զմեղս՝ ատել և 'ի բաց դառնալ || . Շնորհ ։

Բայց երբեմն՝ այլ սակաւ ուրեք հեռագոյն բային հետևի խնդիրն . օր, * Առին գնացին զնա || . Ղուկ ։

Ուր հայցական հոլովս զնա՝ ոչ է լեալ խնդիր այնր բայի՝ որ մօտ է նմա, այսինքն է՝ գնացին . այլ՝ այնմ, որ հեռի է 'ի նմանէ, այսինքն է՝ առին . որպէս թէ ասէր . առին զնա և գնացին ։

Գիտելի է երրորդ, զի յորժամ բազում բառք նախդրիւ լինին խնդիր բայի, նախդիրն դնի 'ի վե-րայ ամ խնդրոց . օր, * Ընդ տեսանել զերկիրն ա-ւետեաց, զաշխարհն կենդանեաց, զկեանս սրբու-թեան || . Խորէն ։

* Պահեա՛ 'ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման՝ յաներևոյթ մտածութեանց, 'ի մասնաւոր սխալութեանց, 'ի մեծագոյն գայթակղութեանց, 'ի փոք-րագոյն ոտնառութեանց, 'ի խաբեբայ չար ձանձրու-թեանց || . Նար ։

* Տրդատ արքայ հայոց մեծաց՝ առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկ, որ ընդ իմով իշխանութեամբ էք՝ յաւանս և 'ի շէնս և 'ի գիւղս և յագարակս . . . ողջոյն || . Ագաթ ։

Գիտելի է չորրորդ, զի եթէ խնդիր բային ևս ու-նիցի զխնդիր՝ եդեալ նախ քան զինքն, և կամ զայլ ինչ բառ, նախդիրն հասարակօրէն դնի 'ի վերայ նո-րին, այսինքն 'ի վերայ խնդրոյ խնդրոյն . օր, * Պար-

ծեցուցանես 'ի պայծառութի քումդ տեսակի շքե-
պանծացեալսն ‖. այսինքն զպանծացեալսն քո. Նար.

* Որ բանիւ միայն ունի զառ 'ի յած խոստովանութի, այլ ոչ գործով, այնպիսւոյն հաւատն մեռեալ է ‖. յն որ բանիւ միայն ունի զխոստովանութի առ ած նա, այնպիսւոյն հաւատն մեռեալ է. Շնորհալի.

* Տարածեալ զանձն իմ առաջի՝ ո՛չ մահ գլորմանն ցուցից կերպարան ‖. այսինքն ցուցից զկերպարան գլորմանն 'ի մահ. Նարեկ.

* Առողջս՝ ոչ զորս յողջութե են, այլ՝ զբիւր ախտիւք հիւանդացեալս ասիցէ ‖. այսինքն զհիւանդացեալս բիւր ախտիւք. Շնորհալի 'ի Նոաղեան.

* Այն զի՝ զոր ած նախայօժար կամաց առեցաք զհոգևորն խաղաղութի՝ զրկեաց ած և 'ի մարմնով զնոյն ունելոյն ‖. այսինքն 'ի ունելոյն զնոյն մարմնով. Լամբ.

* Եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն ‖. այսինքն զգործոց իմոց չարիս, որք են առանց համարոյ. Նարեկ.

* Պետրոս սէր կարծէր ո՛չ 'ի վերայ փրկչին մեռանելն ‖. այսինքն զմեռանելն 'ի վերայ փրկչին. Լամբ.

Իսկ երբեմն դնի 'ի մէջ երկուց կամ բազմաց ևս. որ,

* Որք զառ 'ի քո շարչարանս յանձն առեալ համբերեցիք՝ ով ածասէր հայրապետք ‖. Շար.

* Որ զփառակցի հօր հոգւոյդ զտաճարն զառ 'ի քէն հովանացեալն այսօր հանգուցեր 'ի լոյսն անմատոյց ‖. Անդ.

* Որ զարարչակիցն հօր ո՛չ սկզբանէ զբանն ած յորովայնի քում կրեցեր ‖. Անդ.

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս Աներևոյթ բայից բառ լինելոյ նոցա արգելեալ խնդրոյ.

Զոր ինչ ասացաք զբայից, և զխնդրառութեց նոցին, զայն ած պարտ է իմանալ և զաներևութից, ընդ որս և զդերբայից, ըստ որում են բայք. Իսկ յաղագս լինելոյ սոցա անուն բայի և խնդիր բայի՝

խօսեցաք 'ի գլ. ծզ. 'ի չափանն. Է. Մնայ մեզ այժմ խօսել զսոցանէ՝ ըստ լինելոյ սոցա արգելիչ խնդրոյ:

Արդ սոքա ոչ աներևոյթ բայք բազում անգամ 'ի բազում տեղիս ընդ առաջ ելեալ դիմաւոր բայի՝ արգելուն զխնդրառութիւն նորա. զի ինքնին լեալ խնդիր բային՝ ինքեանք առնուն զխնդիրն ըստ պահանջելոյ բնութեան իւրեանց. և յայնժամ կոչին արգելիչ խնդրոյ. որ, * Որ խոստացաւ տալ զփականս արքայութեան երկնից երանելոյն պետրոսի ‖. շար. ծը: Որ աներևոյթ բայս տալ՝ ընդ առաջ ելեալ դիմաւոր բայիս խոստացաւ՝ լեալ է նմին իբր խնդիր, և արգելեալ է զխնդրառութիւն նորին. և ինքն է առեալ խնդիր սեռի զբառդ՝ զփականս արքայութեան երկնից. նաև խնդիր բնութեան, զբառդ՝ երանելոյն պետրոսի:

Այլ գիտելի է նախ, զի արգելիչ խնդրոյ լինին՝ Նախ՝ ներգործական աներևոյթք՝ ներգործական բայից. որ, * Մնութիւնս մեր սիրէ ծածկել զմերկութիւն ‖. եղիչէ:

Որ ներգործական աներևոյթ բայս ծածկել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս սիրէ. և ինքն է առեալ խնդիր զբառդ զմերկութիւն:

Երկրորդ՝ չեզոքականք՝ չեզոքականաց. զո՛ր օրինակ, * Ջանասցուք մտանել ընդ նեղ դուռն ‖. վարք հարց: Որ չեզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ չեզոքական բայիս ջանասցուք. և ինքն առեալ է խնդիր զբառդ՝ ընդ նեղ դուռն:

Երրորդ՝ ներգործականք՝ չեզոքականաց. զո՛ր օրինակ, * Դու ջանամ գործել զբարիս, և մի երկնչիր 'ի տկարութենէ քումմէ ‖. վարք հարց: Որ ներգործական աներևոյթս գործել է արգելիչ խնդրոյ չեզոքական բայիս ջանամ. և ինքն առեալ է խնդիր զբառդ զբարիս:

Չորրորդ՝ չեզոքականք՝ ներգործականաց. զո՛ր օրինակ, * Մովսէս աղաչեաց մտանել 'ի պարգևական երկիր ‖. շարք: Որ չեզոքական աներևոյթս մտանել՝ է արգելիչ խնդրոյ ներգործական բայիս աղաչեաց. և ինքն առեալ է խնդիր զբառդ 'ի պարգևական երկիր:

Գիտելի է երկրորդ, զի երբեմն աներևոյթ բայն լինի արգելիչ խնդրոյ սեռի միայն, և ոչ խնդրոյ բն-

նութեան. որպ, * Աստ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան ||. Ծննդգիրք ։ Ուր աներևոյթ բայս առնել արգելեալ է զխնդիր սեռի բային առն. և ոչ զանունն ։

Գիտելի է երրորդ, զի երբեմն արգելիչ խնդրոյն նախադասի դիմաւոր բային. որպ, * Հատանել փութայր զկապ միաբանութեան սիրոյ նոցա ||. Յոհն. հաբ. ։ Ուր արգելիչ խնդրոյն՝ հատանելն՝ նախադասեալ է բային փութայր ։

Նաև երբեմն ևս՝ խնդիր արգելչին նախադասի քան զդիմաւոր բայն, որ անկանի 'ի մէջ արգելչին և 'ի մէջ խնդրոյ նորա. որպ, * Զտիեզերս բաւեցին լնուլ շնորհօք հոգւոյն սրբոյ ||. Եփես. ։ Ուր խնդիր սեռի աներևոյթ բայիս լնուլ՝ որ է արգելիչ խնդրոյ, եդեալ է նախ քան զդիմաւոր բայս բաւեցին. իսկ խնդիր բնութեան եդեալ է զկնի. զոր մարթ էր դնել այսպէս. բաւեցին լնուլ զտիեզերս շնորհօք հոգւոյն սրբոյ ։

Գիտելի է չորրորդ, զի բազում անգամ միոյ բայի լինին բազում արգելիչք խնդրոյ. որպ, * Փութացաւ վաղվաղակի զօր ժողովել, գունդ կազմել ||. Եղիշէ. Ուր երկոքին աներևոյթքս ևս՝ ժողովել, կազմել՝ են արգելիչ խնդրոյ բայիս փութացաւ ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս Դերբայից ։

Դերբայք են աներևոյթ բայք հոլովեալք իբր անուն ։ Սոքա թէպէտ միշտ ունին զզօրութիւն բայի, բայց որովհետև իբր անուն հոլովին՝ գրեթէ ըստ օրինակի գոյականաց վարին ։ Աստի և իբր գոյական անուն, Նախ՝ լինին յատկացուցիչ. որպ, * Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ ||. Մատթ. ։ Ուր դերբայս լսելոյ՝ է յատկացուցիչ ականջաց ։

Երկրորդ լինին բացայայտիչ. որպ, * Յերկուսին զօրաւոր է՝ 'ի պատժելն և 'ի բարեգործելն ||. Գէորգ. ԿԳ. ։ Ուր դերբայքդ 'ի պատժելն և 'ի բարեգործելն՝ լեալ են բացայայտիչ անուանդ զօրաւորն ։

Երրորդ՝ լինին խնդիր նախադրութեանց. որպ, * Մե

ուսցուք զգիրս ոչ վասն ճարտարաց միայն, այլև վասն տանելոյ || . Ճծբ ։

Չորրորդ՝ լինին խնդիր անուանց . որ, * Նա քան-զի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս Ը մեցն դաս... 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատա-կել || . Նար ։ Ուր դերբայս պարծելոյ՝ հանդերձ խնդրով իւրով, (որ է՝ 'ի փառս ընդ մեցն դաս), է տրական խնդիր անուանս արժանի ։

Հինգերորդ՝ լինին խնդիր բայի . երբեմն իբր բուն խնդիր բնուն . որ, * Եզուաւ 'ի խրատել փութամք . և յարդեանցն պակասեալ գտանիմք || . Նարեկ ։ Ուր դերբայս 'ի խրատել լեալ է բուն խնդիր փութալոյ ։

Երբեմն և՝ մանաւանդ թէ բազում անգամ, լինին խնդիր երկրորդական, և յետ ևս պատահական . որ, * 'Ի խափանելոյ ճշմարտութեան՝ լռեսցէ իմ կար-ծեցուցանող զօրութիւն || . Դաւիթ Անյաղթ ։ Ուր դեր-բայս 'ի խափանելոյ՝ է երկրորդական և պատահական խնդիր բայիս լռեսցէ ։

Այլ աստ գիտելի է, զի բազում անգամ 'ի դերա-պանծ շարադրութիւնս դերբայք 'ի վերջս դնին 'ի գոր-ծիական հոլովս իբր խնդիր առ 'ի չքնաղ ընծայեցու-ցանելոյ զբանսն . որ, * Մի զի որք բժշկեննն (մարմնա-ւորապէս՝) զմարմինն և եթ բժշկեն, առ հոգւոյն բժշ-կութիւն շահ և ոչ մի ինչ ցուցանելով || . Նարեկ ։

Գիտելի է ևս, զի ներգործական դերբայք երբեմն 'ի խրթին շարադրութիւնս փոխանակ հայցական հոլո-վի առնուն զխնդիր (ըստ բայանուանց) 'ի սեռական հոլովն . և այն համարի նոցա իբր յատկացուցիչ . որ, * 'Ի յուխտին պահել՝ դաշինն դժրեցի || . փոխանակ ասե-լոյ, 'ի պահել զուխտն . Նար ։

* Որ հեց ըստոյն արժանի եղեր ճաշակելոյ 'ի քո գիրկս || . Նար ։

ԳԼՈՒԽ ԻԱ ։

Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց 'ի [illegible] ։

Ընդունելութիւնք՝ թող զյանդգնալսն 'ի բաց, կրկնա-կի համաձայնին ընդ միմեանս ։

Նախ՝ իբր խնդիր. որ, * Դատապարտօղք՝ զքո ոչ խոստովանողաց || . Շար. Աստ ընդունելութիւն խոստովանողաց՝ է խնդիր ընդունելութեանս դատապարտօղք . իսկ հայցական հոլովս զքո՝ է խնդիր սեռի խոստովանողաց . որպէս թէ ասէր . դատապարտօղք այնոցիկ՝ որք զքո ոչ խոստովանին :

Երկրորդ՝ իբր ածական . որ, * Գործեալ տրտնջօղ... տարախուսեալ աշխատօղ || . Նար :

Իսկ 'ի յարկին յանուանս՝ բազում օրինակաւ համաձայնին ընդ նոսա : Նախ՝ իբր խնդիր . որ, * Փառաւորողին զգեցուցիչ . Վերօրհնելոյն գրգիչ || . Նար :

Երկրորդ՝ իբր յատկացուցիչ . որ, * Ձեռն ընտրելոց դիւրաւ յաղթեսցէ || . Ատան. Բայց ոչ լինին յատկացուցանելի :

Երրորդ (այլ 'ի սակաւս) իբր բացայայտիչ և բացայայտելի . որ, * Ու ամեն լինիջիր խոնարհ՝ առ սիրելիս և առ ատելիս || . Ոսկ. Եփես. Աստ ընդունելութիւնք առ սիրելիս և առ ատելիս՝ են բացայայտիչ անուանս առ ամեն : * Զպարունակօղսն անպատուեալ՝ զտաճարն և զսեղանն, պատուեցին յատուկ զպարունակեալսն || . Յոհ. Իմաստ. Աստ ընդունելութիւնդ պարունակօղսն է բացայայտելի 'ի ձեռն բառիցս տաճարն և սեղանն :

Չորրորդ՝ իբր ածական՝ ածական անուանց . այլ այս 'ի սակաւս . որ, * Զհերձեալ վնասակարս պարտուց մահու՝ յամենախնամ աջաց հզօրիդ մի՛ մերժեսցես || . Նար :

Հինգերորդ՝ ըստ օրինակի գոյական անուանց՝ առնուն երբեմն զածականս . զոր օրինակ, * Անհամեմատ խնդրօղն՝ յամենայնէ վրիպի || . Եփրեմ. Աստ ընդունելութիւնս խնդրօղ՝ առեալ է ինքեան ածական զանունդ անհամեմատ :

Իսկ թէ սոքա զիա՛րդ իբր ածական համաձայնին ընդ գոյականաց, և կամ զորպիսի՛ խնդիր առնուն, ասասցուք 'ի յաջորդ գլուխս 'ի մասնաւորի :

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս ընդունելութեան յանգելոյ 'ի օղ.

Սոքա միշտ իբր ածական անուն վարին, ունելով և զզօրութիւն բայիցն՝ յորոց բղխեն, ըստ որոց և առնուն զխնդիր։ Իսկ թէ զիարդ, յայտ լիցի 'ի յառաջորդ կանոնսդ։

Կանոն. Ա.

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք 'ի օղ՝ առնուն զխնդիր սեռի 'ի սեռական կամ 'ի հայցական հոլովս՝ ըստ պահանջելոյ վայելչութեան տեղւոյն. զոր օրինակ, * Օրհնօղն իշոյ՝ արքայ կացուցանէր ||. Մագիստ. Ուր բառդ իշոյ՝ է խնդիր օրհնողին։
* Երանի թէ գոնեայ անագան ճանաչէաք, կամ 'ի բժշկութիւն մտեալք. և ոչ՝ խնդրողացն զճշմարտութիւն ընդդէմ լինէաք ||. Լամբ. Ուր հայցական հոլովս ճշմարտութիւն՝ է խնդիր ընդունելութեանս խնդրողաց։

Կանոն. Բ.

Ընդունելութիւնք ներգործականք յանգեալք 'ի օղ՝ բաց 'ի խնդրոյ սեռի առնուն երբեմն զխնդիր բնութեան, և զայն կամ ըստ ինքեան կամ ըստ յարմարութեան, և կամ իբր երկրորդական, ըստ պահանջելոյ բայիցն՝ յորոց բղխեն յայլ և այլ հոլովս։

Յուղղականն. զր., * Օ՜ քեզ ած խոստովանողաց ||. Նար. գանձ. հոգ. Ուր բառդ ած է ուղղական խնդիր բնութեան ընդունելութեանս խոստովանողաց։

'Ի վերջահոլով տրականն. զր., * Նախապատմօղ մարգարէից զխոնարհիլդ քո յերկնից ||. Շար. Ուր բառս զխոնարհիլդ՝ է խնդիր սեռի նախապատմողին. իսկ մարգարէիցն՝ է տրական խնդիր նորա։

'Ի նախդրիւ տրականն. զր., * Պայծառացո՛ զմանկունս քո յօրհնաբանութիւն ծագողին զշող լուսոյ 'ի քեզ՝

մայր եկեղեցի || . Շար : Ուր բառս Դշխոյ ըստոյ է խնդիր սեռի ծագողին . իսկ բառդ 'ի ձեղ է խնդիր ընութե, և ինքն լեալ է յատկացուցիչ բառիս յօրհնաբանութե, կամ իբր տրական խնդիր :

'Ի բացառականն . որ, * Զառ 'ի յերկնից ասեմ իջեալ կենսատուն կերակուր՝ զնորին ուխտ և նորոգօղն զմեզ 'ի մեղաց եղծմանէ || . յոհ . իմաստ : Ուր զմեզն է խնդիր սեռի ընդունելութեանս նորոգօղ . իսկ բառս յեղծմանէ մեղացն՝ է խնդիր ընութե :

'Ի գործիականն . որ, * Լուսապայծառ իմաստիւք լոյս եղելոց աշխարհի համածագօղ || . Շար : Ուր բառդ լոյս եղելոց՝ է խնդիր սեռի համածագողին . իսկ բառդ լուսապայծառ իմաստիւ՝ է գործիական խնդիր նորա . այլ բառդ լոյս՝ է ուղղական խնդիր ընդունելութեանս եղելոյ . սոյնպէս և բառս աշխարհի՝ է տրական խնդիր նորա . որպէս թէ եղեալ էր . լուսապայծառ իմաստիւք համածագօղ այնոցիկ, որք են լոյս աշխարհի, այս է՝ կրօնաւորաց :

'Ի ներգոյականն . որ, * Ընտազօր զինուորաց համախմբօղ 'ի հոգևոր պատերազմին . . . երանելին բասիլիոս || . Շար : Ուր բառս զինուորացն է խնդիր սեռի համախմբողին . իսկ 'ի հոգևոր պատերազմին է ներգոյական խնդիր նորա :

'Ի ձեռն նախադրութե . որ, * Զարարածս փոխանակ արարչին մեծարօղք || . յոհ . իմաստ : Ուր բառս զարարածս է խնդիր սեռի մեծարօղքին . իսկ նախադրութիւնս փոխանակ հանդերձ խնդրովն իւրով լեալ է նմա խնդիր ընութե :

Կանոն . Գ :

Ընդունելութիւնք չեզոքականք յանդեալք 'ի օղ՝ առ հասարակ զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն՝ յորոց բղխեն . որ, * Չիք իմ թագաւոր ինչխեցօղ չնչոյս բաց 'ի քէն քո || . Նար :
* Թռուեցին և զեղբայրն զայն ընդ գնացօղսն յարքունիս || . Վարք հարց :
* Յերկիւղէ ինչ ոչ դանդաղօղ || . Նաբեռ . առ պետրոս հայր :
* Պահացօղ լինիջիք զմեզ || . Խորհ :

* Խոնարհեալ 'ի տես մարմնով ձգնողին ||. շար ։
* Խոստովանն լեր բարերարին մյ . . . զոտիցդ հետոց՝ իբրև զպատուիրանաւն մյ Ղազարայ ||. Նար ։
* Փրկեա՛ զանձինս 'ի փորձանաց՝ 'ի խաւարի շրջող գլխւաց ||. շար ։

Սամն համաձայնութե այսպիսի ընդունելութեց ընդ գոյական անուանց՝ գիտելի է, զի սոքա որովհե-տև միշտ իբր ածական վարին, ըստ կանոնի ածական անուանց համաձայնին ընդ գոյականաց . որ, * Մի՛ լինիր ընկեր առն Բարձրացողի . և ընդ բարեկամի պայծա-ռողի մի՛ բնակեր . զուցէ ուսանիցիս զճանապարհս նո-րա ||. Ագաթ ։
* Հայցեմք 'ի ներքոյ քաղցրութէ ձերմէ ||. Խորեն ։
* Յոլով անգամ 'ի դառնացեալ թափէ զինքն թռչնոց ||. պիտոյից ։

ԳԼՈՒԽ ԻԹ ։

Յաղագս ընդունելութեանց յանգելոց 'ի եալ ։

Այսպիսի ընդունելութիք յորժամ հոլովին՝ միշտ իբր ածական անուն վարին , թէ և ներգործութբ չունիցին զգոյական ընդ ինքեանս . որ , * Գժուարին է յանձնելոցն 'ի սովորութիւն մեղաց՝ ազատիլ ||. Լամբ ։
Սոր ընդունելութիս յանձնելոցն՝ եդեալ է իբր ածա-կան . որոյ գոյականն զօրութբ կայ . որ է՝ Նարեկ ։

Իսկ եթէ առանց հոլովելոյ դիցին , երբեմն իբր բայ վարին , և երբեմն իբր անուն ։ Ուստի գիտելի է , զի եթէ սոքա ներգործականապէս առցին , միշտ իբր դրադէմ բայ 'ի գործ ածին . զոր օրինակ , * Ե-ղեալ զպատճառն՝ պատճառաւորացն պաշտօն մատու-ցանէին ||. Եղիշէ ։

Իսկ եթէ կրաւորականապէս առցին , 'ի գործ ա-ծին անխտիր . զի երբեմն իբրև զբայ վարին . զոր օրի-նակ , * Սպանեալ 'ի բազմաց՝ 'ի մահ դրաւեցայ ||. Նար ։

Նաև երբեմն՝ մանաւանդ թէ բազում անգամ իբ-րև ածական անուն . զոր օրինակ , * Ո՛ խորդ սասա-նեցաւ հաստատեալն . . . իբր օտարացաւ ծառայեալն ||. Նար ։

Իսկ համաձայնութիւն սոցա նկատի ըստ կանոնի համաձայնութեան ածականաց՝ թէ 'ի նախադասին, թէ 'ի յետադասին, և թէ անկեալ իցէ 'ի միջի այլ մասն բանի . զոր օրինակ, * Ոչ այլ ինչ այնպէս զքեզ սիրելի առնէ այ, որպէս ապականեալ անդամոյն քոյ դարման տանել և յառողջութիւն ածել || . ոսկ :
* Ճանս սպանեալ մի քարինս արձակեսցես . լուսոյ ջախջախեալ մի սատանիկս որոտասցես . հողոյ անպատուեալ մի իբր ամբարհաւաճի ուժգինս մռնչեսցես || . նար :
* Հանդերձելոցն հասցուք բարութեանց || . ոսկ :
* Զի եթէ զթագ ասիցես կամ զծիրանեաց կամ զոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով, սակայն ոչինչ ասես || . ոսկ : Ուր ընդելուզեալն յետադաս գոլով ոչ է համաձայնեալ ընդ գոյականի իւրում, որ է բառս հանդերձից : Զի այսպիսի ընդունելութիւնք ուրեք ուրեք 'ի գերապանծ շարադրութիւնս առանց համաձայնութեան են յետադասին :

Որպէս զկրաւորական ընդունելութեանցդ ասացաք, սոյնպէս իմա և զչէզոքականաց . զի և նոքա 'ի գործ ածին անխտիր . Երբեմն վարին որպէս զբայ, և ունին զզօրութիւն գերբայի . զո՛ր օրինակ, * Փութա՛, մի հեղգար . գուցէ դարձեալ կորուսեալն ընդ խաւար գընասցես || . եղիշէ :
* Տենչացեալք անձառ լուսոյն՝ վերասլացան 'ի կեանս անմահս || . շար :

Իսկ երբեմն՝ և բազում անգամ իբր ածական անուն վարին ըստ կրաւորականաց, և ըստ նոցա համաձայնին . զո՛ր օրինակ, * Անձն յաղթեալ զխորխս և զմեղս արհամարհէ . բայց անձին կործանեալ և դառն իբրև զքաղցր թուի || . ոսկ :

Կամ խնդրառութեան այսոցիկ ընդունելութեանց յանգելոց 'ի ետ՝ ոչինչ պիտոյ է գրել . զի զայնպիսի խընդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն, յորոց բըղխեն թէ կրաւորականք իցեն, և թէ չէզոքականք . զո՛ր օրինակ, * Հայցեսցէք զխաղաղութիւն Ճշմարիտ վկայք . նոյ երրորդութեան՝ նեղեալքս յանօրինաց բռնութէ || . շար : Ուր բացառական հոլովս 'ի բռնութէ անօրինաց՝ է խնդիր սեռի կրաւորական ընդունելութեանդ նեղե-

լոյս. իսկ ինքն է տրական խնդիր բայիս հայցեցէք.
* Պատուաստեալն 'ի տէր՝ լերինն նմանեցուցանէ ||. գէորգ: Որ 'ի տէրն՝ է ընդ ինքեան խնդիր չեզոքական ընդունելութեանս պատուաստեալն:

Եւս պարտ է գիտել, զի ոմանք 'ի կրաւորական ընդունելութեանց աստի ուրեք ուրեք այլ 'ի սակաւս յոյժ՝ փոխանակ բացառականի առնուն զխնդիր 'ի սեռական հոլովն. զոր օրինակ, * Ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս ||. փոխանակ ասելոյ, զպատուիրեալս 'ի մարդկանէ. մարկ:

Ըստ այսմ ևս և չեզոքականք երբեմն փոխանակ բուն խնդրոյ առնուն զսեռական կամ զտրական. զոր օրինակ, * Օտարացեալք աշխարհի՝ և որինչ աշխարհիս՝ փափկացան առաքինութե վարուք ||. այսինքն օտարացեալք յաշխարհէ. նար. երգ:

Սոքա երբեմն ընդ բաղդատական անուանց ևս առնուն զխնդիր. զոր օրինակ, * Հիւանդացեալն 'ի մարդկանէ՝ թէ և 'ի մահ աշխատիցին, սակայն առողջութեն յուսով թեթևանան ||. յոհն. ճառ.
* Գովեցաւ 'ի վկայս՝ հօրն մեծի համանման ||. շար.

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս ընդունելութեանց յանգելոց 'ի լի.

Վասն ընդունելութեանց՝ որք յանգին 'ի լի, գիտելի է, զի սոքա իբր ածական վարին. և 'ի յարիլն յանուանս՝ ըստ կանոնի ածական անուանց համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասիլն՝ և թէ 'ի յետադասիլն. զոր օրինակ, * Փոխանակ զգալի լուսոյն՝ իմանալի լուսոյն ճառագայթիւք զսրտին խնդրեն լուսաւորել զաչս ||. յոհն. իմաստ:
* Խորհրդեամբ ցուցաւ սքանչելոյն յակոբայ ||. շար.
* Արդարև հօր սքանչելւոյ որդիք զարմանալիք առաւել քան զառաւել (արիստակէս և վրթանէս) ||. խոր.
* Ընծայելոյն հասիք երանութե ||. շար.

Վասն խնդրառութե սոցա գիտելի է, զի որովհետև սոքա յերկուս սեռս վերածին, 'ի չեզոքականս, 'ի

կրաւորականս, և 'ի ներգործականս, ըստ այնց առ-նուն զխնդիր:

Չեզոքականահաղորդն հասարակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հոլովս. զոր օրինակ, * Դեան բորբոքե-ցան մեծաւ ցանկութեամբ՝ տեսանել զհաստիչն ամենե-ցուն, և զանմերձենալին հրեշտակաց՝ մարդ 'ի յերկրի երևեալ, և դժուարամերձենալի մարդկան ‖. Եփրեմ: Որ բառդ հրեշտակաց՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդ ընդունելութեանս՝ անմերձենալին. և անունս մարդկան՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդ ընդունելութեանս դժուարա-մերձենալի:

Սոքա 'ի բացառականն ևս առնուն զխնդիր. որպէս, * Օտարեցայ անհասանելի 'ի պատկառելեաց գոր-ծոց ‖. Նար: Որ բացառականդ 'ի պատկառելեաց գոր-ծոց՝ լեալ է խնդիր չեզոքականահաղորդ ընդունելու-թեանս անհասանելի:

Կրաւորականահաղորդն առնուն զխնդիր ըստ սեռի երբեմն 'ի տրականն. զոր օրինակ, * Երջանկութիւն խոստացեալ ամ̃ երկրի ‖. Նար: * Մի՛ լար գերի բազ-մաց ողբալի ‖. Նար:

Իսկ երբեմն 'ի բացառականն. զոր օրինակ, * Ան-տանելին 'ի համայնից . . . պարագրի այսօր ‖. Շար: * Սէմ անձանելի 'ի դրանց դժոխոց ‖. 'ի Նոյնն: * Ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անգիտելի ‖. Շնորհալի. 'ի Դաւանութեան:

Ներգործականահաղորդն երբեմն ունելով զզօրութիւն օժ (որպէս ասացաք 'ի մասն. Ա. գլ. ԻԴ. 'ի վերջն). առ-նուն զխնդիր 'ի սեռական հոլովս՝ իբր զխնդիր սե-ռի. զո՛ր օրինակ, * Ահա ած̃ օգնական իմ, և տէր ընդունելի հոգւոյ իմոյ ‖. իբր ընդունող հոգւոյ իմոյ. Սաղ: * Ոչ եղև լսելի ներքին ականջօք տէրունական հրա-մանին ‖. այսինքն լսող զտէրունական հրամանն. Շնոր: * Որ եղև առաջնորդ ունելեացն յիս̃ ‖. այսինքն ունո-ղաց, այս է՝ ըմբռնողաց զյս̃. Գործ:

Ուրեք ուրեք ևս առնուն զհայցական. զո՛ր օրի-նակ, * Ետուն զարծաթն զպատրաստեալն 'ի ձեռս գործելեաց զգործս կահի տանն տն̃ ‖. այսինքն գործո-ղաց զգործս եւն. Դ. Թագ. ԺԲ. 11:

* Յոր լսելոյ քո զաւետիսն՝ խնդրեա՛մ լինել մեզ ընելու՝ զձայն աւետեաց քո միածնին , եթէ եկա՛յք օրհնեա՛լք հօր իմ ‖ · այսինքն խնդրեա՛մ լինել մեզ լսօղս զձայն աւետեաց միածնի քո · այս է՝ եկա՛յք օրհնեալք · և այլն · շար :

* Եւ եղիցի՝ իբրև մխեսցին ոտք քահանայիցն կրելեաց զտապանակ ուխտին տն տմ երկրի՝ 'ի ջուրն յորդա- նանու , պակասեսցէ ջուրն ‖ · այսինքն կրողաց զտա- պանակ ուխտին · յեսու · Գ · 13 :

Իսկ վասն ընդունելութեանց՝ որք յանգին 'ի ոց՝ տես յերկրորդ մասին · գլ · ԻԳ ·

ԳԼՈՒԽ ԼԸ ·

Յաղագս համաձայնութեան պատասխանւոյ ընդ հարցման :

Յորժամ 'ի բանս պատասխան լինի իմիք հարց- ման , հարկ է զի պատասխանին համաձայնեսցի հարց- մանն՝ գոնէ զօրութբ :

Այս համաձայնութի՝ Նախ՝ նկատի ըստ հոլովին · (պա- զոր օրինակ , * (հրց) · Զի՞նչ է կաթուղիկեն · (պա- տասխանի) · Տիեզերական · զի տմ եկեղեցիք ուղղա- փառաց՝ որ ընդ տիեզերս , մի են ... զոր և առաքե- լական կոչեմք ‖ · խոսրով :

* Իսկ արդ՝ ո՞վ է պօղոսն , կմ ո՞վ է ապողոսն : (պատա- խանի) · Պաշտօնեայք , որովք հաւատացէքն ‖ · ա · կոր :

Դարձեալ · * Ընդ առ ի՞նչ իբրև բարկանայ : (պխ) · Ընդ մեծատանց անխրատութիւն , և ընդ աղքատաց հպարտութի ‖ · պարս · աղէք :

* Ո՞ւմ են նման սոքա : (պխ) · Նման են մանկանց ոչ անմեղաց , այլ՝ յիմարաց ‖ · եփրեմ :

Երկրորդ՝ նկատի ըստ զօրութե նշանակութե բա- ռիցն · իբր զի՝ պատասխանին լիցի այնպիսի բառիւ , որ համաձայն գտցի զօրութե հարցմանն , թէ ըստ որ- պիսութե , թէ ըստ տեղւոյն , և թէ ըստ ժամանա- կին , և այլն · որպէս երևի յօրինակդ՝ որ զկնի :

* Ընթացողացն զհետ քո՞ւ այսպիսի ճանապարհաւ

ուր լինին օթևանք. (պխ). Ոչ 'ի հարկս համապատիւ ծառայից, այլ՝ ուր տէրն է ամենեցուն ‖. Չորհ.

Դարձեալ. * Ուստի՞ արդեօք կոչեաց (զմեզ ա̃ծ)։ (պխ). 'Ի վհաց, 'ի փողոցաց, 'ի ճանապարհաց և 'ի ցանկոց։ (հց). Եւ ո՞ւր արդեօք կոչեաց։ (պխ). 'Ի հրեշտակական պատիւ, 'ի սքովբէական սրբաբանութի̃, յա̃ծութե̃ն փառս ‖. սարգ։

* Չեմք ապա 'ի խաւարի. չեմք 'ի ստուերս մահու։ (հց). Ի՞ր վասն։ (պխ). Վասն զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեանս։ (հց). Զիա՞րդ, և որո՞վ օրինակաւ։ (պխ). Զի սիրեմք զեղբարս ‖. սարգ։ Տես յընդարձակն։

Նաև աստ գիտելի է, զի բայն՝ որ ներգործութե̃ դնի 'ի հարցման, երբ 'ի բազում զօրութե̃ գտանի 'ի պատասխանին. որպէս է տեսանել 'ի վերոյ գրեալսդ։

Եւ երբեմն ևս փոխանակ այնր բառի՝ որ լինելոց էր բուն պատասխանի հարցմանն, դնի բան ինչ՝ երբ բացայայտիչ զօրութե̃ իմացեալ բառին. զոր օրինակ, * Զինչ է՝ զոր կարդացերն։ (պխ). Զմի տնէ խընդրեցի, և զսոյն աղաչեմ։ (հց). Եւ ո՞ր է այն։ (պխ). Բնակել ինձ 'ի տուն տ̃ն, և շուրջ զսեղանով նորա երգել ‖. Սաղմոս։

Գիտելի է ևս, զի բազում անգամ հարցումն դնի առանց պատասխանւոյ. զոր օրինակ, * Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց՝ երբ զադամ 'ի ծառոյն կենաց ‖. Նար։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս համառօտութեան բանի, և պէսպիսութեան շարադրութեանց։

'Ի համաձայնութե̃ մասանց բանի կազմին պէսպէս շարադրութի̃ք բանից. ոմանք սակաւաբառք, և ոմանք բազմաբառք։

Սակաւաբառք կազմին 'ի սակաւ բառից՝ գոնէ յերից. այսինքն 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի խընդրոյ նորին. զո՛ր օրինակ, * Թորգոմ ծնանի զհայկ ‖.

խոր ։ Ուր կան երեք բառք · այսինքն անուն բայի, բայ, և խնդիր ։

Բայց երբեմն մին յերից աստի զօրութիւն դնի · զոր օրինակ, * Թմբրեցոյց ծուլութիւն ‖ · այսինքն Թմբրեցոյց զսողոմոն ծուլութիւն · Նար ։ * Ընկալ զսովեալս ‖ · այսինքն դու ընկալ զսովեալս · Նար ։ * Ընցեալն անյայտ ‖ · այսինքն անցեալն է անյայտ · Նար ։

Իսկ բազմաբառք կազմին 'ի բազում բառից՝ այլ և այլ եղանակաւ շարայարելոց ընդ միմեանս · այսինքն իբր խնդիր, իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլ · որպէս յայտ է 'ի բազում օրինակաց եդելոց 'ի քերականութեան աստ · և յայտնի ևս ցուցցի 'ի յաջորդ օրինակացդ ։ Արդ՝ այսպիսի շարադրութիք՝ թէ բազմաբառք և թէ սակաւաբառք՝ երրակի կարեն կազմիլ, Պարզ, միջակ, և խրթին ։

Պարզ շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի դիւրին շարայարութենէ ընտել և սովորական բառից · և է դիւրըմբռնելի ամենեցուն ։

Միջակ շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի վայելուչ շարայարութենէ ընտիր բառից · յորում և գտանին յետ և յառաջութիւնք նոցին, և խնդրառութիւնք անուանց ։

Խրթին շարադրութիւն ասի այն, որ կազմի 'ի մանուածոյ շարայարութենէ ընտիր կամ մթին բառից զոր իմաստնոց միայն է իմանալ · տես յընդարձակն ։

Օրինակ պարզ շարադրութեան ։

* Ոմն իմաստասէր 'ի հացկերոյթ կոչեցին · և նա
„ իբրև եմուտ 'ի տունն՝ և բազմեցաւ, նայեցեալ 'ի
„ վեր և 'ի վայր և 'ի չորեսին կողմանս տանն՝ ետես
„ զանազան գունովք զարդարեալ, և ազգի ազգի ե-
„ րանգօք պայծառացեալ · ապա լցեալ զբերանն խը-
„ խով՝ եթուք յերեսս տանուտեառն ։ Եւ իբրև հար-
„ ցեալ եղև, թէ ընդէր արարեր զայդ, պատասխա-
„ նի ետ, և ասէ · և զինչ վնաս արարի · զոր դուք
„ պատուեալ էիք՝ և ես պատուեցի · և զոր դուք ոչ
„ էիք պատուեալ, և ես ոչ պատուեցի ։ Հայեցայ

,, յա̃մ տունս, և տեսի զարդարեալ և պատուեալ
,, ա̃միւ, և ոչ կարացի Թքանել. իսկ զերեսս տանու-
,, տեառնն տեսի անպատիւ, զի ոչ էր զարդարեալ
,, առաքինութե̃ զներքին մարդն. վասն որոյ և անդ
,, Թքի: Եւ արդ՝ եթէ այսոքիկ արտաքինք, որ զճշ-
,, մարիտ ա̃ծածանօթութի ոչ գիտէին, այսպիսի իմ̃
,, նախանձ ունէին բարեաց գործոց՝ և առաքինասէր
,, վարուց, ապա որչափ ևս առաւել մեզ պարտ է բա-
,, զում զգուշութի և փոյթ ունել յառաքինութիս.
,, որք մեծագոյն շնորհաց արժանացաք գալստեամբն
,, քի̃, և պատուական խաչին փրկագործութե̃ն ‖.
'ի Մեկնութե̃ ժամագրոց:

Դարձեալ. * Կաքաւն գողանայ զօտար ձուս, և
,, Թխսեալ՝ ձայն հանէ. իսկ ձագքն իբրև լսեն զձայն
,, նորա՝ և զձայն մօրն իւրեանց՝ որ ծնաւն զնոսա,
,, Թռուցեալ գնան յերամս իւրեանց: Սոյնպէս և
,, բանսարկուն 'ի ձեռն մեղաց գողացաւ և հեռացոյց
,, յարարչէն զազգս մարդկան. իսկ նոքա իբրև լուան
,, զձայն մարմնացելոյ բանին, գնացին զհետ նորա ‖.
Շարակ. ՃԿԲ:

Օրինակ Վիճակ Շարադրութե:

* Ռաջն վարդան՝ և ա̃մ զօրքն՝ որ ընդ նմա էին,
,, իբրև տեսին զբազմութի պատրաստութե̃ գնդին
,, հեթանոսաց, հայեցան և յիւրեանց սակաւութիւն.
,, Թէպէտ և կարի յոյժ նուազունք էին քան զնոսա,
,, ոչ ինչ զանգիտեցին առ 'ի յոյժ բազմութէն. այլ՝
,, առհասարակ միաբան համբարձին յերկինս զձայնս
,, իւրեանց. աղաղակէին և ասէին. դատեա̃ տր̃ զայ-
,, նոսիկ, և այլն ... Եւ զայս ասելով՝ խումբ արա-
,, րեալ յարձակէին. և զաջ Թևն բեկեալ զձախոյ
,, կողմամբն արկանէին. և սրոյ ճարակ զամենեսեան
,, տային. և ընդ երեսս դաշտին փախստական առ-
,, նէին ... Յայնմ տեղւոջ դէտակն 'ի վեր ամբառ-
,, նայր արշաւիր արշարունի. գոչէր առիւծաբար, և
,, յարձակէր վարազաբար. հարկանէր սատակէր ըղ-
,, վուրկն բաջ՝ զեղբայր Թագաւորին ղփնեաց. և ըդ-

„ բազում համհարզս նորին ընդ նմին կոտորէր . և
„ այնպէս ամէն առհասարակ այր զախոյեան իւր յեր-
„ կիր կործանէր ։ Նաև առ յոյժ յանդուգն յարձակ-
„ մանն՝ յոլովագոյն այն էր, զոր գետամոյնն առնէին՝
„ քան զանկեալսն սրոյ 'ի ցամաքի . և 'ի բազմութե̃
„ դիականցն անկելոց՝ յատակ ջուրք գետոյն յարիւն
„ դառնայլին ‖ . Եղիշէ . Գ ։

* Իսկ 'ի ծագել արեգական ը̃դէմ մերոց զօրացն՝
„ 'ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայ-
„ լատակէին՝ իբրև յամպոյ մեծէ . և 'ի նոցանէ 'ի
„ դուրս ոստչէին 'ի մերոց նախարարացն քաջք զրա-
„ հաւորք որպէս 'ի փայլատականցն ճառագայթք .
„ յորոց 'ի տեսութէն միայն զանդիտեալ պարսկա-
„ կանն գունդ, սակաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել
„ հայել ընդդէմ արեգականն ծագման . . . և 'ի խառ-
„ նակել մարտին՝ պատահէ կամնարականն սպանդա-
„ րատ՝ խմբի մեծի, յորում էր քաջն շերգիր . . . և
„ հերձեալ զխուռմբն՝ որպէս զշանթահար՝ յերկիր
„ կործանէր զքաջն, և զխուռմբն պտուտեալ 'ի փա-
„ խուստ դարձուցանէր ‖ . Խորէն . Գ . 37 ։

* Իր երբեմն (շապհոյ արքայի և ատոմայ նախա-
„ րարի) զհետ երամակաց ցռուց յանդգնագոյնս ար-
„ շաւել ընդ խորտաքորտս և ընդ վիմուտ տեղիս .
„ յորմէ կասել սկսաւ շապուհ ։ Իսկ ատոմայ մօկաց-
„ ւոյ եպերեալ զնա՝ ասէ . զնա՛ զնա՛ ա̃ծորդիդ պար-
„ սից, եթէ այր իցես . և նա ասէ . դու երթիջիր .
„ զի 'ի քարինս դիւաց է շահատակել ։ Դարձեալ
„ յայլում ժամու դիպեցաւ 'ի շամբս կինձ որսալ
„ հրով . և շապհոյ ոչ համարձակեալ 'ի թաւուտն քաջ-
„ արշաւ լինել՝ մինչև շրջապատել հրոյ . և նորա ըղ-
„ հայեցուածոն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բե-
„ րեալ լինէր երխվարուն ։ Միւսանգամ ասէ ատոմ.
„ ա̃ծորդիդ պարսից՝ ահա հայր քո և ա̃ծ, ընդէր զան-
„ գիտես . իսկ շապուհ ասէ . թողեալ 'ի բաց զկատա-
„ կելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձո՛ զքեզ, որ և ես
„ զկնի քո . քանզի յառաջէլն՝ ձիս իմ խրտչի ։ Յայն-
„ ժամ այպանեաց զնա ատոմ՝ ասելով, միթէ և այդ
„ քարինք իցեն՝ զի ես յառաջեցից . և արդ՝ եթէ

„ դու զմոկացիս կոչեսցես դիւազգիս, ես զսասա-
„ նեանսդ կոչեմ կնամարդիս։ Եւ մորակեալ զերի-
„ վարն՝ իբրեւ ընդ հովիտ ծաղկանց անցանէր ընդ
„ հուրն՝ զերծուցանելով զշապուհ ||. Խոր. Գ. 55.

Օրինակ Խորենին շարադրութեան։

* Որ առ պատուիրանադրեալն ոչ ձկտի հասանել
„ կանոն, նա յահեկակողմանն դանդաչէ խոտորեալ
„ ճանապարհի. իսկ որ յառաւելագանցն նկրտի հրա-
„ մայեցելոցն հասանել, զաջակողմանն այնպիսին տեն-
„ չացաւ գտանել զխոտորումնն։ Մինն յանդգնաբար
„ յապաշխարութե հոսելով վտանգս՝ յառաւել պըն-
„ դութեն յանյուսութե ընկղմի խորս. եւ միւսն՝ ան-
„ չափաբար ընդարձակեալ թողութեն յուսով զբո-
„ վանդակ զերկիւղին 'ի բաց լուծանէ զկապ։ Իսկ որ
„ յերկաքանչիւրոյն զանգիտեալ հրաժարիցէ ծայ-
„ րայեղ խոտորմանց, (նա) միջին իմն արդարակ եւ
„ անստերիւրող ճանապարհաւ բերիցի. յորմէ ոչ
„ փոփոխեսցի նախահարցն հաստատեալ սահմանք.
„ (այս է՝) ոչ տէրունականն աւուր զապաշխարութեն
„ 'ի վերայ ածել զնսիր. եւ ոչ նմանօրէն ամս զծոմա-
„ կանոն դատարկացուցանել եւ փափկացուցանել զա-
„ ւուրս. եւ ոչ դարձեալ յառ գերազանցագոյնն սո-
„ ցա ումեք վերանալ ելանել. որպէս թէ՝ ընդ ան-
„ գործութի եւ ընդ բերանալուծութի խառնել եւ
„ զքնոյն խորութի եւ զգինէձանութեն որովայնամո-
„ լութի. իսկ 'ի տրտմականսն՝ ծանրաբեռնութեն 'ի
„ ներքոյ դնանիլ տկար բնութեն, մարմնապան լի-
„ նելով յաւէտ՝ քան թէ ախտասպան. եւ 'ի կքել
„ մարմնոյն՝ գտանել հոգւոյն զվհատութեն տարա-
„ կուսանս ||. Յովհաննէս Իմաստասէր. Բ.

* Սուր ածամուխ բարձրացեալն այցելութե նշան
„ ազանչելարուեստ փայլակնաձեւ փայլմամբ յեսա-
„ նեալ՝ քառասայրեան գոլով բերանաւ, 'ի ձեռն ա-
„ ջողակ աջոյն քի յեղմամբ շողշողեալ. որ 'ի փըր-
„ կութի նորոգման մարդոյն՝ զջիլս ուժգնապիրկս չա-
„ րին խստութե քեւ հատեալ՝ իսպառ պարուրեաց.

„ զօրեղ երթմամբ 'ի խոր խոցոտեալ՝ անպատուաստե-
„ լի լուծեալ խորտակեաց ‖ ․ Նար ․ 'ի Գովեստն Խաչի ։
* Իսկ հաւատոյն լուսոյ արմատ և աղբիւր՝ մերու-
„ նակ բնութենս պտուղ՝ բարեբանեալն ածածին, ընդ
„ երկնաւս մաքրապայծառ լուսով կուսութեն ընդ
„ իւր զհոգևորսն վառեալ զամպարաշար ոգցն զա-
„ տեղս՝ զերրորդութեն ընդ տիեզերս շրջափայլէ հրա-
„ շապայծառ ճառագայթ ‖ ․ Խորէն ․ 'ի Ճառն Վարդավառի ։
* Այժմ ամպք՝ տէրունեայն սպասահարկեալ հրա-
„ մանի՝ լուսատեսակք յարևելից՝ ոսկեճաճանչք 'ի
„ հիւսիսոյ՝ զմիմեամբք կուտակեալ 'ի միագոյն թանձ-
„ րութե փայլակնացայտք՝ որոտընդոստ ցօղաբուղխ
„ առատութբ զտիեզերս արբուցանեն ։ Եւ օդք շըն-
„ չեալ մաքրագոյն՝ բիւրակերպեան ծաղկանցն և
„ տնկոցն երփն երփն զարդուք զաշխարհս պայծա-
„ ռազարդեալ պսակեն ‖ ․ 'ի նոյնն ։

ԳԼՈՒԽ ԼԳ․

Յաղագս լուծման պէսպէս շարադրութեանց ։

Շարադրութեց լուծումն է որոշումն իւրաքան-չիւր բառից միոյ բանի՝ ըստ զանազան պաշտաման նոցա, իբր անուն բայի, իբր բայ, իբր խնդիր բայի, իբր մակբայ, իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլն ։ Արդ՝ թէպէտ յասացելոցս վայր կարէ ուսանողն ինքնին լուծանել զբեթէ զամ շարադրութիս, բայց առ 'ի օգնել ևս նոցա՝ մա-նաւանդ տկարացն, և դիւրացուցանել զաշխատանս նոցին, դիցուք աստ քանի մի օրինակս ․ և լուծցուք զնոսին ։

Լուծումն պարզ շարադրութեան ։

* 1 ․ Յարտաքնոցն իմաստասէր ոմն տուն շինեաց ․
„ 2 ․ և դեղագործ ոմն ասաց ցնա, ծեփեա զտուն քո,
„ զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք
„ պատկերաց, և անկուածոց յօրինուածովք ։ 3 ․ Ասէ

„ իմաստասէրն, Էկ յառաջ նկարեա, և ապա 'ի վե-
„ րայ ծեփեցից. կ. զի զգարշելիսն ծածկելն է բար-
„ ւոք՝ քան թէ յայտնելն ||. Վէճ. Ժամագր:

Յայսմ բանի, յառաջին համարն՝ ածական ան-ուանդ իմաստասէր՝ է անուն բայի. որոյ գոյականն դնի զօրութբ. այսինքն է՝ այր որ իմաստասէր: Այն՝ է մասնական անուն մասնաւորիչ նորա. այսինքն անուանս իմաստասէր. Յարտաքնոյն՝ է բացառական խնդիր մասնական անուանս որն: Շինեաց է բայ: Տուն՝ է խնդիր սեռի բայիս շինեաց. և է անորոշ հայցական:

Յերկրորդ համարն, Իսկ է շաղկապ բաղհիւսական: Պեղագործ՝ է անուն բայիս ասաց: Այն՝ է մասնական անուն՝ որպէս յառաջին տան: Խնդիր սեռի ասաց բային՝ զօրութբ դնի. այսինքն է՝ ասաց զայս. այս է՝ ծեփեա՛ զորմն քոյ: Ցնա՝ է խնդիր ընուն ասացին: Ծեփեա՛՝ է բայ հրամայական. որոյ անունն դնի զօրութբ. այսինքն դու: Զորմն՝ է խնդիր սեռի ծեփելոյն: Քոյ՝ է ստացական դերանուն. և լեալ է ածական որմն: Զի՝ է շաղկապ պատճառական: Նշեալ՝ է բայ դրադէմ, կամ ընդունելութի իբր բայ եդեալ, որոյ անուն բային դնի զօրութբ, այսինքն է՝ ես: Գեղեցկացուցից՝ է բայ, որոյ անունն դնի զօրութբ, իմ՝ ես: Զնա՝ է խնդիր սեռի գեղեցկացուցանելոյն: Նկարուք՝ և յօրինուածովք՝ են խնդիր ընութն նորին: Զանազան՝ է ածական բառիս նկարուք: Պաճէճրոյ՝ է յատկացուցիչ նորա: Ընտրանօք՝ է յատկացուցիչ բառիս յօրինուածովք:

Յերրորդ համարն, Իմաստասէրն՝ է անուն բայիս ասէ, որոյ խնդիրն դնի զօրութբ. իմ է՝ ասէ ցնա զայս ինչ, (որ է հետևեալ բանն): Էկ՝ է չեզոքական բայ, որոյ անունն դնի զօրութբ. իմ դու: Նկարեա՛ է բայ ներգործական, որոյ խնդիր սեռին դնի զօրութբ. այսինքն զպատկերն: Յառաջ՝ է մակբայ ժամանակական նկարել բային. Եւ՝ է շաղկապ: Ծեփեցից՝ է բայ ներգործական. որոյ անունն է՝ ես. և խնդիրն դնի զօրութբ. իմ զորմն: Ապա՝ և 'ի վերայ՝ են մակբայ ծեփել բային:

'Ի չորրորդ համարն, Զի՝ է շաղկապ պատճառական: Ծածկելն և յայտնելն՝ են անուն բայիս բարւոք է:

Զգարշելին՝ է խնդիր սեռի ծածկելոյն և յայտնելոյն. Քա՞ն թէն է շաղկապ նախընտրական 'ի մէջ երկուց բայից ծածկել և յայտնել:

Լուծումն վերջին շարադրութեան.

* 1. Իսկ արդ՝ որպէս 'ի մասունս մարմնոյ քան զամ
„ պատուականագոյն և առաջին՝ գլուխն է, յաղագս
„ տեղւոյն բարձրութեն և զգայարանացն 'ի նմա եղե-
„ լոց. և ապա այլքն յանդամոց մի ըստ միոջէ. 2. այս-
„ պէս և յանդամս հոգւոյն մեծ և առաջին իբրև
„ զգլուխ է հաւատոյն ճշմարտութի. 3. և ընդ նմին
„ յարմարեալ՝ որպէս անձն ընդ գլխոյ՝ գործք արդա-
„ րութեն մեծամեծք և փոքունք՝ ըստ պատուիրանացն
„ քի ||. Յովհ. Ընդհանր.

Յայսմ բանի՝ յառաջին համարն, Իսկ արդ՝ է շաղ-
կապ սկզբնաւորական: Որպէս՝ է մակբայ նմանական:
Գլուխն է անուն բայի: Է է բայ: Պատուականագոյն
և առաջին՝ են ուղղական խնդիր բային: Քան՝ է նա-
խադրութի: Զամ՝ է խնդիր նախադրութեն. և այս
նախադրութի համերձ խնդրով իւրով լեալ է խըն-
դիր անուանցս պատուականագոյն և առաջին: 'Ի մասունս՝
է երկրորդ խնդիր նոցին, (որ պատուականագունին և ա-
ռաջնոյն). և կամ պատահական խնդիր բայիս՝ է:
Մարմնոյ՝ է յատկացուցիչ 'ի մասունսն: Յաղագս՝ է նա-
խադրութի: Բարձրութեն՝ է խնդիր նախադրութեան:
Տեղւոյն՝ է յատկացուցիչ բարձրութեն. Եւ է շաղկապ:
Զգայարանացն՝ է երկրորդ խնդիր նախադրութեան:
Եղելոց՝ է ընդունելութիւն 'ի հոլովս սեռական. և է
լեալ ածական զգայարանաց: 'Ի նմա՝ է խնդիր ընդունե-
լութեն. և այս նախադրութի, որ յաղագսն՝ համերձ
խնդրովք իւրովք լեալ է երկրորդական խնդիր բայիս՝
է: Եւ ապա՝ է մակբայ դասական: Այլքն՝ է անուն
բայի. որոյ բայն դնի զօրութե. այս է՝ են: Յան-
դամոց՝ է խնդիր բառիս այլքն: Մի ըստ միոջէ՝ է դարձեալ
դասական մակբայ զօրութե իմացեալ բային:

Յերկրորդ համարն, Այսպէս՝ է մակբայ: Ճշմար-
տութի՝ է անուն բայիս՝ է: Հաւատոյն՝ է յատկացուցիչ

ճշմարտութե ։ Մեծ՝ և առաջին՝ են ուղղական խնդիր բայիս՝ է ։ Յանդամս՝ է ներգոյական խնդիր բառիցդ՝ Մեծ և առաջին ։ Հոգւոյս՝ է յատկացուցիչ յանդամսին ։ Իբրև՝ է նախադրութի ։ Օգուտ՝ է խնդիր Իբրևին . և սա համդերձ խնդրով իւրով լեալ է պատահական խնդիր նոցա . այս Մեծին և առաջնոյն . և կամ պատահական խնդիր բայիս՝ է ։

Երրորդ համարն, Նա է շաղկապ ։ Գործէ՝ է անուն բայի ։ Յարմարեալ՝ է բայ ։ Ընդ՝ է նախադրութի ։ Նմին՝ է խնդիր նորա . որ և համդերձ խնդրովն լեալ է խնդիր յարմարեալին ։ Արդարութե՝ է յատկացուցիչ գործէին ։ Մեծամեծք՝ և փառաւորք՝ են ածական նորա, այս գործէին ։ Ըստ՝ է նախադրութի ։ Պատուիրանացն՝ է տրական խնդիր նորա ։ Քո՝ է յատկացուցիչ պատուիրանացն . և ըստ՝ համդերձ խնդրով իւրով լեալ է իբր պատահական խնդիր գործէին ։ Իսկ 'ի միջանկեալ բառսդ՝ որպէս անձն ընդ գլխոյ, կայ զօրութի կրկնումն բայիդ յարմարեալ . իբր թէ ասէր . որպէս անձն յարմարեալ է ընդ գլխոյ . ուր Անձն՝ է անուն բայի ։ Յարմարեալ էն է բայ ։ Ընդ՝ է նախադրութի ։ Գլխոյ՝ է խնդիր նորա . որ և համդերձ խնդրովն լեալ է խնդիր բնութե յարմարեալին ։

Լուծումն երրին շարադրութե ։

* 1. Զանսպառ խաղաղութեամբ ամենայնոցն 'ի քեզ
„ շնորհաց, և զանդուլ հոգւոյն 'ի վերայ քո իմացուա-
„ ծոցդ զշարժմունս՝ ծանեայ 'ի ձեռն գեղեցիկ խըն-
„ դրոյս . 2. յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ըն-
„ կալեալ զծանօթութի . 3. որ և սիրելի իմոց իսկ
„ ախորժակացս է՝ առաւել ես սովորութենցս ‖ . Իսոկ.
յառաջ ։

'Ի սմա՝ յառաջին համարն, անուն բային դնի զօրութե . այսինքն է՝ ես . իսկ բայն է՝ ծանեայ ։ Բառքդ՝ զանսպառ խաղաղութեանն և զանդուլ զշարժմունսն՝ են խնդիր բայիս ծանեայ ։ Ամենայնոցն շնորհաց՝ է յատկացուցիչ կրաւորականահաղորդ անուանս խաղաղութեանն . և դնի իբր անուն բայի խաղաղութեանց ։ 'Ի քեզ՝ է խնդիր նորա . այս-

ինքն ԽԱՂԱՑՄԱՆՑՆ : ՀՈԳՒՈՅՆ՝ է յատկացուցիչ կրաւորականահաղորդ անուանս ԶՇԱՐԺՄՈՒՆՍ . և է եղեալ փոխան անուան բայի . որպէս յառաջնումն : 'Ի ՎԵՐԱՅ՝ է նախադրութիւն : ԽՄԱՑՈՒԱԾՈՅԴ՝ է խնդիր նորա : ՔՈ՝ է յատկացուցիչ ԽՄԱՑՈՒԱԾՈՅԴ . և այս նախադրու̃ի համդերձ խնդրով իւրով լեալ է խնդիր ԱՆԴՈՒԼ ՇԱՐԺՄԱՆՑՆ : 'Ի ՁԵՌՆ՝ է նախադրութ̃ի : ԳԵՂԵՑԻԿ ԽՆԴՐՈՅՍ՝ է խնդիր նորա . և այս նախադրու̃ի համդերձ խնդրով իւրով լեալ է յարմարական խնդիր բայիս ԾԱՆԵԱՅ : Որպէս թէ ասէր . 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս այսորիկ՝ զոր յինէն խնդրես , ծանեայ ես զխաղալն՝ այսինքն զգեղանիլն ա̃ծային շնորհաց 'ի քեզ անսպառ , և զշարժիլն՝ այսինքն զիջանելն հոգւոյն 'ի վերայ մտաց քոց անդադար :

Երկրորդ համարն , անուն բային դնի զօրութ̃բ . այսինքն է՝ ԵՄ . ԸՆԿԱԼԵԱԼ՝ է բայ . (կամ որ նոյն է՝ ընդունելութ̃ի եղեալ իբր դերադէմ բայ) : Օ ԾԱՆՕԹՈՒԹԵ՝ է խնդիր սեռի բայիս ԸՆԿԱԼԵԱԼ : Օ ՀՈԳՒՈՅԴ՝ է յատկացուցիչ ԾԱՆՕԹՈՒԹԵ : ՅԱՌԱՋ ՔԱՆ՝ է նախադրութի . որոյ խնդիրն զօրութ̃բ դնի՝ ընդ բառիւդ՝ ՄԱՐՄՆՈՅԴ . այսինքն է՝ ԶԾԱՆՕԹՈՒԹԵ . որոյ լեալ է յատկացուցիչ բառդ ՄԱՐՄՆՈՅԴ . որպէս թէ ասէր , յառաջ քան զծանօթութ̃ի մարմնոյդ՝ ընկալեալ զծանօթու̃ի հոգւոյդ :

Երրորդ համարն , որն յարաբերէ զվերջին բառն առաջին համարոյն՝ որ է բառդ՝ ԽՆԴՐՈՅՍ . և է լեալ անուն բայիս ՍԻՐԵԼԻ Է : ՆՈՒԱՔԴ՝ ԻՄՈՅ ԻՍԿ ԱԽՈՐԺԱԿԱՑՍ , ԱՌԱՒԵԼ ԵՒՍ ՍՈՎՈՐՈՒԹԵՑՍ՝ են խնդիր նորա . այսինքն է բայիս՝ ՍԻՐԵԼԻ Է . ՈՒՐ՝ ԻՍԿՆ դնի իբր զարդ . իսկ ԻՄՈՅՆ է ածական ԱԽՈՐԺԱԿԱՑ : ԱՌԱՒԵԼ ԵՒՍ՝ շաղկապ առաւելական . որպէս թէ ասէր . այդ խնդիրդ սիրելի է ախորժակացս իմոց , և առաւել ևս սովորութեցս :

ԳԼՈՒԽ ԼԳ :

ՅԱՂԱԳՍ ՅԱՐՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ :

Յարմարագրութիւնն է ուղիղ դրութ̃ի բառից 'ի ձեռն յատուկ տառից , և պատշաճ կարգուածն բանից

'ի ձեռն յարմար կէտից և նշանաց ։ Ուստի երկու պաշտօնք են յարմարագրութեան ։

Առաջինն է՝ զիւրաքանչիւր բառ գրել իւր սեպհական տառիւ . զբ , Անօթ , և ոչ անօդ . գոհար , և ոչ գօհար . թանձր , և ոչ տանձր . ըստ այսմ և այլքն . զորոց ոչ է հարկ գրել յերկար . ապա թէ ո՛չ՝ պարտ էր զա̃մ բառ ներգործութիւն դնել սուտ ։ Իսկ եթէ կամիս ա̃մի սոցա տեղեակ լինել , պիտոյ է քեզ պարապել ընթերցման գրոց , և քննութեան բառից . և ևս հայել յաճախ 'ի բառագիրքն , ուր որոշ եդեալ կան իւրաքանչիւր բառք ըստ բուն տառից իւրեանց ։

Երկրորդ պաշտօն յարմարագրութեան է՝ զիւրաքանչիւր բան ուղիղ և որոշ կարգել , թէ՛ ըստ բառիցն , և թէ ըստ հատուածոյ բանիցն . թէ՛ ըստ պարբերութեան , և թէ ըստ տրոհութեան ։ Իսկ այս լինի 'ի ձեռն կէտագրութեան , նշանագրութեան և պատուագրութեան . զորոց խօսեսցուք կարգաւ ։

Վասն կէտագրութեան ։

Կէտագրութիւն է ուղիղ կարգումն բառից և բանից 'ի ձեռն կէտից ։ Իսկ կէտքն են գիծք ինչ որոշիչք հատուածոց բանից , և կարգի բառից . և են երեք ։

Առաջինն անուանի ստորակէտ և է այս (,) և դնի սա հասարակօրէն 'ի վերջ անկատար բանից և կամ այնպիսեաց որ թէպէտ յինքեանս ըստ իմիք համարին կատարեալ , բայց համեմատութեամբ այլոց բանի որոյ են հատուած , են իբր անկատար և պահանջեն յարիլ 'ի նոյն 'ի կատարել ։ Սա լինի ևս մակակէտ ենի տառին , յորժամ իբր նախդիր վարի . զբ , 'ի տուն . 'ի տան . 'ի տանէ , ևն ։

Երկրորդն ասի միջակէտ և է այս (.) և դնի սա 'ի վերջ այնպիսի բանից որ թէպէտև են կատարեալ , բայց դեռ ևս չե՛ն վերջացեալ . յորոց ըստ կանոնի ոչ սկսանի գլխագրով այլ բան ։ Սա ասի միջակէտ , զի հասարակօրէն 'ի մէջ պարբերութեան բանից դնի ։

Իսկ երրորդն ասի վերջակէտ որ է այս (։) և սա

դնի 'ի վախճան կատարեալ բանից վերջացելոց ․ յորոց հասարակօրէն գլխագրով, կամ երկաթագրով սկսանի այլ բան ։ Նաև ահա երեքին սոքա յայտնի երևին յաւաջիկայ օրինակդ ։

* Որք վիրաւորին 'ի պատերազմի աստ մերում, դեղ նոցա ապաշխարութիւն է ․ զոր դնեն 'ի վերայ վիրաց իւրեանց ‖ ․ Տծբ ։

Արդ նկատել արժան է, զի յորժամ բազում անուանք կամ բայք աւելի քան զերկուս՝ անմիջապէս շարայարին զհետ միմեանց, եթէ նախընթաց նոցին դիցի առանց շաղկապիս և, հասարակօրէն դնի 'ի միջի ստորակէտ կամ գոնէ բութ ․ որ, * Խորամանկ, մեքենաւոր և արուեստական է ախոյեանն մեր ․ բայց զէն նորա տկարագոյն է քան զմերն ‖ ․ Տծբ ։

Ասացի՝ աւելի քան զերկուս ․ զի եթէ երկու միայն իցեն, ոչ է հարկաւոր դնել զստորակէտ, այլ՝ ոչինչ, և կամ առ առաւելն՝ զբութ ․ որ, * Խաղային դընային այնուհետև 'ի վերայ պահակին հօնաց, զոր ունէին բռնութ̃բ պարսիկք ․ առնուին՝ քանդէին ըզպահակն ‖ ․ Եղէղ ։

* Նո՛րբ իցէ, զի ելից 'ի թանձրագանգաղ ձանձրալի մարմնոյս ‖ ․ Եղէղ ։

Իսկ եթէ շաղկապաւս և յարեսցին, թէ երկու իցեն՝ և թէ աւելի, ոչ է հարկ դնել զստորակէտ, այլ՝ կամ զբութ, և կամ զոչինչ ․ որ, * Արկնէր և երեքկնէր զանսուտ երդումն ‖ ․ Եղէղ ։

* Ամ̃ գնացից և վարուց և իրաց՝ 'ի չափու պարտ է կալ, և ոչ խոտորել՝ ոչ յաջ և ոչ յահեակ ‖ ․ Նար ․ Երգ ։

Այլ եթէ յայսպիսի շարայարեալ շաղկապաւոր բառս յարեսցին այլ բառք իբր բացայայտիչք, կամ իբր յատկացուցիչք, կամ իբր ածականք, կամ իբր խնդիրք ևն, յայնժամ դնի ստորակէտ, կամ բութ ․ որ, * Յարգեն զթշուառութ̃ի, և պարսաւեն զյաջողուածս ․ ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորսն այպանեն յոյժ ․ սիրեն զանշքութ̃ի հանդերձից, և յարգեն զանարգն քան զպատուականս ․ գովեն զմահ, և պարսաւեն զկեանս ‖ ․ Եղէղէ ։

Նաև եւս արժան է նկատել, զի 'ի բանս յորժամ

յարին շաղկապք, պարտ է ըստ պահանջելոյ շաղկապման բառից և բանից դնել զկէտ. որոց զօրինակսն կարես գտանել կարգաւ յառաջին մասին. Գլ. Է:

Արդ՝ որպէս հարկ է քերթողին 'ի շարադրելն ինչ՝ 'ի կիր առնուլ զայսոսիկ կէտս ըստ յարմարութեան տեղւոյն, սոյնպէս և ս հարկ է ընթերցողին կամ խօսողին կշռել զիւրաքանչիւր անգամ և զպարբերութիւն խօսից, և տրոհմամբ բանից 'ի ձեռն շնչառութեան արտասանել. 'ի ստորակէտս՝ զխոնարհումն ձայնին կախ թողլով՝ իբր կատարելի. 'ի միջակէտս՝ զձայնն հատանելով՝ իբր ըստ իմիք կատարեալ. և 'ի վերջակէտս՝ զձայնն և զբանն վերջացուցանելով՝ իբր ամենևին աւարտեալ:

Գտանին դարձեալ՝ և այլ երկու տեսակք գծից, որք երբեմն 'ի գործ ածին 'ի շարադրութիւնս. որոց մինն ասի, փարէնթէզիզ, կամ փակագիծ. և միւսն ենթամնայ: Փակագիծն է այս. ( ). և սա 'ի մէջ բանի զմասնաւոր բան ինչ և կամ բառ պարագրէ և իբր եղնգամբք 'ի վեր առնու. մինչև առանց ընթեռնլոյ զայն, ամբողջ մնալ իմացուածոյ միւս բանին, յորոյ միջի զետեղեալ կայ. որպէս, * Առցուք՝ (թէ ախորժէք), նախ զօրէնս այս 'ի ձեռս մեր, և ընթերցցուք ||. լամբ: Ուր ահա այս բան՝ թէ ախորժէք՝ որոշեալ է փակագծիւ. առանց որոյ կարէ իմացուած միւսոյ բանին մնալ ամբողջ. որգոն, առցուք նախ զօրէնս այս 'ի ձեռս մեր, և ընթերցցուք:

Ենթամնայն է այս (‿). և սա զերկուս տարակաց վանկս միոյ բառի յարէ 'ի մի: Եւ այս յայնժամ լինի, յորժամ մի վանկ բառին է 'ի վերջն նախընթաց տողին, և միւսն 'ի սկիզբն յաջորդ տողին. որպէս է տեսանել յայս բան. — * Որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի ||. սարգ:

Արդ նկատել պարտ է, զի մի վանկքն թիւր անջատեսցին 'ի վերջս տողից, այլ՝ ըստ պահանջման փաղառութեան. ուստի և այնպիսի վանկք՝ որք բաղաձայնիւ սկսանին, յանջատելն՝ բաղաձայն նոցա ոչ է դնելի 'ի վերջն տողից, այլ՝ 'ի սկիզբն յաջորդ տողին:

Վասն որոյ Թիւր է այս անջատումն՝ բարեկ-ենդան. տես-ի. գնաց-աք եւն : Այլ պարտ է դնել այսպէս, բարե-կենդան. տե-սի. գնա-ցաք եւն : Բայց յերկբարբառ ձայնս կարէ դնիլ ըստ երկուց եւս. որպէս եր-կեաւ կամ երկ-եաւ, ան-կիւն կամ անկ-իւն. լա-ւութիւն կամ լաւ-ութիւն եւն : Սոյնպէս եւս յայնպիսի բառս՝ յորս ւ տառն իբրեւ վեւ հնչէ, մարթ է անջատել այսպէս՝ ստեղծ-ուած. պատ-ուել. ՚ի նախանձ-ուէ. եւն. այլ լաւ եւս, ստե-ղծուած. պա-տուել. ՚ի նախան-ձուէ. եւն :

Այլ եթէ երկու ձայնաւորք մի զկնի միոյ դիպեսցին, պարտ է զմին ՚ի վերջ նախընթաց տողին դնել, եւ զմիւսն ՚ի սկիզբն յաջորդ տողին. որպէս, բաղա-ամ. մարի-ամ. մի-այն. գաբրի-էլ. էմմանու-էլ. առնէ-ին. լնու-ին. սիմէ-ովն. է-ակ. կայ-աք. մնայ-աք. բայ-ից. քոյ-ին. գոյ-իւք. եւն :

Սոքա եթէ զկնի ունիցին զայլ ձայնս, այլազգ եւս բաժանին. որգոն, բաղաա-մայ. մարիա-մու. գա-բրիէ-լին. էա-կան. միայ-նակ. եւն :

Նոյն եւս յայնպիսի բառս՝ յորս ըն տառն զօրութիւն է եդեալ, յանջատելն զայնս՝ ըն իբր ՚ի բաղում դնի ներգործութիւն. որպէս, փը-տութիւն. դը-նել. զըն-նել. ըս-կսանիլ. ըղ-նա. եւն :

Այլ գիտելի է, զի բառք բարդեալք կամ բաղադրեալք առանց միջանկեալ տառի՝ այլազգ անջատին. զի սկզբնաւորութիւն պարզից՝ յորոց զօդին, թէ եւ ձայնաւոր տառիւ սկսցին. որպէս, ուրախ-արար. դժուար-իմաց. պար-առութիւն. բաց-որոշել. դեր-անուն. աշ-երախտ, եւն :

Իսկ որք միջանկեալ տառիւ բարդին, սկզբնաւորութիւն բաղաձայնից անջատին. որպէս, Ճառա-բանել. կենա-գործել. եւն :

Վասն նշանագրութեան :

՚Ի բարբառս մեր կան նշանք ինչ, որովք յատկութիւք հնչմանց տառիցն որոշին ՚ի ձեռն արուեստի առոգանութեան ըստ ոլորակին, ըստ հաղագին՝ եւ ըստ

ամանակին. և են եօթն. Թաւ, որ է այս՟. Սուղ, որ է այս օ. Նաւ, որ է այս՞. Բութ, որ է այս՝. Շեշտ, որ է այս՛. Երկար, որ է այս՛. Պարոյկ, որ է այս՞. Ընդ որս դասի և ողորկն, որ նման է պարուկի, և կոչի ևս երբեմն պարոյկ, որ և է այս՞. զորոց խօսեսցուք յառաջիկայդ։

Մոլքն 'ի հնումն վարէր 'ի վր այնց տառից, զորս առաւել նուրբ պարտ էր հնչել, քան զլծորդատառս նմանաձայնս նոցա։

Սուղն գլխաւորաբար վարի յերաժշտութն. Թէպէտ և հին գրիչք ոմանք դնէին և 'ի վր երկբարբառս ուխս °—։

Թաւն նշանակէր առ հինսն զխոշորաձայն հնչումն այնց տառից, որոց կան լծորդատառք նմանաձայնք, այլ նուրբ հնչմամբ. Սովորութին խափան էարկ այսոցիկ։

Բութն դնի նախ՝ 'ի վերայ Թուական անուանց դասականաց, յորժամ վարին իբր մակբայ. և կամ յորժամ ունիցին զյօդ առանց լինելոյ խնդիր բայի, և կամ ածական. որ, * Խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութբ. եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիս զայսոսիկ. առաջին՝ չլինել զյանցանսն... Երկրորդ՝ զի դարձուսցես մեզ զամ ժառանգութի մեր... Երրորդ՝ հնարել Թափել զմեզ 'ի կայսերէ ‖. Խոր։

Երկրորդ դնի բութ 'ի վերայ շաղկապից՝ այլ. դարձեալ. արդ. և արդ. իսկ արդ. այլ արդ, եւս. որ, * Ոչ եթէ զամ ինչ՝ զոր խորհեսցի մարդ՝ առնել կարող է, այլ՝ զորս Թողացուցանէ ած ‖. Հար. Հարց։
* Դարձեալ՝ եթէ 'ի նաւ ելեալ ոք՝ ըն ամեհի ալիս կամիցի ճանապարհորդել ‖. Խմաստ։
* Նա արդ՝ հայեաց յերկինս 'ի վեր, ով մարդ, և յերկիր 'ի խոնարհ ‖. Ոսկ։

Երրորդ՝ դնի բութ 'ի վերայ դրադէմ բանից՝ 'ի լինելն հեռի դիմաւոր բային. մերձ ևս 'ի մօտ լինելն. որ, * Արդ՝ էր վն զկերպարանս ծառայութեն Թողեալ՝ դատաւոր և քննիչ նստիս օրէնսդրին ‖. Ոսկ։
* Ուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ

մատուցեալ՝ տայլն պատասխանի Թագաւորին || . Եղիշէ։

Այնպէս և սա եթէ դրադեմն յետադասեալ լիցէ, պարտ է դնել զբութ 'ի վերջ նախընթաց բանին. թէպէտ յայսպիսիս երբեմն ստորակէտ ևս դնի. որպէս, * Արդեօք մտից 'ի խորախճանութն խորանին լուսոյ՝ քև առաջնորդեալ || . Նարեկ։
* Զնոյնս և ես համդերձ հառաչմամբ բարբառիմ՝ 'ի դիպուածոց աստի վտանգեալ || . յոհ՟ան. Իմաստ։

Չորրորդ՝ բութն դնի երբեմն 'ի վերայ այնպիսի բառից ևս, յորս կարէր դնիլ ստորակէտ. որպէս, * Որ խոնարհի՝ խոնարհեցուցանէ զդևս. և որ ոչ խոնարհի՝ խոնարհի 'ի դիւաց || . Լամբր։
* Ո՛չ ոք՝ որ չար լիցէ՝ յուսասցի անպարտ լինել || . Յոբ։

Շեշտն 'ի գործ ածի 'ի նշան սուր հնչելոյ զձայնաւորսն։ Նաև ըստ այսմ դնի նախ՝ 'ի վերջ հրամայական բայից. որպէս, * Արձանացի՛ր 'ի յոյսն, մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է. մատի՛ր առ արքայն ահաւոր, մինչդեռ 'ի շնորհացն յաթոռ է. հաւատա՛ գտանել շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութե || . Լամբր։

Այլ եթէ հրամայական բայն ունիցի յառաջ քան զինքն զայնպիսի բառ, ընդ որում 'ի միասին վարի, յայնժամ դնելի է շեշտն 'ի վ՟ր նախընթաց բառին. որպէս, * Յամենայն իրաց չարաց 'ի բա՛ց կացէք || . Ա. Թես։
* Քա՛ջ իմա զբանն, եթէ չգոյ այլ չար քան զայն || . Խոսրով։
* Դուք բո՛ւռն հարէք, և ա՟ծ լիցի գործակից || . Լամբ։

Նաև ևս՝ եթէ հրամայականն ունիցի նախ քան զինքն զարգելական մասնիկս՝ մի, թէ առընթեր՝ և թէ հեռի, յայնժամ զշեշտն պարտ է դնել միայն 'ի վերայ արգելական մասնկան. որպէս, * Յիմաստութի քո մի՛ հպարտանար . . . մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քո || . առակ։

Երբեմն ևս վ՟ս զգուշութե՝ դնի շեշտ 'ի վերջ անուանց ինչ, որք էական բայիւ վարին, կամ որք էական բայի ուղղական կամ սեռական խնդիր լինին. որպէս, * Աստա՛հ եմ 'ի ձեզ ո՟րամբ || . Է. Եւսեբ։
* Լա՛ւ է անզաւակութի համդերձ քաջութ || . Իմաստ։
* Իմաստնո՛ց է վերակացու լինելն || . Իգնատ։

Երկրորդ՝ 'ի յատուկ անուանս այլոց ազգաց՝ սովորութիւն եղև ոմանց դնել զշեշտն 'ի վերայ առաջնոյ վանկի 'ի կոչականսն, յորժամ առանձինն վարին. որ, * Յուդա՝ համբուրելով մատնես զորդի մարդոյ ||. Ղուկ։

Ասացի՝ յորժամ առանձինն վարին. զի եթէ կրկնեսցին, շեշտն սովորաբար դնի 'ի վերջին վանկն. որ, * Սողո՛ն սողո՛ն գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան ||. Խոր։

Նա և եթէ կոչական անուանք վարեսցին մասնըկամբքս ո՛ և ո՛ն, որ ուրուք են կոչականակերտք, սովորութիւն եղև զշեշտն դնել 'ի վերայ այնց մասնկանց. որ, * Ո՛, մանո՛ղ եղերուք ո՛ հովիւք առաջին հովուացն արդարոց ||. Տծէ։

Իսկ եթէ կոչական անունն զկնի կամ առաջի իւր ունիցի զայլ անուն, կամ զդերանուն, եւն. շեշտն դնի 'ի վերջին վանկն նախընթացին. որ, * Սիմո՛ն յովնանու՝ սիրես զիս առաւել քան զդոսա ||. Յովհ։
* Ողջեա՛ 'ի յիս զլոյս քաւութե՛ արքա՛յ երկնաւոր ||. Նարեկ։

Իսկ յայլ անուանս 'ի կոչականսն շեշտն դնի 'ի վերջին վանկս. որ, * Տուի՛չ պարգևաց, ինքնաբո՛ւն բարի ... փառաւորեա՛լ. անքննելի՛ն. անե՛ղ. ահարկո՛ւ. սոսկալի՛. հզօ՛ր. սաստի՛կ. անտանելի՛. անմերձենալի՛. անըմբռնելի՛. եւն ||. Նար. Գ։

Երրորդ՝ դնի շեշտ երբեմն 'ի վերայ ոմանց բացասական և ստորասական մակբայից. և 'ի վերայ բառիս՝ չէ. մերթ և 'ի վերայ բառից՝ սա, դա, նա, յորժամ վարին էական բայիւ. որ, * Ո՛չ նախանձի խաւար ը աղջամուղջ ||. Տծէ. Ե։
* Ամէ՛ն ասեմ ձեզ, թէ ո՛չ գիտեմ զձեզ ||. Մատ։
* Չի՛ք ակնառութի առաջի այ ||. Կողոս։

Երբեմն և մա՛րթ է դնել շեշտ փոխանակ ոլորակի 'ի վերայ հարցական բառից՝ ը պահանջման տեղւոյն. որ, * Փութացաւ ուսանել՝ թէ քանի՛ իցեն պարագլուխք քաջ նահատակացն ... զի՛նչ անուանք իւրաքանչիւր համհարզացն իցեն ... ո՛ որք 'ի նոցանէ յերկրայս կայցէ. և կամ ո՛ որք զանձն 'ի մահ դնելով՝ գուն գործիցէ ||. Եղիշէ։

Երկարն 'ի գործ ածի 'ի բանս հեգնականս, ողբականս, ցաւակցականս, զարմացականս. եւն. զոր օրինակ, * Ա՜հ որ քակեիր զտաճարն, եւ զերիս աւուրս շինեիր զնա, ապրեցո՛ զքեզ ‖. մաթ :

* Ա՛եղա՜յ մեծիդ բարերարութե՟, անարգս մեղայ ‖. նար. կէ :

* Ողորմի՛մ ողորմիմ սիրելեաց ձերոց, եւ բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց ‖. եղիշէ :

Բայց յայսպիսիս՝ հնար է եւ փոխանակ երկարի դնել շեշտ, մերթ եւ պարոյկ, եւ կամ ոչինչ, ըստ առոգանելոյ բանին :

Պարոյկն եւ դնի յայնպիսի բանս՝ որք յայտնեն զկիրս հոգւոյն. որպիսի են այն բանք՝ որք հասարակօրէն 'ի ձեռն միջարկութեանց առաջի դնին. զորոց զօրինակն կարես տեսանել յառաջին մասին. գլ. իա :

Ոլորակն՝ որ նմանութի՟ ինչ ունի ը՟ պարուկին, մանաւանդ թէ՝ երբեմն պարոյկ եւ կոչի, առաւել քան զպարոյկն տայ ոլորել զձայնն. եւ սա դնի ՝Լաւ՝ 'ի վերայ հարցական մակբայից. ո՟ր, * Զի՞ ընաւ պիտոյ են մեզ անցաւոր կեանքս ‖. եղիշէ :

Երկրորդ՝ դնի 'ի վերայ հարցական անուանց. զորոց զօրինակն տես 'ի գլ. լա :

Երրորդ՝ դնի 'ի հարցական բանս՝ 'ի վերայ այնր բառի, որով հարցումն յայտնի. ո՟ր, * Երկայնամի՞տ միայն լինիցի առ Նոսա ‖. ղուկ :

* Տեսանե՞ք, զի 'ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ 'ի հաւատոց ‖. յակ :

Այնպէս եւ եթէ 'ի հարցական բանս դիցի մակբայ երկբայական, ոլորակն դնի 'ի վերայ այնր բառի, որով 'ի մէջ բերի հարցումն. եւ ոչ 'ի վերայ մակբային. զոր օրինակ, * Մ՛իթէ տկարանայցէ՞ առ 'ի յո՟յ բան ‖. ծնն :

* Արդեօք տեսի՞ց զվայելչութի՟ ընտանիդ քո պայծառութե՟ ‖. նարեկ :

Բայց գիտելի է, զի բազում անգամ 'ի տեղի ոլորակին դնի պարոյկ. եւ 'ի տեղի պարուկին՝ ոլորակ. եւ երբեմն եւ 'ի տեղի երկարին՝ ոլորակ, կամ պա-

բոյկ . ևս և շեշտ . և 'ի տեղի ոլորակին կամ պարուկին՝ երկար, զի առոգանելոյ զբանսն, որպէս և յիշեցաք 'ի վերոյ ։

Վասն պատուադրութեան ։

Գտանին և այլ չորս գիծք, որք կոչին տեսակք պատուադրութե . որոց առաջինն ասի ստուն . և է այս, ՚ . և սա միայն փոխան այբի դնի 'ի մէջ միոյ բառի . ոչ 'ի սկզբան, և ոչ 'ի վերջոյ, այլ՝ 'ի միջի . որպէս, քաղք . ամիչեմ . ճիշակեմ . բովնդակեմ . ևն ։ Բայց զայս չէ պարտ յաճախել, բայց եթէ հարկն ստիպեսցէ 'ի կարճել զտողս բանից ։

Երկրորդն ասի երկերեակ . և է այս, " . և սա դնի նախ՝ 'ի վերայ բառի փոխան ձայնաւոր տառի եղելոյ 'ի մէջ բառին . որպէս, խ"ն"րհութի . ս"վ"րեալ . ևն ։ Բայց բարւոք ևս է յայսպիսի տեղիս ընաւ ոչ առնուլ 'ի կիր զայս նշան ։ Դնի երկրորդ՝ 'ի վերջ կիսատ բառից ինչ, զորս հնար իցէ ընթերցողին իմանալ . զոր օրինակ, ղուկ" . յովհ" . լամբ" . ևն . որպէս ղուկաս . յովհաննէս . լամբրոնացի . ևն ։

Երրորդն ասի պատիւ, որ և պատիւ կոչի, երբեմն ևս քաշ . և է այս, ՜ . և սա դնի 'ի վերայ բառի՝ երբեմն փոխան ձայնաւոր և բաղաձայն տառից ինչ այնր բառի . զոր օրինակ, ա̄ծ . ա̄մ . եէ̄մ . իէ̄լ . եր̄դ . չր̄դ . մ̄դ . խ̄դ . ժ̄մկ . փ̄նկ . ևն ։ Իսկ երբեմն փոխան ձայնաւոր տառից միայն, մանաւանդ փոխանակ այբի . որպէս, քհ̄նյ . պ̄տճռ . ս̄ղմ . ս̄կւ . բ̄ղմ . պ̄րտւր . խ̄նրհուի . ժղ̄վրդ . ևն ։

Սա պատիւ կոչի, զի 'ի սկզբան յորժամ հնարեցաւ՝ դնիւր 'ի պատիւ գրեցելոյն . որպէս, ա̄ծ, թգ̄ր, տ̄ր, ևն . և յետոյ հ̄նրկ եղև ։ Իսկ 'ի դնիլ յանպատիւ իրս՝ 'ի ներքոյ զետեղէին . որպէս, ա̱ծք առժամայնք . ս̄տղյ, ևն ։

Չորրորդն ասի նշանագիր . որ դնի փոխանակ միոյ ամբողջ բառի . և սորա են կրկին տեսակք ։ Ոմանք կազմին 'ի բաղադրութէ գրոց . որպիսի են սոքին .

ա͞յ, այսինքն ·	ը͞ս, ըստ ·	կ͞, կամ ·
գ͞ր, գո՛ր օրինակ ·	ը͞մ, ըստ այնմ ·	ք͞, քան ·
ը͞, ընդ ·	և͞ա, և այլն ·	ա͞ս, այսպէս · և͞ա ։

Իսկ ոմանք կազմեն յայնպիսի գծից, որք ոչ դասին ը͞ գիրս լեզուի մերոյ · որպիսի են սոքին · ծ աշխարհ · ☾ լուսին · ※ աստղ · և͞ա ։

Այսչափ ինչ շատ լիցի առ 'ի յուսումն ուղիղ խօսելոյ ը͞ մարդիկ և անսխալ շարադրելոյ ։ Այլ եթէ կամիս յառաւելն բերել՝ տես յընդարձակն ։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Յորում առաջի դնին սահմանք և բաժանմունք և պարագայք մասանց բանի, և կանոնք համաձայնութեան նոցա ընդ միմեանս ։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ զինչ իցէ քերականութիւն, և որք իցեն գլխաւոր ուսանելիք 'ի նմա ։

Քերականութիւն է արուեստ ուղիղ խօսելոյ՝ և անսխալ շարադրելոյ ։

Գլխաւոր ուսանելիք 'ի քերականութեան՝ են չորք . գիր, վանկ, բառ, և բան ։

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի ։ Իսկ տառն է հնչումն ինչ յօդելի և հեգելի . զի յօդի ընդ այլում հնչման, և հեգեալ ընդ նմա՝ հնչէ զբաղադրեալ ձայն ։

Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ բերան մարդոյ՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից . որգոն, * մա . զէն . եա ։

Բառն է ձայն նշանական . այսինքն այնպիսի ձայն, որ կարգեալ է 'ի նշանակել ինչ ։ Այս բաժանի յութ ազգս . որք են՝ անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն ։

Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնօղ տրամախոհութեան մտաց ։ Այս է կրկին . կատարեալ, և անկատար ։

Կատարեալն է, որ անթերի յայտնէ զդատմունս մտաց . ոգ, * Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ‖ ։

Իսկ անկատարն է, որ տայ զսկզբնաւորութիւն իմանալոյ զգատմունս մտաց, բայց ոչ աւարտէ . որպ, * Եթէ անսայցես ‖ . յոր թէ յարեսցի բայ ինչ, կատարի . որպ, * Եթէ անսայցես, աղերսեմ ‖ ։

Մասունք բանի են ութ աղգ բառից զորս յիշեցաք . անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն ։

Յաղագս անուան ։

Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի . այսինքն է՝ այնպիսի բառ, որով իրն ասի այս ինչ ։ Կամ որ զէութիւն իրին նշանակէ . որպ, * ծառ . լոյս . երկիւղ . չար . եւն ։

Անունն բաժանի յերկուս, 'ի գոյական և յածական ։ Գոյական անունն է, որ ինքնին վարի 'ի բանս, և նշանակէ զիրս էականս, կամ իբր էականս . որպ, * մարդ . հաց . սէր . օրհնութիւն . եւն ։ Նա բաժանի, 'ի յատուկ, 'ի հաւաքական, և 'ի յընդհանուր ։

Յատուկն է, որ կարգեալ է՝ զմիոջէ միայն ասիլ . որպ, * Մովսէս . սիոն . նեղոս . եւն ։

Հաւաքականն է, որ զհաւաքեալ իրս իբրև զմի նշանակէ . որպ, * գունդ . ժողով . շեղջ . եւն ։

Ընդհանուրն է, որ զհասարակ ինչ բազմաց՝ նշանակէ . որպ, * ծաղիկ . գլուխ . բարութիւն . եւն ։

Ածական անունն է, որ ինքնին ոչ վարի 'ի բանս, այլ՝ պահանջէ յարիլ 'ի գոյականս՝ իբր յայտնիչ որպիսութեան նոցա . որպ, քաղցր . դառն . բազում . սակաւ . մեծ . փոքր . անզգամ . արդար . եւն . որք յարելով 'ի գոյականս վարին . որգոն, * քաղցր ջուր . դառն պտուղ . բազում աշխատանք . սակաւ ժամանակ . եւն ։

Այլ սոքա բազում անգամ զօրութիւն ունին զգոյականաց . որպ, * Մեծն 'ի փոքուն Հանայի ‖ . այսինքն մեծ իրն 'ի փոքու իրի ։ * Անզգամն անգոսնէ զխրատ հօր ‖ . այսինքն այր անզգամ ։ * Աղբիւր կենաց յայս՝ բերան արդարոյ ‖ . այսինքն բերան առն արդարոյ ։

Ածական անունն բաժանի յերիս, 'ի դրական, 'ի բաղդատական, և 'ի գերադրական ։

Դրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն կամ զոր-քանութիւն իրին պարզապէս՝ առանց ճոխացուցանելոյ, կամ նուազեցուցանելոյ. օր. * բարձր. խոնարհ. աղտեղի. պայծառ. սուրբ. մաքուր. վեհ. զօրաւոր. ևլն ։

Բաղդատականն է, որ բաղդատելով զմի իր ընդ այլում իրի՝ ցուցանէ զորպիսութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն. օր. * բարձրագոյն. խոնարհագոյն. ևլն ։

Գերադրականն է, որ ցուցանէ զորպիսութիւն իրին յոյժ առաւելեալ՝ կամ յոյժ նուազեալ քան զայլոցն. օր. * ամենասուրբ. ամենամաքուր. ևլն. կամ, * ևս վեհագոյն. ևս զօրաւորագոյն. ևլն ։

Յաղագս պարագայից անուան ։

Պարագայք անուանց են այնք, որք յանուանս մտածին՝ իբր հետևումն որպիսութեան նոցա. և են վեց, սեռ, ձև, տեսակ, թիւ, հոլով, և հոլովումն ։

Սեռք անուանց են որոշմունք գոյական անուանց ըստ նշանակելոյ նոցա զսեռս իրաց ։ Եւ են չորք. արական, իգական, հասարակ, և չեզոքական ։

Արականն է, որ նշանակէ զարու. օր. * գրիգոր. աբգար. հայր. քեռի. ցուլ. քաղ. ևլն ։

Իգականն է, որ նշանակէ զէգ. օր. * եսթեր. հեղինէ. մայր. հանի. կով. մաքի. ևլն ։

Հասարակն է, որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէգ. օր. * զաւակ. կորիւն. ձի. արջ. ևլն ։

Չեզոքականն է, որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էգ. օր. * հուր. այգի. մատն. մեծութիւն. ևլն ։

Ձևք անուանց են որպիսութիւնք նոցա՝ ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան ։ Ուստի և անուանք ըստ ձևոյն երեք են. պարզ, բարդ, և բաղադրեալ ։

Պարզ անունն է, որ ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի, այլ կայ յինքեան միայնակ. օր. * լոյս. բարի. գոտի. բան. լի. ձեռն. աղօթք. արիւն. ևլն ։

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ

է 'ի մի անուն. օր., * լուսատու. բարեկրօն. գօտեմարտ. բանբերուն. լիալի. եւն ։

Ընդ բարդս դասին եւ քանի մի անուանք, որք յերից բառից զօդին 'ի մի անուն, եւ կոչին յարաբարդք. օր., * երեքտասանամեայ. հրազինապետ. եւն ։

Բաղադրեալն է, որ յառաջոյ զօդեալ ունի զանազան մասնիկ ինչ. օր., * անճառ. ապերախտ. տգեղ. համաձայն. տարադէպ. եւն ։

Տեսակք անուանց են որպիսութիւնք նոցա ըստ նախնական եւ ըստ ածանցական նշանակութեան ։ Աստի եւ անուանք երկու են ըստ տեսակին. նախադաղափար, եւ ածանցական ։

Նախադաղափար՝ կամ նախատիպ անունն է, որ կայ յառաջին նշանակութեան իւրում, կամ յայնմ որպիսութեան, զոր ինքնին նշանակէ. օր., * աւանդ. բան. հուր. հող. կոյս. միապետ. եւն ։

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն 'ի ձեռն ածանցակերտ աննշան մասնկանց 'ի վերջոյ յարելոց կերպաւորեալ, եւ աճեալ յայլ իմն եղանակ նշանակութեան. օր., * աւանդութիւն. բանաւոր. հրայէն. հողեղէն. կուսանոց. միապետական. եւն ։

Ոմանք յայսպիսի անուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին, եւ կոչին կրկնածանցական. օր., * թագաւորական. ազգականութիւն. եւն ։

Թիւք անուանց են միութիւն եւ բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին ։ Եւ են երկու. եզական, եւ յոգնական. կամ միաւորական, եւ բազմաւորական ։ Եզականն է, որ ըստ ձայնին զմի իր նշանակէ. օր., * սեղան. բեռն. ատամն. եւն ։ Իսկ յոգնականն է, որ ըստ ձայնին զբազումս նշանակէ. օր., * սեղանք. բեռինք. ատամունք. եւն ։

Հոլով անուանց է պէսպէս փոփոխումն մի եւ նոյն անուան 'ի սկիզբն, կամ 'ի վերջն, եւ կամ յերկոսին միանգամայն. եւ է տասն. ուղղական. որդոն, գործ. սեռական. որդոն, գործոյ. եւն ։

Հոլովմունք անուանց են պէսպիսութիւնք վերջաւորութեանց սեռական եւ գործիական հոլովից. եւ են քսան. չորեքտասանքն հասարակ, իսկ վեցքն յատուկ ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ վեց պարագայիցդ՝ բառս հոգւով՝ է անուն գոյական . ըստ սեռին՝ չեզոքական . ըստ ձեւոյն՝ պարզ . ըստ տեսակին՝ նախատիպ . ըստ թուոյն՝ եզական . ըստ հոլովին՝ գործիական . և ըստ հոլովմանն՝ հոլովի որպէս գետ , գետոյ , գետով :

Դարձեալ՝ բառս զչարաբարոյս՝ է ածական անուն դրական . ըստ սեռին՝ հասարակ , կամ անսեռ . ըստ ձեւոյն՝ բարդ . ըստ տեսակին՝ նախատիպ . ըստ թուոյն՝ յոգնական . ըստ հոլովին՝ հայցական . և ըստ հոլովմանն՝ նախդրիւ եւեթ հոլովի :

Յաղագս դերանուան :

Դերանունն է մասն բանի , որ փոխանակ անուան դնի , և առ որոշեալ դէմս վերաբերի : Նա բաժանի 'ի հինգ տեսակս . որք են , էական . ստացական . ցուցական . յարաբերական , և դիմորոշական :

Էականն է , որ գոյականապէս նշանակէ զդէմս իւրին . որպիսի են սոքա . * ես . դու . ինքն . իւր , իւրեան :

Ստացականն է , որ ածականապէս նշանակէ զինչ որոշեալ դիմաց . որպիսի են սոքա . * իմ . քո . մեր . ձեր . իւր , իւրոյ :

Ցուցականն է , որ յանդիման ցուցանէ զիրն յերրորդ դէմս ըստ կարգի . որպիսի են սոքա . * սա , դա , նա . այս , այդ , այն . սոյն , դոյն , նոյն :

Յարաբերականն է , որ զօրութիւն յառաջ բերեալ 'ի բանի զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ դնի 'ի տեղի նորա , յո՛ր հոլով և պահանջեսցէ բանն . և է բառս՝ որ :

Դիմորոշականք են երեքին տառքս այսոքիկ՝ Ս . Դ . Ն . որք իբր յօդք ինչ յարելով 'ի մասունս բանի՝ որոշեն զդէմս նոցա :

Յաղագս պարագայից դերանուան :

Պարագայք դերանուանց են հինգ . տեսակ , դէմք , թիւ , հոլով , և հոլովումն :

Տեսակք դերանուանց են երկու , որպէս և անուանցն , նախատիպ՝ և ածանցական :

Նախատիպք են սոքին. * իմ. քոյ. մեր. ձեր. իւր. ինքն. եւ այլն ։

Իսկ ածանցականք են սոքին. * մերային. քոյին. ձերային. իւրային. ինքնութիւն. եւն ։

Դէմք դերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց. եւ են երեք. առաջին, երկրորդ, եւ երրորդ ։
Առաջին դէմքն է այն, յորմէ է բանն. զորօրինակ, ես ։
Երկրորդ դէմքն է այն, առ որ է բանն. զորօրինակ, դու ։
Երրորդ դէմքն է այն, զորմէ է բանն. զորօրինակ, նա. ինքն ։
Առ երրորդ դէմս վերաբերին եւ դէմք այլոց դերանուանց, թէ ստացականաց եւ թէ ցուցականաց ։
Թիւք դերանուանց են երկու, եզական եւ յոգնական ։

Եզականն է՝ որ իբրեւ զմի իր դիմաւոր նշանակէ. օր, * ես. դու. մեր. ձեր. եւ այլն ։

Յոգնականն է՝ որ իբրեւ զբազում դիմաւորս նշանակէ. օր, * մեք. դուք. մերք. ձերք. եւ այլն ։

Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն մի եւ նոյն դերանուան յինքեան. օր, * դու, քո, քեզ, ըզքեզ, 'ի քէն, զքէն, քեւ, զքեւ, 'ի քեզ, ով դու ։

Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նոցա. օր, * ես, իմ. դու, քո. նա, նորա. եւ այլն ։

Ըստ այսոցիկ վերոյեդեալ հինգ պարագայից՝ բառս ինձ՝ է դերանուն էական. ըստ տեսակին՝ նախատիպ. ըստ դիմին վերածի առ առաջին կարգն. ըստ թուոյն՝ եզական. ըստ հոլովին՝ գործիական. եւ ըստ հոլովմանն՝ հոլովի, ես, իմ, յինէն, ինեւ, եւն ։

Դարձեալ՝ բառս 'ի ձերոյ՝ է դերանուն ստացական. ըստ տեսակին՝ նախատիպ. ըստ դիմին՝ վերածի առ երկրորդ կարգն. ըստ թուոյն՝ յոգնական. ըստ հոլովին՝ բացառական. եւ ըստ հոլովմանն՝ հոլովի որպէս՝ իմ, իմոյ, յիմոց, եւ այլն ։

Յաղագս բայի ։

Բայն է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, եւ կամ զլինելութիւն իրաց ընդ ժամանակաւ նշանակէ՝ ընդ որոշեալ դիմաց. օր, * հեղում. վանիմ. գնամ. լինիմ. եւն ։

Բայք բաժանին յերկուս, յէական եւ յառաքական ։

Էական են, որք նշանակեն զլինելութի̃ իւրեն ընդ ժամանակաւ. և են չորեքին սոքա, * եղանիմ. լինիմ. եմ. և գոլ։

Իսկ առաքականք են, որք նշանակեն զառնել ինչ՝ կամ զկրել. որպիսի են այլ ա̃մ բայք. զոր օրինակ, * գրեմ. ջեռնում. ձգիմ. եւն։

Առաքական բայք բաժանին 'ի կանոնաւորս և յանկանոնս. կանոնաւորք անխոտոր խոնարհին. որգոն, գործեմ, աղամ. անկանոնք խոտորին 'ի ժամանակս ինչ կամ պակասին, որգոն, լսեմ, լուայ. ճանաչեմ, ծանեայ, և այլն։

Յաղագս պարագայից բայի ։

Պարագայք բայից են այնք, որք մտածին 'ի վերայ բայից՝ իբր հետևմունք որպիսութե̃ նոցա. և են ինն. սեռ, ձև, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, և լծորդութի̃։

Սեռք բայից են որոշմունք նոցա ըստ առից և ըստ կրից. և են չորք. ներգործական, կրաւորական, հասարակ, և չէզոքական։

Ներգործականք են, որք նշանակեն զներգործել իւրեն առ կրողն. զոր օրինակ, * այրեմ. վատնեմ. եւն։

Կրաւորականք են, որք նշանակեն զկրել իւրեն 'ի ներգործողէ. զ̃ր, * այրիմ. վատնիմ. եւն։

Հասարակք են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ նշանակեն զներգործել իւրեն առ այլ, և մերթ զկրել իւրեն յայլմէ. զ̃ր, * տանիմ. ծնանիմ. եւն։

Չէզոքականք են, որք զգործողութի̃ գործողին յինքեան 'ի գործօղն նշանակեն, և ոչ 'ի ներգործողէ առ կրող։ Եւ են կրկին. ներգործակերպ, և կրաւորակերպ կամ ձայնակրական։

Ներգործակերպ չէզոքականք են, որք ը̃ս ներգործական բայից խոնարհին. զ̃ր, * դիմեմ. գնամ. զբօսնում. և այլն։

Ձայնակրականք են, որք ըստ կրաւորական բայից խոնարհին. զոր օրինակ, * աշխատիմ. մնանիմ. փախչիմ. և այլն։

Ձեւք բայից են որոշմունք նոցա ըստ պարզութեան, ըստ բարդութեան և ըստ բաղադրութեան. և են երեք. պարզ, բարդ, և բաղադրեալ։

Պարզն է, որ առանց բաղկացութեան ընդ այլում բառի՝ զնշանակութիւն առից և կրից պարզապէս յայտ առնէ. զոր օրինակ, * բերեմ. կիզեմ. և այլն։

Բարդն է, որ զօդեալ ընդ այլում նշանակական բառի՝ զկերկին իմացուածս առից կամ կրից ՚ի մէջ բերէ. որպ, * ընծայաբերեմ. բոցակիզիմ. և այլն։

Բաղադրեալն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք. որպ, խոցոտեմ. անպատուեմ. տարամերժեմ. տգիտանամ. և այլն։

Տեսակք բայից են որպիսութիւնք նոցա՝ նկատելոց ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան իւրեանց. և են երկու. նախագաղափար, և անցողական։

Նախագաղափարք՝ կամ նախատիպք են, որք նշանակեն միայն զառս գործողին. որպ, * յառնեմ. լամ. յենում. պատկառիմ. և այլն։

Անցողականք են, որք ոչ միայն զներգործութիւն առնողին, այլ և զգործել կրողին նշանակեն. զոր օրինակ, * յարուցանեմ. լացուցանեմ. յեցուցանեմ. պատկառեցուցանեմ. և այլն։

Թիւք բայից մտածին ըստ եզականութեան և ըստ յոգնականութեան նոցա. և են երկու. եզական, և յոգնական։

Եզականն է, որ նշանակէ զմիակի գործողութիւն, կամ կրելութիւն միոյ. որպ, * վառեմ. վառիմ. և այլն։

Յոգնականն է, որ նշանակէ զբազում գործողութիւնս, կամ կրելութիւնս բազմաց. որպ, * վառեմք. վառիմք. ևն։

Դէմք բայից են, որք ցուցանեն զգործողութիւնն լինել որոշեալ անձին. և են երեք. առաջին, երկրորդ, և երրորդ։

Առաջին դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, յորմէ է բանն. որպ, * տամ. ետու. և այլն։

Երկրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, առ որ է բանն. որպ, * տաս. ետուր. և այլն։

Երրորդ դէմքն է այն, որ ցուցանէ զգործողութիւն այնր, զորմէ է բանն. որպ, * տայ. ետ. և այլն։

Ժամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ

զկիրս լինել յայս ինչ ժամանակի . և են երեք . ներկայ , անցեալ , և ապառնի ։

Անցեալն բառակի որոշի . այսինքն՝ իբր անկատար, իբր կատարեալ, իբր յարակատար , և իբր գերակատար ։ Եւ ըստ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց . ներկայ , անկատար , կատարեալ , յարակատար գերակատար , և ապառնի ։

Եղանակք բայից են պէսպէս ատրիճանք կամ կերպք նշանակելոյ նց զառս և զկիրս . և են չորք . սահմանական , հրամայական , ստորադասական , և աներևոյթ , կամ անորոշ ։

Խոնարհմունք բայից են պէսպէս փոփոխութիւնք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութիւնս , և 'ի դէմս , և 'ի ժամանակս , թէ ըստ եզականին , և թէ ըստ յոգնականին . գր, * պահեմ, պահես , պահէ . պահեմք , պահէք , պահեն . պահէի , պահէիր, ևն ։ Եւ մք այնչափ են , որչափ են փոփոխութիւնք մի և նոյն բայի ։

Լծորդութիւնք բայից են պէսպիսութիւնք վերջաւորութեանց սահմանականի ներկային . և են չորք . առաջինն յանգեալ 'ի եմ . զոր օրինակ , գործեմ . երկրորդն՝ 'ի ամ . գր, աղամ . երրորդն 'ի ում . զոր օրինակ , թողում . չորրորդն՝ 'ի իմ . զոր օրինակ , հաշտիմ ։

Ըստ վերոյգրեալ ինն պարագայից՝ բառս այս «Աղայր» է բայ կանոնաւոր . ըստ սեռին՝ ներգործակերպ չէզոքական . ըստ ձևոյն՝ պարզ . ըստ տեսակին՝ նախատիպ . ըստ թուոյն՝ եզական . ըստ դիմին՝ երրորդ . ըստ ժամանակին՝ անկատար . ըստ եղանակին՝ սահմանական . ըստ խոնարհմանն՝ խոնարհի ըստ երկրորդ լծորդութե՝ որպէս ընթանամ, ընթացայ , ընթանայր ։

Դարձեալ՝ բառս «Զարթուցին»՝ է բայ կանոնաւոր . ըստ սեռին՝ ներգործական . ըստ ձևոյն՝ պարզ . ըստ տեսակին՝ անցողական . ըստ թուոյն՝ յոգնական . ըստ դիմին՝ երրորդ . ըստ ժամանակին՝ կատարեալ . ըստ եղանակին՝ սահմանական . ըստ խոնարհմանն՝ խոնարհի ընդ առաջին լծորդութե՝ որպէս մատուցանեմ, մատուցի , մատուցին ։

Յաղագս ընդունելութեան ։

Ընդունելութիւն է մասն բանի , որ նշանակէ զիրն

յառնելութե, կամ 'ի կրելութե ․ և մերթ զառ՛ կամ զկիրս ընդ ժամանակաւ ։ Եւ է չորս՝ ըստ չորից վերջաւորութեանցս՝ ող, եալ, լոց, լի ․ զոր օրինակ, * գնող ․ գնեալ ․ գնելոց ․ գնելի ։

Պարագայք ընդունելութեանց են վեց ․ սեռ, ձև, տեսակ, և ժամանակ՝ ըստ բայից ․ թիւ, և հոլով՝ ըստ անուանց ։ Եւ ըստ այսոցիկ պարագայից՝ բառս 'ի ընտաղարդեալ՝ է ընդունելութի յանգեալ 'ի եալ ․ ըստ սեռին՝ կրաւորական ․ ըստ ձևոյն՝ պարզ ․ ըստ տեսակին՝ նախատիպ ․ ըստ ժամանակին՝ անցեալ ․ ըստ թուոյն՝ յոգնական ․ ըստ հոլովին՝ բացառական ․ և հոլովի որպէս՝ գետ, գետոյ, 'ի գետոց ։

Յաղագս նախադրութեան, մակբայի, շաղկապի, և միջարկութեան ․

Նախադրութիւն է մասն բանի, որ 'ի յարելն յանուանս՝ ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր՝ անունն նշանակէ ։ Ոմանք 'ի նախադրութեանց են հոլովակերպք ․ որգոն, * 'ի, յ, առ, առ 'ի, ց, ընդ, զ ․ և ոմանք հոլովառուք ․ որգոն, * ըստ ․ քան ․ վասն ․ 'ի վերայ ․ 'ի ներքոյ ․ և այլն ։

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեանց նշանակէ ․ որգոն, * ուր ․ երբ ․ զիա՛րդ ․ մի-թէ ․ ահա ․ և այլն ․ և ունի երեսնևերեք տեսակս ։

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ընդ միմեանս զմասունս բանի, նաև զնոյն իսկ զբանս ․ որգոն, * և ․ իսկ ․ թէ ․ զի ․ եթէ ․ և ունի վեշտասան տեսակս ։

Միջարկութիւն է մասն բանի, որ զբնական կիրս հոգւոյն յայտ առնէ ․ որգոն, * ո՛վ ․ աւա՜ղ ․ վա՜հ ․ և այլն ․ և ունի վեշտասան տեսակս ։

ԳԼՈՒԽ Բ ։

Յաղագս համաձայնութեան մասանց բանի ։

Համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զբան ։

Այս կապակցութիւնք լինին ութ եղանակաւ ․ Նախ՝

անուան ընդ անուան ։ Երկրորդ՝ դերանուան ը՟ դեր-անուան և ընդ անուան ։ Երրորդ՝ բայի ը՟ անուան, ընդ դերանուան և ը՟ ընդունելութե՟ ։ Չորրորդ՝ ընդ-ունելութե՟ ը՟ ընդունելութե՟, ը՟ անուան և ը՟ դեր-անուան ։ Հինգերորդ՝ նախադրութե՟ ը՟ անուան, և ը՟ այնս՝ որք իբր անուն հոլովին ։ Վեցերորդ՝ մակ-բայի ը՟ բայի . և ը՟ այնս՝ որք ունին զզօրութի՟ բայի ։ Եօթներորդ՝ միջարկութե՟ ը՟ բանի ։ Ութերորդ՝ շաղ-կապի ը՟ բանի և ընդ մասունս նորա ։

Յաղագս համաձայնութեան անուան ընդ անուան ։

Անուանք որովհետև կ՟մ գոյական են, և կ՟մ ածա-կան, 'ի գալ ու՟ առ միմեանս՝ հա՛րկ է, զի կամ գոյա-կանք ը՟ գոյականաց համաձայնեսցին, կամ ածականք ը՟ ածականաց, կամ գոյականք ը՟ ածականաց, և կամ ածականք ը՟ գոյականաց ։

Արդ գոյական անուանք երրակի կարեն համաձայ-նիլ ը՟ գոյականաց ։ Նախ՝ իբր բացայայտիչ ։ Երկ՝ իբր յատկացուցիչ ։ Երրորդ՝ իբր խնդիր . քանզի

Նախ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առնել զնշանակութի՟ անուան իրիք, թէ յի՞նչ միտս դնի, կամ փոխանակ որո՞յ նշանակէ, յարեմք 'ի նոյն զայլ անուն առանց շաղկապի՝ թուով և հոլովիւ համաձայն նմին . և այն լինի նմա բացայայտիչ . զր՟, * Եւ առեալ հրեշ-տակին զԱմբակում՝ տարաւ զնա 'ի քաղաքն Բաբե-լոն ‖ ։ Ուր գոյական անունդ Բաբելոն՝ է բացայայտիչ անուանս 'ն քաղաք . զի յայտ առնէ՝ թէ անուամբս քաղաք՝ իմացեալ լինի աստ Բաբելոն, և ոչ Նինուէ, կամ գազա ։

Նոյնպէս և յայս բան, * Որ շինեցեր զտուն քո զե-կեղեցի իմաստութե՟ հօր յա՟ ‖ . անունս եկեղեցի՝ է բա-ցայայտիչ անուանս տուն քո . զի յայտ առնէ, թէ բա-ռիւս տուն՝ իմացեալ լինի աստ եկեղեցին . և ոչ թէ ա-պարանք կ՟մ այլ ինչ շինուած ։ Ըստ այսմ և անունդ յա՟ է բացայայտիչ անուանս իմաստութեան հօր ։

Երկրորդ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս յայտ առ-նել, թէ արդեօք նշանակեալն անուան իրիք՝ որո՞յ է,

կամ որում յատկանայ, յարեմք 'ի նոյն զայլ անուն՝ (և մերթ 'ի տեղի անուան զդերանուն, կամ նաև զընդունելութիւն և զդերբայ,) 'ի սեռական հոլովն. և այն լինի նմա յատկացուցիչ. որպէս, * Լուարո́ւք մանկունք զխրատ հօր ||: Սէր անունս հօր՝ է յատկացուցիչ անուանս խրատ. զի ցուցանէ, թէ խրատն այն՝ հօր է, և ոչ օտարի, կամ թշնամւոյ ։

Սոյնպէս և յայս բան, * Արեգական լոյս խաւարեցաւ ||. անունս արեգական՝ է յատկացուցիչ անուանդ լոյս. զի ցուցանէ, թէ այն լոյս՝ արեգական է, և ոչ ճրագի, կամ հրոյ, և կամ այլոյ իրիք աստեղ ։

Իսկ եթէ պիտոյ լիցի յայսպիսիս նախդիր դնել, պարտ է յարել զայն 'ի նախընթացն, թէ յատկացուցիչ իցէ այն, և թէ յատկացուցեալ. զո́ր օրինակ, * Օ խո́րդ պատմեցից զթիւ մեղաց իմոց ||: * Կալցո́ւք յանձինս զհրեշտակացն սրբութիւն ||: Այս նախդիր երբեմն կրկնի 'ի վերայ երկուցն ևս. մանաւանդ եթէ անկցի 'ի մէջն բայ. զո́ր օրինակ, * Օ կենացն եւուր զհաց ||:

Երրորդ՝ յորժամ հարկ լինի գոյական անուանց առնուլ զխնդիր՝ յարեմք 'ի նոսա զայլ անուն, (կամ 'ի տեղի անուան զդերանուն կամ զընդունելութիւն,) իբր խնդիր նոցա՝ ըստ պահանջելոյ նշանակութեան նոցին ։ Վասն զի ոմանք 'ի գոյական անուանց ունելով զհաղորդութիւն ընդ բայից, ուրեք ուրեք պահանջեն խնդիր առնուլ ըստ որպիսութեան բայիցն. որպիսի են բայանունք. իսկ թէ զի́արդ, դիցուք զերիս կանոնս ։

Կանոն. Ա. Անուանք ներգործականահաղորդք, այսինքն որք ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից, առնուն զխնդիր սեռի 'ի սեռական հոլովն, և մերթ 'ի հայցականն. զո́ր օրինակ, * Ձգամամբ ձեռին. փըչմամբ զհոգին ։

Իսկ երբեմն ևս հանդերձ խնդրով սեռի առնուն նաև զխնդիր ընութեան յայնպիսի հոլով՝ զորպիսի պահանջեն բայքն, ընդ որոց ունին զհաղորդութիւն. որպէս, * ձգամամբ ձեռին 'ի ծառն. փչմամբ 'ի նոսա զհոգին ։

Կանոն. Բ. Անուանք կրաւորականահաղորդք, այսինքն որք ունին զհաղորդութիւն ընդ կրաւորական բայից,

առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովս . ո̄ր , * առաքմամբ 'ի հօրէ ։ Նաև երբեմն նաև զխնդիր ընութեան . ո̄ր * առաքմամբ 'ի հօրէ յաշխարհ ։

Կա̄ն . Գ . Անուանք չեզոքականահաղորդք , այսինքն որք ունին զհաղորդութիւն ը̄ չեզոքական բայից , զայնպիսի խնդիր առնուն՝ զորպիսի պահանջեն բայքն՝ որոց հաղորդին . ո̄ր . * գալստեամբ 'ի տաճարն . հրաժարումն յաշխարհէ ։

Յաղագս համաձայնութեան գոյական անուանց ընդ ածականաց ։

Համաձայնութիւն գոյական անուանց ը̄ ածականաց՝ է լինելն նո̄յ խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութե նոցին՝ ը̄ երից կանոնաց՝ զորս եդաք վ̄ն գոյական անուանց . ո̄ր , * ժառանգորդ արքայութե , կործանիչ մեհենաց . դիւրաշարժ 'ի հողմոյ , անտես 'ի մարդկանէ . հաւասար հրեշտակաց , զօրաւոր բանիւք ։

Իսկ անուանք բաղդատականք այլազգ առնուն ըղխնդիր . ո̄ր , * գերագոյն քերովբէից . վսեմագոյնն յիշխանաց . տկարագոյն յանասունս . բարձրագոյն քան զերկինս ։

Այլ անուանք թուականք և մասնականք և հարցականք՝ հասարակօրէն առնուն զխնդիր 'ի բացառական հոլովս . ո̄ր , * երկու 'ի նոցանէ . ոմն 'ի հարց . ո՞վ 'ի մարդկանէ ։

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ գոյականաց ։

Ածական անուանք յարեալ 'ի գոյականս՝ յայտ առնեն զորպիսութիւն իրացն՝ զորս գոյականքն նշանակեն. և քանզի պէսպէս եղանակաւ յարին սոքա 'ի գոյականս՝ պէսպէս համաձայնին ը̄ նո̄ ը̄ վեց կանոնաց ։

Կա̄ն . Ա . Ածական անուանք՝ յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ը̄ նո̄ թուով և հոլովիւ . ո̄ր , * Ծառայք իմաստունք տիրեսցեն տերանց անմտաց ։

Կա̄ն . Բ . Ածական անուանք յորժամ նախադասին գոյականաց , ոչ համաձայնին ընդ նոսա՝ ոչ թըւով և ոչ հոլովիւ , թէ մի իցեն և թէ բազում . զո՛ր

օրինակ, * Ունայն բանիւք ընդդէմ զինին ճշմարիտ և ողջամիտ վարդապետութեն ‖ ։ Իսկ միավանկ ածականք՝ երբեմն համաձայն դնին. որպ, * նոյ պատարագին. նորոց կտակարանաց ։

Կանոն. Դ. Յորժամ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկանի բայ, կամ ընդունելութի, ածականն հասարակօրէն համաձայնի ընդ գոյականին՝ թուով և հոլովիւ. զոր օրինակ, * Երկայնադունից կարօտիմք բանից ‖. * Ածայնով զինեալ զօրութք ‖ ։ Այլ երբեմն անհամաձայն ևս դնի. որպ, * Գերապանծ եհաս իշխանութեն ‖ ։ * 'Ի գգոյական ծածկեալ լուսոյ ‖ ։

Կանոն. Ե. Եթէ նախադաս ածականն ունիցի զդիմորոշական տառ, երբեմն համաձայնի ընդ յետադաս գոյականին և երբեմն ոչ. որպ, * Գոհացարուք զմարդասիրէն այ ‖ ։ * Որ ախրականդ իշխանութե հաղորդս արարեր զմեզ զառաքելոցն ‖ ։

Կանոն. Զ. Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում, յետադաս ածականն դնի ըստ թուոյն յոգնական, և ըստ հոլովին համաձայն. որպ, * Ողջոյն տաջիք անդրանիկեայ և յունեայ ազգականաց իմոց ‖ ։

Կանոն. Է. Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին, կամ գոյականն ածականին, նախդիրն դնի 'ի վերայ նախադասին. որպ, * Դարձ զիս 'ի չար սովորութեց իմոց 'ի բարի սովորութիւն ‖ ։ * Ապականեն զբարս քաղցունս՝ բանք չարք ‖ ։

Եւ ևս՝ եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, նախդիրն դնի 'ի վերայ նմի. որպ, * Որ զհակառակասէր և ըզդժնդակ վարս ուղղեսցէ ... զսրովբէիցն կարգ ունի ‖. * 'Ի յայրս և 'ի փապարս խաւարայինս բնակէր ‖ ։

Եւ եթէ նախադաս ածականն կամ գոյականն իցէ մի, իսկ յետադասքն իցեն բազում, նախդիրն ոչ միայն դնի 'ի վերայ նախընթացին, այլ և 'ի վերայ երկրորդ և երրորդ յետադասին. որպ, * 'Ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս ‖. * Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տր ‖ ։

Յաղագս համաձայնութեան ածական անուանց ընդ ածականաց :

Ածական անուանք չորեքկին համաձայնին ընդ միմեանս . Նախ՝ իբր ածական . որ , * Անհանճար խորհրդատու ‖ :

Երկրորդ՝ իբր խնդիր . զոր օրինակ , * Հրաւիրատուք տրտմականաց ‖ :

Երրորդ՝ իբր բացայայտիչ . որ , * Ուսուցանէ զմեզ այնպիսի լինել , (այսինքն) հեզ և խոնարհ ‖ :

Չորրորդ՝ իբր յատկացուցիչ . որ , * Դժուարինք կենցաղականացս՝ դիւրինք նմա երևին ‖ :

Յաղագս համաձայնութեան դերանուանց :

Դերանուանք հնգապատիկ են . էական , ցուցական , ստացական , յարաբերական , և դիմորոշական :

'Ի մէջ սոցա էական դերանունս ինքն՝ բազում անգամ յարի յայլ դերանուանս՝ համաձայն թուով և հոլովիւ . և իբր մի վարի ընդ նոսա . որ , * ես ինքն . դու ինքն . նա ինքն . սոյն ինքն . որ և ինքն . և այլն :

Սոյնպէս յարին ընդ միմեանս և ցուցական դերանուանք . որ , * սոյն սա . դոյն այդ . նոյն այս . և այլն :

Էական դերանուանքս՝ ես , դու , ինքն , իւր , (ևս և ցուցական դերանուանքս՝ սա , դա , նա , էականապէս վարեալք) , 'ի գործ ածին իբր գոյական . և ընդ գոյական անուանց Նախ՝ լինին յատկացուցիչ . զոր օրինակ , * զկեանս իմ . զտուն քո . ընդ իւր կամաց . բանք սորա . գիրք դորա . վարք նորա :

Երկրորդ՝ լինին խնդիր անուանց , ևս և ընդունելութեանց և նախադրութեանց . որ , * անմոռաց յիւրմէ . խնամօղ ինքեան . վասն նորա :

Երրորդ՝ լինին բացայայտելի 'ի ձեռն գոյական անուանց՝ համաձայն թուով և հոլովիւ . որ , * Ես տէր խօսեցայ ‖ . * 'Ի մէնջ յաշակերտացս Քրիստոսի փառաւորի պաշտօնն Աստուծոյ ‖ :

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածականաց և ընդունելութեանց՝ որ , * Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ‖ . * Ձեզ նեղելոցդ հանգիստ ‖ :

Ցուցական դերանուանքս՝ սա, դա, նա, յորժամ հոլովին՝ սա, սորին, սմին. դա, դորին, դմին, և այլն, հասարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ընդ գոյականաց՝ 'ի հինգ հոլովս միայն. 'ի սեռականն. որգոն, * դմին կանոնի. 'ի գործիականն. որգոն, * նովին բանիւ. 'ի պարառականն. որգոն, * զսովին տեղեաւ. 'ի ներգոյականն. որգոն, * 'ի դմին տան ։

Ցուցական դերանուանքս՝ այս, այդ, այն, իբր ածական վարին. և 'ի յարիլն յանուանս՝ հասարակօրէն համաձայնին ը՟ նս՟ թուով և հոլովիւ. ոք, * այսր տեսութե. այդմ պաշտաման. յաշխարհին յայնմիկ. և այլն ։

Այլ սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. զոր օրինակ, * այս պատկերաւս, յայդ նեղութեդ. խորհրդոյն այն. և այլն ։

Եւ եթէ նախադաս անուանն նախդիր ունիցի, նախդիրն միշտ և յամի կրկնի նաև 'ի վերայ այսոցիկ դերանուանց. ոք, * Դու ես ապաւէն իմ 'ի նեղութէ յայսմանէ ‖ ։ * Փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ ‖ ։ * Եւ եղև ը՟ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յօգոստոս կայսերէ ‖ ։

Ցուցական դերանուանքս՝ սոյն, դոյն, նոյն, հասարակօրէն նախադաս լինելով անուանց վարին 'ի նախդրիւ հոլովս. 'ի սոյն դատաստան. 'ի դոյն ատեան. զնոյն չարչարանս. և այլն ։

Ստացական դերանուանքս՝ իմ, քոյ, մեր, ձեր, իւր, իւրոյ, միշտ իբր ածական վարին. և 'ի յարիլն յանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասիլն՝ և թէ 'ի յետադասիլն. (բաց 'ի չորից յոգնական հոլովից, որք են՝ ուղղական, հայցական, նախդրիւ տրական, և ներգոյական). զոր օրինակ, * 'Ի տան հօր իմոյ օթևանք բազում են ‖. * Տան քում վայելէ սրբութի ‖. * Մի գայթակղեսցին բազումք մերով գայթակղութեամբս ‖. * Տեսանեն զքաջութի ձերոյ նահատակութեդ ‖. * Ներհակ իւրոցն վարդապետեալ օրինաց ‖ ։

Ասացի՝ բաց 'ի չորից յոգնական հոլովից. զի 'ի նոսին միշտ անհամաձայն դնին. ոք, * ծառայք իմ. և

ոչ իմք. * զվաստակս քո. և ոչ քոյս. * ընդ դրունս ձեր. և ոչ ձերս. * 'ի տունս մեր. և ո՛չ մերս:

Յարաբերական դերանունս որ՝ 'ի յարաբերելին զա-նուն, կամ զդերանուն՝ համաձայնի ընդ նմա ը̃ թը-ւոյն. ոպ̃, * Լո՛ւր որդեակ հօր քո, որ ծնաւ զքեզ ||:

Իսկ ը̃ հոլովին՝ դնի այն հոլով՝ յոր դնելի էր յա-րաբերելին. և այս՝ կամ իբր անուն բայի, կամ իբր խնդիր, կամ իբր յատկացուցիչ, և այլն. զո՛ր օրի-նակ, * Ո՜ օթևան է անձն՝ որ յապաշխարութե լիցէ ||. * Սակաւ ողորմութիւն՝ զոր արարեր, զբազմապատիկ պարտան թողցէ քեզ ա̃ծ ||. * Ո՛չ կարէ կրել նա յո-գի իւր զբանս աննիւթս, որոյ միտք ծանրացեալ լիցէ 'ի նիւթոյ երկրի ||:

Նաև գիտելի է, զի սա երբեմն յարաբերէ զնախ-ընթացն. զո՛ր օրինակ, * Երանեալ է այր՝ որ համբե-րիցէ փորձանաց ||: Երբեմն զհետևեալն. զո՛ր օրի-նակ, * Որ ստեղծ զշունչս ամենեցուն, նա գիտէ զա-մենայն ||: Եւ երբեմն զօրութիւն ունի զյարաբերելին. զո՛ր օրինակ, * Որ սիրէ զկեանս՝ խնայէ 'ի բերան իւր ||. այսինքն նա՝ որ սիրէ:

Դիմորոշական յօդքս՝ ս, դ, ն, յարին յանուանս, 'ի դերանունս, 'ի բայս և յընդունելութիւնս, և եր-բեմն նաև յայլ մասունս բանի՝ առ որոշումն դիմաց. ոպ̃, * տանս. քոյդ. ասէն. 'ի տառապելոցս. և այլն:

Նաև երբեմն դնին սոքա փոխանակ միմեանց. ոպ̃, * Եւ զոր ասէս՝ այս է ||. * Ո՛չ յիշես՝ զոր ասացիդ քեզ ||. * Օ որ առնեմն և արարից ||. * 'Ի միտ առ՝ զոր խօսիմն ||:

Յաղագս համաձայնութեան բայի:

Բայք կրկնակի համաձայնին ը̃ անուանս, և ընդ այլ մասունս բանի. նախ՝ իբր ընդ այնս՝ որք ասին անուն բայի. երկրորդ՝ իբր ը̃ այնս, որք ասին խնդիր բայի. որպէս յայս բան, * Կայէն սպան զհաբէլ ||. բայս սպան՝ համաձայնի ը̃ երկուց անուանցս կայէն և հաբէլ: Որոց առաջինն կոչի անուն բայի. և ցուցանէ զո՛ր գործողութե սպանելոյն. այսինքն զսպանողն. և

այն է անունն՝ նոյն ։ Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի . և ցուցանէ զենթակայն գործողութեան սպանանելոյն . որ զսպանեալն . և այն է հայցական հոլովն՝ զհաբէլ ։

Սոյնպէս և յայս բան . * Տրտնջօղն՝ թերահաւատ է ‖ . բառս տրտնջօղն՝ է անուն բայի . էն՝ է բայ . Թերահաւատն՝ է խնդիր ։ Բայց թէ սորա զկարգ պարտին համաձայնիլ, դիցուք զպէսպէս կանոնս ։

Կանոնք վասն անուան բայի ։

Կանոն . Ա . Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային դնի յուղղական հոլովն . զոր օրինակ, * Տրդատ յաղթեաց հաչէի ‖ . Որ վասն դիմաւոր գոլոյ բայիս յաղթեաց, անուն բայինն՝ որ է բառս տրդատ՝ եդեալ է յուղղական հոլովն ։ Իսկ եթէ բայն իցէ անդէմ, անուն բային իւր 'ի բազումս դնի 'ի սեռական հոլովն . որպէս, * Յաղթահարեալ տրդատայ զհաչէ՝ պսակեցաւ 'ի դիոկղետիանոսէ ‖ ։ Որ սեռական հոլովս տրդատայ՝ է անուն բայիս յաղթահարեալ ։ Բայց երբեմն յուղղական հոլովն ևս դնի . զոր օրինակ, * Եւ մուշեղ առեալ զզօրս իւր՝ խաղայ յարևելս ‖ ։

Կանոն . Բ . Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային համաձայնի ընդ նմա թուով և դիմաւ . որպէս, * Քրիստոս աղքատացայ ‖ ։ Որ որպէս դիմաւոր բայս աղքատացայ՝ ընդ թուոյն է եզական, և ընդ դիմին՝ յառաջին դէմն, նոյնպէս և անուն բային, որ է Քրիստոս՝ ընդ թուոյն է եզական, և յառաջին դէմն 'ի ձեռն յօդիդ՝ ս . որպէս թէ ասէր, ես Քրիստոս աղքատացայ ։

Բայց այսպիսի յօդ՝ երբեմն զօրութեամբ դնի յերրորդ դէմն . որպէս, * Գայթակղեցին չարք առաջի բարեաց . և ամպարիշտք կողկողեցին առ դրունս արդարոց ‖ ։

Կանոն . Գ . Եթէ անուն բային իցէ բազում ըստ նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի . որպէս, * Անդրէաս և փիլիպպոս ասեն ցյիսուս ‖ ։ Բայց երբեմն 'ի հասարակ անուանս դնի ևս եզակի . որպէս, * Նախանձ և հակառակութիւն խռովեցոյց զթագաւորութիւնս ‖ ։

Կանոն . Դ . Եթէ անուն բային իցէ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուականագոյն դէմն,

և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն, և երկրորդն քան զերրորդն, յայսպիսի՝ բային դնի յայն դէմս, որ պատուականագոյն է. օր., *Ես և դու գնայաք 'ի միասին‖. *Ժողովեսջիք անդր դու և զօրք քո‖:

Կանոն. Է. Եթէ անուն բային ըստ ձայնին իցէ եզական, իսկ ըստ նշանակութեան բազմաւորական, (որպիսի են անուանք թուականք,) բային դնի յոգնակի. օր., *Լաւ են երկու քան զմի‖. *Ընկան 'ի նոցանէ քսան հազար այր‖:

Իսկ եթէ անուն բային իցէ հաւաքական, բային երբեմն դնի յոգնակի. օր., *Գունդ զօրացն դարձան‖. *Ազգ եկին 'ի հիւսիսոյ‖: Եւ երբեմն եզակի. զո՛ր օրինակ, *Ցրուեցաւ գունդն‖. *Ծարաւեաց ժողովուրդն‖:

Այլ աստ պարտ է գիտել, զի երբեմն անուն բային զօրութեամբ դնի. օր., *Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս‖. Ուր զօրութեամբ իմանի անուն բային, այսինքն նոքա: Եւ ներհակ այսմ՝ երբեմն բայն դնի զօրութեամբ. օր., *Դէպ ժամանակ՝ այժմու կեանքս‖. Ուր զօրութեամբ գոյ բայս՝ է:

Կանոնք վասն խնդրոյ բայից:

Բայք ներգործականք և կրաւորականք առնուն զերկիւն խնդիր. այսինքն զխնդիր սեռի, և զխնդիր բնութեան: Իսկ չէզոքականք, որպէս և էականք՝ միայն զխնդիր բնութեան. որպէս տեսցի յառաջիկայ կանոնսդ:

Կանոն. Ը. Ներգործական բայք առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովի. օր., *Մէգ ծածկէ զճառագայթս արեգական. և զմիտս խաւարէ յոլով կերակուր‖: Ուր հայցական հոլովս զճառագայթս՝ է խնդիր սեռի բայիս ծածկէ. և հայցական հոլովս զմիտս՝ է խնդիր սեռի բայիս խաւարէ, այսինքն խաւարեցուցանէ:

Կանոն. Թ. Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովի. օր., *'Ի Տեառնէ ուղղին գնացք առն‖. Ուր բացառական հոլովս 'ի Տեառնէ՝ է խնդիր սեռի կրաւորական բայիս ուղղին:

Կանոն. Գ. Բայք ներգործականք և կրաւորականք բայց 'ի խնդրոյ սեռի՝ առնուն երբեմն զխնդիր ընդունելութեան ըստ պահանջելոյ նշանակութեան իւրեանց՝ 'ի պէսպէս հոլովս. ոմանք 'ի տրականն, ոմանք 'ի բացառականն, և ոմանք յայլս. զր, *Կոչեաց անօրէն իշխանն զվասակ առ ինքն, և խոստացաւ նմա մեծութի բազում, զի քակտեսցէ զուխտն հայոց 'ի միաբանութէ, և հաստատեսցէ յաշխարհին զհրաման Թագաւորին ‖ ։

Կանոն. Դ. Չեզոքական բայք առնուն զխնդիր ընդնութէ ըստ պահանջելոյ նշանակութէ իւրեանց՝ 'ի պէսպէս հոլովս. որպէս ասացաք զներգործականաց. զր, *Վասակ՝ որ օտարացեալն էր 'ի սիրոյն քի, հնազանդեցաւ ողոքանաց անօրէն իշխանին, և մարտեաւ հնարիւք ընդ բազումս. և որք հաւանեցան նմա, իջին ը̅ւ նմա 'ի դժոխս ‖ ։

Յաղագս աներևոյթ բայի ։

Աներևոյթ բայք որովհետև իբր անուն հոլովին, 'ի գործածին երբեմն իբրև անուն գոյական. և լինին անուն բայի, խնդիր բայի, խնդիր անուան, խնդիր ընդունելութէ. և այլն ։

Իսկ յորժամ իբր բայ վարին, լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բայից. զր, *Որ կամիցի՝ զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա ‖ ։ Որ աներևոյթ բայս կեցուցանել՝ ինքնին խնդիր լեալ կամիցին արգելեալ է զխնդիր նորա. և ինքն է առեալ զխնդիրն. որ է բառդ զանձն իւր. որպէս թէ ասէր, որ կամիցի զկեցուցումն անձին իւրոյ՝ կորուսցէ զնա ։

Երբեմն ևս լինին սոքա տրական խնդիր բայի՝ իբր դերբայ՝ զօրութբ ունելով զնախդիրդ 'ի կամ առ 'ի. զր, *Խողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկել 'ի հիւանդութէ իւրեանց ‖. այսինքն առ 'ի լսել, և 'ի բժշկել ։

Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց ։

Ընդունելութիք կրկնակի համաձայնին ը̅ւ միմեանս. նախ՝ իբր խնդիր. զոր օրինակ, *Յաղթող հակա-

ռակողաց ||։ Երկրորդ՝ իբր ածական. ո̄ր, * Մ՛երժելի մշակող ||։ Ա՛յլ սոքա 'ի սակաւս 'ի գործ ածին։

Ընդունելութի̄ք յանդեալք 'ի օղ՝ միշտ իբր ածական՝ առնուն վարիս. և ըստ կանոնի համաձայնութե̄ ածականաց յարին 'ի գոյականս. ո̄ր, * 'Ի բաց կաց 'ի դժրող բերանոյ ||. * Սակաւ օգտեն խրատք՝ առն բարկացողի ||։

Սոքա 'ի վարիլն ներգործականապէս՝ առնուն ըզխնդիր սեռի 'ի հոլովն սեռական՝ կամ հայցական. ո̄ր, * Խնամօղ արարածոց ||. * Ընդունօղք զբանն կենաց ||։

Երբեմն առնուն նաև զխնդիր բնութե̄ ըստ պահանջելոյ բայից՝ յորոց բղխեն. ո̄ր, * Քեզ որդւոյ շնորհողիդ մեզ զկեանս՝ փառք ||. * Նորոգօղք տիեզերաց 'ի նախահօրն յանցանաց ||։

Իսկ որք վարին չէզոքականապէս, ըստ բայիցն՝ յորոց ելանեն, առնուն զխնդիր. զոր օրինակ, * Համբերօղ վշտաց ||. * Հայեցօղ յօձն պղնձի ||. * 'Ի մեղաց զգուշացօղ ||։

Ընդունելութի̄ք յանդեալք 'ի եալ՝ եթէ ներգործականապէս առցին, իբր դերադէմ բայ վարին. ո̄ր, * Սանեալ զթշնամին՝ խորտակեցին ||։

Իսկ եթէ կրաւորաբար՝ կամ չէզոքականապէս առցին, երբեմն վարին իբր զդերադէմ բայ. ո̄ր, * Քաջալերեալ 'ի բանից նորա՝ յաղթեցին թշնամեաց ||. * Իջեալ մարմնով 'ի գերեզման՝ զկապեալ հոգիսն վերածեաց ||։ Նաև երբեմն վարին իբր ածական անուն՝ ըստ կանոնի համաձայնութե̄ ածականաց. ո̄ր, * Որ փակեալ դրամբք երեկոյին՝ երևեցար մետասանին ||. * Մ՛ի բարկանար եղբօր մեղուցելոյ ||։

Այսպիսի ընդունելութի̄ք զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. ո̄ր, * Հաստատեալ զանձն յաննախանձ կեանս՝ առաքինանայր 'ի Ճգնութիս ||. * Նահատակք՝ սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն ||. * Օգնական է դարձելոց առ նա ||։

Ընդունելութի̄ք յանդեալք 'ի լոց՝ իբր բայ վարին՝ յարելով յէական բայս. և առնուն զայնպիսի խնդիր, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. ո̄ր, * Տալոց է ամենեցուն զահագին իւր վճիռ ||. * Արդարք յափշ-

տանելոց են 'ի հրեշտակաց ամպովք յերկինս ||. * Տեսանեմ միշտ զօրն զայն՝ յորում 'ի դատաստան գնալոց եմ ||:

Ընդունելութիւնք յանգեալք 'ի լէ՝ վարին իբր ածական. և ըստ համաձայնութեան ածականաց յարին 'ի գոյականս. որպէս, * Խոնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարելի բնութեան մարդկան ||. * Պատմող լինել պետրոսի և յովհաննու սիրելոյ ||:

Իսկ սոքա հասարակօրէն առնուն զխնդիր 'ի տրական հոլովս. զոր օրինակ, * Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցն պետութեանց ||:

ՅԱՂԱԳՍ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԻ :

'Ի համաձայնութէ մասանց բանի կազմի բան. երբեմն 'ի բազում բառից, և երբեմն 'ի սակաւուց՝ գոնէ յերից. այսինքն՝ 'ի բայէ, յանուանէ բային, և 'ի խնդրոյ նորին. որպէս, * Հայկ ծնանի զարմենակ ||. Ուր հայկն է անուն բայի. ծնանին բայ. զարմենակն խնդիր :

Բայց երբեմն մի 'ի սոցունց զօրութեամբ դնի. որպէս, * Ես վրիպեցայ ||. * Յուսամ առ ած ||. * Ինքն անհամբեր ||. այսինքն ես վրիպեցայ 'ի բարւոյն. դու յուսամ առ ած. ինքն գտաւ անհամբեր :

Իսկ երբեմն այլ մասունք բանի ևս յարին 'ի սոսա, ևս և բազում անուանք՝ ըստ զանազան պաշտաման. այսինքն իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ, իբր ածական, և այլն. որոց վասն եդեալ աստ զերիս համառօտ օրինակս՝ լուծցուք զնոսին կարգաւ՝ 'ի դիւրութիւն և 'ի յուսումն համբակաց :

Օրինակ. ա. * Գանձ ցանկալի հանգիցէ 'ի բերան իմաստնոյ. արք տգէտք կլցեն զնա ||. Լուծ : 'Ի սմա՝ ԳԱՆՁՆ է անուն բայի : ՑԱՆԿԱԼԻ՝ է ածական նր : ՀԱՆԳԻՑԷ՝ է բայ : 'Ի ԲԵՐԱՆ՝ է ներգոյական խնդիր բային : ԻՄԱՍՏՆՈՅ՝ է յատկացուցիչ բերանոյն : ԱՐՔ՝ է անուն բայի : ՏԳԷՏՔ՝ է ածական նորա : ԿԼՑԵՆ՝ է բայ : ԶՆԱ՝ է խնդիր սեռի նորա :

Օրինակ. բ. * Որդեակ իմ՝ մի նախանձիր ընդ չարս. և մի ցանկանայցես կալ ընդ նոսա ||. Լուծ.

Ի սմա՝ որդեակն է կոչական անուն ։ Իմ՝ է ստացական դերանուն , և է լեալ ածական որդեկին ։ Մի՛ նախանձեր՝ է բայ , որոյ անունն զօրութիւ դնի . այ՝ դու ։ Ընդ չարս՝ է խնդիր նորա ։ Եւ՝ է շաղկապ ։ Մի՛ է մակբայ ։ Ցանկանայցես՝ է բայ . որոյ անունն է նոյն զօրութիւ իմացեալ դերանունն . այս է՝ դու ։ Կա՛լ է արգելիչ խնդրոյ նորա , այսինքն ցանկանալոյն ։ Ընդ նոսա՝ է խնդիր կալոյն ։

Օրինակ . Է . * Հրեշտակք երկնից փափաքին հանդիսի կատարման սոցա . որք 'ի մահուն իւրեանց կենդանացան , ելին 'ի կամարն երկնից , խառնեցան 'ի գունդ զուարթնոցն ‖ . Շարակ ։ Ի սմա՝ հրեշտակք՝ է անուն բայի ։ Երկնից՝ է յատկացուցիչ հրեշտակաց ։ Փափաքին է բայ չէզոքական ։ Հանդիսի՝ է նր խնդիր բնուէ 'ի տրական հոլովն ։ Կատարման՝ է յատկացուցիչ հանդիսին ։ Սոցա՝ է յատկացուցիչ կատարմանն ։ Որք՝ յարաբերէ զդերանունս սոցա . և է անուն բայիցս՝ կենդանացան , ելին և խառնեցան ։ Ի մահուան իւրեանց՝ է երկրորդական խնդիր բայիս կենդանացան . որոյ բուն խնդիրն զօրութիւ դնի 'ի գործիական հոլովն . այ է՝ հոգւով ։ Իւրեանց՝ է յատկացուցիչ մահուանն ։ Ելին՝ է չէզոքական բայ ։ Ի կամարն՝ է խնդիր նորա ։ Երկնից՝ է յատկացուցիչ կամարին ։ Խառնեցան՝ է իբր չէզոքական բայ ։ Ի գունդ՝ է խնդիր նորա ։ Զուարթնոցն՝ է յատկացուցիչ գնդին ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յետ 'ի միտ առնլոյ ուսանողաց զհանգամանս մասանց բանի , և զքերականական կանոնս , ևս և յետ սակաւուք վարժելոյ 'ի լուծումն շարադրութեանց , եթէ ցանկան բարւոք ևս տեղեկանալ որպիսութեան հայկազեանս լեզուի , և ճաշակել զքաղցրութիւն քերթողական արուեստի , պիտոյ է նոցա ինքնին ևս կազմել զշարադրութիւն բանից ։ Իսկ առ սկիզբն առնել այսմ՝ հարկ է նոցա զառաջինն՝ համառօտ ինչ աշխարհաբառ բանս դարձուցանել 'ի գրաբառն , և

ապա նովին առ սակաւ սակաւ զարգանալ : Նմանորպէս զի զարթիցէ 'ի սիրտ նոցա փոյթ 'ի սոյն յօժարելոյ՝ պատշաճ համարիմ դնել աստանօր առաջի նոցա քանի մի աշխարհաբառ խօսս՝ (ըստ ոճոյ աշխարհաբառ բառարանին), և դնել ընդ նոսին զգրաբառ նոցին :

Հատընտիր համառօտ բանք յաշխարհաբառէ
'ի գրաբառն :

ա. Իշտէ ձեր առջևը կդընեմ իմ սրտիս լաւ բաները. սորվեցընեմ ձեզի իմ խօսքերս.
* Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ ըղձպատգամս. ուսուցից ձեզ զբանս իմ || :
բ. Կաղաչեմ ձեզի աղբարք, որ մտիկ ընէք իմ մխիթարական բանիս.
* Աղաչեմ զձեզ եղբարք անսալ բանից մխիթարութեան || :
գ. Իմաստութիւն մտիկ ըրէք, ու իմաստուն եղէք.
* Լուարուք զիմաստութիւն, և իմաստունք լերուք || :
դ. Դուք մտիկ ըներու տեղը՝ կուզէք հրամայօղ ըլլալ.
* Դուք փոխանակ լսելոյ՝ հրամանատուք կամիք լինել || :
ե. Պէտք է ձեզի՝ որ քիչ խօսիք, ու շատ իմանաք.
* Պարտ է ձեզ սակաւ բարբառել, և շատ իմանալ || :
զ. Մենք՝ ինչ որ մեզի հրամայած է նէ՝ ընենք. կէօզճիի պէս բարձր տեղաց ձեր ականջը կանչենք. ատկէ ետքը ընելը՝ ու չընելը՝ ամէն մարդու իրեն ձեռքն է.
* Մեք՝ զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք, աղաղակելով որպէս դէտ 'ի բարձր դիտանոցէ 'ի լսելիս ձեր. այսուհետև առնելն և ոչ առնելն 'ի կամս ազատութեան իւրաքանչիւր անձին է || :
է. Զուլում որ ձեր մէջէն մէկմը թեմպելութէն սէպէպով՝ ագիտութեան կուրութիւնը սիրէ.
* Մի ոք 'ի ձէնջ սիրեսցէ զկուրութիւն ադխութեան յաղագս ծուլութեան || :
ը. Որոնք որ պօշ բաներու ետևէ կիյնին, խելքերնին պակաս է.
* Որք զհետ երթան զնանրութեան, պակասամիտք են || :
թ. Ան որ իմաստնոց հետ խօսակցիչ կըլլայ, իմաստուն կըլլայ.

* Որ գնայ ընդ իմաստունս, իմաստուն եղիցի ‖ ։

գ. Մուխայէթսիզ մարդը՝ կարօտութենէ քիչ կըլլայ ։

* Ընչոցն 'ի կարօտութե՛ն եղիցի ‖ ։

դ. Միամիտ մարդը՝ ամէն բանի կհաւատայ ։

* Ընմեղն հաւատայ ա՛մ բանի ‖ ։

ե. Թէմպէլ մարդը՝ նախատինք կրէ նէ, չամըչնար ։

* Թեպետ և նախատի վատ, ոչ ամաչէ ‖ ։

զ. Ճարպէտ մարդը՝ իր խափելութիւնը ծածուկ կպահէ ։

* Թաքուցանէ զանարգանս իւր այր խորագէտ ‖ ։

է. Ռաշկամիշ մարդը՝ առանց մտածելու կգործէ ։

* Ռարկասիրտն գործէ առանց խորհրդոյ ‖ ։

ը. Սէրթ խօսքը՝ բարկութիւն մէյդան կհանէ ։

* Բան խիստ յարուցանէ զբարկութի ։

թ. Լաւ է սապըրլը մարդը՝ քան թէ գուվվէթլին ։ Ով որ բարկութեան յաղթէ՝ լաւ է քան անի, որ ամբող քաղաք կառնէ ։

* Լաւ է այր երկայնամիտ քան զհզօր . . . և որ յաղթէ բարկութեան՝ քան որ առնուցու զքաղաք հզօր ‖ ։

ժ. Ան որ կուզէ իր բարեկամներէն զատուիլ, մահանա կփնտռէ ։

* Պատճառս խնդրէ այր, որ կամիցի քակել 'ի բարեկամաց իւրոց ‖ ։

ե. Ով որ ընկերին հետ բարկութեամբ կվարուի, դիմացը հետ պարզ ունի ։

* Ե՛թոք՝ որ առ ընկերն բարկութե՛ վարի, առ դեմն խաղաղութի ունի ‖ ։

զ. Ով որ ընկերին խարէզ ունի, սատանայի հետ խաղ ունի ։

* Որ ոխս ունի ը՛ ընկերի, դաշնաւոր է ստնյի ‖ ։

է. Ինչպէս աստուծոյ հետ սիրով միաբանութիւն ունենայ ան մարդը՝ որ դեւերուն հետ շարթ է դրեր ։

* Օ՛ խորդ առ ա՛ծ սիրով միաբանութի ունիցի, որ դիւաց դաշնակից է ‖ ։

ը. Մէկ բանմը չկայ՝ որ անանկ էշկեարէ ցըցնէ մէր աշկերտի ուրախութիւնը, ինչպէս որ սէրը ։

* Չիք ինչ՝ որ այնպէս նկարագրէ զպատկեր աշակերտին քնի, որպէս սէրն ‖ ։

թ. Սէրը՝ սինօր ու չափ չունի ։

* Սիրոյ սահման և չափ ոչ է ‖ ։

դ. Ընկերին սիրովը կկատարուի աստուծոյ սէրը ։

* Սիրով ընկերին սէրն ա՛յ կատարի ‖ ։

դ. Որ եղբօրը սիրուն համար իրեն չի խղճար, իր մալէն ինչպէս խղճայ.

* Որ յանձն չխնայիցէ սակս սիրոյ եղբօրն, յինչսն զիա՞րդ խնայեսցէ ‖ ։

ե. Ով որ իրեն կորսուելուն վրայ համբերող է, ինչպէս պէտք ուրիշի հոգւոյն համար մտախոհ ըլլայ.

* Որ զանձին կորուստ անփոյթ առնիցէ, վասն այլոց զիա՞րդ հոգ փրկութեան վարիցէ ‖ ։

զ. Ինչպէս որ խաղելու՝ որ մարդ մէկ աչքովը երկինքը նայի՝ ու մէկալը գետինը, անոր պէս ալ մարդ չի կրնար մտախոհ ըլլար աստուծոյ ու աշխարհքի բաներուն.

* Որպէս ոչ կարելի է միով ակամբ նայել յերկինս՝ և միւսովն յերկիր, այսպէս միտք ոչ կարեն հոգալ զԱյն և զաշխարհիս ‖ ։

ը. Ճշմարտ է թէ, մէկ ամենուն առջին դրեր է իրեն բարեքը. ու կուզէ որ ամենքն ալ խելքն առն. մէկ կերպերն ատանց որ յօժարութ չէն ուզեր առնուլ.

* Ճշմարիտ է Աստուած, և ամենեցուն առաջի եդ զպարգևս իւր. և կամի՝ զի ամենեքեան յափշտակեսցեն զայն. և բարկանայ այնոցիկ՝ որ ոչ մեծաւ յօժարութեամբ փափաքին առնուլ ‖ ։

դ. Ով որ լաւութեան դէմ գէշ կընէ նէ, անոր տունէն չարը չպակսի.

* Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի պակասեսցէ ‖ ։

զ. Մեր օրէնքին դէմ է՝ տերանցը դէմ հիւլէպարութիւն ընել.

* Ընդդէմ է օրինաց մերոց նենգութիւն տերանց ‖ ։

ը. Տկարները ուծոճէներէն սախընդիչ կըլլան.

* Տկարքն զգուշանան 'ի հզօրագունից ‖ ։

դ. Ձեռնքի որ թաւալմներու մէջ կընկնիք, անոր համար պէտք է՝ որ աւորանի շատ բան ըլլայ.

* Վասն զի 'ի մէջ որոգայթից շրջիմք, նմին իրի բազում արթնութեան մեզ պէտք են ‖ ։

դ. Խորունկ խոնարհէ ամենքս ալ. ու մեծ երաշխիքնայ ճշմարտութեան.

* Խոր 'ի քուն ննջեմք ամենեքեան. և երազ թուի մեզ ճշմարտութիւն ‖ ։

զ. Պօտառն առնէրը ձեռք կըսէ. ասանկ ալ խելացի վարդապետը իր աշկերտները՝ որ աստուծոյ գործէն.

* *Փող յորդորէ զզօրս 'ի պատերազմ. և իմաստուն վարդապետ՝ զաշակերտս իւր 'ի գործ առաքինութե* ‖:

Ինչպէս զրահ հագնօղը օխով չզարնուիր, այնպէս ալ ախտ չունօղը տրտմութենով չի խոցուիր.

* *Որպէս զրահաւորն նետս ոչ ընդունի. սոյնպէս անախտն ոչ խոցի 'ի տրտմութե* ‖:

Փէհլիվանի պէս հանուէ՛, ու քու եղովդ օծուէ՛, որ քու խասմիդ ձեռքը քու վրադ [illegible] չըլլայ.

* *Մերկեաց իբր զմրցամարտիկ, և օծ իւղովն քով. զի մի կռուեսցին 'ի քեզ ձեռք ախոյեանին* ‖:

Ան [illegible]՝ որ հէչ բան մը չունի, նման է մերկ փէհլիվանի՝ որ մէջքէն չի բռնուիր.

* *Միայնակեաց անինչ՝ ըմբիշ է մերկ, որ ոչ զմիջոյ ըմբռնի* ‖:

Շատ մարդիկ թամահքեարութեան երեսէն ընկնելով՝ ճշմարտութենէն մոլորեցան:

* *Ագահութե ախտի ծառայելով մոլորեցան 'ի ճշմարտութենէն բազումք* ‖:

Տահմ աղէկ է լաւ անունը՝ քան թէ շատ հարըստութիւնը.

* *Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում* ‖:

[illegible] իրենքը ճանչնալէն [illegible] մեծութիւն մը չկայ.

* *Ոչ գոյ այլ ինչ մեծութիւն քան զծանօթութիւն անձին* ‖:

Ծառին պտուղը շատ ըլլայ նէ՝ ճիւղերը վար կիջեցնէ. ասոր գէօրէ ալ՝ շատ առաքինութիւնը մարդուն միտքը կխոնարհեցնէ.

* *Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց. այսպէս և առաքինութե բազմութիւն՝ զմիտս առն (խոնարհեցուցանէ)* ‖:

Տայախը վեր կբռնէ պտղալից ճիւղերը. այնպէս ալ այ վախը՝ առաքինի մարդը.

* *Խեչ բառնայ զոստս պտղալիցս. և երկիւղն այ՝ զառաքինի անձն* ‖:

Առաքինութիւնը խիստ [illegible] ու [illegible] է տղայոց բնութեը.

* *Կարի իմն յանկաւոր և պատշաճագոյն է առաքինութիւն՝ ընութե մանկանց* ‖:

Մեղուներուն [illegible] մեղր կշինէ. ասոր գէօրէ ալ եղբայրներուն թէքմիլ միաբանութիւնը՝ առաքինութիւն.

* *Կարք մեղուաց գործեն զմեղր. և հաւասար միաբանութիւն եղբարց զառաքինութիւն* ‖:

ա̄ . Խոնարհ միտքը խալէով պատած քաղաք մըն է .

* *Քաղաք պարսպեալ են միտք անհպարտք* ‖ :

բ̄ . Ուրիշներուն առաքինութիւնովը պարծենալը՝ հիչ ֆայտա մը չունի .

* *Ոչ ինչ օգուտ յայլոց առաքինութիւնս պանծալ* ‖ .

գ̄ . Անոնք որ զիրենք կը գովեն , քամահրանքով լեցուած են .

* *Որ զանձինս գովեն , լի են պարսաւանօք* ‖ :

դ̄ . Ի՞նչ շահ ունի խօսքը , երբոր գործքը խօսքին չի վկայեր .

* *Ո՞ր օգուտ 'ի բանիցն լիցի , յորժամ գործքն բանիցն չվկայեն* ‖ :

ե̄ . Կամակոր խըզմըթքեարը խօսքով չի խրատուիր . զէրէ հասկընայ ալնէ՝ չի մաներ .

* *Բանիւք ոչ խրատի ծառայ խիստ . զի թէպէտ և իմանայցէ՝ ոչ հնազանդի* ‖ :

զ̄ . Անոնց համար ջանք ընելը՝ պո՛շ է . զէրէ ֆայտան քիչ է , ու զարարը շատ .

* *Անօգուտ է ջանն՝ որ վասն նոցին . զի շահն սակաւ է , և վնասն յոլով* ‖ :

է̄ . Խօլա՛յ է աստուծոյ քիչ մարդով շատ մարդու գործք ընել .

* *Դիւրին է այ̄ սակաւուք զբազմաց գործ գործել* ‖ :

ը̄ . Չիկայ տեղմը չիկայ՝ որ զմեզ աստուծմէ զատէ , միայն մեղքը .

* *Ո՛չ տեղի՝ որ որոշէ զմեզ յա̄յ , բայց միայն մեղքն* ‖ :

թ̄ . Եթէ որ մենք յիշենք մեր մեղքերը նէ , ա̄ծ կը մոռնայ .

* *Եթէ մեք յիշեմք զմեղս մեր , ա̄ծ մոռանայ* ‖ :

ժ̄ . Ամէն մարդ ինչ բանէ որ կ'երէ նէ , կարծէ որ՝ ուրիշն ալ անպէս է .

* *Ամենայն ոք՝ յորոց կրէ՝ 'ի նոյն և զայլս կարծէ* ‖ :

ի̄ . Ան քաղաքը՝ որ իշխան չունի , չի կրնար խաղաղութէ մէջ կենար .

* *Առանց իշխանի ոչ կարէ կալ քաղաքն 'ի խաղաղութեան* ‖ :

լ̄ . Ինչպէս որ պաղ ջուրը խօշ է ծարաւ մարդու , անոր պէս ալ հեռու տեղէ եկած բարի խապարը .

* *Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է , Նոյնպէս աւետիք բարեաց յերկրէ հեռաստանէ* ‖ :

խ̄ . Աչքով տեսնելը տահա՛ իյի է՝ քան թէ ականջով լսելը .

* *Տեսութիւն աչաց հաւատարմագոյն է քան զլուր ականջաց* ‖ :

ծ̄ . Ան որ գետնի վրայ կ'աշխատի նէ , կ'ենէ շատով կշտանայ . ամա ան որ բարձր տեղեր կ'երթայ նէ , շատ անգամ կ'իյնայ կոտրի .

* Որ գլորի յերկրի, արագ անդրէն յառնէ. իսկ որ անկանի 'ի բարձրուէ՛ բազում անգամ և մեռանի ||։

ա. [illegible]

* 'Ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ ||։

բ. [illegible]

* Նոր իցէ՝ զի աներկիւղ եղեց 'ի մահուանէ ||։

գ. [illegible]

* Ոչ սերմանեցի արդարութի՛ ա̄ բանին յոլսեայ, և զիւրդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն ||։

դ. [illegible]

* Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի ||։

ե. [illegible]

* Ասօսին, և ոչ իմանամ. գոչեն, և ոչինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթնանամ. . . վիրաւորիմ, և ոչ ևս զգամ ||։

զ. [illegible]

* Ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ ||։

է. [illegible]

* Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյղն գանձեմ, և անթիւս սպառեմ ||։

ը. [illegible]

* 'Ի բացուստ Ճոռոմն խօսիմ. և 'ի պատասխանատուութե՛ն պահու պապանձեալ կարկիմ ||։

ա. [illegible]

* Նաւ արդ՝ այսուհետև փոխեսցուք զկարգ բանիս 'ի Ճառս պատմութե՛ արարածոց երկրի ||։

բ. [illegible]

* Իբրև տեսանեն Ձագք թուլացեալ զթևս հօրն իւրեանց 'ի ծերութեն, աստի և անտի մտանեն, և բառնան զնա 'ի վերայ թևոց իւրեանց. և ջամբեն նմա կերակուր՝ զոր և գտանեն. և որպէս ախորժէ երթալ նմա՝ այնպէս ընդ նմին երթան հանդարտիկ ||:

դ. [illegible]

* Պոլիպոդ՝ զմտ քարի, յոր հասանէ և հայի 'ի ծովուն՝ զնորուն առնու զգոյն. և ձկունք յանհոգս երթան լողին զնովաւ, զի համարին՝ թէ քար իցէ. և իբրև կամին մտանել ընդ նովաւ, ըմբռնէ զորսն պատրաստական, և ուտէ ||:

ե. [illegible]

* Գրայլն կրիայ եթէ ուտիցէ 'ի մսոյ իժի, և տագնապ ինչ հասանիցէ նմա անտի, երթայ ուտէ զաղձն. և այնու անցուցանէ զտապ նեղութեն ||:

զ. [illegible]

* Արջ յորժամ վէրս առնու յանձին, ինքնին զանձն բժշկել գիտէ. երթայ խլէ զարմատ մի, որ կոչի փղոմոս. դնէ 'ի վր վիրացն, և առնու զբժշկութի ||:

է. [illegible]

* Թէ կամիս, լուր միւս ևս սքանչելի պատմութի ||:

ը. [illegible]

* Ծեր ոմն բնակէր յեզր յորդանանու. և 'ի խստութէ տօթոյն եմուտ (յաւուր միում) 'ի յայր ինչ. և եգիտ անդ ննջեալ առիւծ մի մեծ յոյժ. որ իբրև ետես զծերն, սկսաւ գոչել և կրճտել զատամունս իւր։ Ասէ ցնա ծերն. ընդէ՞ր տրտմեալ ես. զի կայ աստ տեղի ինձ և քեզ. իսկ եթէ դու ոչ կամիս, արի և գնա։ Եւ առժամայն յարեաւ առիւծն, և գնաց անտի ||։

գ. Աբ̄ն սրապիոն ճգնաւորը կէմին մտաւ՝ որ երթայ հռօմ. առա իր հետը ուտելու բան մը չունէր։ Կէմիճիները երբոր տեսան՝ որ անինկայ հինգ օրէն վերի բան մը չէր ուտեր, հարցուցին անոր, ինչո՞ւ չես ուտեր պա՛պաւըրի. ան ալ ըսաւ անոնց, չէրի բան մը չունիմ. անոնք ալ ըսին, հապա ինչո՞ւ մտար հոս. ան ալ ըսաւ. էյէր ձեր կէմիին վէյ շարարմը տուեր նէ, տարձուցէք զիս՝ ուր որ գըտաք։ Անոնք ալ թէպէտեւ ըրին, ու չգտան՝ թէ ո՞վ է դրեր անինկայ կէմին. ետքը իրենք կերակուր տուին անոր, ու տարին հռօմ.

* Աբ̄ն սրապիոն եմուտ 'ի նաւ՝ գնալ 'ի Հռովմ, ոչ ինչ ունելով առ 'ի պէտս իւր։ Իսկ նաւորդքն իբրև տեսին՝ զի յառաջնմէ օրէ անտի մինչև ցհինգերորդ օրն ոչինչ ուտէր ծերն, ասեն ցնա, ընդէ՞ր ոչ ուտես հայրիկ. ասէ ցնոսա, զի ոչ ունիմ ինչ. ասեն ցնա, և ընդէ՞ր մտեր այսր. և ասէ ծերն, թէ զնաս ինչ արարի նաւիդ, դարձուցէք զիս 'ի տեղին՝ ուր գտիք։ Իսկ նք̄ քննեալ՝ ոչ գտին, թէ ով եդ զնա 'ի նաւն. ապա առեալ կերակրեցին զնա, և տարան 'ի Հռովմ ||։

գ. Մէկ իշխան մը կրօնաւոր եղաւ, ու իր բոլոր մալը աղքատներուն բաժնեց, անա քիչ մըն ալ իրեն համար պահեց. չէ ուզեց՝ որ հիմա ամենայն կատարեալ հնազանդութի̄, ու խոնարհութի̄, ու աղքատութի̄։ Գրեց ասոր մե̄ բարսեղը ասանկ բան մը. քու իշխանութիդ կորսնցուցիր, ու կրօնաւորութիւնը չգտար.

* Իշխան ոմն եղև կրօնաւոր, և զա̄մ ինչս իւր բաժանեաց աղքատաց, և կալաւ սակաւ ինչ 'ի պէտս իւր. և ոչ կամեցաւ առնուլ յանձն զկատարեալ հնազանդութի̄ և զխոնարհութի̄ և զանընչութի̄։ Առ սա գրեաց մեծն բասիլիոս այսպէս. զիշխանութի̄ քոյ կորուսեր, և զմիանձնութի̄ ոչ գտեր ||։

Տէ՛ ալ պէտք է մեզի՝ որ մեր խօսքը դադրեցընենք ․ չէրէ ինչ որ մինչև հոս ըսուեցա նէ՝ ձեր սիրոյ նախանձը արթնցընելու-համար՝ հերիք է ․ գիտնալով ան բանը՝ որ կըսուի, թէ շատ խօսքը անկած կըլլալըն է ․

* *Եւ արդ՝ պատշաճ է մեզ տալ հանգիստ բանիս ․ զի բաւական են՝ որք ճառեցանն մինչև ցայսվայր՝ առ 'ի զարթուցանել զնախանձ սիրոյդ ձերոյ ․ գիտելով զասացեալն՝ թէ առաւելութիւն բանի պատերազմող է լսելեաց* ‖ ։

Յայսմ վայրի և ես տաց աւարտ գործոյս՝ 'ի փառս քնի այ, և 'ի պատիւ ամենօրհնեալ մօր նորա ՚ու-ածածնին ։

ՎԱԽՃԱՆ

ՑԱՆԿ

Հարկաւոր գիտելեաց պարունակելոց յերկրորդ և յերրորդ մասին այսր քերականութեան ըստ կարգի այբուբենից.

Ածական անուն : 88
160 . 166
Ածականք առանց գոյականի : 89 . 166
Ածանցական անուն : 96
Ածանցական դերանուն : 105
Ածանցականակերտ մասնիկք բաղադրմանք : 96
Աներևոյթ բայ : 121 . 220
Անկանոն բայ : 110
Անկատար ժամանակ : 116
Անուանական հոլով : 98
Անուն : 87 . 145
Անուն բայի : 188
Անցեալ ժամանակ : 116
Անցողական բայ : 114 . 203
Ապառնի ժամանակ : 116
Առաքական բայ : 110
Արգելիչ խոնարհոյ : 220

Բաղադրեալ անուն : 95
Բաղադրեալ բայ : 113
Բաղդատական ածականք : 89
Բայ : 109 . 188
Բան : 85 . 232
Բանք յաշխարհաբառէ 'ի գրաբառն : 275
Բառ : 83
Բարդ անուն : 94
Բարդ բայ : 112
Բացայայտիչ : 145
Բացառական հոլով : 100
Բաշխմունք բայից : 128
Բութ : 246

Գերադրական ածականք : 90
Գերակատար ժամանակ : 116
Գիր : 80
Գլխաւոր մասունք քերականութեան : 79
Գոյական անուն : 87 . 145
Գոյականք 'ի դերի ածականաց : 165
Գործիական հոլով : 100

Դերանուն : 103 . 174
Դերբայք : 122 . 222
Դէմք բայից : 115
Դէմք դերանուանց : 105
Դիմորոշականք : 105 . 185
Դրադէմ բայք : 227
Դրական ածականք : 89

Եղանակ բայից : 118
Ենթամնայ : 249
Երկար : 249

Զանական բայ : 109 . 216

Էական դերան՛՛։ 104 . 175

Ընդհանուր կամ հասարակ
անուն ։ 88
Ընդունելութիւն ։ 126 . 223
Ընդունել՛՛. եալ։ 129 . 227
Ընդունել՛՛. լի ։ 130 . 229
Ընդունել՛՛. լոց ։ 129
Ընդունել՛՛. ող։ 128 . 225

Թիւ ։ 246
Թիւք անուանց ։ 97
Թիւք բայից ։ 115
Թիւք դերանուանց ։ 106
Թիւք ընդունելութեանց ։ 127
Թուական անուանք ։ 91
168 . 167

Ժամանակ բայից ։ 115
Ժամանակ ընդունելութեանց ։ 127

Լծորդութիւնք բայից ։ 123
Լուծմունք շարադրութեանց ։ 237

Խնդիր ածական անուանց ։ 155
Խնդիր ածականաց յանգե-
լոց 'ի եղ ։ 158
Խնդիր բաղդատական ան-
ուանց ։ 159
Խնդիր բայի ։ 194 . 218
Խնդիր բնութէ կրաւորա-
կան բայից ։ 206
Խնդիր բնութէ ներգործա-
կան բայից ։ 194
Խնդիր գոյական անուանց ։ 151
Խնդիր դիմաւորէ բայից ։ 215
Խնդիր էական բայից ։ 216
Խնդիր թուական անուանց ։ 167
Խնդիր հարցական անուանց ։ 167
Խնդիր մասնական անուանց ։ 167
Խնդիր չէզոքական բայից ։ 207
Խնդիր սեռի կրաւորական
բայից ։ 206
Խնդիր սեռի ներգործա-
կան և հասարակ բայից ։ 195
Խոնարհմունք բայից ։ 123
Խրթին շարադրութէ ։ 233 . 236

Կազմութիւն բանի ։ 232
Կանոնաւոր բայ ։ 109
Կատարեալ ժամանակ . 116
Կէտադրութիւն ։ 242
Կոչական հոլով ։ 101
Կրաւորական բայ ։ 111

Համաձայնութիւն ածական
անուանց՝ ընդ ածակա-
նաց ։ 166
Համաձայնութիւն ածական
անուանց՝ ընդ գոյակա-
նաց ։ 160
Համաձայնութիւն անուանց
ընդ դիմանս ։ 145
Համաձայնութիւն բայից ։ 188
Համաձայնութիւն դերան-
ուանց ընդ անուանս ։ 175
Համաձայնութիւն դերան-
ուանց ընդ դիմանս ։ 174
Համաձայնութիւն ընդունե-
լութեաց ։ 223
Համաձայնութիւն գլխական
անուանց ։ 168
Համաձայնութիւնք մասանց
բանի ։ 144
Համառօտութիւն քերակա-
նութէ ։ 252

Հայցական հոլով ։ 99
Հանրական անուանք ։ 170
Հասարակ բայ ։ 111
Հարցական անուանք ։ 90 167 . 172
Հարցումն և պատասխանի ։ 271
Հաւաքական անուն ։ 88
Հոլովմունք անուանց ։ 101
Հոլովք անուանց ։ 98
Հոլովք և հոլովմունք դե-րանուանց ։ 106 . 107
Հոլովք ընդունելութեանց ։ 127
Հրամայական եղանակ ։ 119

Ձևք անուանց ։ 94
Ձևք բայից ։ 112
Ձևք ընդունելութեանց ։ 127

Մակբայ ։ 136
Մասնական անուանք ։ 90 167 . 173
Մասունք բանի ։ 253
Միջակ շարադրութ՟ ։ 233 . 234
Միջական անուանք ։ 90 . 167
Միջակէտ ։ 242
Միջարկութ՟ ։ 142

Յաճախութ՟ բայից ։ 113
Յատկացուցիչ ։ 148
Յատուկ անուն ։ 88 . 147
Յարաբարդ անուն ։ 95
Յարաբերական դերանուն ։ 104 108 . 180
Յարակատար ժամանակ ։ 116
Յարմարագրութ՟ ։ 241

Նախագաղափար կամ նա-խադէպ անուն ։ 96
Նախագաղափար բայ ։ 114
Նախագաղափար դերան՟ ։ 105
Նախադրութ՟ ։ 131
Նախդիր ածականաց ։ 163
Նախդիր դերանուանցս՝ այս , այդ , այն ։ 178
Նախդիր ՚ի բացայայտելս ։ 147
Նախդիր ՚ի յատկացու-ցիչս ։ 149
Նախդիր խնդրոյ բայ-ից ։ 266 . 219
Ներգոյական հոլով ։ 100
Ներգործական բայ ։ 110
Ներկայ ժամանակ ։ 116
Նշանագիր ։ 251
Նշանադրութ՟ ։ 245

Շաղկապ ։ 141
Շեշտ ։ 247

Ոլորակ ։ 249
Ուղղական հոլով ։ 98

Չեզոքական բայ ։ 111

Պատմական հոլով ։ 100
Պատուադրութ՟ ։ 250
Պարագայք անուանց ։ 92
Պարագայք բայից ։ 110
Պարագայք դերանուանց ։ 105
Պարագայք ընդունել՟ ։ 126
Պարառական հոլով ։ 100
Պարզ անուն ։ 94
Պարզ բայ ։ 112
Պարզ շարադրութ՟ ։ 233
Պարոյկ ։ 249
Պէսպէսութ՟ շարադրու-թեանց ։ 232

Սահմանական եղանակ ։ 118
Սեռական հոլով ։ 98
Սեռք անուանց ։ 92
Սեռք բայից ։ 110
Սեռք ընդունելութ̄ց ։ 126
Սուկ ։ 246
Սուղ ։ 246
Ստացական դերանուն ։ 104 107. 179
Ստորադասական եղանակ ։ 120
Ստորակէտ ։ 242

Վանկ ։ 82
Վերացեալ անուանք փո- խանակ ածականի ։ 166
Վերբերական անուանք ։ 90 171
Վերջակէտ ։ 242

Տառ ։ 80
Տեսակք անուանց ։ 96
Տեսակք բայից ։ 114
Տեսակք դերանուանց ։ 105
Տեսակք ընդունելութ̄ց ։ 127
Տրական հոլով ։ 99

Ցուցական դերանուն ։ 104 107. 176. 177. 179

Փարենթաղեղ, կամ փա- կագիծ ։ 244

Ւերականութ̄ի ։ 79

Օրինակ պէտքս շարա- դրութ̄ց ։ 233

Kajies
Mespavos } Vgs 2a

[illegible]
29/I.-42թ.